ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐ ԵՎ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ

XXXI

NATIONAL ACADEMY OF SCIENCES
REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

THE COUNTRIES AND PEOPLES OF THE NEAR AND MIDDLE EAST

XXXI

YEREVAN
"GITUTYUN" PUBLISHING HOUSE OF THE NAS RA
2018

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

СТРАНЫ И НАРОДЫ БЛИЖНЕГО И СРЕДНЕГО ВОСТОКА

XXXI

ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО «ГИТУТЮН» НАН РА
2018

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐ ԵՎ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ

XXXI

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2018

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3
Մ 663

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Սաֆրաստյան Ռ. Ա. (նախագահ), **Ղազարյան Ռ. Պ.** (նախագահի տեղակալ),
Մարգարյան Գ. Ա., Կոզմոյան Ա.Կ., Մաթևոսյան Ա. Կ.

Տեխնիկական համակարգող՝ **Ն.Վ. Կարախանյան**

ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐ
Մ 663 **ԵՎ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ. XXXI**/ Խմբ. խորհուրդ՝ Ռ. Ա. Սաֆրաստյան և
ուրիշ.- Եր.: «Գիտություն» հրատ.., 2018. - 248 էջ:

«Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» մատենաշարի հերթական XXXI հատորն ընդգրկում է Մերձավոր և Միջին Արևելքի երկրների հին և միջին դարերի պատմության, նոր և նորագույն ժամանակների, ինչպես նաև աղբյուրագիտության և պատմագրության հարցերի վերաբերյալ հետազոտություններ: Ձգալի տեղ է հատկացված տարածաշրջանի քաղաքական զարգացումների, միջազգային հարաբերությունների և այլ հիմնախնդիրների լուսաբանությանը:

Նախատեսվում է արևելագետների, հայագետների, միջազգայնագետների, ինչպես նաև բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների համար:

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3

ISBN 978-5-8080-1330-8
© ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, 2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԻՆ ԵՎ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՔՈՍՅԱՆ ԱՐԱՄ
ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ Մ.Թ.Ա. XV ԴԱՐԻ ԽԵԹԱԿԱՆ ՍԵՊԱԳՐԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ (աղբյուրների տեսություն)..... 11

ՑԱԿԱՆՅԱՆ ՌՈՒՍԼԱՆ
ՄԻՋԻՆԱՍՈՐԵՍՏԱՆՅԱՆ ՏԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ 19

ԽՈՐԻԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
ԵԳԻՊՏՈՍՆ ԱՔԵՄԵՆՅԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՍԱՏՐԱՊԱԿԱՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ..... 34

ՄԵԼԻՔՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ԵՐՐՈՐԴ ԴԱՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿԱՌԱՎԱՐՎԱԾ ՍԱՍԱՆՅԱՆ ԱՐՔԱՅԱԶՆՆԵՐԻ ՏԻՏՂՈՍԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ 47

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԳՈՌ
ՈՐՈՇ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ ԹԵՄՈՒՐ ԼԵՆԿԻ ԿԱՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԾԱԳՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 69

ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԳՈՀԱՐ
Ս. ԳՄԵԼԻՆԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍ ԵՎ ԻՐԱՆԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՇՐՋԱՆՆԵՐ..... 76

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՐԱՄ
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԵՐԽՈՒԺՈՒՄՆ ԱԼԺԻՐ 1830 Թ. ՊԱՏՃԱՌՆԵՐՆ ՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ 88

ՍՈՅԵԳՈՎ ՄՈՒՐԱԴԳԵԼԴԻ
ԻՆՉՊԵՍ ՀԱՅՏՆՎԵՑԻՆ ՀԱՅԵՐԵՆ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 1919 Թ. ԹՈՒՐՔՄԵՆԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՎՐԱ 98

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ԽՆԴԻՐԸ 1960-ԱԿԱՆ ԹԹ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ 108

ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ ՎԱՀԱՆ
ՔՐԴԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՉԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՆ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 122

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ
«ԹՅՈՒՐՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ» ԳՈՐԾՈՆԸ ԻՐԱՆԻ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (1991-2016 ԹԹ.) 149
ՄԻՆԱՍՅԱՆ ՆԵԼԼԻ
ՆՈՐ ՀԱՄԱԹՅՈՒՐՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ (ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ) 159
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՂԱՎՆԻ
ՉԻՆԱՍՏԱՆԻ ՓԱՓՈՒԿ ՈՒԺԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ 171

ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ԿՈՋՄՈՅԱՆ ԱՐՄԱՆՈՒՇ
ԻՐԱՆԻ ԷԹՆՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ՆԻԶԱՄԻԻ «ԽՈՍՐՈՎ ԵՎ ՇԻՐԻՆ» ՊՈԵՄՈՒՄ 195
ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ԱՍՏՑՈ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐՆ ԸՍՏ Ս. ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ «ՈՍԿԵՓՈՐԻԿԻ» 203
ԲՈՁՈՅԱՆ ԱՉԱՏ
Ս. ԳԻՐՔԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ 219
ՍՏԵՓԱՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ
ՀԱՅԵՐԸ ԲԻԹԼԻՍՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՏԱՌ ՔՐԴԵՐԵՆ ՁԵՌԱԳԻՐ ՈՒ ՏՊԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 232
ԱՒԵՏԵԱՆ ԿԱՐԻՆԷ
ՂԵՒՈՆԴ ՎԱՐԴԱՊԵՏ ՓԻՐՂԱԼԷՄԵԱՆԸ ԵՒ ԻՐ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՒԱՔԱԾՈՆ 239

СОДЕРЖАНИЕ

ДРЕВНЯЯ И СРЕДНЕВЕКОВАЯ ИСТОРИЯ

КОСЯН АРАМ
АРМЯНСКОЕ НАГОРЬЕ В ХЕТТСКИХ КЛИНОПИСНЫХ ТЕКСТАХ XV В. ДО Н.Э. (ОБЗОР ТЕКСТОВ) 11
ЦАКАНЯН РУСЛАН
НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ВНЕШНЕЙ И ВНУТРЕННЕЙ ПОЛИТИКИ СРЕДНЕАССИРИЙСКОЙ ДЕРЖАВЫ 19
ХОРИКЯН ОГАННЕС
ЕГИПЕТ В СИСТЕМЕ САТРАПСКОГО ДЕЛЕНИЯ АХЕМЕНИДСКОЙ ПЕРСИИ 34
МЕЛИКЯН АРТУР
О ВОПРОСЕ ТИТУЛА САСАНИДСКИХ ПРИНЦЕВ, ПРАВЯЩИХ В АРМЕНИИ В III ВЕКЕ 47
МАРГАРЯН ГОР
О НЕКОТОРЫХ ДЕТАЛЯХ ХРОМОТЫ И ПРОИСХОЖДЕНИЯ ТАМЕРЛАНА 69

НОВАЯ И НОВЕЙШАЯ ИСТОРИЯ

МХИТАРЯН ГОАР
ПУТЕШЕСТВИЕ С. ГМЕЛИНА В ВОСТОЧНОЕ ЗАКАВКАЗЬЕ И СЕВЕРНЫЕ РАЙОНЫ ИРАНА 76
ГАСПАРЯН АРАМ
ФРАНЦУЗСКОЕ ВТОРЖЕНИЕ В АЛЖИР 1830 Г.: ПРИЧИНЫ И ПОСЛЕДСТВИЯ 88
СОЕГОВ МУРАДГЕЛДИ
КАК ПОЯВИЛИСЬ ЗАПИСИ НА АРМЯНСКОМ ЯЗЫКЕ НА ПЕРВЫХ ТУРКМЕНСКИХ ДЕНЕЖНЫХ КУПЮРАХ 1919 ГОДА 98
МЕЛКОНЯН КРИСТИНЕ
ВОПРОС ПРИЗНАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ 1960-Х ГГ. 108
БАЙБУРТЯН ВААН
РАЗВИТИЯ КУРДСКОГО ВОПРОСА В ИСЛАМСКОЙ

РЕСПУБЛИКЕ ИРАН 122
ИСРАЕЛЯН АРМЕН
ФАКТОР «ТЮРКИЗМА» В ОТНОШЕНИЯХ ИРАНА И АЗЕРБАЙДЖАНА (1991-2016) 149
МИНАСЯН НЕЛЛИ
ИДЕИ НЕОПАНТЮРКИЗМА В ПОЛИТИЧЕСКОЙ СИСТЕМЕ ТУРЦИИ (ПРОГРАММНЫЕ ПОЛОЖЕНИЯ ПАРТИЙ) 159
АРУТЮНЯН АГАВНИ
КИТАЙСКАЯ ПОЛИТИКА МЯГКОЙ СИЛЫ И ОБЩЕСТВЕННАЯ ДИПЛОМАТИЯ 171

ИСТОЧНИКОВЕДЕНИЕ И ФИЛОЛОГИЯ

КОЗМОЯН АРМАНУШ
ИДЕЯ ИРАНСКОГО ЭТНОКУЛЬТУРНОГО ЕДИНСТВА В ПОЭМЕ «ХОСРОВ И ШИРИН» НИЗАМИ 195
МАТЕВОСЯН АРТУР
ВИДЫ БОГОПОЗНАНИЯ В «ЗЛАТОЧРЕВЕ» СВ. ГРИГОРА ТАТЕВАЦИ 203
БОЗОЯН АЗАТ
БИБЛИЯ В ИЗДАТЕЛЬСКИХ ПРОГРАММАХ СВЯТОГО ЭЧМИАДЗИНА 219
СТЕПАНЯН АСМИК
АРМЯНЕ В БИТЛИСЕ И АРМЕНОПИСЬМЕННО КУРДСКАЯ РУКОПИСНАЯ И ПЕЧАТНАЯ ЛИТЕРАТУРА 232
АВЕТЯН КАРИНЕ
АРХИМАНДРИТ ГЕВОНД ПИРГАЛЕМЯН И ЕГО СОБРАНИЕ ПАМЯТНЫХ ЗАПИСЕЙ 239

CONTENTS

HISTORY OF ANCIENT AND MIDDLE AGES

KOSYAN ARAM
ARMENIAN HIGHLAND IN THE XV CENTURY B.C. CUNEIFORM HITTITE SOURCES (OVERVIEW OF TEXTS) 11
TSAKANYAN RUSLAN
ON SOME FOREIGN AND DOMESTIC POLICY ISSUES OF MIDDLE ASSYRIAN EMPIRE 19
KHORIKYAN HOVHANNES
EGYPT IN THE SATRAPIC DIVISION SYSTEM OF ACHAEMENID PERSIA 34
MELIQYAN ARTHUR
ABOUT THE TITLE OF SASANYAN PRINCES RULED IN ARMENIA IN THE 3RD CENTURY 47
MARGARYAN GOR
SOME DETAILS ABOUT TIMUR LANG'S LAMENESS AND ORIGIN 69

MODERN AND CONTEMPORARY HISTORY

MKHITARYAN GOHAR
S. GMELIN'S TRAVEL TO THE EASTERN TRANSCAUCASIA AND NORTHERN REGIONS OF IRAN 76
GASPARYAN ARAM
THE FRENCH INVASION OF ALGERIA IN 1830: THE RESULTS AND THE EFFECTS 88
SOYEGOV MURADGELDI
WHENCE APPEARED THE RECORDS IN THE ARMENIAN LANGUAGE IN THE FIRST TURKMEN MONETARY DENOMINATIONS OF 1919 98
MELKONYAN CHRISTINE
THE ISSUE OF RECOGNITION OF THE ARMENIAN GENOCIDE IN THE SECOND HALF OF THE 1960S 108
BAYBURDYAN VAHAN
DEVELOPMENTS OF THE KURDISH QUESTION IN THE ISLAMIC REPUBLIC OF IRAN..... 122
ISRAYELYAN ARMEN

"TURKISM" FACTOR IN IRAN AZERBAIJAN RELATIONS (1991 2016) 149
MINASYAN NELLI
THE NEO PAN TURKISM IDEAS IN THE POLITICAL SYSTEM
OF TURKEY (THE PROGRAM THESES OF PARTIES) 159
HARUTYUNYAN AGHAVNI
CHINESE POLICY OF SOFT POWER AND PUBLIC DIPLOMACY 171

SOURCE STUDY AND PHILOLOGY

KOZMOYAN ARMANUSH
THE IDEA OF THE ETHNOCULTURAL UNITY OF IRAN IN THE POEM
"KHOSROV AND SHIRIN" BY NIZAMI 195
MATEVOSYAN ARTHUR
THE TYPES OF THE KNOWLEDGE OF GOD IN "THE GOLDEN BELLY"
OF St. GRIGOR TATEVATSY 203
BOZOYAN AZAT
THE SCRIPTURE IN THE PUBLISHING PLANS
OF THE MOTHER SEE HOLY ETCHMIADZIN 219
STEPANYAN HASMIK
ARMENIANS IN BITLIS AND ARMENIAN KURDISH HANDWRITTEN
AND PRINTED LITERATURE 323
AVETYAN KARINE
GHEVOND ARCHIMANDRITE PIRGHALEMYAN AND
THE MISCELLANIES OF HIS DIARIES 239

ՀԻՆ ԵՎ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՔՈՍՅԱՆ ԱՐԱՄ

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ Մ.Թ.Ա. XV ԴԱՐԻ ԽԵԹԱԿԱՆ ՍԵՊԱԳՐԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ
(աղբյուրների տեսություն)

Հայկական լեռնաշխարհի վաղ շրջանի պատմության գրավոր աղբյուրների շարքում առանձնահատուկ տեղ ունեն Փոքր Ասիայում մ.թ.ա. XVII-XIII դդ. գոյատևած Խեթական տերության տարբեր արքաների օրոք կազմված սեպագրական տեքստերը: Դրանք մեծաքանակ և գերազանցապես եզակի տեղեկություններ են պարունակում Լեռնաշխարհի արևմտյան շրջաններում գոյություն ունեցած քաղաքական միավորների վերաբերյալ: Այդ տեքստերն ընդգրկում են ռազմաքաղաքական և ծիսապաշտամունքային ոլորտները, ինչպես նաև վերաբերում են մեր տարածաշրջանի տեղագրության և անվանաբանության հարցերին: Վերոհիշյալ տեղեկությունները միաժամանակ արտակարգ կարևոր են հատկապես այն առումով, որ դրանցում վկայված անվանաբանական նյութերը շատ դեպքերում եզակի աղբյուրներ են Հայկական լեռնաշխարհում նշված ժամանակաշրջանում տիրող էթնոլեզվական իրավիճակի պարզաբանման համար: Առ այսօր հայագիտական հետազոտություններում խեթական աղբյուրների ընձեռած հնարավորությունները լիարժեք օգտագործված չեն, ինչի պատճառը սկզբնաղբյուրների թերի ներգրավումն է հետազոտության ոլորտ:

Ստորև առաջարկվող հոդվածի նպատակն է ներկայացնել մ.թ.ա. XV դարով թվագրվող առ այսօր հայտնի խեթական բոլոր տեքստերը, որոնք այս կամ այն չափով վերաբերում են Հայկական լեռնաշխարհի քաղաքական միավորներին[1]:

---

[1] Մ.թ.ա. XV դարի խեթական սեպագրական աղբյուրների գիտական հրատա-

Մ.թ.ա. XV դարի տեքստերը գերազանցապես վերաբերում են դեպի արևելք խեթական երկու արքաների՝ Թուդխալիյաս II ի և նրա հաջորդ Առնուվանդաս I ի (մ.թ.ա. XV դարի երկրորդ կես – XIV դարի սկիզբ) կազմակերպած արշավանքներին, Հայկական լեռնաշխարհի պետականությունների հետ նրանց ունեցած տարաբնույթ փոխհարաբերություններին: Այդ տեքստերի հաղորդած տեղեկություններն ընդգրկում են Հայկական լեռնաշխարհի արևմտյան հատվածը՝ Բարձր Հայքը և Ծոփքը, ինչպես նաև հարակից շրջանները, այսինքն՝ խեթական քաղաքակրթական աշխարհի հետ Հայկական լեռնաշխարհի կոնտակտային գոտու ողջ երկայնքը:

Թուդխալիյաս II-ի և Առնուվանդաս I-ի «Տարեգրությունները»[2]

Թուդխալիյաս II-ի և Առնուվանդաս I-ի «Տարեգրությունները», որոնց՝ Հայկական լեռնաշխարհին վերաբերող հատվածները պահպանվել են խիստ վնասված ենթատեքստերում, կարևոր են այն առումով, որ այստեղ առկա են ապագա հայկական Ծոփք նահանգի տարածքի նվաճման մասին ամենավաղ հիշատակությունները:

Այս երկու տեքստերում ներկայացված են մասնավորապես, Թուդխալիյասի կառավարման առաջին վեց տարիներին տարբեր ուղղություններով կազմակերպված արշավանքները դեպի Արևմտյան Փոքր Ասիա, դեպի հյուսիս և վերջապես արևելք: Հենց վերջինիս ըն-

---

րակությունը և ուսումնասիրությունը հեղինակի՝ ՀՀ Գիտության պետական կոմիտեի կողմից ֆինանսավորվող պայմանագրային-թեմատիկ ծրագրի առարկա է:

[2] Թուդխալիյաս II = Laroche E., Catalogue des textes Hittites, Paris, 1971 (այսուհետ՝ CTH), 142: Բեկորների միակցումը և առաջին գիտական հրատարակությունն իրականացրել է O. Կարրուբան՝ Carruba O., Beiträge zur mittel hethitische Geschichte. I II, Studi Micenei ed Egeo Anatolici 18, 1977, S. 156ff., Առնուվանդաս I = CTH 143 (տես Götze A., Madduwattaš (=Mitteilungen der Vorderasiatisch-Ägyptischen Gesellschaft), Leipzig, 1928, S. 156ff.; Goetze A., Kizzuwatna and the Problem of Hittite Geography, New Haven, 1940, p. 56ff.; Carruba O., Beiträge zur mittelhethitische Geschichte. I-II, Studi Micenei ed Egeo-Anatolici 18, 1977, S. 166ff.):

թացքում է, որ նվաճվեց Ծոփքի տարածքում գոյություն ունեցող Իսուվա պետությունը: Այստեղ հիշատակվում է նաև Իսուվային նրա հարավային հարևան Միտտանիի (տեքստում՝ Խուրրի) աջակցության մասին: Այս առնչությամբ հիշատակելի է նույն արքայի և Կիցգուվատնայի (Կիլիկիա) արքա Սունասսուրայի միջև կնքված պայմանագիրը (տե՛ս ստորև), որտեղ Իսուվայի նվաճումը ներկայացված է շատ ավելի հանգամանորեն: Առնուվանդասի տեքստում որոշակիացվում է Իսուվային աջակցող Միտտանիի արքայի անունը՝ Սաուստատար:

KUB XXIII 72+[3]

Առնուվանդաս I-ի և Վերին Եփրատի ավազանի մեծաքանակ երկրների միջև կնքված պայմանագիր-հրահանգ: Տեքստում շարադրվում են պայմանագրի կնքմանը նախորդած վերինեփրատյան մի շարք երկրների (Պախխուվա, Արխիտա) հակախեթական ապստամբության իրադարձությունները. թվարկվում են շուրջ երկու տասնյակ երկրներ և բնակավայրեր: Այս արտակարգ կարևոր տեքստը թույլ է տալիս պատկերացում կազմել վերինեփրատյան տարածաշրջանի պատմական աշխարհագրության մասին: Ըստ էության սա խեթական տեքստերի շարքում Իսուվայի և հարակից տարածքների վերաբերյալ տեղանվանական և անձնանվանական առավել մեծաքանակ նյութ պարունակող սկզբնաղբյուրն է:

Միաժամանակ այս տեքստը թույլ է տալիս վստահաբար եզրակացնել, որ քննարկվող ժամանակահատվածում Իսուվայում և դրան

---

[3] Պայմանագրի տեքստի հրատարակությունները տե՛ս Sayce A. H., Hittite and Moscho-Hittite, Revue hittite et asanique, 1930, 1, fasc.1, pp. 5-8 (թարգմանաբար); Gurney O. R., Mita of Pahhuwa, Liverpool Annals of Archaeology and Anthropology, 1948, 28, pp. 32 48 (թարգմանաբար); Hoffner H. A. Jr., A Join to the Hittite Mita text, Journal of Cuneiform Studies, 1976, 28, pp. 60 62 (1684/u կցաբեկորը); Խաչատրյան Վ.Ն., Հայաստանը մ.թ.ա. XV VII դարերում, Երեվան, 1998, էջ 87 93 (հատված. թարգման.); Kosyan A., Arnuwandas I in the East, Armenian Journal of Near Eastern Studies, 2006, I, pp. 72 97; Reichsmuth S., Mita von Pahhuwa (CTH 146). - In: Hethitologie in Dresden, Bd. 35 (Hrsg. R. Fischer, D. Groddek und H. Marquardt), Wiesbaden, 2011, S. 109-144 (= Dresdner Beiträge zur Hethitologie).

հարակից շրջաններում դեռևս գոյություն չուներ միասնական պետականություն: Տարածաշրջանը ներկայացված էր նոմային տիպի մեծաքանակ ցեղային կառույցներից:

KUB XXVI 62[4]

Այս տեքստը Խեթական տերության ազդեցության ոլորտում ընկած Փոքր Ասիայի հյուսիսարևելյան շրջանների (կասկական ցեղերի տարածքը) և վերինեփրատյան երկրների առանձին բնակավայրերից զինծառայության վերցված զինվորների ցուցակն է:

Հիշատակվող տեղանուններն են՝ Սալա, Էրխիտա (նախորդ տեքստում՝ Արխիտա), Լիտտա, Տեմիյա (նախորդում՝ Տիմմիյա), որոնցից երեքը հայտնի են նաև այլ աղբյուրներից: Մասնավորապես Արխիտա քաղաքը (բառասկզբում ա:ե հերթագայությամբ) հիշատակվում է KUB XXIII 72+-ում՝ որպես հակախեթական դիրքորոշում ունեցող Պախխուվայի դաշնակից, ինչպես նաև խեթա-հայասական մի պայմանագրում (KUB XXVI 39) հիշատակվում է Արխիտայի Ամպրոպի աստվածը[5]: Իսկ Տեմիյան նույնն է, ինչ միևնույն տեքստում պախխուվացիների հարձակումներից տուժած Տիմմիյան[6]: Ինչ վերաբերում է Սալային, ապա այն վկայված է մեկ այլ տեքստում՝ որպես Խեթական տերության ազդեցության գոտու արևելյան շրջաններից մյուս կողմ ընկած բնակավայր[7]:

---

[4] Այս և նմանատիպ տեքստերի մի մասի հրատարակություն – հետազոտությունը տե՛ս von Schuler E., Die Kaškäer, Berlin, 1965, 134ff.: Ստորև հղվող հատվածի գիտական տառադարձումը՝ S. 145; նաև Քոսյան Ա., Խեթական KUB XXVI 62 սեպագիր տեքստը և Վերին Եփրատի ավազանի պատմական աշխարհագրության խնդիրները, ՄՄԱԵԺ, 2004, XXIII, էջ 472-484 (գիտ.տառադ., թարգմ. և մեկնաբանություն):

[5] Տեքստի հրատարակությունը և մեկնաբանությունները Տե՛ս Քոսյան Ա., Հայասայի աստվածները (KUB XXVI 39), ՄՄԱԵԺ, 2005, XXIV, 444 457:

[6] Տեմիյա Տիմմիյայի առնչությամբ առաջարկվել է համադրությունը անտիկ աղբյուրների Ցիմենոսի և հետագայի հայկ. Ջիմին բնակավայրի հետ Երզնկայի դաշտում (կարծիքների համար տե՛ս Քոսյան Ա., Հայկական լեռնաշխարհի տեղանունները (ըստ խեթական սեպագիր աղբյուրների), Երևան, 2004, էջ 97):

[7] Տե՛ս Քոսյան Ա., Հայկական լեռնաշխարհի տեղանունները, էջ 84:

KBo I 5+[8]

Պայմանագիր Թուդխալիյաս II ի և Կիցցուվատնայի արքա Սունաասսուրայի միջև, որը պահպանվել է երկու լեզուներով՝ խեթերեն և աքքադերեն (յուրաքանչյուրը մի քանի տարբերակով): KBo I 5+-ը պայմանագրի աքքադերեն տարբերակն է: Նախկինում այս պայմանագիրը վերագրվում էր Սուպպիլուլիումաս I-ին, սակայն հետագայում վերաթվագրվեց ավելի վաղ շրջանով[9]:

Պայմանագրի ներածականում խեթական արքան որպես նախադեպ հիշատակում է Իսուվայի նվաճման հետ կապված մի իրադարձություն: Ըստ նրա՝ Իսուվան խեթական տիրապետության տակ էր գտնվել, սակայն հետագայում ապստամբել էր ու խեթական զորքի առաջխաղացման ժամանակ հեռացել Խուրրի երկիր (Միտտանի): Վերջինիս արքան հրաժարվել էր վերադարձնել փախստականներին, ավելին՝ միտտանական զորքը մտել և ասպատակել էր Իսուվան: Այս տեղեկությունը կարող է վկայել հօգուտ այն ենթադրության, որ նախքան խեթական նվաճումը Իսուվան պետք է դաշնակցային հարաբերություններ ունենար իր հարավային հարևան Միտտանիի հետ:

KUB XXXI 103[10]

---

[8] CTH 41 և 131, հրատ.՝ Weidner E., Politische Dokumente aus Kleinasien, Leipzig, 1923, S. 88ff. Götze A., Das hethitische Fragment des Šunaššura-Vertrags, Zeitschrift für Assyriologie, 1928, 36, S. 11-18. Del Monte G., 1981, Note sui tratti fra Hattusa e Kizuwatna, Oriens Antiquus, 1981, 20, p. 215ff. Beckman G., Hittite Diplomatic Texts, II ed., Atlanta, 1999, Nr. 2, p. 17ff. (թարգման.); Altman A., The Išuwa Affair in the Šattiwaza Treaty (CTH 51: A, obv. 10-24) Reconsidered, Ugarit-Forschungen, 2001, Bd.32, p. 122ff. (հատված. թարգման.):

[9] Wilhelm G., Zur ersten Zeile des Šunaššura Vertrages In: Documenta Asiae Minoris (Fs.H.Otten), Wiesbaden, 1988, S. 359 370; նաև՝ Del Monte G., Note sui tratti fra Hattusa e Kizuwatna, Oriens Antiquus, 1981, 20, p. 219f. և Beal R., The History of Kizzuwatna and the Date of the Šunaššura Treaty, Orientalia, 1986, N 55, pp. 424-445.

[10] CTH 212.1, թարգմանաբար հրատ. Torri G., Militärische Feldzüge nach Ostanatolien in der mittelhethitischen Zeit, Altorientalische Forschungen, 2005, 32/2, S. 391ff. (հատվածական); Devecchi E., Trattati internazionali ittiti, Brescia, 2015, p.95f. (թարգմանաբար):

Այս տեքստը, որը խեթական արքայի և վերինեփրատյան երկրներից մի քանիսի հետ կնքված պայմանագիր կամ հրահանգ է, անմիջականորեն առնչվում է KUB XXIII 72+-ին: Պետք է նշել, որ այն կազմված է հողի նվիրատվության ակտերին հատուկ եղանակով: Սա կարող է ակնարկել հօգուտ այն ենթադրության, որ, հնարավոր է, KUB XXIII 72+-ի կնքմանը նախորդել է վերինեփրատյան տոհմային ազնվականության որոշ ներկայացուցիչներին հողատարածքների հատկացումը (հնարավոր է՝ խեթական արքան ուղղակի ճանաչել է նրանց ժառանգական իրավունքները)՝ որպես ապագայում այդ անձանց հավատարմության երաշխիք:

Այստեղ հիշատակվում են KUB XXIII 72+-ում վկայված Պախխուվա, Խուրրի երկրները, Մալդիա քաղաքը, նաև Իսուվայում և հարակից շրջաններում գործող հակախեթական ուժերից մեկի առաջնորդը (ոմն Խասսանաս): Դատելով այս զգալիորեն տուժած տեքստի պահպանված հատվածներից՝ խեթական արքան վերինեփրատյան երկրներից ակնկալում էր հավատարմություն և որոշակի պարտավորություններ (աջակցություն արքային պատերազմի ժամանակ, այլ պետության բանագնացի ձերբակալություն և այլն):

KUB XXXI 79[11]

Այս տեքստը խեթական արքայի կողմից թագուհուն ուղղված նամակ է ինչ-որ գետով կասկական աշխատողներին մթերք հասցնելու մասին: Այստեղ նկարագրվում է Պիտտիյարիգա քաղաքից նավակներով կամ լաստերով մինչև Սամուխա հացի առաքումը: Ճանապարհին հիշատակվում է Արծիյա քաղաքը, որտեղից ևս լրացուցիչ մթերք էր բեռնվել:

Միևնույն նավարկելի գետի ափին վերոհիշյալ բնակավայրերի գտնվելու փաստը կարևոր է ինչպես քննարկվող ժամանակաշրջանի պատմական աշխարհագրության խնդիրների, այնպես էլ վերինեփրատյան տարածաշրջանում Խեթական տերության արտաքին քաղա-

[11] CTH 188, հրատ. Hagenbuchner A., 1989, Die Korrespondenz der Hethiter, Heidelberg, 1989 (= TdH 15), S. 136ff.; Hoffner H. A. Jr., 2009, Letters from the Hittite Kingdom, Atlanta, 2009, p. 81ff.; Marizza M., Lettere ittite di re e dignitari, Brescia, 2009, p. 123ff.

քականության լուսաբանման տեսանկյունից: Խնդիրն այն է, որ ներկայումս դեռևս լուծված չէ այս գետի ինքնության հարցը (Եփրատ կամ Հալիս)[12]:

IBoT I 36[13]

Այս ընդարձակ տեքստը խեթական մայրաքաղաք Խաթթուսասում գտնվող արքայական պալատի պահակային ծառայության վերաբերյալ հրահանգ է, որտեղ հանգամանորեն ներկայացվում է այդ ծառայության առօրյան:

Ի թիվս այլ հարցերի՝ այստեղ հիշատակվում են ծառայության կազմ ընդգրկված կումմախացի զինվորները, ինչը կարող է վկայել արևելյան շրջաններից՝ վերջիններիս նվաճումից հետո զինվորների հավաքագրման մասին:

KBo XVI 45[14]

Այս տեքստի թվագրումը մ.թ.ա. XV դարի շրջաններում պարզ է հնագրական չափանիշների լույսի ներքո[15], սակայն դրա վերագրումը

---

[12] Եփրատ = Bilgiç E., Die Ortsnamen der "kappadokischen" Urkunden im Rahmen der alten Sprachen Anatoliens, Archiv für Orientforschung, 1945-1951, 15, S. 29f.; Houwink ten Cate Ph. H. J., The Records of the Early Hittite Empire, Istanbul, 1970, p. 62 n.31; Хачатрян В. Н., Восточные провинции Хеттской империи, Ереван, 1971, стр. 54сл.; Ünal A., Hattušili III, Bd.1,1 und 1,2, Heidelberg (= TdH 3), S. 209f.; Laroche E., Toponymes Hittites ou Pre-Hittites dans la Turquie moderne, Hethitica, 1985, VI, p. 91f. և այլն; Հալիս = Garstang J. and Gurney O. R., The Geography of the Hittite Empire, London, 1959, p. 33ff.; Forlanini M., Appunti di geografia etea. - In: Studia Mediterranea 1 (=Fs.P.Meriggi), Pavia, 1979, p. 184 n. 105 և այլն:

[13] CTH 262: հրատ. Jakob Rost L., Beiträge zum hethitischen Hofzeremoniell (IBoT I 36), Mitteilungen des Instituts für Orientforschung, 1966, 11, S. 165ff.; Güterbock H.G. and den Hout Th. P. J., The Hittite Instruction for the Royal Bodyguard, Chicago (= Assyriological Studies 24), 1991.

[14] CTH 832 («տարբեր բովանդակությամբ խեթերեն բեկորներ» վերտառությամբ); առայժմ հրատարակված է միայն ինքնագիր եղանակով:

[15] Koşak S., Konkordanz der hethitischen Keilschrifttafeln, T.2. Die Textfunde der Grabungen in Boğazköy 1931-1939, Wiesbaden, 2005, S. 166.

որևէ խեթական արքայի խնդրահարույց է: Թերևս այն կարող է տարվել նույն դարի առաջին կես (հնարավոր է՝ Տելեպինուս): Նմանապես պարզ չէ դրա բնույթը (պայմանագիր, հրահանգ կամ որևէ այլ կարգի տեքստ): Նկատվել է, որ սա, այնուամենայնիվ, կարող է պայմանագիր լինել, քանի որ խեթական արքան դիմում է հայասացիներին հոգնակի թվի երկրորդ դեմքով, ինչը հիշեցնում է «Թուդխալիյաս II – Մարիյա+ հայասացիներ» պայմանագրի ոճը[16]: Տեքստի կառուցվածքը և որոշ օգտագործված բառերի կիրառությունը վկայում են դրա պատկանելությունը այսպես կոչված išhiul տիպի պայմանագրերին, որոնք հատկանշական են Առնուվանդաս I-ի շրջանին[17]:

KOSYAN ARAM

ARMENIAN HIGHLAND IN THE XV CENTURY B.C. CUNEIFORM HITTITE SOURCES (OVERVIEW OF TEXTS)

A number of Hittite cuneiform texts dated with the XV century B.C. contain valuable information regarding several polical entities located in the western provinces of the Armenian Highland - Isuwa, Maldiya, Zuhma, Hurri etc. Among them are of considerable interest the Annals of the kings Tudhaliya II and Arnuwanda I, a collective treaty-instruction dated with Arnuwanda I, the Treaty between Tudhaliya II and Sunassura of Kizzuwatna, also KUB XXVI 62, KUB XXXI 103, KUB XXXI 79, KBo XVI 45 and IBoT I 36.

---

[16] Տե՛ս Քոսյան Ա., Հայկական լեռնաշխարհի տեղանունները, էջ 128, պայմանագիրը տե՛ս Քոսյան Ա., մ.թ.ա. XIV դարի խեթա-հայասական միջպետական պայմանագրերը, Երևան, 2016, էջ 60-67:

[17] Pecchioli Daddi Fr., A "New" Instruction from Arnuwanda I. In: Silva Anatolica: Anatolian Studies Presented to Maciej Popko on the Occasion of his 65th Birthday (ed. P. Taracha), Warsaw, 2002, S. 263; Pecchioli Daddi Fr., Die mittelhethitischen *išhiul* Texte, Altorientalische Forschungen, 2005, 32/2, S. 286, Anm. 51. Հեղինակը նշում է, որ նույնատիպ ընդամենը մեկ տեքստ է առկա, որը կազմված է Առնուվանդաս I-ի օրոք (KUB XXVI 10): Նա նշում է տեքստում EN/*BEL* ^{NA4}KIŠIB «կնիքի տեր» եզրույթը, որը չնայած վկայված է Տելեպինուսի շրջանից, սակայն պայմանագրի ոճը հիշեցնում է Առնուվանդասի շրջանը:

ՅԱԿԱՆՅԱՆ ՌՈՒՍԼԱՆ

ՄԻՋԻՆԱՍՈՐԵՍՏԱՆՅԱՆ ՏԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

Աշշուրը և միտաննական խնդիրը

Ք.ա. XV դարի կեսի Աշշուր պետության քաղաքական պատմության մասին քիչ բան է հայտնի: Ք.ա. մոտ 1440-1420 թվականների ընթացքում[1] Աշշուրը նվաճվում է միտտանական արքա Սաուսսադատտարի կողմից: Սակայն, պետք է նշել, որ Միտաննիի տիրապետության ներքո Աշշուրի ենթակայության խնդիրները՝ շարունակում են մնալ քննարկման փուլում[2]:

Աշշուրը նվաճելուց հետո միտաննական արքայի հրամանով քանդվում են Աշշուրում Պուզուր-Աշշուր III-ի (Ք.ա. XV դարի 2-րդ կես) կողմից կառուցված «Նոր քաղաքի» պարիսպները[3]: Հետագայում Աշշուր-բել-նիշեշուն (Ք.ա. 1407-1399 թթ.[4]) վերականգնեց այն[5]: Ելնելով

---

[1] Koliński R., Making Mittani Assyrian, Understanding Hegemonic Practices of the Early Assyrian Empire, Essays dedicated to Frans Wiggermann, B. S. During (ed.), Leiden, 2015, p. 9; Llop-Raduà J., Foreign Kings in the Middle Assyrian Archival Documentation, Understanding Hegemonic Practices of the Early Assyrian Empire, in Düring B. (ed.), Essays Dedicated to Frans Wiggermann (Consolidating Empires Project I), Leiden, 2015, p. 244; Lion B., Assur unter der Mittaniherrschaft, in J. Renger (ed.), Assur - Gott, Stadt und Land, Colloquien der Deutschen Orient-Gesellschaft 5, Wiesbaden, 2011, S. 149-67.

[2] Lion B., Assur unter der Mittaniherrschaft, S. 149ff.

[3] Grayson A. K., Assyrian Rulers of the Third and Second Millennia BC (to 1115 BC), The Royal Inscriptions of Mesopotamia, Assyrian Periods, Vol. 1 (այսուհետև՝ RIMA, 1), Toronto, 1987, A.0.61.1, II. 5 10; A.0.61.2 3, A.0.73.1, 13 21; Յականյան Ռ., Ասորեստանի պատմության պարբերացման հարցի շուրջ, Մերձավոր Արևելք, 2014, թիվ IX-X, էջ 235-236:

[4] Ք.ա. II հազարամյակի մերձավորարևելյան և մասնավորապես միջինասորեստանյան ժամանակագրության վերաբերյալ մանրամասն տե՛ս Boese J., Wilhelm G., Aššur-dan I, Ninurta-apil-ekur und die mittelassyrische Chronologie, Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlandes, 1979, N 71, S. 19-38; Wilhelm G., J. Boese, Absolute Chronologie und die hethitische Geschichte des 15. und 14.

Աշշուր-բել նիշեշուի ամրաշինարարական գործունեությունից, եգիպտա-միտաննական հակամարտությունից և Միտաննիում օրեցօր նկատվող քաղաքական ճգնաժամից[6]՝ արդեն Աշշուր-բել-նիշեշուի կառավարման սկզբներից կարելի է ամենայն վստահությամբ նշել, որ Աշշուրի արքան գործում էր որպես անկախ տիրակալ[7]: Դեռ ավելին՝ ելնելով միջազգային հարաբերությունների ընձեռած բարենպաստ պայմաններից՝ Աշշուր-բել-նիշեշուն, օգտագործելով հարմար առիթը, առաջին հերթին կարգավորում է հարաբերությունները հարավային հարևանի՝ Կասսիտական Բաբելոնիայի հետ: Աշշուր-բել-նիշեշուի և Բաբելոնիայի արքա Կարաինդաշ I-ի միջև կնքվեց մի նոր պայմանագիր[8], որն, ըստ երևույթին, կրկնում էր Պուզուր-Աշշուր III-ի և

Jahrhunderts v. Chr. In: P. Åström (ed.), High, Middle or Low? Acts of an International Colloquium on Absolute Chronology held at the University of Gothenburg 20th–22nd August 1987, Part 1, Gothenburg, 74–117; Reade J., Assyrian King-Lists, the Royal Tombs of Ur, and Indus Origins, Journal of Near Eastern Studies, 2001, N 60/1, pp. 1-29; Kitchen K. A., Egyptian and Related Chronologies – Look, no Sciences, no Pots!, The Synchronisation of Civilisations in the Eastern Mediterranean in the Second Millennium BC. III, Edited by M. Bietak and E. Czerny, Proceedings of the SCIEM 2000–2003 2nd Euro Conference, Wien 2007, pp. 164-171; Novák M., Mittani Empire and the Question of Absolute Chronology: Some Archaeological Considerations, in The Synchronisation of Civilisations in the Eastern Mediterranean in the Second Millennium BC. III, pp. 389-401, և բազում այլք:

[5] RIMA, I, A.0.69. II. 4-10, 1001, p. 100.

[6] Մանրամասն տե՛ս Ավետիսյան Հ. Մ., Հայկական լեռնաշխարհի և Հյուսիսային Միջագետքի պետական կազմավորումների քաղաքական պատմությունը մ.թ.ա. XVII-IX դդ., Երևան, 2002, էջ 41-63: Аветисян Г. М., Государство Митанни (военно-политическая история в XVII-XIII вв. до н.э.), Ереван, 1984, стр. 43 и сл.

[7] Ցականյան Ռ., Ասորեստանի պատմության պարբերացման հարցի շուրջ, էջ 236:

[8] «*[m]Ka ra in da áš* MAN *(šar4) [kur] Kar d[u ni áš] ù [m]Aš šur* EN.UN.MEŠ šú MAN *[kur]Aš-šur rík sa a ni ina bi rit šú nu a na a ḫa meš ú ra ki su ù ma mi tu ina* UGU *mi iṣ-ri an-na ma a-na a ḫa-meš id di nu*» «Կարդունիաշի (Բաբելոն Ռ.Ց.) արքա Կարաինդաշը և Աշշուրի արքա Աշշուր-բել նիշեշուն փոխադարձ համաձայնության եկան և փոխադարձ երդում տվեցին այս սահմանի հարցում», հմմտ.՝ Grayson A. K., Assyrian and Babylonian Chronicles, New York, 1975,

Բուրնա-Բուրիաշ I ի միջև կնքված պայմանագիրը, ըստ որի՝ կարգա վորվում էին սահմանային վեճերը երկու երկրների միջև[9]:

Աշշուր բել նիշեշուի և Բաբելոնիայի արքա Կարաինդաշ I-ի միջև կնքված պայմանագրի փաստից ելնելով՝ ակնհայտ է, որ Աշշուրի տիրակալը, հազիվ թե լինելով միտաննական տիրապետության տակ, կարողանար միջազգային դիվանագիտական կապ հաստատել երրորդ երկրի հետ: Այսպիսով, ելնելով վերոշարադրյալից. Կարելի է հստակորեն նշել, որ Աշշուրի նկատմամբ միտաննական տիրապետության ժամանակագրական խնդիրները վերանայման և նորովի խմբագրման կարիք ունեն:

Աշշուր-բել-նիշեշուի հաջորդները շարունակեցին նրա քաղաքականությունը, և Աշշուրը, դուրս գալով քաղաքական ճգնաժամից, բռնեց հզորացման ուղին:

Աշշուր-բել-նիշեշուի եղբորորդի Աշշուր-նադին-ախխե II-ը (Ք.ա. 1390-1381 թթ.)[10], ըստ էլ-Ամարնայի EA 16 նամակի[11], ըստ երևույթին դիվանագիտական կապ է հաստատել Եգիպտոսի հետ և փարավոնից (Ամենհոտեպ III-ից (Ք.ա. 1390-1352 թթ.) ստացել 20 տաղանդ (մոտ 606 կգ) ոսկի՝

«(19-21)*[u]n-du* ^{md}*A-šur-na-din*-ŠEŠ.MEŠ *a-bi a-na* KUR *Mi-iṣ-ri iš-pu-ru 20* GUN.KÙ.GI *ul-te-bi-lu-né-šu*» -

«(19-21)*Երբ Աշշուր-նադին-ախխեն՝ իմ հայրը* (նախնին - Ռ.Ց.),

Chron. 21, II. 1-4; Glassner J.-J., Mesopotamian Chronicles, Atlanta, 2004, Chron. 10, II.1-4.

[9] «^{m}*Pu-zur-Aš-šur šar*$_4$ ^{kur}*Aš-šur ù* ^{m}*Bur-na-bur-ia-áš šar*$_4$ ^{kur}*Kar-du-niáš it-mu-ma mi-iṣ-ri ta-ḫu-mu an-na-ma ú-ki-nu*» - «Աշշուրի արքա Պուզուր-Աշշուրը և Կարդունիաշի արքա Բուրնա-բուրիաշը սահմանի վերաբերյալ երդվեցին և հաստատեցին այդ սահմանագիծը», հմմտ.՝ Grayson A. K., Assyrian and Babylonian Chronicles, Chron. 21, II. 5 7; Glassner J. J., Mesopotamian Chronicles, Chron. 10, II.5 7; Galter H. D., Die Synchronistische Geschichte und die assyrische Granz politik, History of the Ancient Near East, Monographs III/2, Padova, 1999, S. 30.

[10] Քիչ հավանականությամբ գուցե նաև Աշշուր նադին ախխե I ը (Ք.ա. XV դարի 2-րդ կես):

[11] Նամակը փարավոն Ամենհոտեպ IV-ին (Էխնաթոն) (Ք.ա. 1352-1336 թթ.) ուղարկվել է Աշշուր-ուբալլիթ I-ի (Ք.ա. 1353-1318 թթ.) կողմից՝ Kitchen K. A., Egyptian and Related Chronologies - Look, no Sciences, no Pots!, p. 165f.

գրել է Եգիպտոս, նրան ուղարկվել է 20 տաղանդ ոսկի»[12]:

Աշշուր բել նիշեշուի որդի Էրիբա Ադադ I-ը (Ք.ա. 1380-1354 թթ.) իր տնտեսական, շինարարական և այլ բնույթի արձանագրություններում իր տիտղոսաշարին արդեն ավելացնում է «արքա» տիտղոսը[13]: Էրիբա-Ադադ I-ին հաջորդեց որդին՝ Աշշուր-ուբալլիթ I-ը (Ք.ա. 1353-1318 թթ.)[14], որն իրեն դրսևորեց որպես հմուտ դիվանագետ և ռազմական գործիչ:

Աշշուր-ուբալլիթ I-ի կառավարման ընթացքում Աշշուրը ոչ միայն դուրս եկավ իր սահմաններից և անցավ հարձակման, այլև սկսեց միջամտել հարևան երկրների ներքին գործերին: Արևելքից աշշուրցիները սկսեցին ակտիվորեն սպառնալ Միտաննիին, դիվանագիտական հարաբերություններ հաստատեցին Եգիպտոսի և Բաբելոնիայի հետ:

Միտաննիի կողմից Աշշուրի գրավման մասին աղբյուրագիտական հիշատակությունը գալիս է Աշշուր-ուբալլիթ I-ի ժամանակաշրջանից՝ խեթական արքա Սուպպիլուլիումա I-ի (Ք.ա. 1350-1322 թթ.) ու միտաննական արքայազն Շատտիվազայի պայմանագրի տեքստից՝

«(8) ***dalāt kaspi u ḫurāṣi ša [m]Sauššatar šarru abu ab abī-ya ištu māt [URU]A[ššur]*** **(9)** ***ana multarriḫutti ana dannatī-šu ilqû ina [URU]Waššukkanni ana*** **E.GAL-*šu iz-zaqap-šunu***»

«(8) *Այսպես է ասում Շատտիվազան՝ Տուշրաթթա արքայի որդին՝ դուռն արծաթե և ոսկե, որը Սաուշշատարը* (Սաուսսադատտար - Ռ.Յ.)՝ *իմ նախապապը, Աշշուրի երկրից* (9) *իր զորությունը վեհացնելու համար, նա բերեց իր պալատ՝ Վաշշուկաննի*»[15]:

---

[12] Artzi P., EA 16, Altorientalisce Foeschungen, 1997, № 24, pp. 320-336; Moran W. L., The Amarna Letters, Baltimore-London, 1992, EA 16, p. 39.

[13] Յականյան Ռ., Ասորեստանի պատմության պարբերացման հարցի շուրջ, էջ 237:

[14] Աշշուր ուբալլիթ I ի օրոք Աշշուրի ռազմաքաղաքական պատմության վերաբերյալ մանրամասն տե՛ս Maidman M. P., Nuzi, the Club of the Great Powers, and the Chronology of the Fourteenth Century, KASKAL, 2011, N 8, p. 100ff.: Շատ հետաքրքիր է նաև Աշշուր ուբալլիթ I ի վերաբերյալ Ջ. Ջ. Գլասների կողմից՝ որպես Ասորեստանի վերածննդի ճարտարապետ բնութագրումը՝ "Aššur-uballit I was the architect of Assyrian resurgence" - Glassner J.-J., Mesopotamian Chronicles, p. 176.

[15] Weidner E. F., Politische Dokumente aus Kleinasien, Die Staatsvertrage in akka-

Այս պայմանագիրը կնքվել է Միտաննիի համար օրհասական պահին: Երկրում բռնկված ներքաղաքական պայքարը պալատական հեղաշրջմամբ, որի արդյունքում Միտաննիի արքա Տուշրատտան սպանվեց: Մի կարծիքի համաձայն՝ Միտաննիում պալատական հեղաշրջման թիկունքում կանգնած է եղել Խաթթիի արքա Սուպպիլուլիումա I-ը[16]: Միտաննիում, ըստ երևույթին, նույն Սուպպիլուլիումա I-ի օժանդակությամբ գահ է բարձրանում Արտադամա II-ը: Սակայն քիչ անց միտաննական գահին նրան փոխարինում է որդին՝ Շուտտառնա III-ը: Չի բացառվում, որ Շուտտառնա III-ի նշանակումը տեղի ունենար Աշշուրի արքա Աշշուր-ուբալլիթ I-ի հովանավորությամբ[17]: Որին, ինչպես կտեսնենք ստորև, իր երախտագիտությունն է հայտնում Շուտտառնա III-ը: Իսկ, ինչ վերաբերում է գահի օրինական ժառանգորդ Շատտիվազային, ապա նա, փախուստի դիմելով, հայտնվում է նախ՝ Բաբելոնիայում, այնուհետև՝ Խաթթիում: Խաթթիի արքան իր հովանավորության տակ է վերցնում Շատտիվազային[18]:

Շուտտառնա III-ը, հայտնվելով անհուսալի իրավիճակում, օգնության խնդրանքով դիմում է Միտաննիի նախկին «հպատակներին»՝ Աշշուրի արքա Աշշուր-ուբալլիթ I-ին ու Ալզիի Անտարատլի արքային: Այստեղ հետաքրքիր է նաև այն, որ այս առումով Շատտիվազան իր անհանգստությունն է հայտնում՝ նշելով, որ նա ստորացավ անգամ իր հոր ծառայի առջև, որը հարկեր չէր վճարում և դեռ ավելին՝ իր հարըս-

---

discher Sprache aus dem Archiv von Boghazkoy, Leipzig, 1923, N 2, S. 38-39; Beckman G., Hittite Diplomatic Texts, Atlanta, 1996, N 6B, § 2, p. 44f.; Wilhelm G., Bemerkungen zu der Erklärung Šattiwazzas CTH 52, Festschrift in Honor of Belkis Dinçol and Ali Dinçol, ed. A. Alparslan, M. Doğan-Alparslan, H. Peker, Istanbul, 2007, S. 778.

[16] Na'aman N., Tushratta's Murder in Shuppiluliuma's Letter to Akhenaten (EA43), Abr Nahrain, 1995, N 33, pp. 116 118; Ավետիսյան Հ. Մ., Հայկական լեռնաշխարհի և Հյուսիսային Միջագետքի պետական կազմավորումների ..., էջ 75 76; Аветисян Г. М., Государство Митанни, стр. 83 и сл.

[17] Koliński R., Making Mittani Assyrian, p. 9.

[18] Maidman M. P., Nuzi, the Club of the Great Powers, and the Chronology of the Fourteenth Century, p. 127ff.; Bryce T., The Kingdom of the Hittites, Oxford, 2005, pp. 180, 184; Koliński R., Making Mittani Assyrian, p. 10.

տությունն է նվիրաբերում: Շուտտառնա III-ը վերադարձրեց նաև Սաուսսադատտարի կողմից տարված «*արծաթե և ոսկե դուռը*»[19]:

Պայմանագրի տեքստից ակնհայտ է, որ Աշշուր-ուբալլիթ I-ը, ամենայն հավանականությամբ, իր կառավարման առաջին իսկ տարում հրաժարվել է հարկ առաքել միտաննական արքունիք: Հետաքրքիր է նաև այն, որ Աշշուրի նկատմամբ իր հավակնություններն ուներ նաև կասսիտական Բաբելոնիան: Բաբելոնիայի արքա Բուրնա-Բուրիաշ II-ը (Ք.ա. 1350-1323 թթ.) եգիպտոսի փարավոն Էխնաթոնին ուղարկած Էլ-Ամարնայի EA9 նամակում Աշշուր-ուբալլիթ I-ին համարում է հպատակ:

Բուրնա-Բուրիաշ II-ը գրում է հետևյալը. «*(31-35.) Այժմ, ինչ վերաբերում է իմ աշշուրական հպատակներին, ապա ես չեմ նրանց ուղարկել ձեզ մոտ: Ինչո՞ւ են նրանք իրենց կամքով գալիս ձեր երկիր: Եթե դու հարգում* (տառացի՝ սիրում) *ես ինձ, ապա նրանք ոչ մի գործարք չեն կատարելու: Ձեռնունայն ուղարկիր նրանց ինձ մոտ*»[20]:

Էլ-Ամարնայի նամակագրությունների ժամանակագրություններից հայտնի է, որ այս նամակը, ամենայն հավանականությամբ, գրվել է Աշշուր-ուբալլիթ I-ի կողմից Եգիպտոս առաքված դեսպանություններից հետո[21]: Սակայն, թե ինչ կապակցությամբ կամ իրադարձություններից հետո է Բուրնա-Բուրիաշ II-ն Աշշուրի արքային համարում իր հպատակ, արձանագրված ոչ մի տեղեկություն չկա: Համենայն դեպս հայտնի ոչ մի աղբյուր այդ մասին տեղեկություն չի հայտնում:

Ինչևէ, միտաննական հարցն իր ժամանակավոր լուծումը ստա-

---

[19] Weidner E. F., Politische Dokumente aus Kleinasien, № 2, տող 6-7; Beckman G., Hittite Diplomatic Texts, N 6B, § 2, p. 44; Wilhelm G., Bemerkungen zu der Erklärung Šattiwazzas CTH 52, S. 779; Koliński R., Making Mittani Assyrian, p. 9f.; Llop Radua J., Did the Assyrians Occupy the Euphrates elbow in the Middle Assyrian Period (Late Bronze Age)?, Broadening Horizons 3, Conference of Young Researchers Working in the Ancient Near East, F. Borrell Tena et al. eds., Barcelona, 2012, p. 209; Wilhelm G., The Kingdom of Mitanni in Second Millennium Upper Mesopotamia, in Civilizations of the Ancient Near East (ed. in Chieff J. M. Sasson), vol. II, New York, 1995, p. 1249f.

[20] Moran W. L. The Amarna Letters, p. 18.

[21] Տե՛ս EA15 և EA16 նամակները՝ Moran W. L. The Amarna Letters, p. 37ff.

ցավ այն ժամանակ, երբ խեթական ուժերի օժանդակությամբ Շատտիվազան բազմեց հայրական գահին: Ըստ պայմանագրի՝ Շատտիվազան պիտի ամուսնանար Սուպպիլուլիումա I-ի դստեր հետ. «*Արքայազն Շատտիվազան կլինի թագավոր Միտաննի երկրի, և Խաթթիի թագավորի* (Սուպպիլուլիումա I-ի - Ռ. Ց.) *դուստրը պետք է լինի Միտաննիի թագուհին*»[22]:

Այս գործընթացում Աշշուր-ուբալլիթ I-ը իրեն դրսևորեց որպես հեռատես քաղաքական գործիչ և չգնաց բացահայտ ընդհարման խեթերի հետ[23]:

Ինչպես վերևում նշվեց, Աշշուր-ուբալլիթ I-ը, ամենայն հավանականությամբ, նույն ժամանակահատվածում դիվանագիտական հարաբերություններ հաստատեց Բաբելոնիայի հետ: Վերջինիս հետ բարեկամությունն ամրապնդելու նպատակով Աշշուր-ուբալլիթ I-ն իր Մուբալլիտատ-շերուա դստերը կնության է տալիս Բաբելոնիայի արքա Բուրնա-Բուրիաշ II-ին (Ք.ա. 1365/50-1333/23 թթ.) կամ նրա որդի Կարաինդաշ II-ին[24]: Վերջինիս մասին իմանում ենք ասորեստանյան «Համաժամանակյան պատմության» Աշշուր-ուբալլիթ I-ին վերաբերող հատվածից: Ըստ «Համաժամանակյան պատմության»՝ Բաբելոնիայում Աշշուր-ուբալլիթ I-ի թոռ Կարախանդաշի դեմ ապստամբել էին կասսիտական զորքերը: Սպանված Կարախանդաշի փոխարեն գահը զավթել էր ազնվական Նազի-Բուգաշը[25]: Աշշուրական զորքերը ներխուժում են

---

[22] Beckman G., Hittite Diplomatic Texts, N 6A, § 7, p. 40; Bryce T., The Kingdom of the Hittites, p. 185; Bryce T., Letters of the Great Kings of the Ancient Near East: The Royal Correspondence of the Late Bronze Age, London - New York, 2003, p. 10.

[23] Bryce T., The Kingdom of the Hittites, p. 185.

[24] Այս առումով մասնագիտական գրականության մեջ տեղ գտած բազմաբնույթ վերականգնումների ու կարծիքների առումով տե՛ս Maidman M. P., Nuzi, the Club of the Great Powers, and the Chronology of the Fourteenth Century, p. 124f., 132ff; Mladjov I. The Immediate Successors of Burna Buriaš II Revisited, Nouvelles Assyriologiques Brèves et Utilitaires, 2016, N 1, p. 20; Mladjov I., More on the Immediate Successors of Burna Buriaš II, NABU, N 3, 2016, pp. 106-111.

[25] «*ina tar-ṣi* ^{m}*Aš-šur-^{ú}ti.la (Aššur-uballiṭ I)* LUGAL *(šar$_4$)* KUR *Aš-šur* ^{m}*Ka-ra-ḫar-da-áš* LUGAL KUR *Kardu-ni-áš* DUMU ^{munus}*Mu-bal-li-ta-at-^{d}Še-ru-ú-a* DUMU.MUNUS ^{m}*Aš-šur-^{u}ti.la* ÉRIN.MEŠ *Kaš-ši-e ib-bal-ki-tu-ma* GAZ-*šu* ^{m}*Na-zi-bu-ga-áš [*KUR

Բաբելոնիայի տարածք և մահապատժի ենթարկելով Նազի-Բուգաշին՝ գահ են բարձրացնում Բուրնա-Բուրիաշ II-ի որդի Կուրիգալզու II Կրտսերին (Ք.ա. 1332/22-1308/1298 թթ.)[26]: Կուրիգալզու II Կրտսերն Աշշուր-ուբալլիթ I-ի մահից հետո պատերազմ սկսեց վերջինիս որդի Էնլիլ-նիրարի I-ի (Ք.ա. 1317-1308 թթ.) դեմ և պարտություն կրեց[27]: Աշշուրաբաբելոնյան հերթական պատերազմի պատճառը կրկին սահմանային վեճերն էին:

Տվյալ ժամանակահատվածում Աշշուրը մեկը մյուսի հետևից ձեռնարկում է մի շարք հաջողված արշավներ՝ արևմուտքում երբեմնի հզոր միտաննական թագավորության, արևելքում՝ էլամական ցեղերի, հյուսիսում՝ Հայկական լեռնաշխարհի ցեղերի, իսկ հարավում՝ կասսիտների դեմ[28]: Էնլիլ-նիրարի I-ի որդի Արիկ-դեն-իլին (Ք.ա. 1307-1296 թթ.)

Kaš-šá}-a-a DUMU *la ma-ma-na* LUGAL$^{ú-te}$ *a-na* UGU-*šú-nu iš-šú-ú» - «Աշշուրի արքա Աշշուր-ուբալլիթի ժամանակ կասսիտական զորքերն ապստամբեցին Կարդունիաշի արքա Կարաիսարդաշի՝ Աշշուր-ուբալլիթի դստեր՝ Մուբալլիտատ-շերուայի որդու դեմ և սպանեցին նրան: Նրանք նստեցրին ոչ մեկի որդի կասսիտ Նազի-Բուգաշին նրանց վրա թագավոր»՝* Grayson A. K., Assyrian and Babylonian Chronicles, Chron. 21, col. I, II. 8 1; Glassner J.-J., Mesopotamian Chronicles, Chron. 10, II.8-12; Mladjov I. More on the Immediate Successors of Burna-Buriaš II, p. 106ff.

[26] *«[^{m}Aš-šur-^{ú}ti.l]a [a-na tu-u]r-ri gi-mil-li [šá ^{m}Ka-r]a-in-da-áš* DUMU [DUMU.MUNUS-*šú(?)] a-na* KUR *Kar-du-ni-áš il-lik [^{m}Na-z]i-bu-ga-áš* LUGAL *(šar$_4$)* KUR *Kar-du-ni-áš i-duk [^{m}Ku-r]i-gal-zu* DUMU ^{m}*Bur-na-bur-ia-áš [a]-na* LUGAL^{u-ti} *iš-kun ina* GIŠ.GU.ZA AD-*[šu] ú-[še-šib]» - «Աշշուր-ուբալլիթն արշավեց Կարդունիաշ՝ վրեժխնդիր լինելու Կարաինդաշի՝ իր դստեր որդու համար: Նա սպանեց Կարդունիաշի արքա Նազի-Բուգաշին և իր հոր գահին բարձրացրեց Բուրնա-բուրիաշի որդուն՝ Կուրիգալզու Կրտսերին»՝* Grayson A. K., Assyrian and Babylonian Chronicles, Chron. 21, col.I, II. 13-17; Glassner J.-J., Mesopotamian Chronicles, Chron. 10, II.13 17; Mladjov I. More on the Immediate Successors of Burna Buriaš II, p. 109 f.

[27] Grayson A. K., Assyrian and Babylonian Chronicles, Chron. 21, col. I, II. 18 23; Glassner J. J., Mesopotamian Chronicles, Chron. 10, II.18 23; RIMA, 1, A.0.74. 1001, p. 119.

[28] Косян А. В., Евфратско-тигрская контактная зона в III - первой половине I тыс. до н.э., На стыке мир-систем: из истории контактных зон древности и современности, том I, 2016, стр. 86-88; Ցականյան Ռ., Ասորեստանի պատ-

նույնպես ակտիվ նվաճողական քաղաքականություն էր վարում: Նա մի շարք հաղթանակներ տարավ Միտաննիի նկատմամբ՝ երկրի սահմանները հարավ արևմուտքում հասցնելով մինչև Եփրատ գետի հոսանքի միջին շրջան:

Արիկ-դեն-իլին սկսում է կիրառել «**^{m}A-ri-ik-de-en-DINGIR (Arik-dîn-ili) LUGAL (šarru) dan-nu LUGAL (šar) KUR (māt) ^{d}Aš-šur**»՝ *«Արիկ-դեն-իլի հզոր արքա, Աշշուրի արքա»*[29] տիտղոսը, որն այսուհետև սովորական մի երևույթ պետք է դառնա ասորեստանյան արքաների տիտղոսաշարերում: Արիկ-դեն-իլի հաջորդները և մասնավորապես Ադադ-նիրարի I-ը (Ք.ա. 1295-1264 թթ.), սկսում է կիրառել արքայական իշխանության հզորությունը հաստատող տիտղոս՝ «**^{md}IŠKUR-ÉRIN.TÁH *(Adad-nārārī)* LUGAL KIŠ LUGAL *dan-nu* LUGAL KUR *Aš-šur* DUMU GÍD-DI-DINGIR *(Arik-dîn-ili)* LUGAL KUR *Aš-šur* DUMU ^{d}En-líl-ÉRIN-TÁH *(Enlil-nārārī)* LUGAL KUR *Aš-šur-ma***» - *«Ադադ-նիրարի կրեզերքի արքա, հզոր արքա, Աշշուրի արքա, Արիկդենիլիի որդին՝ Աշշուրի արքայի, Էնլիլ-ներարիի որդին՝ նույնպես Աշշուրի արքայի»*[30]:

Իսկ Թուկուլթի-Նինուրտա I-ն (Ք.ա. 1233-1197 թթ.) իր տիտղոսաշարին ավելացնում է ևս 14 տիտղոս, ինչպիսիք են՝ «***šar šarrāni***» - «*արքաների արքա*», «***bēl bēlē***» - «*տերերի տեր*», աստված և այլն[31]:

Շուլմանու-աշարեդ[32] I-ը (Ք.ա. 1263-1234 թթ.) և Թուկուլթի-Նինուրտա I-ը նույնպես վարում էին ակտիվ նվաճողական քաղաքակա-

---

մության պարբերացման հարցի շուրջ, էջ 238; Քոսյան Ա., Մ.թ.ա. XII դարի մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը, Երևան, 1999, էջ 14-16, 18-28, 73-76:

[29] RIMA, 1, A.0.75. 1, II. 1-3, p. 120.

[30] RIMA, 1, A.0.76.3, II. 1-4, p. 136.

[31] Sazonov V., Die mittalassyrischen, universalistischen Königstitle und Epitheta Tukultī-Ninurtas I (1242 1206), in Identites and Societies in the Ancient East Mediterranean Regions, ed. by T. R. Kämmerer, Alter Orient und Altes Testament, 2011, Band 390/1, S. 235 276; ինչպես նաև՝ Harmanşah Ö., Beyond Aššur: New Cities and the Assyrian Politics of Landscape, Bulletin of the American Schools of Oriental Research, No. 365, 2012, pp. 53-77.

[32] Աշշուրի այս արքայի անունն առավել հայտնի է *Սալմանասար* ձևով: Անվան այս ձևն առաջացել է Աստվածաշնչից՝ հունարենի միջնորդությամբ:

նություն՝ Աշշուրը դարձնելով տարածաշրջանի գերիզոր պետություն:

Այս շրջանում, ինչպես նշում է Ա. Քոսյանը, Աշշուրի. «արտաքին քաղաքականության գլխավոր խնդիրը հյուսիսից արևմուտք ձգվող և խեթերի կողմից վերահսկվող «կիսալուսնի» ճեղքումն էր, որը թույլ կտար ճանապարհ հարթել դեպի հյուսիսի մետաղների աղբյուրները և արևմուտքի առևտրական ուղիներն ու կենտրոնները»[33]:

Ադադ-նիրարի I-ի[34] և մասնավորապես Շուլմանու-աշարեդ I-ի հարվածների տակ ընկավ Միտաննիի պետությունը[35]: Իսկ Թուկուլթի-Նինուրտա I-ը Ք.ա. մոտ 1223 թվականին գրավեց և շուրջ 7 տարի իր իշխանությանը ենթարկեց Բաբելոնիան[36]: Նա գրեթե ամեն տարի առաջնորդում էր աշշուրական բանակը աշխարհագրական տարբեր

---

[33] Քոսյան Ա., Մ.թ.ա. XII դարի մերձավորարևելյան ճգնաժամը, էջ 13: Ժամանակաշրջանի քաղաքական պատմության վերաբերյալ մանրամասն տե՛ս Kertai D., The History of Middle-Assyrian Empire, TALANTA, XL-XLI, 2008-2009, pp. 25-51.

[34] RIMA, 1, A.0.76.3, II. 4-36, p. 136: Ադադ-նիրարի I-ի արձանագրություններից (RIMA, 1, A.0.76.1, II. 27 32, p. 132) մեկի համաձայն՝ դեպի Մուծրու և Շուբրիա երկրներ է արշավել նաև նրա պապ Աշշուր-ուբալլիթ I-ը: Ըստ ասորեստանյան «Համաժամանակյան պատմության»՝ Ադադ-նիրարի I-ի և Բաբելոնիայի արքա Նազի-Մուրուտտաշի միջև կրկին սահմանային խնդիրների պատճառով պատերազմ է բռնկվում, որն ավարտվում է Բաբելոնիայի արքայի պարտությամբ՝ Grayson A. K., Assyrian and Babylonian Chronicles, Chron. 21, col. I, II. 24-30; Glassner J.-J., Mesopotamian Chronicles, Chron. 10, col. I, II. 24-30.

[35] RIMA, 1, A.0.77.1, II. 56-87, p. 183f.; Sibata D., An Expedition of King Shalmaneser I and Prince Tukult-Ninurta to Carchemish, in: Y. Heffron, M. Worthington and A. Stone (eds.), At the Dawn of History: Ancient Near Eastern Studies in Honour of J. N. Postgate, Eisenbrauns, 2017, pp. 491-506.

[36] RIMA, 1, A.0.78.5, II. 48 69, p. 244f.; Grayson A. K., Assyrian and Babylonian Chronicles, Chron. 21, col. II, II. 1 3; Glassner J. J., Mesopotamian Chronicles, Chron. 10, col. II, II. 1 3; Llop Raduà J., The Boundary Between Assyria and Babylonia in the East Tigris Region the Reign of Tukultī Ninurta I (1233 1197 BC), Between the Cultures the Central Tigris Region from the 3rd to the 1st Millennium BC, Conference at Heidelberg January 22nd - 24th, 2009, ed. by P. A. Miglus, S. Mühl, 2011, pp. 209-215.

ուղղություններով: Նա ներխուժել է նաև Հայկական լեռնաշխարհ, որտեղ բախվել է Նաիրյան համադաշնության հետ[37]:

Շուտով՝ Ք.ա. XII–XI դարերում, տեղի են ունենում բնակլիմայական կտրուկ փոփոխություններ, որի արդյունքում Եփրատ և Տիգրիս գետերի մակարդակների կտրուկ անկում է նկատվում: Ծանր տնտեսական պայմաններն ու հաճախակի դարձած ամորեական ցեղերի ասպատակությունները տարածաշրջանում սրեցին և գրեթե քայքայման եզրին կանգնեցրին սոցիալ-տնտեսական և քաղաքական հարաբերությունները[38]: Այս ամենն էլ իր հերթին հանգեցնում է մերձավորարևելյան քաղաքական ու սոցիալ-տնտեսական կյանքի ճգնաժամի[39]:

Այս ամենից հետո միայն Թուկուլտի-ապիլ-Էշարրա (Թիգլաթպալասար) I-ի (Ք.ա. 1115-1077 թթ.) կառավարման ընթացքում քաղաքական կյանքի կարճատև ակտիվություն է նկատվում, որից հետո Աշշուրը կրկին ընկղմվում է քաղաքական քաոսի մեջ:

Զանգվածային տեղահանությունները Միջին-ասորեստանյան տերությունում

Նշված ժամանակաշրջանի աշշուրական արքաների կողմից զանգվածային տեղահանությունների ու վերաբնակեցումների վերաբերյալ տեղեկություններ գրեթե չկան կամ դրվագային բնույթ են կրում: Այն՝ որպես պետության արտաքին քաղաքականության բաղկացուցիչ, ի հայտ է եկել ավելի ուշ՝ Թուկուլտի-ապիլ-Էշարրա III-ի (Ք.ա. 745-727 թթ.) կառավարման ընթացքում[40]: Աշշուրի տարածք նվաճված

---

[37] RIMA, 1, A.0.78.3, p. 241f.

[38] Issar A. S., Zohar M., Climate Change - Environment and History of the Near East, New York, 2007, p. 163ff.; Muhl S., Middle Assyrian Territorial Practices in the Region of Ashur, Understanding Hegemonic Practices of the Early Assyrian Empire, ed. by F. Wiggermann, B. S. During, 2015, p. 49f.; Neumann J., Parpola S., Climatic Change and the Eleventh Tenth Century Eclipse in Assyria and Babylonia, Journal of Near Estern Studies, 1987, N 46, pp. 168 179.

[39] Այս մասին մանրամասն տե՛ս Քոսյան Ա., Մ.թ.ա. XII դարի մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը, էջ 81 138:

[40] Ցականյան Ռ., Զանգվածային վերաբնակեցումների քաղաքականությունը Ասորեստանում և Վանի թագավորությունում (Ք.ա. VIII-VII դդ.), Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, 2014, N XXIX, էջ 46-50:

երկրների բնակչության տեղափոխման առաջին արձանագրված դեպքը հանդիպում ենք Արիկ-դեն իլիի (Ք.ա. 1307-1296 թթ.) կառավարման տարիներին, ապա վերջինիս որդի Ադադնիրարի I (Ք.ա. 1295-1264 թթ.) օրոք՝ կապված միտաննական խնդրի հետ[41]: Սակայն պետք է նշել նաև, որ այս ժամանակահատվածում գերված բնակչությանը հիմնականում սրի են քաշում[42]:

Ի տարբերություն Արիկ-դեն-իլիի և Ադադնիրարի I-ի դեպքերի, որոնք կարծես թե դրվագային բնույթ ունեն և եզակի էին, երևույթն առավել հաճախակի է դառնում Շուլմանու-աշարեդ I-ի և նրա որդի Թուկուլտի-Նինուրտա I-ի կառավարման ժամանակաշրջանում:

Շուլմանու-աշարեդ I-ն Ուրուատրիի դեմ կատարած իր արշավանքի նկարագրության մեջ նշում է, որ 8 երկրի 51 քաղաքի բնակչությանը գերության է քշել[43]: Միտաննիի դեմ կատարած արշավանքի ընթացքում նա թալանում և ավերում է 180 քաղաք և տեղահանում ու կուրացնում 14.400 մարդու, որոնք կենդանի էին մնացել նրա արշավանքի արդյունքում[44]: Այստեղ ակնհայտ է, որ ասորեստանյան արքան վերոհիշյալ քաղաքների բնակչությանն ուղղակի կուրացրել և որպես ռազմական ավար է տարել:

Իսկ Թուկուլտի-Նինուրտա I-ը նշում է, որ իր կառավարման առաջին տարում մերձեփրատյան գոտուց տեղահանել է 28.800 խեթահպատակ բնակչություն[45]: Սակայն Շուլմանու-աշարեդ I-ի և Թուկուլտի-Նինուրտայի դեպքում այս երևույթը փաստացի կրում էր դրվագային բնույթ: Ամեն դեպքում նրանց օրոք, բացի այս դրվագային դեպքերից, մենք ուրիշ արձանագրված դեպքեր չունենք: Կարելի է ենթադրել, որ այդ դրվագային երևույթները չդարձան արտաքին և ներքին քաղաքականության բաղկացուցիչ մաս: Հետագայում՝ Թուկուլտի-Նինուրտայի մահից հետո, Աշշուրն ընկղմվեց քաղաքական քաոսի մեջ՝

---

[41] RIMA 1, A.0.76.3, II. 35-51, p. 136f.
[42] RIMA 1, A.0.75.8, II. 18-34, p. 126f.
[43] RIMA 1, A.0.77.1, II. 22-46, p. 183.
[44] RIMA 1, A.0.77.1, II. 56-87, p. 183f.
[45] RIMA 1, A.0.78.23, II. 27-42, p. 272.

ընդհուպ մինչև Թուկուլտի ապիլ-Էշարրա I-ի կառավարումը[46]: Վերջինս իր կառավարման առաջին տարում մուշկերի դեմ արշավանք է կատարում, որի արդյունքում հաղթելով մուշկերին՝ նա կենդանի մնացած 6000 զինվորի զինվորագրում է իր բանակ՝ «(84-88) *a-na la-a mi-nu ú-še-ṣa-a* 6 LIM *si-te et um-ma-na-te-šu-nu ša i-na pa-an* GIS.TUKUL.MEŠ-*iaip-pár-ši-du* GÌR.MEŠ-*ia iṣ-ba-tu al-qa-šu-nu-ti-ma* ***a-na* UN.MEŠ KUR-*ti-ia am-nu-šu-nu-ti***»[47] - «*Ես վերցրի մնացած 6.000 զինվորներին, որոնք փախել էին իմ զենքից (և) ներկայացան ինձ, և* ***ես նրանց դարձրի իմ երկրի մարդիկ***»[48]:

Թուկուլտի-ապիլ-Էշարրա I-ի որդու՝ Աշշուր-բել-կալայի (Ք.ա. 1074-1057 թթ.) արձանագրության մեջ առաջին անգամ հանդիպում ենք արքայի կողմից զանգվածային տեղահանության և վերաբնակեցման կիրառման վաղագույն դրսևորումներից մեկին: Արքան նշում է, որ դեպի Խաբխու[49] և Մարի կատարած արշավանքից հետո արմատախիլ է արել նրա բնակչությանը՝ «-[šu-nu] **as-su-[ḫa]**»[50]: Հաջորդ հիշատակությունը, ամենայն հավանականությամբ, վերաբերում է նրա կողմից դեպի Բաբելոնիա կատարված արշավանքին: Արձանագրության մեջ տառացիորեն նշված է. «*1 LIM ÉRIN.MEŠ KUR x [...] šap-[...] 4 LIM šal-la-su-nu* ***is-su-ḫa*** *KUR* ^{d}*A-šur*» «*1000 զինվոր [...] երկրից ... նրանցից 4000 գերի նա տեղահան արեց* (տառացի՝ պոկեց, արմատա-

---

[46] Քոսյան Ա., Մ.թ.ա. XII դարի մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը, էջ 14, 16, 109-111: Ցականյան Ռ., Ասորեստանի պատմության պարբերացման հարցի շուրջ, էջ 238-240:

[47] Grayson A. K., Assyrian Rulers of the Early First Millennium BC I (1114-859 BC), RIMA 2, 1991, A.0.87.1, Col. I, l. 88; Col. II, l. 89- Col. III, l. 6; A.0.87.2, l. 22; հմմտ. նաև՝ Oded B., Mass Deportations and Deportees in the Neo-Assyrian Empire, Wiesbaden, 1979, p. 81.

[48] RIMA 2, A.0.87.1, Col. I; Oded B., Mass Deportations and Deportees, 1979, p. 81; Wittke A. M., Mušker und Phryger (Ein Beitrag zur Geschichte Anatoliens vom 12. Bis zum 7. Jh. v. Chr.), Wiesbaden, 2004, S. 32 34: Նույնի՝ Das Land Mušku, Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies, 2007, vo. II, S. 132.

[49] RIMA 2, A.0.89.1, II. 12-13.

[50] RIMA 2, A.0.89.1, II. 14-16, հարկ է նշել նաև, որ Աշշուր-բել-կալայի արձանագրությունների հիշատակության բացակայությունը Բ. Օդետի աշխատությունում ակնհայտորեն կարելի է վրիպակ համարել:

խիլ արեց) *և բերեց ներքև՝ Աշշուր*»[51]: Հաջորդ հիշատակությունը, ըստ պահպանված տեղեկությունների, արդեն վերաբերում է շուրջ հարյուր տարի անց կառավարած Աշշուր-դան II-ի (Ք.ա. 934-912 թթ.) կառավարման ժամանակաշրջանին: Ըստ Բ. Օդետի՝ Աշշուր-դան II-ի կառավարման ժամանակաշրջանից սկսած՝ տեղահանությունները սկսում են պարբերական բնույթ կրել[52]:

Ամփոփում

Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարելի է ամենայն վստահությամբ նշել, որ առնվազն Աշշուր-բել-նիշեշուի (Ք.ա. 1407-1399 թթ.) կառավարման շրջանից սկսած՝ Աշշուրն արդեն թոթափել էր միտաննական լուծը: Իսկ Աշշուր-բել-նիշեշուն էլ պետք է հանդես գա որպես Միջինասորեստանյան տերության հիմնադիր:

Ինչ վերաբերում է նշված ժամանակաշրջանի աշշուրական արքաների կողմից կատարված զանգվածային տեղահանություններին ու վերաբնակեցումներին, պետք է նշել, որ տեղեկություններ գրեթե չկան կամ դրվագային բնույթ են կրում: Զանգվածային տեղահանություններն ու վերաբնակեցումներն Ասորեստանում որպես պետության արտաքին քաղաքականության բաղկացուցիչներ՝ ի հայտ են եկել ավելի ուշ՝ Թուկուլտի-ապիլ-Էշարրա III-ի (Ք.ա. 745-727 թթ.) կառավարման ընթացքում:

TSAKANYAN RUSLAN

ON SOME FOREIGN AND DOMESTIC POLICY ISSUES OF MIDDLE ASSYRIAN EMPIRE

The article focused on the issues of the conquest of Assyria by the Kingdom of Mittani, and expressed an opinion that Mittanian supremacy over the Aššur was not long lasting. Based on the construction work of Aššūr bēl nišēšu (1407 1399 B.C.) and the fact of the treaty concluded between Karaindaš I, king of Babylon, it is evident that the king of Aššur

[51] RIMA 2, A.0.89.7, Col. II,l. 2.

[52] Oded B., Mass Deportations and Deportees, p. 19.

was acting as an independent ruler. We assume that hardly being under the domination of the Kingdom of Mittani, he could have established diplomatic relations with a third country and to the resolve border issues. Thus, proceeding from the above, it can be clearly stated that the chronological problems of Mittanian domination over Aššur need to be revised. And the Middle Assyrian Kingdom should be dated to the reign of Aššur-bel-nišešu.

Among the Middle-Assyrian kings' well-known inscriptions the first record of deportation in the area of Assyria we meet during the reign of Arik-dēn-ili (1307-1296 B.C.), and then in the reign of his son Adad-nīrāri I (1295-1264 B.C.). Kings of the Middle Assyria, mostly destroyed and plundered of conquered territories. Only in the inscription of Aššūr-bēl-kala (1074-1057 B.C.) for the first time we meet one of the earliest manifestations of the king's use of deportation and resettlement. It should also be noted that before the reign of Tukultī-apil-Ešarra (Tiglath-pileser) III (745-727 B.C.) this policy was not included in the agenda of the state policy, so the taking and transfering prisoners to the land of Assyria or any other country cannot be regarded as a mass deportation.

ԽՈՐԻԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ԵԳԻՊՏՈՍՆ ԱՔԵՄԵՆՅԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՍԱՏՐԱՊԱԿԱՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Պարսից սատրապությունների ցանկում եգիպտականն այն բացառիկ վարչական միավորներից մեկն է, որի մասին հույն պատմիչ Հերոդոտոսը և մյուս անտիկ հեղինակները պահպանել են բազմաթիվ տեղեկություններ: Ստորև կքննենք եգիպտական սատրապության վերաբերյալ հին աղբյուրների այն պատմաաշխարհագրական տեղեկությունները, որոնց լույսով հնարավոր կդառնա վերականգնել Աքեմենյան տերության այդ կարևոր և ընդարձակ սատրապության վարչական կացության և տարածքի պատկերը:

Չնայած Քսենոփոնը Եգիպտոսի գրավումը վերագրում է Կյուրոս Մեծին[1], սակայն պարսկական զորքերը միայն մ. թ. ա. 525 թվականի ամռանն են գրավում Եգիպտոսը՝ Մուդրայան, և օգոստոսին Կամբյուսեսը պաշտոնապես հռչակվում է Եգիպտոսի թագավոր՝ հիմք դնելով փարավոնների XXVII հարստությանը. այդուհետ Կամբյուսեսը և պարսից հաջորդ արքաները Եգիպտոսում իրենց սկսեցին հորջորջել «Արքա Եգիպտոսի, արքա երկրների» տիտղոսով[2]: Եգիպտոսից հետո Կամբյուսեսը գրավում է Ամոնի օազիսը և Նուբիայի՝ եթովպացիների երկրի՝ Եգիպտոսին սահմանակից հատվածը՝ հասնելով մինչև Նեղոսի Երկրորդ ջրվեժներ[3]: Այդուհանդերձ, Քուշը՝ Նուբիան, Բեհիսթունի ար-

---

[1] Քսենոփոն, Կյուրոպեդիա, թարգմ.՝ Ս. Կրկյաշարյանի, Եր., 2000, էջ 358-359, 366-367:

[2] Atkinson K. M. T., The Legitimacy of Cambyses and Darius as Kings of Egypt, "Journal of the American Oriental Society", Vol. 76, No. 3, 1956, p. 167.

[3] Фрай Р. "Наследие Ирана", Москва, 1972, стр. 126; Дандамаев М. А. "Политическая история Ахеменидской державы", Москва, 1985, стр. 59, 61 62; Cook J. M., The Rise of the Achaemenids and Establishment of their Empire, "The Cambridge History of Iran", Vol. 2, 1985, p. 214; Bresciani E., The Persian Occupation of Egypt, "The Cambridge History of Iran", Vol. 2, 1985, p. 502; The Oxford History of Ancient Egypt, ed. by I. Shaw, 2000, p. 374; Briant P., From Cyrus to Alexander. A History of the Persian Empire, translated by P. T. Daniels,

ձանագրության մեջ դեռևս չի հիշատակվում և ավելի ուշ միայն Դարեհ Ա-ի՝ Պերսեպոլիսի արձանագրություններում է այն նշվում, այսինքն՝ վարչական առումով այն Եգիպտոսին միացվում է ավելի ուշ: Լիբիայի՝ Փուտի նվաճումը նույնպես վերագրվել է Դարեհ Ա-ին, սակայն կարծում ենք, որ մինչ այդ Կամբյուսեսը կարողացել էր գրավել այն[4]: Եգիպտոսի նվաճումից հետո եգիպտացիներն իրենց էթնիկական անվանումով *Miširaja* հաճախ են հիշատակվում Միջագետքի բնակավայրերում[5]:

Հերոդոտոսը Աքեմենյան տերության VI սատրապության մասին գրում է. «Եգիպտոսից և Լիբիայի, Կյուրենեի ու Բարկայի՝ Եգիպտոսին հարող մասերից, որոնք ընդգրկված էին եգիպտական նահանգի կազմ, ստացվում էր յոթ հարյուր տաղանդ, չհաշված Մոյրիս լճի ձկնորսությունից ստացվող արծաթը: Ահա այդ արծաթից և իբրև հարկ վերցվող ցորենից բացի (այդ երկրից) ստացվում էր յոթ հարյուր տաղանդ: Քանզի Մեմփիսի Սպիտակ բերդում հաստատված պարսիկների և նրանց վարձկանների համար վերցվում էր տասներկու բյուր մեդիմնոս (1 մեդիմնոսը=52,53 լիտր - Հ. Խ.) ցորեն: Սա վեցերորդ նահանգն էր»[6]:

Առաջին ենթադրությունն այն է, որ եգիպտական սատրապությունը՝ Մեմփիս կենտրոնով[7], եղել է ընդարձակ և հարուստ սատրա-

---

Winona Lake, Indiana, 2002, pp. 53-55; Ray J. D., Egypt 525-404 B. C., The Cambridge Ancient History, Vol. IV, 2006, p. 260. Դարեհ Ա-ն Եգիպտոս է գալիս մ. թ. ա. մոտ 518 թվականին (տե՛ս Kaper O. E., Petubastis IV in the Dakhla Oasis: New Evidence about an Early Rebellion against Persian Rule and Its Suppression in Political Memory, in: Political Memory in and after the Persian Empire, ed. by J. M. Silverman and C. Waerzeggers, Atlanta, 2015, p. 139), այսինքն՝ համապետական վարչական վերափոխումները դեռևս չէին ավարտվել:

[4] Дандамаев М. А., նշվ. աշխ., էջ 62: Cameron G. G., Darius, Egypt, and the "Lands beyond the Sea", Journal of Near Eastern Studies (այսուհետև՝ JNES), Vol. II, 1943, pp. 309-310.

[5] Дандамаев М. А. "Месопотамия и Иран в VII IV вв. до н. э.: Социальные институты и идеология", Санкт Петербург, 2009, стр. 333, 361.

[6] Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, թարգմ.՝ Ս. Կրկյաշարյանի (այսուհետև՝ Հերոդոտոս), Եր., 1986, III, էջ 91:

[7] Olmstead A. T., History of the Persian Empire, Chicago, 1960, p. 89; Bresciani

պություն՝ ընդգրկելով Եգիպտոսին հարակից տարածքներ, որոնք հարկատվության չափով զիջել են միայն բաբելոնական և հնդկական սատրապություններին: Ընդ որում առանձին աղբյուրներից պարզվում է, որ այս սատրապությունը պարսից արքունիքի և բանակի համար կատարում էր բազմաթիվ այլ պարտավորություններ, օրինակ՝ աղ և ջուր էր տրամադրում պարսից թագավորի սեղանի համար[8]:

Սուզայի (Սուսայի, Շոշի) արձանագրություններից մեկում (DSf) Դարեհ Ա-ն հայտնում է, որ Սուզայի պալատի կառուցման համար արծաթը և էբենոսափայտը բերվել են Եգիպտոսից, իսկ փղոսկրը՝ Եթովպիայից: Եգիպտացիները նաև հայտնի էին որպես ոսկերիչներ, փայտագործներ, որմնազարդարներ[9]: Մեծ թվով եգիպտացիներ, ներկայացնելով հասարակական տարբեր շերտեր, ապրում էին Աքեմենյան տերության սրտում՝ Միջագետքում[10]:

Բացի Եգիպտոսից, VI սատրապության մեջ հիշատակվում են Լիբիան, Կյուրենեն և Բարկան, որոնք տարածքով միասին վերցրած զիջում էին Եգիպտոսին: Վերջին երկուսը ներկայացնում էին համանուն քաղաքներ՝ շրջակա տարածքներով[11]: Հերոդոտոսը հայտնում է, որ լիբիացիները, կյուրենացիներն ու բարկայցիները առանց կռվի հանձնվում են Կամբյուսեսին[12]: Ընդհանուր առմամբ Կյուրենեն և Բարկան[13] նույնպես Լիբիայի մասերն են եղել[14]:

Կյուրենեի մեջ էին մտնում Պլատեա կղզին (Բոմբա ծովածոցի

E., The Persian Occupation of Egypt, p. 518.

[8] Дандамаев М. А. "Ахеменидская империя: социально-административное устройство и культурные достижения", Санкт-Петербург, 2013, стр. 145-146.

[9] Kent R., Old Persian. Grammar. Texts. Lexicon. 2nd ed., New Haven, 1953, p. 143.

[10] Дандамаев М. А. "Месопотамия и Иран в VII IV вв. до н. э.", стр. 333 337, 361.

[11] Հերոդոտոս, նշվ. աշխ., II, էջ 181-182:

[12] Անդ, III, 13; IV, էջ 165:

[13] Diodori Bibliotheca Historica, ed. L. Dindorfius, Vol. I, Pars I, Lipsiae, 1828, I, 68, p. 93.

[14] Հերոդոտոս, նշվ. աշխ., IV, էջ 156; 159-160; 199; Diodori Bibliotheca Historica, ed. L. Dindorfius, Vol. I, Pars I, III, 49, pp. 271-272.

կղզիներից մեկը[15]), Մենելաոսի նավահանգիստը (թերևս Մարսա Գաբեսը կամ Մարսա էլ Աորան[16]) և Ազիրիսը (Վադի էլ Խալիգի գետաբերանում[17]), այսինքն՝ ծովափնյա շրջանները, իսկ Բարկայի մեջ՝ Տաուքեյրա քաղաքը (ներկայիս Թոքրան[18])[19]: Համաձայն Ստրաբոնի՝ Կյուրենեի կամ Կյուրենաիկայի (Հինգ քաղաքների երկիր[20]) սահմանն արևելքում սկսվել է Կատաբափմայից, որտեղ վերջանում էր Եգիպտոսի սահմանը[21]: Բարկայի սահմանն արևմուտքում հասել է մինչև Եվհեսպերիտների երկիրը[22]՝ ներկայիս Բենգազին[23]: Դարեհ Ա-ն գերեվարված բարկացիներին վերաբնակեցնում է Բակտրիայի գյուղերից մեկում, որը հայտնի էր Բարկա անունով[24]: Բարկան՝ հելլենիստական Պտղոմայիսը[25], որի ավերակները գտնվում են Մեդիմետ էլ-Մարջի մոտ[26], հիմնադրել էին կյուրենացիները մ. թ. ա. VI դարի կեսին:

Քսերքսեսի Հելլադա արշավող բանակին եգիպտացիները տրամադրել էին երկու հարյուր նավ՝ զիջելով միայն փյունիկեցիների և պաղեստինյան սիրիացիների՝ երեք հարյուր նավից կազմված նավատորմին: Ընդ որում եգիպտական նավատորմի հրամանատարը

---

[15] "A Commentary on Herodotus Books I IV", ed. by O. Murray, A. Moreno, New York, 2007, p. 678.
[16] Անդ, էջ 696:
[17] Անդ, էջ 686:
[18] Անդ, էջ 698:
[19] Հերոդոտոս, նշվ. աշխ., IV, էջ 169; 171; Diodori Bibliotheca Historica, ed. L. Dindorfius, Vol. III, Lipsiae, 1826, XVIII, 20, p. 247.
[20] Pliny, Natural History, Vol. II, with an English translation by H. Rackham, Cambridge-Massachusetts-London, 1947, Loeb Classical Library, V, 31, p. 240.
[21] Страбон. География в 17 книгах, перевод, статья и комментарии Г. А. Стратановского. Ленинград, 1964, стр. 737.
[22] Հերոդոտոս, նշվ. աշխ., IV, 171; 204; Diodori Bibliotheca Historica, ed. L. Dindorfius, Vol. III, XVIII, 20, p. 247.
[23] Cameron G. G., Darius, Egypt, and the "Lands beyond the Sea", p. 312; Olmstead A. T., History of the Persian Empire, p. 149.
[24] Հերոդոտոս, նշվ. աշխ., IV, էջ 204:
[25] Страбон. стр. 769; Pliny, V, 31, p. 240.
[26] Скилак Кариандский, Перипл обитаемого моря, Вестник древней истории, 1988, № 2, стр. 269.

Քսերքսեսի հարազատ եղբայր Աքեմենեսն էր[27], ինչը, թերևս, վկայում է այն մասին, որ վերջինս նաև Եգիպտոսի սատրապն էր: VI սատրապության ժողովուրդներից միայն լիբիացիներն էին առանձին հրամանատարությամբ տրամադրել հետևազոր և հեծելազոր[28]:

Հերոդոտոսի հաջորդ տեղեկություններն արդեն հնարավորություն են տալիս հստակեցնելու եգիպտական սատրապության սահմանները: Պատմիչը տարբեր առիթներով հիշատակում է եգիպտական նշանավոր քաղաքներ Թեբեն և Հելիուպոլիսը[29]՝ Թելլ Հիսնը՝ Կահիրեից 12 կմ հյուսիս-արևելք[30]:

Հերոդոտոսը հաճախ է հիշատակում Թեբեի մարզը[31]՝ Վերին Եգիպտոսի IV նոմոսը, որը, կապված լինելով նույնանուն քաղաքի հետ, երբեմն ընկալվում էր ավելի մեծ տարածքով՝ Ելեփանտինեից մինչև Ֆայում[32], որտեղ էլ գտնվել է Հերոդոտոսի և անտիկ մյուս հեղինակների երկերում[33] հիշատակվող Մոյրիս լիճը[34], որը Ֆայումի մոտ գտնվող Բիրկետ Կարուն փոքր լիճն է[35]: Թեբեական երկրում հիշատակվում են Նեապոլիս և Քեմմիս քաղաքները[36], որոնցից առաջինը համապատասխանում է հետագա Պտղոմայիսի տարածքին՝ ներկայիս Էլ-Մանշահին, երկրորդը Պանոպոլիսն է[37]՝ ներկայիս Ախ-

---

[27] Հերոդոտոս, նշվ. աշխ., VII, էջ 89; 97:
[28] Անդ, VII, էջ 71; 86:
[29] Անդ, II, էջ 3; 7:
[30] "A Commentary on Herodotus Books I-IV", p. 243.
[31] Հերոդոտոս, նշվ. աշխ., II, էջ 4; 42; 69; 91; Diodori Bibliotheca Historica, ed. L. Dindorfius, Vol. I, Lipsiae, 1828, I, 18, p. 22; Tuplin Ch., The Administration of the Achaemenid Empire, in: Coinage and Administration in the Athenian and Persian Empires: The Ninth Oxford Symposium on Coinage and Monetary History, Oxford, 1987, pp. 123-124.
[32] "A Commentary on Herodotus Books I IV", p. 245. Համմմ. Հերոդոտոս, նշվ. աշխ., II, էջ 15:
[33] Страбон, նշվ. աշխ., էջ 729, 746 747: Diodori Bibliotheca Historica, ed. L. Dindorfius, Vol. I, Pars I, I, 51 52, pp. 71 73; Pliny, V, 50, p. 256.
[34] Հերոդոտոս, նշվ. աշխ., II, էջ 69:
[35] "A Commentary on Herodotus Books I-IV", p. 350.
[36] Հերոդոտոս, նշվ. աշխ., II, էջ 91:
[37] Страбон, նշվ. աշխ., էջ 749: Claudii Ptolemaei Geographia, edidit C. F. A.

միմը[38]: Քեմմիս անունով կղզի Հերոդոտոսը հիշատակում է Դելտայում[39]: Իսկ Մոյրիս լճից հարավ-արևելք հայտնի էր Կոկորդիլոսների քաղաքը[40]՝ եգիպտական *Šdyt*-ը՝ հելլենիստական և հռոմեական դարաշրջանի Արսինոյտոն պոլիսը կամ Արսինոյան, ներկայիս Մեդինետ էլ-Ֆայումը[41]:

Հերոդոտոսը Եգիպտոսի ծովափի երկարությունը արևելքից արևմուտք հաշվում է վաթսուն պարան (շուրջ 429,60 կմ)՝ Պլինթինետես ծովախորշից՝ հետագա Ալեքսանդրիա քաղաքի շրջանից մինչև Սերբոնիս լիճը՝ Սաբխետ էլ-Բարդավիլը[42] Կասիոն լեռան մոտ[43]: Նույն Հերոդոտոսը, նկատի ունենալով Ստորին Եգիպտոսը, հայտնում է, որ Եգիպտոսը տարածվել է արևելքում Արաբական լեռների և արևմուտքում՝ Լիբիայի կողմից, ավազաբլուրների[44], այսինքն՝ Լիբիական անապատի հյուսիսարևելյան հատվածի միջև: Հույն հեղինակը նաև հայտնում է, որ հոնիացիների համար Եգիպտոսը միայն Դելտան էր, իսկ ծովափը ձգվել է Պերսևսի աշտարակ կոչված վայրից մինչև Տարիքեյա՝ «ձկների աղման արհեստանոցները» Պելուսիայում[45]: Ստրաբոնը Պերսևսի աշտարակը հիշատակում է Նեղոսի Բոլբիտինյան[46] գետաբերանից արևելք՝ Ագնու-Կերասից հետո[47], իսկ Պելուսիան նույնանում է էլ-Ֆարամին, Պորտ Սայիդից 40 կմ դեպի հարավ-արևելք[48]: Հերոդոտոսը Դելտան, սկսած ծովափից, հարավում հասցնում է մինչև Կերկասորոս

Noebbe, t. I, Lipsiae, 1843, IV, V, 72, p. 264.

[38] Gardiner A. H., Ancient Egyptian Onomastica, Vol. II, 1947, p. 40; "A Commentary on Herodotus Books I-IV", p. 303.

[39] Հերոդոտոս, նշվ. աշխ., II, էջ 156:

[40] Անդ, II, էջ 148-149:

[41] Gardiner A. H., նշվ. աշխ., էջ 116:

[42] "A Commentary on Herodotus Books I-IV", pp. 246-247.

[43] Հերոդոտոս, նշվ. աշխ., II, էջ 6:

[44] Անդ, II, էջ 8:

[45] Անդ, II, էջ 15, 113:

[46] Muller C., Fragmenta Historicorum Graecorum, Vol. I, Parisiis, 1841, p. 20, fr. 285.

[47] Страбон, նշվ. աշխ., էջ 739:

[48] "A Commentary on Herodotus Books I-IV", p. 252.

քաղաքը[49]՝ ներկայիս էլ-Վարաքը՝ Կահիրեից հյուսիս արևմուտք[50], որտեղից Նեղոսը երկատվելով մի հոսանքով ուղղվում է դեպի Պելուաիոն, իսկ մյուսով՝ դեպի Կանոբոս[51]՝ Աբուքիրից արևմուտք:

Պատմիչը հիշատակում է նաև Նեղոսի Սեբեննյուտյան, Սաիսյան կամ Տանիսյան[52], Մենդեսյան և Բուկոլիկյան գետաբերանները[53]: Նկատենք նաև, որ Հերոդոտոսն անձամբ եղել էր Դելտայում, և դա երևում է նրա բազմաթիվ տեղեկություններից, օրինակ, երբ խոսում է Սաիս նշանավոր քաղաքի մասին[54], որը նույնանում է ժամանակակից Սա էլ-Հագարին[55], կամ էլ հիշատակում է Մենդեսյան մարզը[56]: Կանոբոսյան[57] և Սեբեննյուտյան գետաբերանների միջև Հերոդոտոսը հիշատակում է Պրոսոպիտիս կղզին[58], որի մասին հիշատակում են նաև այլ հեղինակներ[59]: Այս կղզու վրա էր Արտեմիսի՝ Ատոր-Իսիսի տաճարով հայտնի Ատարբեքիս քաղաքը[60]՝ ներկայիս Կոմ Աբու Բիլլուն, որը Ստրաբոնի կողմից հիշատակված Ափրոդիտեի քաղաքն է[61]: Հիմնականում պատմիչը Դելտայում՝ հիշատակում է Բուբաստիս[62] (ներկայիս Թել Բաստան), Բուսիրիս (ներկայիս Աբու Սիրի մոտ), Բուտո (ներկայիս Թել էլ-Ֆարայինի մոտ), Պապրեմիս (հյուսիսարևմտյան

---

[49] Հերոդոտոս, նշվ. աշխ., II, էջ 97:
[50] "A Commentary on Herodotus Books I-IV", p. 252.
[51] Հերոդոտոս, նշվ. աշխ., II, էջ 15; 17:
[52] Manetho, with an English translation by W. G. Waddel, Cambridge-Massachusetts-London, 1948, Loeb Classical Library, p. 22.
[53] Հերոդոտոս, նշվ. աշխ., II, էջ 17; Diodori Bibliotheca Historica, ed. L. Dindorfius, Vol. I, Pars I, I, 33, pp. 44-45.
[54] Հերոդոտոս, նշվ. աշխ., II, էջ 28; 59:
[55] "A Commentary on Herodotus Books I-IV", p. 257.
[56] Հերոդոտոս, նշվ. աշխ., II, էջ 42:
[57] Muller C., Fragmenta Historicorum Graecorum, p. 20, fr. 282.
[58] Հերոդոտոս, նշվ. աշխ., II, էջ 41:
[59] Фукидид, История. Пер. Ф. Мищенко. Москва, 2012, стр. 55 56; Страбон, стр. 740; Claudii Ptolemaei Geographia, edidit C. F. A. Noebbe, t. I, IV, VI, 49, p. 259.
[60] Հերոդոտոս, նշվ. աշխ., II, էջ 41:
[61] Страбон, стр. 740, 749, 752.
[62] Manetho, pp. 20, 34, 81.

Դելտայում), Անյուսիս (հյուսիսարևելյան Դելտայում՝ Հերակլեոպոլիսը՞), Նավկրատիս (հյուսիսարևմտյան Դելտայում, Կանոբոսյան գետաբերանի արևելյան շրջանում), Մոմեմփիս (Կոմ էլ-Հիսնը արևմտյան Դելտայում[63]), Անթյուլլա (Գյունեկոպոլիսը՞) և Արքանդրոս (տեղադրությունն անհայտ է)[64], Հերմոպոլիս (ներկայիս Աշմունեն՝ Կահիրեից հարավ) քաղաքները, որոնք պաշտամունքային կամ այլ հայտնի վայրեր էին[65]: Այս վայրերի թվարկության մեջ պարզվում է, որ Բուտոն գտնվել է Արաբիայում[66], այսինքն՝ հյուսիսարևելյան Դելտայում, ինչը, թերևս, խոսում է այն մասին, որ Հերոդոտոսի ժամանակ Բուտոն եգիպտական սատրապության մեջ չէր: Հետաքրքիր է նաև, որ Հերոդոտոսն ամոնացիներին՝ Սիվա օազիսի կամ «Ամոնի կղզու»[67] բնակիչներին[68], որտեղ գտնվում էր Ամոն-Զևսի պատգամախոսական տաճարը, համարում է եգիպտացի և եթովպացի գաղթականների խառնուրդ[69], ինչը նշանակում է, որ այստեղ եղել են նաև եթովպացիներ, որոնց համար նույնպես տաճարը եղել է սրբազան: Ավելի ուշ Արիանոսն Ամոնի օազիսը հիշատակում է Լիբիայի կազմում[70], ինչը ցույց է տալիս, որ վերջինս համարվել է լիբիական տարածք:

Հերոդոտոսի համար Վերին Եգիպտոսը սկսվել է Մեմփիսից հարավ, այն դեպքում, երբ Դելտայի շրջանը և Մոյրիս լճից հարավ ընկած տարածքը համարվել են Ստորին Եգիպտոս[71]: Ավելի կոնկրետ՝

---

[63] Ball J., Egypt in the Classical Geographers, Cairo, 1942, p. 18.

[64] Հերոդոտոս, նշվ. աշխ., II, էջ 97:

[65] Հերոդոտոս, նշվ. աշխ., II, էջ 59-63; 67, 97, 137, 163, 169; "A Commentary on Herodotus Books I-IV", pp. 277, 284, 309, 339, 373. Տե՛ս նաև Скилак Кариандский, Перипл обитаемого моря, стр. 263.

[66] Հերոդոտոս, նշվ. աշխ., II, էջ 75:

[67] "A Commentary on Herodotus Books I-IV", p. 427.

[68] "A Commentary on Herodotus Books I IV", p. 268; Colburn H. P., Memories of the Second Persian Period in Egypt, in: Political Memory in and after the Persian Empire, ed. by J. M. Silverman and C. Waerzeggers, Atlanta, 2015, p. 171.

[69] Հերոդոտոս, նշվ. աշխ., II, էջ 42:

[70] Արիանոս, Ալեքսանդրի արշավանքը, «Ալեքսանդր Մակեդոնացի», Երևան, 1987, էջ 91-92:

[71] Հերոդոտոս, նշվ. աշխ., II, էջ 13:

Ստորին Եգիպտոսը Հելիուպոլիսից հասել է մինչև Թեբե՝ Դիոսպոլիս[72], որից հետո հիշատակված Ելեփանտինե քաղաքն արդեն Վերին Եգիպտոսում էր[73]: Վերին Եգիպտոսում են հիշատակվում Թեբաիս երկրի Սյուենե քաղաքը՝ ժամանակակից Ասուանը[74], և Ելեփանտինեն՝ «Փղոսկրե քաղաքը»[75], որոնց միջև գտնվել են Կրոփի և Մոփի լեռները[76]: Ելեփանտինեն գտնվել է Նեղոսի Առաջին ջրվեժի մոտ, որի շրջանում Հերոդոտոսը հիշատակում է նաև Տաքոմպսո[77]՝ ներկայիս Ջերար կղզին[78], որը չի նույնանում Ստրաբոնի Փիլե կղզուն[79]: Ելեփանտիններից հարավ ապրել են եթովպացիներ, որոնց մայրաքաղաքը Մերոեն էր[80]՝ Բակարավիայի շրջանում:

Հերոդոտոսը Եգիպտոսի սահմանն արևմուտքում հասցնում է մինչև Մարեա[81] և Ապիս քաղաքները[82], որոնցից առաջինը գտնվել է Մարեոտիս լճից հարավ, իսկ երկրորդը նույնանում է Թապոսիրիսին՝ ժամանակակից Աբուսիրին[83]: Հյուսիս-արևելքում՝ արաբների և ասորեստանցիների ուղղությամբ (ինչը գալիս էր դեռևս նախաաքեմենյան ժամանակաշրջանից), պարսիկները կայազոր ունեին Դափնեում՝ ժամանակակից Դաֆնան[84] Պելուսիայում[85]:

---

[72] Diodori Bibliotheca Historica, ed. L. Dindorfius, Vol. I, Pars I, I, 15; 45, pp. 21, 64; Manetho, pp. 20, 34, 72, 124.

[73] Հերոդոտոս, նշվ. աշխ., II, էջ 9:

[74] Gardiner A. H., նշվ. աշխ., էջ 5:

[75] Անդ, էջ 2:

[76] Հերոդոտոս, նշվ. աշխ., II, էջ 28:

[77] Անդ, II, էջ 29:

[78] "A Commentary on Herodotus Books I-IV", p. 259.

[79] Страбон, նշվ. աշխ., էջ 47, 741, 753, 755:

[80] Հերոդոտոս, նշվ. աշխ., II, 29; Diodori Bibliotheca Historica, ed. L. Dindorfius, Vol. I, Pars I, I, 33, p. 43; Africa W. T., Herodotus and Diodorus on Egypt, JNES, Vol. 22, No. 4, 1963, p. 255.

[81] Фукидид, История, пер. Ф. Мищенко, Москва, 2012, стр. 53; Diodori Bibliotheca Historica, ed. L. Dindorfius, Vol. I, Pars I, I, 68, p. 94; Ray J. D., Egypt 525-404 B. C., p. 259.

[82] Հերոդոտոս, նշվ. աշխ., II, էջ 18; 30:

[83] Ball J., նշվ. աշխ., էջ 17:

[84] Worp K. A., Observations on Some Military Camps and Place Names in Lower

Համաձայն Հերոդոտոսի՝ ամբողջ Եգիպտոսը բաժանված էր մարզերի՝ իրենց կառավարիչներով: Մարզերի առաջին խումբը՝ Բուսիրիսյան, Սաիսյան, Քեմմիսյան, Պապրեմիսյան, Պրոսոպոտիս կոչված կղզին, Նաթոյի կեսը (Ստորին Եգիպտոսի XI նոմոսի կազմում[86]), տեղադրվում է Դելտայի արևմտյան և կենտրոնական մասում: Երկրորդ խումբը՝ Թեբեյան, Բուբաստիսյան, Ափթիսյան (Ստորին Եգիպտոսի XIV նոմոսի կազմում), Տանիսյան, Մենդեսյան, Սեբեննոսյան, Աթրիբիսյան (Ստորին Եգիպտոսի X նոմոսի կազմում), Փարբաիսյան (Ստորին Եգիպտոսի XI նոմոսի կազմում), Թմուիսյան (այստեղ սխալմամբ է ներկայացված, քանի որ նույնանում է Մենդեսյանին), Օնուփիսյան[87] (Տանթայից հյուսիս՝ Մեհալլաթ Մենուֆի շուրջը), Անյուսյան (Դելտայի արևելյան հատվածում՝ Մենզալահ լճի հարավարևելյան անկյունում), Մյուեկփորիսյան (Ստորին Եգիպտոսի XX նոմոսի կազմում), տեղադրվում է Դելտայի հարավային և արևելյան մասում[88]:

Հերոդոտոսը հայտնում է, որ Կամբյուսեսը Եգիպտոսի հյուպարքոս էր նշանակել Արյուանդեսին[89], այսինքն, եթե նկատի ունենանք, որ VI սատրապությունը լայն առումով հայտնի էր որպես եգիպտական սատրապություն, ապա Արյուանդեսը Եգիպտոսի սատրապն էր: Վերջինիս փոխարինել է Փերենդատեսը[90], իսկ նրան՝ մ. թ. ա. 484 թվականին[91] Քսերքսեսի եղբայր Աքեմենեսը, որին Հերոդոտոսը հորջոր-

---

Egypt, Zeitschrift für Papyrologie und Epigraphik, 87, 1991, p. 293.

[85] Հերոդոտոս, նշվ. աշխ., II, 30:

[86] Gardiner A. H., Ancient Egyptian Onomastica, Vol. II, p. 146.

[87] Claudii Ptolemaei Geographia, edidit C. F. A. Noebbe, t. I, IV, V, 51, p. 260; Pliny, Natural History, vol. II, V, 49, p. 254.

[88] Հերոդոտոս, նշվ. աշխ., II, էջ 165-166; III, 6; "A Commentary on Herodotus Books I-IV", p. 365.

[89] Herodotus, with an English translation by A. D. Godley, Vol. II, Cambridge-Massachusetts London, 1928, Loeb Classical Library, IV, 166, p. 370; Ray J. D., Egypt 525-404 B. C., p. 266.

[90] Diodori Bibliotheca Historica, ed. L. Dindorfius, Vol. III, XVI, 51, p. 56; Дандамаев М. А. "Политическая история Ахеменидской державы", стр. 105; Olmstead A. T., History of the Persian Empire, p. 312.

[91] Дандамаев М. А. "Месопотамия и Иран в VII-IV вв. до н. э.", стр. 150.

ջում է փոխարքա տիտղոսով[92], այսինքն՝ Աքեմենյան արքայատոհմի գլխավոր ներկայացուցիչներից մեկին է վստահվել այս կարևոր սատրապության կառավարումը: Մ.թ.ա. 454-403 թվականներին Եգիպտոսի սատրապն էր Արշամեսը[93], իսկ մ.թ.ա. 342 թվականին՝ Եգիպտոսի վերանվաճումից հետո, Արտաքսերքսես Գ-ն Եգիպտոսի սատրապ է նշանակում Փերենդատեսին[94]:

Ըստ Արիանոսի՝ մ.թ.ա. 334 թվականին Գրանիկոսի ճակատամարտում սպանվում է Եգիպտոսի սատրապ Սավակը[95], որն, ըստ էության, եղել է պարսկական բանակի հեծելազորի հրամանատարներից մեկը: Եգիպտոսի սատրապ Մազակը Ալեքսանդր Մակեդոնացուն ենթարկվում է առանց դիմադրության. եգիպտական քաղաքները՝ Պելուզիումը, Հելիոպոլիսը, Մեմփիսը, մակեդոնացի նվաճողին ենթարկվում են կամավոր: Ալեքսանդր Մակեդոնացին կարճ ժամանակ անց հիմնադրում է Հին աշխարհի ամենահայտնի քաղաքներից մեկը՝ Ալեքսանդրիան[96]: Արիանոսը հայտնում է նաև, որ Ալեքսանդրը Լիբիայի կառավարումը հանձնում է Ապոլլոնիդոսին[97]: Սովորաբար Լի-

---

[92] Herodotus, with an English translation by A. D. Godley, Vol. III, Cambridge-Massachusetts-London, 1938, Loeb Classical Library, VII, 7, p. 308. Հմմտ. Jacobs B., Die Satrapienverwaltung im Perserreich zur Zeit Darius' III, Wiesbaden, 1994, S. 164.

[93] Дандамаев М. А. "Политическая история Ахеменидской державы", стр. 182; "Aramaic Documents of the Fifth Century B. C.", abridged and revised edition by G. R. Driver, Oxford, 1957, pp. 10-12, 92.

[94] Дандамаев М. А., նշվ. աշխ., էջ 253; Bresciani E., The Persian Occupation of Egypt, p. 526.

[95] Արիանոս, նշվ. աշխ., էջ 68: Հմմտ. Ռուփոս, Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը, «Ալեքսանդր Մակեդոնացի», Երևան, 1987, էջ 314; Diodori Bibliotheca Historica, ed. L. Dindorfius, Vol. III, XVII, 34, p. 137.

[96] Արիանոս, նշվ. աշխ., էջ 89 90; Ռուփոս, էջ 314, 333 334; Плутарх, Александр, XXV, "Избранные жизнеописания", т. II, Москва, 1987, стр. 387 388.

[97] Արիանոս, նշվ. աշխ., էջ 93; Ռուփոս, էջ 337; Jacobs B., Die Satrapienverwaltung im Perserreich zur Zeit Darius' III, S. 168; Burstein S. M., Alexander in Egypt: Continuity or Change? in: Achaemenid History,VIII, Continuity and Change, ed. by Heleen Sancisi-Weerdenburg, Leiden, 1994, p. 385.

բիայի տարածքն արևմուտքում հասցվել է մինչև Ջիբրալթար[98], սակայն Մակեդոնիայի թագավորն, ըստ երևույթին, միայն Սիվայի օազիսը[99] հարակից շրջաններով դարձնում է առանձին վարչական միավոր: Արիանոսը մի տեղում կողք կողքի հիշատակում է Եգիպտոսը և Կիրենան[100], այսինքն՝ Եգիպտոսին սահմանակից աֆրիկյան շրջանները[101]: Մեր կարծիքով Կիրենա-Կյուրենեի տակ պետք է հասկանանք Լիբիայի ծովափնյա մասը՝ Սիվայից հյուսիս՝ Ալեքսանդրիայից և Մարեոտիս լճից արևմուտք[102], այն դեպքում, երբ Հերոդոտոսը Լիբիան և Կյուրենեն տարբերակում էր:

Ալեքսանդր Մակեդոնացու մահից հետո Եգիպտոսի և աֆրիկյան ժողովուրդների սատրապ է դառնում Պտղոմեոսը[103]:

Եգիպտոսը՝ որպես պարսիկներին հպատակ երկիր, հիշատակվում է Բեհիսթունի արձանագրությունից սկսած[104]: Դարեհ Ա-ի՝ Պերսեպոլիսի արձանագրություններից մեկում՝ DPh-ում, Քուշը հիշատակվում է որպես տերության հարավարևմտյան ծայրամաս[105]: Նույն թագավորի՝ Նաղշե Ռոստամի արձանագրության մեջ (DNa) Եգիպտոսը, Լիբիան, Եթովպիան արդեն հիշատակվում են միասին. Եգիպտոսն առանձին, իսկ Լիբիան և Եթովպիան՝ կողք կողքի[106]: Աքեմենյան թագավորի հրամանով կառուցվում է նաև Սուեզի ջրանցքը[107]: Դարեհ Ա-ն

---

[98] Արիանոս, նշվ. աշխ., էջ 201:

[99] Jacobs B., Die Satrapienverwaltung im Perserreich zur Zeit Darius' III, S. 173. Սիվայի կրոնաքաղաքական նշանակության մասին տե՛ս Bowden B., Alexander in Egypt: Considering the Egyptian Evidence, in: Alexander in Africa, ed. Ph. Bosman, Acta Classica Supplementum V, Pretoria, 2014, pp. 38-55.

[100] Արիանոս, նշվ. աշխ., էջ 251:

[101] Ռուփոս, նշվ. աշխ., էջ 337:

[102] Համմ. Ռուփոս, նշվ. աշխ., էջ 334:

[103] Անդ, էջ 596; Diodori Bibliotheca Historica, ed. L. Dindorfius, Vol. III, XVIII, 3, p. 228; The Oxford History of Ancient Egypt, p. 389; Curtius Rufus, Histories of Alexander the Great, Book 10, transl. by J. C. Yardley, with Introduction and Historical Commentary by J. E. Atkinson, Oxford, 2009, p. 220.

[104] Kent R., նշվ. աշխ., էջ 117:

[105] Նույն տեղում, էջ 136:

[106] Նույն տեղում, էջ 137:

[107] Նույն տեղում, էջ 147: Տե՛ս նաև Kent R., The Darius Suez c Inscription, JNES,

իրեն հայտարարում էր Վերին և Ստորին Եգիպտոսի տիրակալ, որի տիրապետության տակ էին տափաստանների և լեռների երկրները[108], այսինքն՝ եզակի դեպք, երբ չեն թվարկվում հպատակ ժողովուրդները կամ երկրները: Դարեհ Ա-ի եգիպտական հիերոգլիֆ արձանագրությունում Եգիպտոսը, Լիբիան և Նուբիան հիշատակվում են կողք կողքի, աշխարհագրական հերթականությամբ[109]:

Այսպիսով, կատարված քննությունը ցույց է տալիս, որ Եգիպտոսն Աքեմենյան տերության հարուստ և ընդարձակ սատրապություններից մեկն էր, որտեղ Աքեմենյան թագավորները մշտապես ձգտում էին ռազմաքաղաքական-տնտեսական գործուն միջոցներով ամուր պահել իրենց իշխանությունը: Վարչական առումով VI սատրապությունը բաժանված էր չորս ենթաշրջանների՝ Եգիպտոս, Լիբիա, Կյուրենե և Բարկա:

KHORIKYAN HOVHANNES

EGYPT IN THE SATRAPIC DIVISION SYSTEM OF ACHAEMENID PERSIA

The Egyptian Satrapy had the first-rate importance for Achaemenid Persia. Many important and wrinkled issues on the administrative policy and historical geography of the VI Satrapy were examined in the article, the elucidation of which has an important meaning for studying the history of Achaemenid Persia. Analysis of informations received from Herodotus and other ancient sources shows that Egypt had great economic and military importance to Persian Court. The VI Satrapy was divided into four subdistricts: Egypt, Libya, Cyrene and Barca.

Vol. I, 1942, pp. 415 421; Lloyd A. B., Darius I in Egypt: Suez and Hibis, in: Persian Responses: Political and Cultural Interactions with (in) the Achaemenid Empire, ed. C. Tuplin, Swansea, 2007, pp. 99-115.

[108] Roaf M., The Subject Peoples on the Base of the Statue of Darius, Cahiers de la Délégation Archéologique Française en Iran, 4, 1974, p. 75.

[109] Yoyotte J., Les inscriptions hiéroglyphiques. Darius et l'Égypte, Journal Asiatique, t. 260, Paris, 1972, f. 3-4 pp. 258-259.

ՄԵԼԻՔՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ԵՐՐՈՐԴ ԴԱՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿԱՌԱՎԱՐՎԱԾ ՍԱՍԱՆՅԱՆ ԱՐՔԱՅԱԶՆՆԵՐԻ ՏԻՏՂՈՍԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Պատմագիտության մեջ Մեծ Հայքի III դարի Սասանյան կառավարիչների տիտղոսին մասնակի ուշադրություն է դարձվել: Ընդ որում, եթե մինչև անցյալ դարի 40-ական թվականները մատենագրական տվյալների և Սասանյան Ներսեհ արքայի Պայկուլեի արձանագրության՝ է. Հերցֆելի հրատարակության հիման վրա հետազոտողները համերաշխ էին Մեծ Հայքի Սասանյան կառավարիչների «արքա» տիտղոսի շուրջ, ապա 1936 թ. Քաաբա-ի Զարդուշտի պատերին Շապուհ I-ի եռալեզու արձանագրության (այսուհետ՝ ŠKZ) հայտնագործումից և նրա առաջին ընթերցումներից հետո կարծիքները սկսեցին բաժանվել: Մինչ օրս Հայաստանի Սասանյան կառավարիչների տիտղոսի և դրա իրավաքաղաքական նշանակության վերաբերյալ առաջադրվել են վարկածներ, որոնք, ցավոք, մի դեպքում չեն փաստարկվել, այլ դեպքերում ավելի քան վիճարկելի են:

Հոդվածում մենք կանդրադառնանք այն հարցին, թե ինչ տիտղոս են կրել III դ. Հայաստանում իշխող Սասանյան արքայազները, արդյո՞ք նրանք եղել են պարսից վեհապետներին հպատակ սովորական արքաներ, թե՞ տերության վարչական համակարգում նրանց դիրքը համահունչ է եղել պաշտոնական արվեստում կիրառված ձևերին: Այս հարցերի լուսաբանման հիմնական սկզբնաղբյուրը ցայսօր մնում է Վալերիանոս կայսեր դեմ Շապուհ I-ի տարած փառավոր հաղթանակի առթիվ 261/262 թ. ստեղծված ŠKZ-ն: Նրանում արքայից արքա Շապուհ I-ը կրոնական հաստատություններին արված նվիրաբերությունների և արքայատան անդամների անվան հավերժացման նպատակով հիմնած ատրուշանների թվարկության կապակցությամբ հիշատակում է իր գահաժառանգ որդի Որմիզդ-Արտաշիրին (միջ. պարսկ. 22/23, պահլ. 17/18, հուն. 39/40 և 41 րդ տողեր), (*RBA MLKA*

'rmnyn)՝ «Մեծ արքա Հայոց»[1] տիտղոսով. *«Մեկ ափրուշան, որ կոչվում է «Խոսրով Որմիզդ Արտաշիր», ի հիշափակ և ի պահպանումն անվան Որմիզդ Արտաշիրի՝ մեծ թագավորի Հայաստանի, մեր որդու...»*[2]: Պարսից գահաժառանգը նույն տիտղոսով հիշատակվում է նաև վիմագրի հետագա շարադրանքում արքայատան անդամների հոգու հավերժացման համար զոհաբերություններ սահմանելու առթիվ. «... *1000 ոչխարներից, որ զոհաբերել ենք ափրուշաններին, մենք պափվիրեցինք, որ [մափուցվի օրական] մեկ ոչխար, մեկ ու կես մոդ հաց, չորս պասոս գինի... մեծ արքա Հայոց Որմիզդ-Արտաշիրի ... և Որմիզդակի՝ հայոց թագավորի որդու... հիշափակի [հավերժացման] համար»*[3]:

Թվում է, թե հնարավոր չէ երևակայել ավելի պաշտոնական և վստահելի աղբյուր, որը Հայաստանի Սասանյան կառավարչի տիտղոսը ներկայացնի ավելի լավ, քան ŠKZ-ն: Այդուհանդերձ, նրանում Որմիզդ-Արտաշիրի «Մեծ արքա Հայոց» (*RBA MLKA 'rmnyn*) տիտղոսի ընթերցման և նշանակության շուրջ առաջացել է բանավեճ: Վ. Հենինգը 1952 թ. հրատարակած մի հոդվածում առաջարկել է ŠKZ-ի միջին պարսկերեն «*wuzurg šāh Arminān*» և պահլավերեն «wuzurg šāh Arminīn» վերծանությունները սրբագրել «*Vazurg Armenān šāh*» - «*Մեծ Հայքի թագավոր*»[4]: Իր տեսակետը հիմնավորելու նպատակով հեղինակը հղում է Ներսեհի՝ Պայկուլեի արձանագրությունը (NPi), որտեղ Հայաստանի Սասանյան նախկին այս կառավարիչը, նրա ընթերցմամբ, կոչված է «*Vazurg Armenān šāh*»[5]:

Սկզբնապես Վ. Հենինգի տեսակետը պաշտպանում էր Ս. Երեմյանը, ով, Վ. Հենինգին հղելուց բացի, բերում է նաև լրացուցիչ փաստարկներ: Հեղինակը նշելով, որ Վ. Հենինգի «*Vazurg Armenān šāh*» ընթերցումը համապատասխանում է հունա-հռոմեական և հայ մատե-

---

[1] Միջին պարսկերեն՝ wuzurg šah Arminan, պարթևերեն՝ wuzurg šah Arminin, հունարեն՝ μεγάλυ βασιλέως' Αρμενίας:

[2] Honigmann E. et Maricq A., Recherches Sur les Res Gestae divi Saporis, Bruxelles, 1953, pp. 40-41.

[3] Նույն տեղում, էջ 48, 50:

[4] Henning W. B., A Farewell to the Khagan of the Aq-Aqatārān, The Bulletin of the School of Oriental and African Studies, 1952, XIV/3, p. 517.

[5] Նույն տեղում, էջ 517, ծան. 4:

նագրության հանրածանոթ «Βασιλεὺς Μεγάλης Ἀρμενίας» - «թագաւոր Հայոց Մեծաց» տիտղոսին, եզրակացնում է. *«Արտաշես Ա ից (189-161) սկսած Հայկական թագավորության պաշտոնական անունն էր «Մեծ Հայք», իսկ նրա գահակալները մինչև 387 թ. կրում էին «թագաւոր Հայոց Մեծաց» տիտղոսը, ուստի բնական է, որ հայկական գահը բարձրացած Որմիզդ-Արտաշիրը պիտի կրեր այս տիտղոսը և ոչ թե «Արմենիայի (կամ Հայաստանի) մեծ թագավոր»*[6]:

Ահավասիկ, անվիճելի է, որ I-IV դդ. հայոց արքաները կրել են «թագավոր Մեծ Հայքի» տիտղոսը: Բացի մատենագիրներից[7], դա փաստում են նաև հայոց արքաների թողած պաշտոնական վիմագրերը[8]: Այդուհանդերձ, III դ. Հայաստանի Սասանյան կառավարիչ-

---

[6] Երեմյան Ս., Նախշ-ի-Ռուստեմի «Քաաբա ի Զարդուշտ» հուշարձանի արձանագրության վկայությունները Հայաստանի մասին, ՊԲՀ, 1966, թիվ 2, էջ 64, ծան. 19: Հետագայում Ե. Հոնինգմանի և Ա. Մարիքի կողմից ŠKZ-ի վերընթերցման հիման վրա Ս. Երեմյանը հրաժարվեց իր վերոնշյալ կարծիքից («Հայ ժողովրդի պատմություն», ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ. II, Երևան, 1984, էջ 49):

[7] Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանցի, աշխ. թարգմ. և ծանոթ.՝ Ա. Տեր Ղևոնդյանի, Երևան, 1983, § 126: Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ՝ Մ. Աբեղեան եւ Ս. Հարութիւնեան, Տփղիս, 1913, III, 23:

[8] Այս տիտղոսի հունարեն «Βασιλεὺς Μεγάλης Ἀρμενίας» տարբերակն առկա է Տրդատ I-ի՝ Գառնիի (Մանանդյան Հ., Գառնիի հունարեն արձանագրությունը և Գառնիի հեթանոսական տաճարի կառուցման ժամանակը, Երևան, 1946, էջ 5: Սարգսյան Գ., Գառնիի հունարեն արձանագրության շուրջը, ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1956, թիվ 3, էջ 48-49: Բարթիկյան Հ., Գառնիի հունարեն արձանագրությունը և Մովսես Խորենացին, ՊԲՀ, 1965, թիվ 3, էջ 231: Կրկյաշարյան Ս., Եվս մի անգամ Գառնիի հունարեն արձանագրության մասին, ՊԲՀ, 1965, թիվ 3, էջ 236), Բակուր Արշակունու՝ Հռոմում հայտնաբերված (Тревер К. В. "Очерки по истории культуры древней Армении (II в до н.э. IV в н.э.)", Москва Ленинград, 1953, стр. 237 242) և Տրդատ II ի կամ Տրդատ III ի՝ Ապարանի (Ростовцевъ М., Апаранская греческая надпись царя Тиридата, С. Петербург, 1911, стр. 6) արձանագրություններում: Նույնը արամեատառ (MLK RB ZY 'RM[YN) տարբերակով ներկայացված է 1961 թ. Գառնիում հայտնաբերված և հավանաբար հայոց Խոսրով I-ի կողմից ստեղծված արձանագրության վրա (Периханян А. Г. "Арамейская надпись из Гарни". ՊԲՀ, 1964, թիվ 3, стр. 123):

ների տիտղոսի վերաբերյալ Վ. Հենինգի մեկնաբանությունը տեղիք է տալիս լուրջ առարկությունների: Նախ, ŠKZ-ի երեք տարբերակներում այս տիտղոսը վիմագրված է ոչ թե մեկ անգամ, որը կարելի էր վերագրել քանդակագրողի անփութությանը կամ անգիտությանը, այլ երկիցս, ինչը, ինքնըստինքյան, վերացնում է ŠKZ-ի տողերը սրբագրելու խնդիրը: Բացի դրանից, Վ. Հենինգի վարկածի դեպքում սպասելի էր արձանագրության հունարեն տարբերակում Որմիզդ-Արտաշիրի տիտղոսը տեսնել «*τοῦ βασιλέως Αρμενίας μεγάλου*», մինչդեռ այստեղ էլ այն ներկայացված է «*τοῦ μεγάλου βασιλέως΄Αρμενίας*» ձևով, ինչը նույնական է միջին պարսկերեն և պահլավերեն տարբերակների «Մեծ արքա Հայոց» գրությանը: Ընդ որում, ինչպես Ս. Կրկյաշարյանն է նկատում, խնդրո առարկա տարընթերցումներում «արական սեռի *του μεγάλου* (մեծի) ածականը ոչ մի դեպքում չի կարող վերաբերել իգական սեռի *Αρμενίας* գոյականին. այն կարող է վերաբերել բացառապես արական սեռի *βασιλέως* (թագավոր) գոյականին, քանի որ հունարենում գոյականի և ածականի սեռային համապատասխանությունը քերականական պարտադիր օրենք է»[9]:

Բացի վերը նշվածից, սկզբունքային առարկություններ է հարուցում նաև Ներսեհի՝ Պայկուլեի արձանագրությանը Վ. Հենինգի կատարած հղումը: Այսպես, հեղինակն օգտվել է Է. Հերցֆելդի կողմից 1924 թ. այս արձանագրության առաջին նախնական հրատարակությունից, որտեղ շատ բաներ դեռևս վարկածային, հետևաբար՝ վիճարկելի էին: Սակայն Հ. Համբակի և Պ. Օ. Սյարվոյի կողմից 1983 թ. Հիշյալ արձանագրության վերընթերցմամբ տարակարծություններ գրեթե չեն մնում. նրանում 276-293 թթ. Հայաստանի պարսկական մասում կառավարած Ներսեհն իրեն կոչում է ոչ թե «*Vazurg Armenān šāh*», ինչպես որ կոչված է Որմիզդ-Արտաշիրը ŠKZ-ում և իր վեհապետության սկզբներին թողարկած դրամների վրա[10], այլ պարզապես «*'lmn'n*

---

[9] Կրկյաշարյան Ս., Հին Հայաստանի պետական կարգը (մ.թ.ա. VI – մ.թ. IV դդ.), Երևան, 2005, էջ 122:

[10] Հիշյալ դրամների դարձերեսին դրոշմված է mzdysn bgy 'whrmzdy RB MLK rmn'n...= Մազդային երկրպագող, տիրակալ Որմիզդ, Մեծ թագավոր Հայոց»: Ուսումնասիրողներից ոմանք, վեհապետական այս դրամների վրա նախկին տիտղոսի առկայությունը փաստարկելով, կարծում են, որ դրանք Որմիզդ I-ի

ML[KA]»= «Հայաստանի թագավոր». *«Ես Հայաստանի արքան էի և մնում էի Հայաստանում...»*[11]: Մյուս կողմից՝ բնավ արդարացված չէ Որմիզդ-Արտաշիրի և Ներսեհի տիտղոսների միջև զուգահեռներ անցկացնելը, քանի որ այդ երկուսը Հայաստանում կառավարել են տարբեր ժամանակահատվածներում, երբ միանգամայն այլ էր Սասանյան տերության ռազմավարչական համակարգում Հայաստանին վերապահված դերը:

Պատմագիտության մեջ հպանցիկ անդրադարձ է կատարվել նաև Հայաստանի Սասանյան կառավարիչներին տրված «Մեծ արքա Հայոց» տիտղոսի իրավաքաղաքական նշանակությանը: Ս. Երեմյանի համոզմամբ հայոց գահին Սասանյան գահաժառանգներին նստեցնելով՝ «Տիզբոնի արքունիքը իրագործում էր իր վաղեմի քաղաքական ծրագիրը՝ Հայաստանում հաստատել Սասանյան դինաստիայի ժառանգական իշխանությունը, ինչպես առաջ, երբ Մեծ Հայքը Արշակունիների «երկրորդ թագավորությունն էր» (*Secundogenitur*). այժմ այդ նույն դերը վերականգնվում էր, սակայն իբրև Սասանյան դինաստիայի երկրորդ թագավորություն»[12]: Դ. Մ. Լանգի կարծիքով պարսից արքունիքը, նվաճված Հայաստանի կառավարումը Սասանյան գահաժառանգներին հանձնելով և նրանց «Մեծ թագավոր Հայոց» տիտղոսով մեծարելով, ցանկացել է վերջիններիս ներկայացնել իբրև տապալված Արշակունիների իրավահաջորդներ[13]: Ինքնատիպ, բայց և ինչ-որ առու-

---

կողմից թողարկվել են նախքան 273 թ. մարտին տեղի ունեցած նրա պաշտոնական թագադրությունը (Луконин В. Г., Культура Сасанидского Ирана. Иран III-V вв., Москва, 1969, стр. 101): Սակայն նույն դրամների երեսին Որմիզդ I-ի՝ անձնական թագով պսակված լինելու փաստն ու թիկունքին վեհապետական խորհրդանշանի առկայությունը ժխտում են այդ վարկածը:

[11] Humback H. and Skjaervø P. O.,The Sasanian Inscription of Paikuli, Part 3.1., Wiesbaden, 1983, §§ 3; 13; 35. Անտեսելով վերոնշյալ փաստը՝ ցայսօր բազմաթիվ ուսումնասիրողներ Ներսեհին են վերագրում «Հայաստանի մեծ արքա» տիտղոսը (Луконин В. Г., նշվ. աշխ., էջ 116: Daryaee T., Sasanian Persia: The Rise and Fall of an Empire, London, New York, 2009, pp. 10 11; Дашков С. Б., Цари царей: Сасаниды, Москва, 2008, стр. 89):

[12] Երեմյան Ս., Նախշ-ի-Ռուստեմի «Քաաբա ի Զարդուշտ» հուշարձանի արձանագրության վկայությունները Հայաստանի մասին, էջ 66:

[13] Lang D. M., Iran, Armenia and Georgia,The Cambridge History of Iran, Ed.by I.

մով նույնիսկ զավեշտական է Որմիզդ-Արտաշիրի «Մեծ արքա Հայոց» տիտղոսի վերաբերյալ Շ. Շահբազիի մեկնաբանությունը, ըստ որի՝ պարսից գահաժառանգին այն շնորհվել է պարզապես «հպատակեցված հայերի հպարտությունը բավարարելու» նկատառումով[14]:

Ակնհայտ է, որ վերոնշյալ բոլոր դեպքերում անտեսվել կամ թերագնահատվել են տիտղոսի՝ որպես վարչաիրավական կյանքի իրողության դերն ու նշանակությունը: Տիտղոսը պետական համակարգում այն կրող անձի պաշտոնական դիրքի ցուցիչն էր, նրա իրավասությունների շրջանակները որոշող հիմնական գործոնը: Դա հավասարապես վերաբերում է Սասանյան վարչաքաղաքական համակարգում ծնված «Մեծ արքա Հայոց» տիտղոսին: Այդ համակարգի պարզ քննությունն իսկ ցույց է տալիս, որ խնդրո առարկա տիտղոսը ոչ թե հայոց մեջ ձևավորված դարավոր ավանդույթը շարունակելու ցանկությամբ կամ էլ պարտված հայերին բարոյապես քաջալերելու, նրանց պատվախնդրությունը շոյելու նպատակով է ստեղծվել, այլ ծնվել է իրանական տերության վարչաքաղաքական կյանքի հրամայականից: 260-ական թթ. Սասանյան տերության վարչական համակարգի՝ ŠKZ-ում ներկայացված համայնապատկերն այլ կարծիքի տեղ չի թողնում:

«Եվ ես (Շապուհ I-ը - Ա. Մ.) տիրում եմ [հետևյալ] երկրներին (միջ. պարսկ. *ẖštr*, պարթ. *khšatr*)[15] Պարսք, Պարթևստան, Սուզիանա, Մեսեն, Ասորեստան, Ադիաբենե, Արաբիա, Ատրպատական, Հայաստան, Իբերիա, Մախելոնիա (պարթ. *sykn*), Առան (Աղվանք), Բաղասական և ավելի հեռուն, ընդհուպ մինչև Կապ լեռ (Կովկաս) և Ալանաց դարպասներ և Պարեշխվարի (Էլբրուս) ողջ լեռները, Մարաստան,

---

Gershevitch, vol. 3(I), 2000, p. 517.

[14] Shahbazi Sh., Shapur I i, History, Encyclopedia Iranica, Originally Published: July 20, 2002.

[15] Մ. Բակը «ẖštrdr» ը թարգմանում է «թագավորներ» (Back M., Die sassanidischen Staatsinschriften. Acta Iranica 18, Téhéran Liège, 1978, p. 289), մինչդեռ Ֆ. Ժինյուն (Gignoux Ph., Clossaire des Inscriptions Pehlevies et Parthes, L., 1972 (CII. Supplementary Series.Vol. I), p. 34, 53) և Էդ. Խուրշուդյանը (Хуршудян Эд. "Государственные институты Парфянского и Сасанидского Ирана". Алматы. 2015, стр. 71) պաշտպանում են ավանդական թարգմանությունը՝ «կառավարիչ»:

Վրկան (հուն.՝ Գուրգան), Մերվ, Հերաթ, ողջ Ապարշահրը, Կրման, Սակաստան, Թուրան, Մեկրան, Փարադան, Հինդ, Քուշանշահը, ընդհուպ մինչև Պաշկաբուր և ավելի հեռու՝ մինչև Կաշագարի լեռները, Սողդ և Չաչ, իսկ ծովի մյուս կողմում՝ Օման: Եվ այդ բազմաթիվ երկրներն ու երկրների կառավարիչներին (միջ. պարսկ. *ẖštrdr,* պարթև. *khšatrdar,* հուն. *δεσπότας τῶνἔθνον*) և կողմերի կառավարիչներին (միջ. պարսկ. *paygosan,* պարթև. *ptykwspn, հուն. τῶνἐκπαντὸςμέρους*) բոլորին դարձրինք մեզ հարկատու և հպատակ»[16]:

Անշուշտ, Շապուհ I-ի «*բոլորին դարձրինք մեզ հարկատու և հպատակ*» արտահայտությունն այնքան էլ ճշգրիտ չի արտացոլում Սասանյան տերության կազմավորման ընթացքը. իրականում այն ձևավորվել էր ոչ թե Շապուհ I-ի, այլ Արտաշիր I-ի ջանքերով և ոչ միայն նվաճումների և հարկադրանքի, այլ նաև Արշակունիների գահակալությունից դժգոհ իրանական կիսանկախ երկրամասերի հպատակ արքաների, իրանական ազդեցիկ տոհմերի ու քաղաքային ինքնավարությունների՝ Սասանյանների շուրջը կամովին համախմբվելու միջոցով, ինչը նորաստեղծ տերությանը նկատելի չափով դաշնային բնույթ էր հաղորդում: Եվ չնայած Արտաշիր I-ի կառավարման վերջերից, հատկապես Շապուհ I-ի գահակալության ընթացքում տարվող կենտրոնացման գործընթացին, մասնավորապես տերության կազմի մեջ կամովին մտած երկրների տեղական դինաստներին Սասանյան արքայազներով փոխարինելու իրողությանը՝ այնուամենայնիվ իրանական այս տերությունը մինչև վերջ էլ մնաց Սասանյան վեհապետի իշխանության ներքո համաբանվող և տարաստիճան ինքնավարություն վայելող շահերի, կողմերի ու համայնքների մի բարդ համակարգ:

Սասանյան տերության վարչական սուբյեկտների ինքնավարության աստիճանը և դրանց ղեկավարների գործառույթներն առ այսօր հստակ չեն: Այնուամենայնիվ, Ֆ. Ժինյուն տարատեսակ աղբյուրագիտական նյութերի հիման վրա Սասանյան տերության ողջ տարածքում զանազանում է արքայական իշխանության՝ իրավաքաղաքական բովանդակությամբ խիստ տարբեր երեք մակարդակներ՝ արքայից արքա

---

[16] Համմտ. Sprengling M., Third century Iran, Sapor and Kartir, Chicago, 1953, pp. 14-15.

(*šahanšah*), մեծ արքա (*wuzurg šah*) և հպատակ կամ վասալ արքաներ (*šahrdāran*)[17]: Արքայական իշխանության այս եռաստիճան համակարգում «Մեծ արքա Հայոց» տիտղոսի նշանակությունը պարզելու առումով յուրօրինակ բանալի է այն փաստը, որ մինչև III դ. երրորդ քառորդը այդ տիտղոսը վերապահվում էր բացառապես Սասանյան գահաժառանգներին: Այդ հանգամանքն իսկ հուշում է, որ խնդրո առարկա տիտղոսի իրավաքաղաքական նշանակությունը կարելի է ըմբռնել միայն գահաժառանգության տոհմական (նահապետական) սկզբունքի հաղթահարման ուղղությամբ առաջին Սասանյան տիրակալների քաղաքականության համատեքստում: Ինչպես երևում է, սկսած Արտաշիր I-ից, ուղղակի գահաժառանգության սկզբունքի արմատավորման համար կիրառվել են նախորդ իրանական հարստություններից յուրացրած երկու հիմնական մեխանիզմներ: Նախ՝ գահաժառանգի համար հանրային ճանաչում ապահովելու նպատակով պաշտոնական ժայռաքանդակների վրա նրան էր վերապահվում «արքայից հետո երկրորդ»-ի դիրքը՝[18] պատկերագրության լեզվով հայտարարելով, թե ում հետ է արքան կապում արքայական իշխանության օրինականությունը, հասարակական կարգերի կայունությունն ու Իրանի փառքի շարունակականությունը: Ակնհայտ է, որ Արտաշիրը յուրացրել էր նաև իրանական բանակի գործնական ղեկավարությունը թագաժառանգներին հատկացնելու միջոցով նրանց տերության կյանքին անմիջականորեն հաղորդակցվելու, ապագա տիրակալի համար ռազմաքաղաքական գործունեության անհրաժեշտ փորձ ապահովելու պարթևական մեխանիզմը[19]: Ինչ վերաբերում է «Մեծ արքա» տիտղոսին, ապա կարծում ենք, որ այն դարձյալ երևան է հանվել Սասանյան տերության նվիրապետական համակարգում Սասանյան վեհապետին հպատակված տեղական դինաստների ու հատկապես առանձին երկրամասերի կառավարիչ-արքաներ նշանակված Սասանյան արքայազների միջավայրում գահաժառանգի «արքայից հետո երկրորդ» ի դրությունն ապահովելու

---

[17] Gignoux Ph. Court and Courtiers II. In the Parthian and Sasanian Periods, Elr, 1993, Vol. VI, Fasc. 4, p. 360.

[18] Մելիքյան Ա., Սալմաստի ժայռաքանդակը. պատմական Հայաստանի սասանյան մի հուշարձանի վերամեկնաբանություն, Երևան, 2016, էջ 105-115:

[19] Նույն տեղում, էջ 106-115:

նպատակով: Փաստորեն, որպես գահաժառանգի քաղաքական գովազդի միջոց, այն լրացնում էր ուղղակի գահաժառանգության սկզբունքի քաղաքական քարոզչության վերը նշված երկու միջոցները և ծառայում Սասանյան գահի նկատմամբ անցանկալի հավակնությունները կանխելուն:

Արված դիտարկումներից բնականաբար հարց է առաջանում. արդյո՞ք Որմիզդ-Արտաշիրն առաջինն էր, որ կրել է «Մեծ արքա Հայոց» տիտղոսը: Սրա պատասխանը միանշանակ է. այն դրդապատճառները, որոնք երևան էին բերել «մեծ արքա» տիտղոսը, գոյություն ունեին ոչ միայն Շապուհ I-ի օրոք, այլև նրանից առաջ՝ Արտաշիր I-ի կառավարման ժամանակ, երբ Սասանյան տերության դաշնային բնույթը շատ ավելի զգալի էր, իսկ գահաժառանգության հարցը՝ ավելի վիճահարույց[20]: ŠKZ-ում Արտաշիր I-ի արքունի ցուցակը բացում են չորս արքաներ (*šahrdārān*). «Ահա նրանք, որոնք ապրել են արքայից արքա Արտաշիրի իշխանության ներքո. Սատրապ՝ Ապրենակի արքա, Արտաշիր՝ Մերվի արքա, Արտաշիր՝ Կրմանի արքա, Արտաշիր՝ սակերի արքա... »[21]: Համաձայն ընդունված կարծիքի՝ Արտաշիր I-ի արքունի ցուցակում հիշատակված չորս արքաներից միայն երկուսը՝ Ապրենակի արքա Սատրապն ու Կրմանի արքա Արտաշիրն են, որ Արտաշիր I-ի գահակալության վերջերին դեռևս ներկայացնում էին տեղական հարստությունները: Ուսումնասիրողները մյուս երկուսին նույնականացնում են Արտաշիր I-ի համանուն եղբոր և որդու հետ[22]: Հնարավոր է, որ Արտաշիր I-ի հպատակ տեղական արքաների թիվն իրականում ավելի մեծ է եղել, բայց ŠKZ-ում տեղ են գտել նրանցից ամենապատվավորները: Չի բացառվում նաև, որ նրանցից առավել թույլերը ժամանակի ընթացքում կուլ են գնացել Արտաշիր I-ի կենտրոնաձիգ քաղաքականությանը[23], և ŠKZ-ն արձանագրել է նրա գա-

---

[20] Նույն տեղում, էջ 102:

[21] ŠKZIV, 6b. See Sprengling M., Third Century Iran..., p. 18.

[22] Hinz W., Altiranische Funde und Fourschungen, Berlin, 1969, S. 142; Frye R.N., The Political History of Iran Under The Sasanians, CHI, vol. 3 (I), Cambridge, 2000, p. 120):

[23] Մշիխա Զեխան Արտաշիր I-ին կամովին հպատակված արքայիկներից հիշատակում է երկուսին՝ Քարքա-Սլոխի արքա Դոմիտիանոսին և Ադիաբենեի

հակալության վերջերին գոյություն ունեցած վարչական պատկերը: Ամեն դեպքում դրանից ո՛չ վաղ սասանյան տերության դաշնային բնույթն էր փոխվում, ո՛չ էլ գահաժառանգության հարցի հրատապությունը: Տաբարին հաղորդում է, որ Արտաշիրի «...եղբայրներից ...ոմանք ավելի տարեց էին, քան ինքը: Այնուամենայնիվ, նրանք բոլորը հավաքվելով բերեցին թագն ու արքայական գահը, առաջարկեցին այն Արտաշիրին»[24]: Սակայն դա կարելի է որակել իբրև Պարսքում իշխանության զավթման գործում Արտաշիրի դերակատարության ընդունման ակտ, ինչը բնավ էլ չէր կանխորոշում արքայական իշխանության հետագա ճակատագիրը: Ինչպես նկատում է Վ. Լուկոնինը, Սասանյաններն իշխանության էին եկել որպես տոհմ, և, հետևաբար, գահաժառանգության հարցում որքան որ նահապետական սկզբունքը պետք է դիտվեր որպես հարցի օրինական լուծում, նույնքան էլ ուժեղ պետք է լիներ այդ սկզբունքը շրջանցելու վեհապետի ցանկությունը[25]:

Արտաշիր I-ի օրոք Սասանյան նվիրապետական համակարգում

արքա Շարհատին (Մշիխա Զեխա, Ադիաբենեի եկեղեցու պատմություն, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթ.՝ Հ. Գ. Մելքոնյանի: Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Ասորական աղբյուրներ, հ. 8, Երևան, 1976, էջ 82-83): Բայց մի փոքր անց նա նշում է. «Պարսիկների առաջին արքա Արտաշիրը մեր երկիր ուղարկեց մի կառավարիչ, որն Ադորզահադ էր կոչվում» (նույն տեղում, էջ 84):

[24] The History of al-Tabarī (Ta'rīkh al-rusul wa'l-mulūk): The Sāsānids, the Byzantines, the Lakhmids and Yemen. Transl. and annotated by C. E. Boswarth, Albany, New York, 1999, pp. 8-9.

[25] Վաղ Սասանյանները չունեին գահաժառանգության համընդհանուր ճանաչում գտած սկզբունք: Այսպես կոչված «Թանսարի նամակ»-ում Իրանի նոր գահակալի ընտրության իրավունքը վերապահված է զրադաշտական քահանայապետի (mowbedan mowbed), դպրապետի (dabirbed, dibıruft) և սպարապետի (spahbed) խորհրդին՝ քահանայապետի կարծիքի գերապատվության պայմանով: Սակայն վաղուց է ցույց տրվել, որ պետության կառավարման համար զանազան տեսական և գործնական խորհուրդներ, ինչպես նաև բարոյական կանոններ պարունակող այս ստեղծագործությունը գրվել է Խոսրով I-ի օրոք՝ 557-570 թթ., և միտումնավոր վերագրվել է Արտաշիր I-ի նշանավոր մոգպետ Թանսարին (Луконин В. Г., նշվ. աշխ., էջ 104-106: "The Letter of Tansar", translated by M. Boyse, Roma, 1968):

գահաժառանգին «Մեծ արքա» տիտղոսով մեծարելու իրողությունը հաստատում են նաև գրավոր և պատկերագրական տվյալները: Նախևառաջ դրա օգտին է խոսում «Մանիի Քյոլնյան ժողովածուն», որի հաղորդմամբ 240 թ. ապրիլի 12-ին Արտաշիր I-ի գահաժառանգ որդին՝ Շապուհը, հոր կողմից «ավագ դիադեմայով» պսակվելուց (կառավարչակից հայտարարվելուց) առաջ կրել է արքայական տիտղոս և հետևաբար՝ «կրտսեր դիադեմա»[26]: Ըստ այդմ՝ կասկածից վեր է դառնում այն, որ գոյություն է ունեցել ինչ-որ մի տարածք, որտեղ Շապուհի արքայական տիտղոսը ներդաշնակել է տերության գահաժառանգի կարգավիճակին և դրա հետ կապված զորապետական գործառույթին: Մեր խորին համոզմամբ Շապուհի արքայական իշխանությունը կայացել է մասնավորապես Հայաստանի հարավային՝ Տավրոսյան լեռնաշղթայի երկայնքով ձգվող Անգեղտուն *(Ἰγγηλνή)*, Մեծ

---

[26] Herichs A. and Koenen L., Ein grieshischer Mani-Codex, Zeitschrift für Papyrologie und Epigraphik V, (Bonn, 1970), S. 120; Henrichs A., The Cologne Mani Codex Reconsidered, Harvard Studies in Classical Philology, Vol. 83, 1979, pp. 339 367; Sundermann W., Studien zur kirchengeschichtlichen Literatur der iranischen Manichäer I, Altorientalische Forschungen, 1986, 13, S. 49. Շ. Շահբազին, հետևելով Ա. Հեյնրիխսին և Լ. Կյոնենին, Մանիի «ավագ (կամ մեծ) դիադեմա» արտահայտությունը փակագծերում պարզաբանում է իբրև «royal –արքայական դիադեմա» (Shahbazi Sh., Shapur I i, History), ինչը մեր կարծիքով այնքան էլ ճիշտ չէ: Ի տարբերություն պարթևական ժամանակների՝ Սասանյան դարաշրջանում դիադեման ուներ կիրառության անհամեմատ նեղ սոցիալական շրջանակ: Այժմ նրա առկայությունը ցուցում էր ոչ թե այն կրողի ազնվազարմությունը կամ պետության վարչական համակարգում ունեցած բարձր դիրքը, այլ արքայական աստիճանը: Այս տեսանկյունից տրամաբանական կլինի Մանիի հիշատակած «ավագ դիադեմա»-ն վեհապետական իշխանության խորհրդանիշ, իսկ ինքնըստինքյան հասկացվող «կրտսեր» կամ «փոքր» դիադեման՝ հպատակ կամ կախյալ արքաների արքայական տարբերանշան համարելը: Սասանյան դարաշրջանի աստվածային և արքայական ինվեստիտուրային տեսարաններում վեհապետական և հպատակ արքայական իշխանության բովանդակությունների տարբերությունն արտահայտվում էր նաև «իշխանության օղակ»-ների արտաքին տեսքով. առաջին դեպքում դրանք զարդարված են երկու ծալքազարդ ժապավեններով, մինչդեռ հպատակ արքաներին հանձնվող օղակները զուրկ են ժապավեններից:

Ծոփք *(Σοφηνή)*, Արզան *(Ἀρζανηνή)*, Կորդուք *(Καρδουηνή)*, ինչպես նաև վերջինիս սահմանակից Ծավդեք *(Ζαβδικηνή)* երկրամասերում, որոնք, համաձայն այսպես կոչված «Տիգրանակերտի հունարեն արձանագրության», ասորի մատենագիր Մշիխա Զեխայի «Ադիաբենեի եկեղեցու պատմության» և Հայաստանի պատմական աշխարհագրության տվյալների, պարսիկների կողմից բռնազավթվել էին տակավին 220-230-ական թթ.[27]: Հայկական երկրամասերի վրա Շապուհի գահակալության օգտին ամենածանրակշիռ փաստարկը տալիս է Մեծ Հայքի Զարեհավան գավառում՝ Սալմաստից ոչ հեռու, ստեղծված ժայռաքանդակը: Այս հուշարձանի համակողմանի քննությանը նվիրված մեր մենագրության մեջ հիմնավորապես ցույց ենք տվել, որ այն պատկանում է ինվեստիտուրայի ժանրին և ստեղծվել է 272 թ. Հայաստանի Սասանյան կառավարիչ Որմիզդ-Արտաշիրի կողմից[28]: Հուշարձանի վրա պատկերված են Սասանյան առաջին երկու տիրակալների կողմից իրենց գահաժառանգներին արքայական իշխանությամբ պսակելու միանման տեսարաններ, որոնք իրարից չտարանջատելու պատճառով դիտորդների և նույնիսկ ուսումնասիրողների շրջանում մեկ կոմպոզիցիոն ամբողջականության տպավորություն են ստեղծել: Ժայռաքանդակի աջակողմյան պատկերախմբում հեծյալի դիրքով պատկերված է Արտաշիր I-ը, իսկ նրա դիմաց կանգնած է Շապուհը՝ մազերի ինքնատիպ ուռուցիկ հարդարանքով և իրանական հագուստով: Երկուսն էլ պատկերված են աջ ձեռքերն իրար մեկնած, մի դիրքով, որը կատարելապես համապատասխանում է սասանյան ինվեստիտուրային քանդակների «տալու-ստանալու» պատկերագրական սխեմային: Ճիշտ է, քանդակագործը փոխանցվող առարկան «թաքցրել է» Արտաշիրի ձիու գլխի հետևում, սակայն Սալմաստի ժայռաքանդակի երկու պատկերախմբերի ընդհանուր սիմետրիայից կարող ենք ենթադրել, որ, ինչպես աջակողմյան պատկերախմբում, այստեղ ևս Արտաշիրի կողմից գահաժառանգին հանձնվող առարկան օղակ է: Ընդ որում հատկանշական է, որ այն ժապավենազուրկ է՝ նման Սասանյան վեհապետների կողմից իրենց հպատակ արքաներին շնորհվող կամ էլ Սասանյան

---

[27] Մելիքյան Ա., նշվ. աշխ., էջ 120-125:

[28] Նույն տեղում, էջ 163-166:

գահաժառանգների կողմից ի տես հանվող օղակներին: Իսկ քանի որ օղակը ոչ թե ինվեստիտուրայի ծեսում իրապես շնորհվող պատվանշան էր, այլ այդ ծեսի գեղարվեստական կերպավորման ժամանակ գործածվող խորհրդանշական տարր[29], միանգամայն արդարացված կլինի այն շնորհելու տեսարանը Մանիի ինքնակենսագրության մեջ ակնարկված «կրտսեր դիադեմայով» թագադրության պատկերագրական համարժեքը համարելը[30]:

Իհարկե, որոշ հակասություն է առաջանում այն առումով, որ ŠKZ-ի Արտաշիր I-ի արքունի ցուցակում արձանագրության հեղինակ Շապուհ I-ը իրեն չի հիշատակել որպես հպատակ երկրի թագավոր: Տեսականորեն դա կարելի է բացատրել նրանով, որ Հայաստանի մեծագույն մասն Արտաշիր I-ի օրոք մնում էր աննվաճ, և իրեն «Հայաստանի մեծ թագավոր» տիտղոսով հիշատակելու դեպքում նա ոչ միայն կմեղանչեր «ճիշտ խոսքի» զրադաշտական պատգամից, այլև ընթերցողին կգցեր մոլորության մեջ: Բավական է հիշել, որ ŠKZ-ից շուրջ 30 տարի անց ստեղծված Պայկուլեի արձանագրության մեջ էլ արքայից արքա Ներսեհը, դարձյալ ընթերցողին թյուրիմացության մեջ չգցելու նկատառումով, խախտել է գահակալության առթիվ իրեն շնորհավորելու եկած կառավարիչների ու դեսպանների թվարկման ձևական սկզբունքը և Տրդատ III Արշակունուն հիշատակել է միայն «արքա» տիտղոսով՝ առանց նշելու նրա ներկայացրած երկիրը[31]. չէ՞ որ այս դեպքում էլ Մեծ Հայքի արևելյան՝ մեծագույն մասը գտնվում էր պար-

---

[29] von Gall H., The Figural Capitals at Taq-e Bostan and the Question of the so-called Investiture in Parthian and Sasanian Art, Silk Road Art and Archaeology I, 1990, p. 107.

[30] Սովորական ինվեստիտուրայի ժանրով ստեղծված ցանկացած անշարժ հուշարձանի պարագայում անխզելի կապ գոյություն ունի նրա տեղադրության և ներկայացրած իրադարձության միջև: Այս օրինաչափության տեսանկյունից Մեծ Հայքի Զարեհավան գավառում Իրանի գահաժառանգ Շապուհի՝ արքայական իշխանությամբ օժտվելու տեսարանի կերտման փաստը կարելի է համարել Հայաստանի հետ նրա արքայական իշխանության ուղղակի կապի անվիճելի ապացույցը (Մելիքյան Ա., Սալմաստի ժայռաքանդակը..., էջ 119):

[31] Humbach H. and Skjaervø P.O., The Sassanian Inscription of Paikuli, Part 3.1, § 92.

սից տիրապետության ներքո, և Տրդատ III-ի՝ Մեծ Հայքի արևմտյան մասում ունեցած «արքա» տիտղոսը նրա վրա չէր տարածվում[32]: Այսու հանդերձ, մեզ ավելի հավանական է թվում երկրորդ բացատրությունը. ŠKZ-ում արքայից արքա Շապուհ I-ը կարող էր և չհիշել «Հայաստանի մեծ արքայի» իր անցյալ կարգավիճակը, մանավանդ, որ այն ածանցված էր եղել Իրանի գահաժառանգի ու զորահրամանատարի իր համապետական կարգավիճակին և ստվերվել էր այն մեծ փառքով ու հեղինակությամբ, որ նա ձեռք էր բերել 230-ական թթ. վերջերից՝ Վերին Միջագետքում և Ասորիքում ծավալված ռազմական գործողությունների ժամանակ: Այս վարկածի օգտին է խոսում այն փաստը, որ ŠKZ-ի Արտաշիր I-ի արքունիքի թվարկության մեջ Շապուհն իրեն ընդհանրապես չի հիշատակում: Սակայն դրանից չի հետևում, թե Իրանի գահաժառանգի և փաստացի զորահրամանատարի դերն ու նշանակությունն այն աստիճան ցածր են եղել, որ նա դուրս է մնացել պաշտոնական ցուցակից: Ընդհակառակը, դա հաստատում է մեր այն դրույթը, որ Շապուհն իբրև գահաժառանգ, ստորադասված լինելով Արտաշիր I-ին, միևնույն ժամանակ գերադաս դիրք է զբաղեցրել Իրանի վեհապետին ենթակա ամբողջ նվիրապետական համակարգի նկատմամբ: Այս իրողությունն իր հետաքրքիր արտահայտությունն է ստացել Արտաշիր I-ի՝ Փիրուզաբադ II ժայռաքանդակի վրա: Այստեղ Արտաշիր I-ից անմիջապես հետո պատկերված է արքայի հովհարակիրը, որով և առաջին հայացքից, խաթարվել է գահաժառանգի «արքայից հետո երկրորդ»-ի դիրքը: Սակայն քանդակագործն աստիճանակարգության հնամենի կանոնից կատարված շեղումը հաջողությամբ շտկել է չափական հարաբերության միջոցով՝ հովհարակրին պատկերելով անհամեմատ փոքր, քան հաջորդող երեք պատկերները: Վերջիններիս հագուստից և հատկապես գլուխների հարդարանքից պարզորոշ երևում է, որ նրանք պատկանում են Սասանյան արքայատանը: Նրանց մեջ Շապուհը, ով նույնականացվում է, շնորհիվ սաղավարտին քանդակված զինանշանի, ներկայացվել է առաջ, քան Արտա-

[32] Մելիքյան Ա., Տիգրանակերտի հունարեն արձանագրության ժամանակի և նշանակության մասին, Բանբեր Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի, 2008, 3, էջ 142:

շիր I-ի համանուն եղբոր և որդու՝ Մերվի և Սակաստանի արքաների հետ նույնականացվող մյուս երկու պատկերները: Պատկերների գծային դասավորության պարագայում, հստակ արտահայտված դիրքային առավելությունից զատ, Շապուհի գերապատվությունը նրանց նկատմամբ արտահայտված է նաև իշխանության նշանների միջոցով. Շապուհը կրում է ծոծրակին արված հանգույցից կախ ընկած երկար ժապավեններով դիադեմա, մինչդեռ մյուս երկուսը, որոնք ŠKZ-ում հիշատակվում են արքա (šahrdar) տիտղոսով, ներկայացվել են պարթևական ժամանակների «սատրապական» դիադեմաներով[33]:

Այսպիսով, վերը կատարված մեր դիտարկումները ցույց են տալիս, որ «մեծ արքա» տիտղոսը երևան է եկել գահաժառանգության հիմնահարցի կարգավորման նպատակով, ինչը և պարզորոշ արտացոլվել է Որմիզդ-Արտաշիրի ստեղծած Սալմաստի ժայռաքանդակի վրա[34], իսկ հետագայում, ժամանակի և միջավայրի որոշ այլափոխմամբ, արձանագրվել է նաև Ագաթանգեղոսի «Պատմութիւն Հայոց»-ում[35]: Սակայն պետք է նկատել, որ որքան էլ մեծ լինի Սասանյան գահաժառանգների՝ «Մեծ արքա Հայոց» տիտղոսի «Մեծ» մակդիրը Հայաստանին վերագրելու գայթակղությունը, այնուամենայնիվ, նրա մեջ իրապես տիտղոսի նշանակություն ունի «Մեծ արքա»-ն: Այն կապվում

---

[33] Մելիքյան Ա., Սալմաստի ժայռաքանդակը. պատմական Հայաստանի սասանյան մի հուշարձանի վերամեկնաբանություն, էջ 132, 133, նկ. 42:

[34] Ներկայացնելով նախ Արտաշիր I-ի կողմից թագաժառանգ Շապուհին, ապա և արքայից արքա Շապուհի կողմից իրեն՝ Որմիզդ-Արտաշիրին, «Մեծ արքա Հայոց» կարգելու ծեսերը՝ Որմիզդ-Արտաշիրը դիտողներին փորձել է ներշնչել այն միտքը, թե «Երանի ու Աներանի» գահին կարող է նստել միայն նա, ով դեռևս նախորդ տիրակալի կողմից ճանաչվել է որպես «մեծ արքա Հայոց»: Ընդ որում ժայռաքանդակի երկու պատկերախմբերի միջև որևէ դեկորատիվ տարանջատում չանելով (ինչը հասկանալի կդարձներ երկու իրադարձությունների տարբեր ժամանակային չափումները)՝ պատվիրատուն փաստորեն իր գաղափարը ներկայացրել է շարժանկարի սկզբունքով, որպես թե ի սկզբանե եկող և սահուն դեպի ապագան գնացող մի կարգ, որի մեջ կարող են փոփոխվել միայն անունները, բայց ոչ երբեք գործող անձանց դիրքն ու դրանից բխող հարաբերությունը (Մելիքյան Ա., նշվ. աշխ., էջ 164):

[35] Ագաթանգեղոս, §18. «... զի որ Հայոց թագաւոր էր՝ նա էր երկրորդ Պարսից տէրութեանն...»:

էր գերազանցապես գահաժառանգի անձի հետ, իսկ նրա կառավարման ներքո գտնվող երկիրն այնքանով, որքանով որ այն իր սահմանային դիրքով պարսկական զորքի կենտրոնատեղին ու գահաժառանգ-զորապետի ոստանն էր: Հետևաբար, եթե հարկ լինի անդրադառնալ Սասանյան վարչաքաղաքական համակարգում այս կամ այն երկրամասի արտոնյալ դերին, ապա խոսքը ոչ թե «*secundogenitur*» - «երկրորդ տերության», այլ «*secundigentum*» - «(արքայից հետո) երկրորդ երկրի» մասին է: Այն ոչ թե ստատիկ, այլ տերության արտաքին քաղաքականության առաջնահերթությունների փոփոխություններին ներդաշնակող դեր էր կատարել[36]:

Շապուհ I-ի վախճանից հետո՝ 272 թ. ապրիլի կեսերին, Հայոց Մեծ արքա Որմիզդ-Արտաշիրը բազմեց Սասանյան գահին[37]: Հետևե-

---

[36] Այս առումով չի կարելի համաձայնել Թ. Դարյաիի հետ, ով, «Մեծ արքա Հայոց» կապակցության մեջ «Մեծ» մակդիրը վերագրելով Հայաստանին, նշում է. «Սասանյան կայսրության մեջ ոչ մի այլ նահանգ չի ունեցել նման կարևոր տիտղոս» (Daryaee T., Sasanian Persia: The Rise and Fall of an Empire, London-New York, 2009, p. 8):

[37] Պատմագիտության մեջ Շապուհ I-ի վախճանի և հետևաբար՝ Որմիզդ I-ի գահակալության թվագրումները տարբերվում են երեք տարով: Ս. Տագիզադեն Շապուհի մահը թվագրում է 273 թ. ապրիլի կեսերով (Taqizadeh S. H., The Early Sasanians. Some Chronological Points which Possibly Call for Revision, BSOAS, vol. 11, 1943-1946, pp. 41-42; Taqizadeh S. H., Henning W. B., The Dates of Mani's Life, Asia Major, vol. 6, 1958, p. 116): Նրա թվագրումն ընդունում է նաև Գ. Վիդեգրենը (Widengren G., Manichaeism and its Iranian Background, in CHI, ed. by E. Yarshater, Vol. 3 (2). p. 970): Վ. Հենինգն այդ իրադարձությունները ժամանակագրում է 270 թ. մայիս ամսով (Haloun G. and Hening W. B., The Compendium of the Doctrines and Styles of the Teaching of Mani, the Buddha of Light, AM, vol. 3, 1952, pt. 1, p. 199): Վ. Հենինգի կարծիքը պաշտպանում են նաև Շ. Շահբազին (Shahbazi Sh., Shapur I) և Թ. Դարյաին (Daryaee T., նշվ. աշխ., էջ 10): Վ. Հինցն Իրանում կատարված իշխանափոխության թվականը համարում է 272 թ. (Hinz W., Mani and Kardēr, in Atti del convegno internazionale sul tema la Persia nel medioevo (Roma, 31 marzo 5 aprile 1970), Accademia Nazionale dei Lincei. Anno CCCLXVIII - 1971. Quaderno N. 160. Roma, Accademia Nazionale dei Lincei, quaderno 160, Rome, 1971, p. 486): Այս թվականն են ընդունում նաև Մ. Շեյեգանը (Shayegan M. R., Hormozd I, Elr, vol. XII, Fasc. 5, p. 462), Վ. Լուկոնինը (Луконин В. Г. "Варахран II и

լով պապի և հոր օրինակին՝ նա «Հայաստանի Մեծ թագավոր» նշա նակեց հարազատ որդուն՝ Որմիզդակին: Որմիզդ I-ի այս որդին ŠKZ-ում առաջնորդում է Շապուհ I-ի թոռների շարքը[38]: Որմիզդակին Շապուհ անվամբ որպես Հայաստանի կառավարիչ հիշատակում է նաև Մ. Խորենացին[39]: Քանի որ մինչև 272 թ. մարտ՝ մինչև իր պաշտոնական թագադրությունը, Որմիզդ I-ն իր դրամների վրա կրում է «Մեծ թագավոր Հայոց» տիտղոսը, ուրեմն՝ Որմիզդակի նշանակումը կատարվել է դրանից հետո: Սակայն, Պատմահոր հաղորդման համաձայն, Որմիզդակ-Շապուհը Հայաստանում կառավարել է ընդամենը մեկ տարի՝ 273/274 թթ.: Գրավոր աղբյուրներում և սասանյան վիմագրերում նրա անունն այլևս չի հիշատակվում, ինչից էլ ենթադրում են, որ նա մահացել է տակավին երիտասարդ: Ավելի հավանական է, որ նա զոհ է գնացել իրանական ազնվականության և զրադաշտական կղերի նյութած դավադրությանը դեռևս հոր կենդանության օրոք[40]:

Ցավոք, հայտնի չէ՝ Որմիզդ I-ը արդյոք ունեցե՞լ է այլ որդիներ, թե՞ ոչ: Վ. Գ. Լուկոնինը Շապուհ I-ի՝ ŠKZ-ում հիշատակված թոռներից Որմիզդ I-ի որդին է համարում նաև Վարահրանին[41], թեև արձանագրության մեջ Շապուհի թոռների հիշատակության կարգը թույլ չի տալիս վստահել այդ կարծիքին: Բայց եթե անգամ Վ. Գ. Լուկոնինի վարկածը ճիշտ է, Որմիզդ I-ի այդ ենթադրյալ որդին հազիվ թե հասցրած լինի Հայաստանի գահին փոխարինել մահացած կամ սպանված եղ-

---

Нарсе". (Иран в 70-90-е годы III в.), Вестник древней истории, 1964, N 1, стр. 49), Ռ. Ֆրայը (Фрай Р. Н., Наследие Ирана, Москва, 2002, стр. 369, прим. 3), Պ. Կրեյենբրոկը (Kreyenbroek P.G., How Pious Was Shapur I?: Religion, Charch and Propaganda under the Early Sasanians, in The Sasanian Era: The Idea of Iran, Vol. III, p. 7), Կ. Ֆարոխը (Фаррох К. "Персы. Армия великих царей". Москва, 2009, стр. 205) և այլք:

[38] ŠKZ, IV, 5.«... Որմիզդակի՝ Հայաստանի արքայի որդու, Որմիզդի, Որմիզդակի, Օդաբախտի, Վարահրանի, Շապուհի, Պերոզի՝ Մեսենի արքայի որդիների...» (Sprengling M., Third century Iran, Sapor and Kartir, Chicago, 1953, p. 18):

[39] Խորենացի Մ., II, ՀԷ:

[40] Մելիքյան Ա., նշվ. աշխ., էջ 172:

[41] Луконин В. Г. "Культура Сасанидского Ирана", стр. 103.

բորը, որովհետև կարճ ժամանակ անց անհայտ հանգամանքներում վախճանվեց, կամ, որ շատ հավանական է, իրանական ընդդիմության դավադրության զոհը դարձավ նաև Որմիզդ I-ը: Իսկ դրանից հետո նրա ուղղակի ժառանգի թեկնածությունը հայոց գահին պետք է որ մերժվեր, քանի որ դա կհակասեր ոչ միայն ուղղակի գահաժառանգության գործող կարգին, այլև Որմիզդ I-ին թշնամացած իրանական ավագանու և զրադաշտական հոգևորականության քաղաքական գծին:

Պատմագիտության մեջ տարածված կարծիքի համաձայն՝ Հայաստանում Որմիզդակից հետո կառավարել է Շապուհ I-ի կրտսեր որդին՝ Ներսեհը, որը ŠKZ-ում հիշատակվում է որպես «Սակաստանի, Թուրանի և Հնդկաստանի, մինչև ծովի ափերը» ընդարձակ շահրի արքա[42]: Սակայն ո՛չ գրավոր աղբյուրները, ո՛չ էլ պարսից տերության ներքին քաղաքական կյանքի մասին պատկերացումները հավատ չեն ներշնչում այդ վարկածի նկատմամբ: Ընդհակառակը, Որմիզդ I-ից հետո Իրանի կրոնաքաղաքական կյանքում հաստատված status quo-ի մասին տվյալները հիմք են տալիս կարծելու, որ 273/274-276 թթ. Հայաստանը կառավարվել է Վարահրան I-ի որդու՝ Վարահրանի (ապագա Վարահրան II) կողմից: Ամենայն հավանականությամբ այդ լուծու-

---

[42] Ս. Երեմյանի կարծիքով Շապուհ I-ի որդի Ներսեհը 273 թ. «Հայաստանի մեծ արքայի» գահը խլել էր Որմիզդակից՝ Տիզբոնի վեհապետական գահին տիրանալու հույսով («Հայ ժողովրդի պատմություն», ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ. II, Երևան, 1984, էջ 59): Կ. Թումանովի կարծիքով Ներսեհին Հայաստանի գահին է նստեցրել ինքը՝ Որմիզդ-Արտաշիրը, 273 թ. (Toumanoff C., The Third Century Armenian Arshacids. A Cronological Commentary. Revue de sétudes Arméniennes. N VI, 1969, p. 257): Ա. Մարտիրոսյանը ևս Հայաստանի գահին Որմիզդակի անմիջական հաջորդ է համարում Ներսեհին, միայն թե այդ փոփոխությունը թվագրում է 275 թ. (Մարտիրոսյան Ա., Հայաստանը և առաջին Սասանյանները, ՊԲՀ, 1975, թիվ 3, էջ 163): Վ. Գ. Լուկոնինի և Շ. Շահբազիի կարծիքով Որմիզդ I ի մահվանից հետո Ներսեհը թեպետ Վարահրան I ի գահակալությանը նայում էր իբրև ուզուրպացիայի (բռնատիրում), այնուամենայնիվ համակերպվել է կայսրության մեջ երկրորդի դրությանը՝ դառնալով «Մեծ թագավոր Հայոց» (Луконин В. Г., Варахран II и Нарсе, (Иран в 70-90-е годы III в.), стр. 48 и сл.. Shahbazi Sh., Bahrām I, Elr, 2012, Vol. III, Fasc. 5, pp. 514-522):

մը կազմել է Շապուհի ավագ որդու՝ Վարահրանի և մոգպետ Կարտիրի ու նրա համախոհների միջև կայացած համաձայնության մի մասը, և ծանրակշիռ զիջումների դիմաց զրադաշտական կղերն ու իրանական պահպանողական ազնվականությունը համաձայնել են ոչ միայն Վարահրանի գահակալությանը, այլև Հայաստանի կառավարչի պաշտոնում նրա որդու նշանակմանը: Սակայն գահաժառանգ Վարահրանը «Մեծ արքա Հայոց» տիտղոսը պետք է որ կրած լինի ընդամենը մի քանի տարի:

276 թ. Պրոբոս կայսեր հետ Վարահրան I-ի կնքած հաշտության պայմանագրից[43] հետո պատերազմի հավանականությունը պարսկա-հռոմեական սահմաններում վերացավ և, դրանով պայմանավորված, Հայաստանը կորցրեց իրանական զորքի հենակայանի և այդ զորքի հրամանատար պարսից գահաժառանգի ոստանի նշանակությունը[44]: Այնուհետև Սասանյանների ռազմաքաղաքական ակտիվության սլաքը թեքվեց դեպի Արևելք, և բնականաբար գահաժառանգի ոստանի և պարսկական զորակայանի դերն անցավ տերության արևելյան՝ «Սակաստանի, Տուրեստանի և Հինդի մինչև ծով» շահրին[45]: Իրանի արտաքին քաղաքականության մեջ կատարված հիշյալ շրջադարձից հետո արքայից արքա Վարահրան I-ի գահաժառանգ որդին՝ Վարահրանը, նշանակվեց «Սակաստանի մեծ արքա», իսկ Վարահրան I-ի կրտսեր եղբայր Ներսեհը տեղափոխվեց Հայաստան: Ս. Դաշկովի կարծիքով Հայաստանը Ներսեհին է տրվել որպես արքայից արքայի գահի շուրջ պայքարում նրան շրջանցելու հատուցում[46]: Սակայն հազիվ թե կարելի է այդ մեկնաբանության հետ համաձայնել, քանի որ այդ նոր նշանակումը, ոչինչ չտալով Ներսեհին, ավելի էր խամրեցնում Տիզբոնի գահին հասնելու նրա տեսլականը: Այս առումով հատկանշական է, որ Հայաստանի կառավարչի պաշտոնում նա կրում էր ոչ թե «Մեծ արքա Հայոց», այլ «*mzdysn nrsẖy MLK'* - Մարզդային երկըր-

---

[43] Historia Augusta, with an English Translation by David Magie, Vol. I III, London,VII edition, 1991, Prob. 17-18: Խորենացի Մ., II, ՀԷ:

[44] Մելիքյան Ա., Տիգրանակերտի հունարեն արձանագրության ժամանակի և նշանակության մասին, էջ 34, 35:

[45] Նույն տեղում:

[46] Дашков С.Б., նշվ. աշխ., էջ 89:

պագող Ներսեհ արքա» համեստ տիտղոսը[47]:

Գահաժառանգ Վարահրանի պաշտոնավարությունն իբրև «Սակաստանի Մեծ արքա» պետք է որ ձգված լինի ընդամենը մի քանի ամիս, քանի որ հոր վախճանից հետո՝ 276 թ., նա անարգել բազմեց Տիզբոնի վեհապետական գահին: «Հայաստանի արքա» Ներսեհը, ով Վարահրան I-ի մահվանից հետո տոհմական իրավունքի տեսանկյունից դարձել էր Սասանյան գահի միակ լիիրավ թեկնածուն, ոչ միայն չվիճարկեց Վարահրան II-ի գահակալությունը, այլև մինչև 290-ական թթ. անհաղորդ մնաց Իրանական տերության ներքաղաքական եռուզեռին: Դրա պատճառը, թերևս, այն էր, որ պաշտոնական Տիզբոնի նկատմամբ քաղաքական ընդդիմությունը ղեկավարում էին այլ անձինք՝ սկզբում Մեսենի արքա Շապուհը՝ Շապուհ I-ի վաղամեռիկ որդու՝ Մեսենի նախկին արքա Շապուհի որդին, իսկ մրա ապստամբության ճնշումից հետո՝ նրա որդին՝ Որմիզդը: Երբ վերջինս Վարահրան II-ի դեմ անհաջող ապստամբությունից հետո հեռացվեց ասպարեզից, «Հայաստանի թագավոր» Ներսեհը բացեիբաց սկսեց հավակնել արքայից արքայի գահին: Դրա արտահայտությունն առաջին հերթին Հայաստանում նրա կողմից ոսկյա դրամների թողարկումն էր, որով բացահայտորեն խախտվում էր արքայից արքայի մենաշնորհը: Ընդ որում Հայաստանի կառավարչի պաշտոնում Ներսեհի թողարկած առաջին տիպի ոսկյա դրամների դիմերեսին պատկերված են Ներսեհն ու նրա կինը, իսկ լեգենդը ներկայացնում է Ներսեհի անունն ու տիտղոսը՝ «Մազդային երկրպագող, [աստվածներից] սերող արքա Ներսեհ»: Իսկ դարձերեսին պատկերված է «Ներսեհի կրակ (ատրուշան)-ը»: Ներսեհի պատկերն արքայի, այլ ոչ թե արքայից արքայի թագով, ինչպես նաև դրամի քաշը, որը կրկնակի պակաս է վեհապետական դինարի քաշից, թույլ է տալիս դրանք վերագրել 290-ական թթ. սկզբներին, այսինքն՝ Ներսեհի կողմից պետական հեղաշրջման նախապատրաստության շրջանին[48]: Դրամների երկրորդ տիպում, որն արդեն վերաբերում է Տիզբոնի գահի համար Ներսեհի բացահայտ

---

[47] Луконин В. Г. "Культура Сасанидского Ирана", стр. 180.

[48] Луконин В. Г. "Варахран II и Нарсе", стр. 57.

պայքարի շրջանին՝ 292-293 թթ.[49], նա պահպանել է իր նախկին տիտղոսը, սակայն պատկերվել է արքայից արքայի պատվանշաններով: Անգամ Վարահրան III-ի ու նրա կողմնակիցների դեմ գոտեմարտից առաջ և նույնիսկ նրանց նկատմամբ տարած վճռական հաղթանակից հետո Ներսեհը շարունակում է կրել «Հայաստանի արքա» տիտղոսը: Ավելին, Պայկուլեի ու Տիգրանակերտի արձանագրությունների զուգադիր քննությունը թույլ է տալիս եզրակացնել, որ արքայից արքայի գահին բազմելուց և Հայաստանի պարսկահպատակ մասը կառավարման իրավունքով Տրդատ III Արշակունուն հանձնելուց հետո էլ Ներսեհն ինչ-ինչ պատճառներով պահպանել և վեհապետական տիտղոսի հետ համադրել է իր նախկին տիտղոսը: Այսպիսի եզրակացության օգտին խոսող միակ փաստը, ցավոք, այն է, որ արքայից արքայի գահին բազմելու առթիվ շնորհավորելու եկած արքաների ու կառավարիչների թվում Ներսեհը «Հայաստանի թագավոր» չի հիշատակվում[50]:

MELIQYAN ARTHUR

ABOUT THE TITLE OF SASANYAN PRINCES RULED IN ARMENIA IN THE 3RD CENTURY

Our exploration shows that the ruling of Sasanyan crown princes in Armenia was one part of Sasanyan 1st ruler's policy for solving the problem of the succession of the throne. Choosing the crown in the way of monopoly the Sasanyan king of kings did their best to srenghten their smart sets positions as much as they could. For the transferation of the throne they chose the types of iconography preaching used in earlier Achaemenid Empire with the military administrative mechanisms used in Parthian empire. The title of "Great King of Armenian" given to the

[49] Նույն տեղում:

[50] Մելիքյան Ա., Տիգրանակերտի հունարեն արձանագրության ժամանակի և նշանակության մասին, էջ 142:

Sasanyan crown princes served the same aim.

In it "The Great King" had the honor's meaning which refered predominantly to the crown and, it also refered to Armenia in a way that with its boardering position it was the garden of the heir of crown prince and the central place for the army.

The role of Armenia in the Sasanyan administrative system was not static; it was conditioned with the west direction of the external policy of early Sasanian Empire. It was not by chance that in the military-administrative system of Sasanyan empire Armenia retained its role untill the sighning of the peace treaty between emperor Probus and Varahran the First in 276. After the mentioned treaty in 276-293 Nerseh, who ruled in Armenia, already bore not the title of "The Great King of Armenia'' but the title of "The king of Armenian".

MARGARYAN GOR

SOME DETAILS ABOUT TIMUR LANG'S LAMENESS AND ORIGIN

The general point of view of Timur's origin is the following: Tīmūr ibn Tarağāī was born in 1336 (or 1334) in the village Khoja Ilğar of the district Kesh[1] in Mawarannahr, by the origin he was from turkified Mongolian tribe Barlās. He is known as Timur Lang, Tamerlane, Tamburlaine, Temir Aksak[2], which means Lame Timur or Lame Iron: according to ibn 'Arabshah, his name was Tīmūr, which in other languages (probably in Turkish or Persian) pronounced as ***Tamūr*** or ***Tamrlank/Tamarlank*** and "***he is the Iron ibn Tarağāī in Turkish***"[3]. Besides this explanation (Tīmūr-Iron), another etymology of Timur's name we find in the autobiographical memoirs of Timur: according to **The Mulfūzat** after Tīmūr's birth his father went to shaykh Shams al-Din al-Fakhuri to choose a name for his son[4]. Shaykh opened Qur'an and read the 16th ayat of 67th surah ءَأَمِنتُم مَّن فِي ٱلسَّمَآءِ أَن يَخۡسِفَ بِكُمُ ٱلۡأَرۡضَ فَإِذَا هِيَ تَمُورُ "Do you feel secure that He who [holds authority] in the heaven would not cause the earth to swallow you and suddenly it would sway (***tamūru***)?"[5]. Consequently, this word (***tamūru***) is in the base of the name. Of course, it is an invented etymology, but this surah from Qur'an is not choosen accidentally-it is the surah al-Mulk (The Sovereignty), and it is important fact of legalization by

---

[1] The modern town Shahrisabz in Uzbekistan.

[2] "Повесть о Темир Аксаке. Памятники литературы Древней Руси: XIV-середина XV века". Москва, 1981, стр. 230."...прозван был Темир Аксаком, ибо Темир означает железо, а Аксак-хромец, так в переводе с половецкого языка объясняется имя Темир Аксак".

[3] Ibn 'Arabshāh, 'Ajā'ib al-maqdūr fī akhbār Tīmūr, al-ma'rūf bi-Tārīkh Tīmūrī, 1868, lithographed edititon, p. 5. Տե՛ս նաև, The Timurnamah or Ajayabul Maqdur Fi Akhbar-i Timur (in Arabic), edited by H.S. Jarrett, Calcutta, 1882, p. 3.

[4] The Mulfuzāt Timūr or Autobiographical Memoirs of the Moghul Emperor Timūr, translated by Abu Talib Hussyni, Charles Stewart, Holborn, 1830, p. 21.

[5] al-Qur'ān, 67:16.

Qur'an Tīmūr's coming to the power.

The Persian historian of Timurids-Sharaf ad-Dīn 'Alī Yazdī writes that *"in the year of Mouse of Mongols on the 25th month Sha'ban, on Tuesday (on the 8th April in 1336) Teqina khatun and amir Tarağaī gave birth to Timur in the vilayet of Kesh"*[6]. It is evident that Yazdī is supporter of Timurs noble origin-he ascribed the post of amir (nobleman) to his father. Another biographer of Timur and Arab historian Ahmed Ibn 'Arabshah present some another versions of Timur's origin. According to Ibn 'Arabshah:

a) Timur and his father were from the tribe (طائفة) of the shepherds, who had not belief and intelligence ولا عقل لهم لاو دين[7]

b) Timur's father was an plain servant[8]

c) Timurs father was a poor shoemaker[9]

d) Timurs father was one of the amirs of sultan Husseīn[10]

e) Ibn 'Arabshah considers more probable the opinion that Timur's father was an influential nobleman "he was one of the pillars of Sultan Husseīn's state"[11]

This last version, ibn 'Arabshah says that he has read it in the "continuation of Persian history ''Muntakhab"[12]

---

[6] Шараф ад-дин Али Йазди. "Зафар-наме", пер. А. Ахмедова, Ташкент, 2008, стр. 14-15.

[7] Ibn 'Arabshāh, 1868, p. 6.

[8] Նույն տեղում:

[9] Նույն տեղում:

[10] We think that ibn 'Arabshah means amir Qazaghan's grandson Hussein, because Ibn'Arabshah in same page says that the sister of this Hussein was married to Timur, and really, the sister of this Hussein Uljay Turcan ağa, daughter of amir Musla, was the wife of Timur: Bartold V., Four Studies on the History of Central Asia, transl. by V. and T. Minorsky, vol 2, Leyden, 1963, p. 17; Jamaluddin S., The state under Timur: a study in empire building, Har-Anand, 1995, p. 41.

[11] Ibn 'Arabshāh, 1868, p. 9-10.

[12] Probably the author means the work of Mu'în al-Dîn Naṭanzî "Muntakhab al-tawârîkh-I Mu'înі" also known as "The anonym of Iskandar".

(في ذيل تاريخ فارسي يدعى المنتخاب)[13]. Russian historical source "Povest' o Temir Aksake'' describe Timur as a cruel brigand "***who hadn't noble, princely or royal origin and he was a plain smith***"[14]. It is possible that this kind of information of contemporary sources let us to suppose that the stories about the "noble" origin of Timur or his father's post of amir were contrived later to ligitimise Timur's rising to the power.

It is more interesting Ibn 'Arabshah's informations about the Timur's birth. Ibn 'Arabshah writes: "They say that the night when Timur was born something has appeared, which was like an iron helmet (خوذة), which then dropped and dissolved in the space. It seemed that the sparks and incandesced coal flew and that light gathered and filled the desert and the settled places"[15]. Ibn 'Arabshah doesn't describe this dropped thing (سقيط) with any word which could interpret anything. He doesn't name it a meteorite or a comet. We avoid to do quick conclusions but it is impossible to notice the circumstance that the ''dropped thing'' which disappeared in the space, which was like iron helmet and illuminated was described as a cosmic flying body. But is also possible that ibn 'Arabshah had described only the collapse of the comet. But here we have also some difficulties: the author didn't notice where that "thing" appeared-in the Timur's birthplace or in homeland Syria? Unfortunately we couldn't get any information about the meteorites or comets which fall in the Central Asia in the 14th century. This is another thing if we accept the fact that it is possible that this event had taken place in ibn 'Arabshah's homeland Syria or in another part of Near East (nearer to Syria). In this case we the events which dated in 1330's. The first thing was a comet which fell in 1332 in Birgi (ancient Pirgion). Ibn Battuta who visited the beylik of Aydin and it's

---

[13] Ibn 'Arabshāh, 1868, p. 9-10.

[14] Повесть о Темир Аксаке, նշվ. աշխ., էջ 230.

[15] Ibn 'Arabshāh, 1868, p. 5. This description (without any commentary) is also cited from English translation of the work of ibn 'Arabshah (Tamerlane, Or Timur the Great Amir, translated by J. H. Sanders, Luzac & Company, 1936) by Ron Sela in his valuable book "The Legendary Biographies of Tamerlane: Islam and Heroic Apocrypha in Central Asia", Cambridge University Press, 2011, p. 70.

capital Birgi approximately in 1331-1332[16], wrote about it. According to ibn Battuta sultan Mehmed of Aydin (Umur beg b. Muhammad, 1308-1334[17]) asked him if he had seen a comet? When he answered that he hadn't seen, the sultan showed him the comet lied near the town[18]. According to The Meteoritical Society (International Society for Meteoritics and planetary Science) another collapse of comet took place in 1340 in the same region[19]. It is interesting another legend of Timur's origin. According to the 2 inscriptions of Timur's mausoleum, Timur's origin linked with mythical Alan Gua and 'Ali ibn Abu Talib[20].

The lameness of Timur

Certainly, it is known that Timur was lame but the imcopatible information of the sources let us suppose that here also the realty is mixed with the myth. The principal information about it is following: when Timur attacked Sistan with amir Husseīn in 1362, he was injured with an arrow in right leg, and after that he was lame. Timur was not only lame, his right arm was harmed too. According to ibn 'Arabshah, when Timur was born his palm was "filled with blood"[21]. According to M. Gerasimov it was result

---

[16] İnalcik H., The Rise of the Turcoman Maritime Principalities in Anatolia, Byzantium, and the Crusades. The Middle East & the Balkans under the Ottoman Empire: Essays on Economy & Society, 1993, p. 319.

[17] Bosworth E., The New Islamic Dynasties: A Chronological and Genealogical Manual, Edinburgh, 2004, p. 221.

[18] Ibn Battúta, Travels in Asia and Africa 1325-54, transl. and selected by H. A. R. Gibb, London, 1929, p. 134; Mohd. A. R. Khan, A Siderite of the Fourteenth Century, Nature, 154, 465-465 (07 October 1944).

[19] https://www.lpi.usra.edu/meteor/metbull.php?sea=Aidin&sfor=names&ants=&falls=&valids=&stype=contains&lrec=50&map=ge&browse=&country=All&srt=name&categ=All&mblist=All&rect=&phot=&snew=0&pnt=Normal%20table&code=420

[20] Семенов А. "Надписи на надгробиях Тимура и его потомков в Гур и Эмире. Эпиграфика Востока", 1948, N 2, стр. 49-76; Denise Aigle, The transformations undergone by an original myth: the case of Chinggis Khan and Tamerlane, Revue des mondes musulmans et de la Méditerranée, N 89-90, pp. 151-168.

[21] Ibn 'Arabshāh, 1868, p. 5.

of the knitting of the bones[22]. The fact of Timur's lameness with some differences is known in many sources. It was written in Timur's autobiographical work "Mulzufat" that Malik Mahmud[23], the lord of Sistan, who was defoid of power, made a request for Timur to help him to return his estates and power promising to give some of them to Timur. Timur in alliance with amir Hussein succeed to occupy some fortresses and regions. Mahmud who was afraid that Timur could take all the power and property, left Timur and then attacked him in Sistan. To all appearances Timur was defeated and injured **with an arrow in the right leg and hand**[24]. This variant is repeated almost in the same way in the Yazdī's Zafarnameh, but there was an important detail: according to Yazdī Timur was **injured only in the hand**[25].

It is evident that Yazdī doesn't speak about the injurance in the leg. The information of Ruy Gonzalez Clavijo is a little different. According to Clavijo Timur was really injured in the right hand in Sistan, and has lost his two fingers. He was injured in the leg too, but he was injured during a clash (he wasn't injured in a battle or in a raid) when he had stolen a flock of sheep[26]. Ibn 'Arabshah presents the variants in this way: first he says that Timur tried to stead sheep in his youth. The shepherd noticed it and he injured Timur with an arrow-an arrow **wounded the back** and another arrow **wounded the leg**. According to the second variant Timur tried to steal sheep in Sistan to feed his friends, and the shepherd shot an arrow and wounded both **hand and the leg**. Moreover, after that the shepherd took Timur to the sultan of Herat Hussein, who ordered to kill him, but

---

[22] Герасимов М. "Портрет Тамерлана". Краткие сообщения института истории материлаьной культуры имени Н. Марра, 1947, N 17, стр. 15-16.

[23] 'Izz al Din ibn Rukn al Din Mahmud (1350 1380), Bosworth, C.E. The History of the Saffarids of Sistan and the Maliks of Nimruz (247/861 to 949/1542 3). Costa Mesa, California, 1994, p. 445.

[24] The Mulfuzāt Timūr, 1830, p. 67; Тамерлан: эпоха, личность, деяния. Москва, 1992, стр. 179-180.

[25] Sharaf ad-din Ali Yazdi, 2008, p. 30 (see also the notice N 140).

[26] Embassy to Tamerlane 1403-1406, Clavijo, London and New York, 2005 (reprint), p. 112.

son of Hussein, whose name is Ghiyath ad din[27], saved Timur: he asked his father to give Timur him as a slave[28]. The information of ibn 'Arabshah about the stealing of sheep is repeated in the Russian source, which inform us that after stealing the sheep they caught, beat him and throw him to feed dogs. They also **broke his leg and tigh-bone**[29]. The source affirms in surprise that Timur reminded alive and as he was a smith, he tempered his leg with iron and after that he was called **Temir Aksak-Lame Iron**.

The compatible information let us to suppose that the fact of injuring in the leg or in the arm was used later to mask his inborn defects and to present *under heroic light, as a result of the injurance* in the battle. M. Gerasimov noticed also that there was no trace on the leg which would be result of the injurance and it is more probably that it was an inborn defect[30].

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԳՈՒ

ՈՐՈՇ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ ԹԵՄՈՒՐ ԼԵՆԿԻ ԿԱՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԾԱԳՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդվածում ներկայացվող հարցերը վերաբերում են Թեմուր Լենկի ծագման, ծննդյան և նրա կերպարի ներկայացմանն առնչվող որոշ խնդիրների, և փորձ է արվում, դրանք համակողմանի ներկայացնելով, տարանջատել առասպելը իրականությունից: Մասնավորապես անդրադարձ է կատարվել արաբ պատմագիր Ահմեդ իբն Արաբշահի՝ Թեմուր Լենկի ծննդյան առասպելական նկարագրությանը, ներկայացվել են Թեմուրի «ազնվական» ծագման, նրա կաղության վերա-

---

[27] Pir Husaīn Muhammad Kurt and his successor Ghiyāth al Dīn II, Bosworth E., The New Islamic Dynasties: A Chronological and Genealogical Manual, Edinburgh, 2004, p. 263.

[28] Ibn 'Arabshāh, 1868, p. 6, 13-14.

[29] "Повесть о Темир Аксаке", նշվ. աշխ., էջ 230:

[30] Герасимов М., նշվ. աշխ., էջ 17:

բերյալ աղբյուրների հաղորդած իրարամերժ տեղեկությունները: Հոդվածում եկել ենք այն եզրահանգման, որ Թեմուրի «ազնվական» ծագումը, հնարավոր է, նրա իշխանությունն օրինականացնելու հետագայի հորինվածք է: Ինչ վերաբերում է Թեմուրի կաղությանը, ապա այն, ամենայն հավանականությամբ, բնածին արատ է եղել, որը սքողվել է և մեկնաբանվել ռազմական ընդհարման ժամանակ ոտքից վիրավորվելու մասին պատմություններով:

ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԳՈՀԱՐ

Ս. ԳՄԵԼԻՆԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍ ԵՎ ԻՐԱՆԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՇՐՋԱՆՆԵՐ

Ռուսական իրականության մեջ Արևելյան Այսրկովկասի նկատմամբ հետաքրքրությունը ձևավորվել էր դեռևս ռուսական տարեգրությունների ժամանակաշրջանից: Իսկ ԺԵ-ԺԷ դարերում հիմք էր դրվել տարածաշրջանի նկարագրության գրական ժանրի ավանդույթին: Վաճառականներ Աֆանասի Նիկիտինի (ԺԵ դ.) և Ֆեոդոր Կոտովի (ԺԸ դ.) ճանապարհորդական նյութերն աղբյուրագիտական հպանցիկ տեղեկություններ էին հաղորդում Արևելյան Այսրկովկասի (Դերբենդի, Շամախիի, Բաքվի և այլն) և Հյուսիսային Իրանի բնակավայրերի էթնոքաղաքական և սոցիալ-տնտեսական պատմության վերաբերյալ: Այդ ստեղծագործությունները կարճ տեղեկություններ էին տարածաշրջանի ժողովուրդների ավանդույթների, սովորույթների, կենցաղի մասին: Հեղինակները մանրամասն ներկայացնում էին իրենց ճանապարհորդության գրառումները՝ ուղեգրություններին հաղորդելով յուրատեսակ ձեռնարկ-ուղեցույցի բնույթ:

Տարածաշրջանի ուսումնասիրության պատմագիտական ավանդույթը ԺԸ դարի առաջին կեսին շարունակում են հետազոտողներ Ա. Վոլինսկին, Ի. Գերբերը, Ի. Լերխեն, իշխան Ա. Գոլիցինը և այլք: Իսկ դարի երկրորդ կեսին Արևելյան Այսրկովկասի և Իրանի հյուսիսային շրջանների հետազոտությունը ստանում է ակադեմիական բնույթ: Այսպես, Ռուսական կայսրության և հարակից երկրների լայնամասշտաբ հետազոտությունների իրականացման, դրանց բնական պաշարների օգտագործումն ի նպաստ պետությանը ծառայեցնելու մասին Մ. Լոմոնոսովի (1711-1765 թթ.) առաջադրած թեզերը 1768-1774 թթ. կյանքի կոչվեցին ի դեմս Սանկտ Պետերբուրգի գիտությունների կայսերական ակադեմիայի կազմակերպած գիտական ուղևորությունների:

Ակադեմիայի այս նախաձեռնությունն անհրաժեշտ է դիտարկել ժամանակաշրջանի ռազմաքաղաքական իրողությունների համատեքստում: Այսպես, ԺԸ դարի երկրորդ կեսին Այսրկովկասը, մասնավորապես նրա հյուսիս-արևելյան հատվածը, վերածվել էր ռուս-իրանա-օսմանյան ռազմաքաղաքական շահերի բախման թատերաբեմի: Պատմական այդ շրջանում ռուսական կովկասյան քաղաքականության ակտիվացմանը զուգահեռ Ռուսաստանի կառավարող շրջանակները ձեռնամուխ են լինում Կովկասը «ներսից» նվաճելուն: Ձևականորեն այդ արշավախմբերը կոչված էին ուսումնասիրելու Արևի սկավառակի առջև Վեներա մոլորակի հայտնվելու աստղագիտական երևույթը: Այդ նախաձեռնությամբ 1767 թ. մարտի 13-ին գրավոր առաջարկությամբ հանդես է գալիս Եկատերինա Բ կայսրուհին (1762-1796 թթ.)՝ դիմելով ակադեմիայի նախագահ կոմս Վ. Օռլովին[1]:

Գիտարշավի անդամների առջև դրված էր Ռուսական կայսրության և հարակից երկրների առավել ընդգրկուն, խոր ու համակողմանի ուսումնասիրությունը: Հետազոտությունների աշխարհագրական սահմաններն արևմուտքում Բեսարաբիայից և Վալախիայից ձգվում էին մինչև հյուսիս-արևելք՝ Սիբիրի երկրամաս, իսկ Սառուցյալ օվկիանոսից՝ Կասպից ծովի հարավային ափերը, Կովկաս և Իրանի խորքը:

Արշավախմբերի ձևավորման գործընթացը կազմակերպելու, դրանք անհրաժեշտ պարագաներով զինելու և երիտասարդ գիտական կադրեր ներգրավելու համար 1767 թ. Գերմանիայից Սանկտ Պետերբուրգ էր հրավիրվել անվանի գիտնական Պյոտր Պալլասը (1741-1811 թթ.)[2]: Արդեն 1768 թ. գարնանը Ակադեմիան ներկայացնում է արշավախմբերի վերջնական կազմն ու գործունեության ծրագիրը: Ստեղծվելու էր երկու այսպես կոչված «ֆիզիկական» արշավախումբ՝ Օրենբուրգյան և Աստրախանյան, իրենց ենթախմբերով: Առաջին արշավախումբը բաղկացած էր երեք ենթախմբից՝ Պ. Պալլասի, Ի. Լեպյոխինի, Ի. Ֆալկի ղեկավարությամբ, իսկ երկրորդ արշավախումբը ներառում

---

[1] Наблюдения явления Венеры в Солнце в российской империи в 1769 году учинением с историческим предуведомлением, сочиненным Степаном Румовским, СПб, 1771, стр. 5-6.

[2] Պ. Պալլասի գիտական ժառանգության մասին տե՛ս Научное наследие П. С. Палласа, Письма. 1768-1774 гг., сост. В. И. Осипов, СПб., 1993.

էր երկու խումբ՝ Ի. Գիլդենշտեդտի և Ս. Գմելինի[3] գլխավորությամբ[4]:

1768 թ. փետրվարի 4-ի՝ Սենատին տրված կայսերական հրամանագրում ակադեմիայի կազմակերպած արշավախմբերի ձևավորման նպատակների «աստղադիտական դիտարկումների» մոտ նշվում էր պետության «բնական պատմության» ուսումնասիրության անհրաժեշտությունը[5]: Արշավախմբերը պարտավոր էին խստորեն հետևել սահմանված ժամանակացույցին և գործերին ներկայացված ծրագրի պահանջներին համապատասխան: Անհրաժեշտ էր ուսումնասիրել այցելած երկրների բնական պայմանները, դրանց տնտեսական նշանակությունը հողագործության և արդյունաբերության համար: Պահանջվում էր նկարագրել, մոդելավորել կամ գծագրել աշխատանքային գործիքները: Արշավախմբերը պետք է հավաքագրեին տեղի ժողովուրդների արհեստների, զբաղվածության (ձկնորսության, մեղվապահության, մետաքսագործության, որսորդության) վերաբերյալ նյութեր: Անհրաժեշտ էր այցելած երկրների ընդերքի, բնական հանածոների, բուսական և կենդանական աշխարհի, բնակլիմայական պայմանների մասին տեղեկություններ հավաքել: Ուսումնասիրության առանձին առարկա էին դառնում այցելության վայրերում ապրող ժողովուրդների կենցաղը, սովորույթները, ավանդույթները, առասպելները, հանդիպող հիվանդությունների նկարագրությունը և դրանց բժշկության եղանակները, ժո-

---

[3] Ազգությամբ գերմանացի, բժշկի որդի, 1733-1743 թթ. Սիբիրի հետազոտող, բնագետ և քիմիկոս Յոհան Գեորգ Գմելինի զարմիկ Սամուիլ Գոտլիբ Գմելինը (Gmelin, Samuel Gottleb Georg) ծնվել էր 1745 թ. Թյուբինգեն քաղաքում: Նա 1763 թ. ստանում է բժշկական գիտությունների գիտական աստիճան և ճանապարհորդում դեպի Ֆրանսիա և Հոլանդիա: Սակայն 1767 թ. Ս. Գմելինը հրավիրվում է Սանկտ Պետերբուրգի գիտությունների կայսերական ակադեմիա՝ հավանաբար իր նշանավոր հորեղբոր գործը շարունակելու համար: Արդեն ապրիլի 4 ին նա ընտրվում է Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի իսկական անդամ: Իսկ Թյուբինգենի համալսարանը Ս. Գմելինին շնորհում է քիմիայի պրոֆեսորի գիտական կոչում (1772 թ.):

[4] История российской академии, Соч. И. М. Сухомлинова, вып. 2, СПб., 1875, стр. 64.

[5] Наблюдения явления Венеры в Солнце в российской империи в 1769 году учинением с историческим предуведомлением, сочиненным Степаном Румовским, СПб, 1771, стр. 25.

ղովրդական դեղամիջոցները: Պահանջվում էր ուսումնասիրել և մանրամասն նկարագրել հնավայրերում հանդիպող ավերակներն ու դրանց մնացորդները[6]: Արշավախմբերին իրենց դիտողություններն ու առաջարկություններն էին ներկայացրել նաև Տնտեսական ազատ ընկերակցությունը, Բժշկական, Բերգ և Կոմերց կոլեգիաները:

Աննախադեպ համարվող այս նախաձեռնությունը գտնվում էր կայսերական իշխանության բարձր հովանու և ուշադրության ներքո: Նախքան ճանապարհորդության մեկնելը Սամուիլ Գոտլիբ Գմելինի արշավախումբը կոմս Ի. Օռլովի ուղեկցությամբ ներկայանում է գահաժառանգ և մեծ իշխան Պավել Պետրովիչին[7]: Պետությունը որպես անվտանգ փոխադրամիջոց նավ էր տրամադրել նրանց, իսկ որպեսզի Իրանում[8] տեղի խաներն իրենց ինչպես հարկն է ընդունեին, և «Ռուսաստանի պատիվն ըստ արժանվույն գնահատվեր», կայսրուհու անունից Աստրախանի նահանգապետին հրամանագիր էր տրվել: Բացի դրանից, «պարսից խաներին» և Էնզելիում ու Սալիանում գտնվող ռուսական հյուպատոսներին երաշխավորագրեր էին ուղարկվել[9]:

Ս. Գմելինը կարևորում էր ճանապարհորդության նշանակությունը կայսրության շահերի համար: Այդ մասին նա գրում է աշխատության առաջին հատորի նախաբանում՝ Եկատերինա Բ կայսրուհուն հասցեագրված ուղերձում: Նա հույս ուներ «բացահայտելու այդ երկրների անհայտ բնական հրաշքները, որոնք մինչ այդ անհրաժեշտ ուշադրության չէին արժանացել»[10], և նշում էր, որ հանուն ուղևորության գլխավոր նպատակի (իմա՛ պետական շահի) պետք է դիմանալ բոլոր դժվարություններին[11]:

---

[6] Фрадкин Н. "Инструкция для академических экспедиций 1768-1774 гг. Вопросы географии". Сб. 17, Москва, 1950, стр. 216-217.

[7] Гмелин С. "Путешествие по России для исследования трех царств естества", часть I, СПб., 1771, стр. 1.

[8] Իրանական պետության տարածք էր ընկալվում նաև ողջ Այսրկովկասը, որի խաներին (Ղուբայի և Դերբենդի, Բաքվի) նույնպես երաշխավորագիր նամակներ էին տրվել:

[9] Гмелин С., նշվ. աշխ., էջ 4:

[10] Гмелин С., նշվ. աշխ., մաս I, 2-րդ հրատ., Ս.-Պ., 1806, էջ III:

[11] Гмелин С., նշվ. աշխ., մաս I, Ս.-Պ., 1771, էջ 77:

1768 թ. հունիսի 26 ին Ս. Գմելինի արշավախումբը Սանկտ Պետերբուրգից ուղևորվում է երկարատև ճանապարհորդության: Ս. Գմելինի արշավախումբը հետևելու էր խիստ սահմանված ժամանակացույցի՝ հետազոտելով Կասպից ծովի արևմտյան ափերը: Ըստ երթուղու՝ արշավախումբը մայիս ամսին ուսումնասիրելու էր Աստրախանից Թերեք ընկած տարածքը, իսկ հունիսին՝ Թերեքի հունից մինչև Դերբենդ հատվածը: Այնուհետև հուլիսին արշավախումբը պետք է լիներ Դերբենդի և Բաքվի միջակայքում, ապա օգոստոս-սեպտեմբերին ուղևորվեր Բաքու-Ռեշտ-Աստրաբադ ուղեգծով: Հոկտեմբերին Ս. Գմելինը պարտավոր էր վերադառնալ Կովկաս և ակադեմիկոս Ի. Գիլդենշտեդտի արշավախմբի հետ հեռանալ Ղզլար[12]:

Արշավախումբն Այսրկովկասում էր հայտնվել 1768-1774 թթ. ռուս-թուրքական պատերազմի տարիներին, և անձնակազմի կյանքը վտանգված էր: Ս. Գմելինի՝ դեպի Իրանի խորքերը նախապատրաստվող արշավանքի մասին բացասական էր արտահայտվում ակադեմիկոս Պ. Պալլասը 1770 թ. պրոֆեսոր Գ. Միլլերին գրած իր նամակում: Նա Ս. Գմելինի «վրացական» ճանապարհորդությունն ավելորդություն էր համարում՝ նշելով, որ ոչ մի նոր բացահայտում այդ տարածքներում չարժե այն մեծ վտանգը, որին ենթարկվում է արշավախումբը[13]: Իսկապես, Կովկասի և Դաղստանի ցամաքային ճանապարհներով շրջելն անվտանգ ձեռնարկումներից չէր: Այսպես, Դերբենդի խանի շրջապատում գտնվող հայերն անընդհատ Ս. Գմելինին զգուշացնում էին, որ խանն իրեն որպես ռուսական լրտես է դիտում[14]: Իրոք, այսրկովկասյան և դաղստանյան տիրակալներն ու խաները մեծ կասկածանքով էին վերաբերվում Ռուսական կայսրության բարեկամության մասին հավաստիացումներին: Այդ տրամաբանության մեջ է պետք դիտարկել նաև Դերբենդի և Ղուբայի Ֆաթհ Ալի խանի՝ արշավախմբին ցուցաբերած ընդունելությունը: Այսպես, երբ Ս. Գմելինը

---

[12] Гмелин С. "Путешествие по России для исследования трех царств естества", часть III, половина I, СПб., 1785, стр. 2-3.

[13] Научное наследие П.С. Палласа. Письма. 1768 1771 гг., Составитель В. И. Осипов, СПб., 1993, стр. 111.

[14] Гмелин С. "Путешествие по России для исследования трех царств естества", часть III, половина I, стр. 44.

Ֆաթհ Ալի խանին է հանձնում Աստրախանի նահանգապետի երաշխավորագիր նամակը, ապա կարդալու ընթացքում կայսերական տիտղոսը հիշատակելիս խանը ոտքի է կանգնում և խոնարհվում[15]: Մյուս կողմից, նա հրաժարվում է արշավախմբին ձիեր տրամադրել, որպեսզի ցամաքով Դերբենդից Բաքու ուղևորվեն՝ վախենալով, որ այդ կերպ նրանք հնարավորություն կունենան տարածքի մանրակրկիտ ուսումնասիրություն կատարելու: Ըստ այդմ, «պարսիկները» գտնում էին, որ ինքը ռուս-թուրքական պատերազմի ընթացքում այցելել է տարածաշրջան՝ ոչ թե գիտական ուսումնասիրություններ կատարելու, այլ տեղանքը զննելու համար: Ավելին, ճանապարհորդության վերջում Ֆաթհ Ալի խանը Ս. Գմելինին հայտնում է, որ նրա «բույսերի հավաքումն» ամբողջությամբ կեղծիք է[16]՝ ակնարկելով արշավախմբի քաղաքական նպատակների մասին:

Արշավախումբը բացահայտ թշնամական վերաբերմունքի է արժանանում Բաքվի խանի կողմից[17]: Վերջինս, երբ տեղեկանում է, որ Ս. Գմելինը նավթահորեր է այցելել, հարցնում է նրան, թե արդյո՞ք օտարերկրացուն Ռուսաստանում թույլ կտային տեսնել նման բաներ: Իր այցի իրական նպատակները բացատրելու ակադեմիկոսի բոլոր փորձերն էլ անհաջողության են մատնվում: Ս. Գմելինը Բաքվում գտնվելու ողջ ընթացքում իր կացարանի (վրանի) շուրջը մշտապես պտտվող մարդկանց է նկատում, որոնք հետևում էին, թե արշավախմբի անդամներն ինչ են բերում իրենց նավ և ինչ են տանում նավից[18]:

Նմանատիպ խոչընդոտների Դաղստանում Թարքիի շամխալից հանդիպել էր նաև ակադեմիկոս Ի. Գիլդենշտեդտի արշավախումբը 1770-ական թվականներին [19]:

Այսպիսով, Ս. Գմելինը հստակ պատկերացում ուներ տեղի տիրակալների, այդ թվում՝ Ղարաղայթաղի ուցմիի[20] քաղաքական դիրքո-

---

[15] Նույն տեղում, էջ 11:

[16] Նույն տեղում, էջ 42-44, 109:

[17] Նույն տեղում, էջ 61, 62:

[18] Նույն տեղում, էջ 77:

[19] Гюльденштедт И. "Географическое и статистическое описание Грузии и Кавказа, из путешествия через Россию и по Кавказским горам в 1770–1773", СПб., 1809, стр. 116-117.

րոշման մասին: Իրանից վերադարձի ճանապարհին 1774 թ. Փետրվարի 5-ին Դերբենդից քիչ հեռու արշավախումբը 20 կազակների ուղեկցությամբ գերի է ընկնում Ղարաղայթաղի տիրակալի՝ Ամիր-Համզա ուցմիի մոտ: Ս. Գմելինը, հաշվի առնելով Դերբենդից Ղզլար ընկած տարածքի վտանգավորությունը, դեռևս հունվարի 5-ին Բաքվից Ղզլարի պարետ Ի. ֆոն-Շտենդերից լրացուցիչ զինվորական ուղեկցություն էր խնդրել: Պահանջվող զինվորների քանակն ակադեմիկոսը թողնում էր պարետի հայեցողությանը[21]:

1774 թ. մարտի 7-ին Աստրախանի նահանգապետի գրասենյակից Ի. ֆոն-Շտենդերին կայսերական հրաման են ուղարկում՝ հանձնարարելով ուցմիից պահանջել ազատ արձակել արշավախմբի անդամներին և չխոչընդոտել Ս. Գմելինի ուսումնասիրությունները: Մյուս կողմից, ռուսական իշխանություններն ուցմիի և նրա մերձավորների համար նվերներ էին պատրաստել[22]: Միաժամանակ Ղարաղայթաղի տիրակալի հետ բարեկամական հարաբերությունների մեջ գտնվող Ղուբայի և Դերբենդի Ֆաթհ Ալի խանին և դաղստանյան որոշ տիրակալների կայսրուհին նամակներ է ուղարկում՝ խնդրելով հանդես գալ միջնորդի դերում[23]: Ղզլարի պարետ Ի. ֆոն-Շտենդերին 1774 թ. Ապրիլի 8-ին գրած նամակում գեներալ Ի. դը Մեդեմը հանձնարարում էր, որ եթե դաղստանյան տիրակալներին չհաջողվի ազատել գերությունից Ս. Գմելինին, ապա տիրակալներից ոմանց տանել Ղզլար և պատանդ պահել[24]:

Ս. Գմելինը Ի. ֆոն-Շտենդերին ապրիլի 20-ին ուղարկած նամակում մանրամասն վերլուծում էր Դաղստանի և Արևելյան Այսրկովկասի

---

[20] Ղայթաղի կամ Ղարաղայթաղի ուցմիությունը Դաղստանի ԺԸ դարի ազդեցիկ տիրույթներից էր, իսկ նրա տիրակալի՝ ուցմիի նստավայրը Մաջալիս բնակավայրն էր: Ուցմիության էթնիկ պատկերն աչքի էր ընկնում իր բազմազանությամբ. ղայթաղներ (դարգիններ), թաթեր, լեռնային հրեաներ, կումիկներ և այլն:

[21] Академик Гмелин. Русский архив. Москва, 1912, N 9, стр. 69. Ի դեպ, նրա բանագնացը Ղզլարի բնակիչ Ռուստամ անունով մի հայ էր:

[22] Академик Гмелин, стр. 70-72.

[23] Նույն տեղում, էջ 71:

[24] Նույն տեղում, էջ 74:

խաների հարաբերությունները: Ակադեմիկոսը թախանձագին խնդրում էր «ինչ-որ կերպ» ազատել իրեն, քանի որ ո՛չ միջնորդ տիրակալները, ո՛չ էլ ուցմին պատրաստ չեն զիջումների: Ավելին, Ս. Գմելինը զարմանքով նշում էր, որ իրեն պարբերաբար կեղծ լուրեր են փոխանցում, թե իբր թուրքերը գրավել են Ղրիմը, Մոզդոկը, Ղզլարը և Կազանը[25]:

Ռուսական իշխանությունների անվճռականությունը ստիպում են Ս. Գմելինին Ի. ֆոն-Շտենդերին հուսահատ նամակ գրել Նա ուղղակի մեղադրում էր Ի. ֆոն-Շտենդերին Դերբենդից Ղզլար ցամաքային ճանապարհի վտանգի մասին իրեն չզգուշացնելու մեջ, որի դեպքում արշավախումբը կվերադառնար Բաքու, իսկ այնտեղից նավով կմեկներ Ռուսաստան[26]: Պրոֆեսորը նշում էր, որ Ղզլարի պարետն իր գործով սկսել է զբաղվել այդ մասին լուրը ստանալուց միայն երեք շաբաթ անց[27]:

Ակադեմիկոսին գերությունից ազատ արձակելու համար տարվող բանակցությունները ձգձգվում են կես տարով, և 1774 թ. հուլիսի 27-ին Ս. Գմելինը տենդից մահանում է: Սակայն հասցնում է ճանապարհորդական իր գրառումները փոխանցել գերությունից ազատ արձակված արշավախմբի անդամներից ուսանող Իվան Միխայլովին և թարգմանիչ Ֆեոդոր Բաուրին, որոնք դրանք փոխանցում են Ակադեմիայի հանձնաժողովին:

Ռուսաստանի Դաշնության Գիտությունների ակադեմիայի արխիվի Սանկտ Պետերբուրգի մասնաճյուղում է գտնվում Ս. Գմելինի անձնական արխիվային ֆոնդը, որտեղ պահպանվում են Ի. Միխայլովի «Ակադեմիկոս Ս. Գմելինի գլխավորած 3-րդ ֆիզիկական կոչվող արշավախմբի՝ Աստրախանի երկրամաս և Կովկաս կատարած ուղևորության մասին» զեկուցագրերը[28]:

Ակադեմիայի հանձնաժողովին Ի. Միխայլովի և Ֆ. Բաուրի՝ 1774 թ. օգոստոսի 3 ին Ղզլարից գրված «Կովկասյան լեռնական մի

---

[25] Академик Гмелин, стр. 74-75.

[26] Նույն տեղում, էջ 76, 77:

[27] Նույն տեղում, էջ 76:

[28] Рапорты студента переводчика Ивана Михайлова о 3-ей „физической экспедиции'' акад. С. Г. Гмелина в Астраханский край и на Кавказ, 1774-1775 гг., СПФ АРАН, Ф. 3, Оп. 34, д. 32, лл. 1-41.

տիրակալի մոտ գերության մեջ ակադեմիկոս Ս. Գ. Գմելինի մահվան մասին» զեկուցագիրը հրատարակվել է 1867 թ.[29]: Փաստաթղթից պարզ է դառնում, որ Ղարաղայթաղի ուցմին ռուսական իշխանություններից պահանջում էր տարիներ առաջ Դաղստանում ռուսական հովանավորության տակ գտնվող մուսուլման տիրակալների մոտ փախած մի խումբ գյուղացիների վերադարձը կամ 30 000 ռուբլի փոխհատուցում: Զեկուցագրից հայտնի է դառնում, որ այդ ժամանակ Կովկասում գտնվող գեներալ-պորուչիկ դը Մեդեմի «ձեռքերն ուրիշ անախորժություններով էին զբաղված»[30], իսկ Ղզլարի պարետը բաց է թողնում բանակցությունների հարմար ժամանակահատվածը, ինչը հանգեցնում է ողբերգության[31]:

Փաստորեն ռուսական իշխանությունները հրաժարվում են պահանջվող գումարը վճարելուց, և Ղզլարի պարետին այլ բան չէր մնում, քան թախանձագին նամակներով փորձել Ամիր-Համզային համոզել ազատ արձակել գիտնականին: Ղարաղայթաղի ուցմին, մերժում ստանալով, Ս. Գմելինին տեղափոխում է լեռներում գտնվող Մաջալիս գյուղը, որտեղ երիտասարդ գիտնականի առողջական վիճակը կտրուկ վատանում է: Այդ ընթացքում ազատ արձակված Ի. Միխայլովը և Ֆ. Բաուրը Ղզլարի ռուսական իշխանությունների և ուցմիի միջև միջնորդ-բանակցողների դերակատարությունն էին ստանձնել: Իրենց զեկուցագրում նրանք նշում էին, որ Ս. Գմելինի մահվան գիշերը (Ահմեդքենդում) սարսափած սպասում էին, որ ուցմին կվաճառի իրենց ստրկության[32]: Սակայն Ամիր-Համզան ազատ է արձակում բոլորին՝ թույլ տալով դին տեղափոխել: Բայց հրամայում է փոխանցել Ղզլարի պարետին, որ հետայսու թալանելու է ռուսներին և թույլ չի տալու

---

[29] О смерти академика С. Г. Г. Гмелина в плену у одного горского кавказского владетеля. Чтения в императорском обществе истории и древностей российских при московском университете, 1867, июль сентябрь, кн. 3 я, Моск ва, 1867, стр. 11-16.

[30] Նա ակտիվորեն միջամտում էր կովկասյան տիրակալների ներքին գործերին և սրում ներքաղաքական իրավիճակը տարածաշրջանում:

[31] О смерти академика С. Г. Г. Гмелина в плену у одного горского кавказского владетеля, стр. 11.

[32] Նույն տեղում, էջ 13-14:

անցնել ուցմիության տարածքներով մինչև որ չլուծվի փախստականների հարցը[33]:

Մաջալիս գյուղում ուցմիի հավատարիմ մարդիկ զննում են Ս. Գմելինի մարմինը՝ ստուգելու համար մահվան մասին արշավախմբի անդամների պնդումները[34]: Այս փաստը հերթական անգամ վկայում էր, որ կովկասյան տիրակալները չէին վստահում ռուսական իշխանություններին:

Հասնելով Ահմեդքենդ՝ Ի. Միխայլովն ու Ֆ. Բաուրը հասկանում են, որ հուլիսյան տապին դիակը չեն կարող հասցնել Ղզլար և Ս. Գմելինին հենց այդտեղ էլ հուղարկավորում են: Օգոստոսի 1-ին արշավախմբի անդամները և ուղեկցող կազակները հասնում են Ղզլար[35]: «Որբացած» արշավախումբը դիմում է գիտությունների կայսերական ակադեմիայի հանձնաժողովին՝ վճռելու արշավախմբի ճակատագիրը: Այդ ընթացքում Ս. Գմելինի մյուս աշակերտները՝ Կառլ Հաբլիցը գտնվում էր Գիլանում, իսկ Սոկոլովն ու Մոշկովը՝ Աստրախանում:

Ս. Գմելինի մարմինն այդպես էլ չի տեղափոխվում Ռուսաստան, և միայն մոտ մեկ դար անց՝ 1861 թ., ակադեմիկոս Բ. Դոռնը (1805-1881 թթ.) այցելում է Դաղստան: Նա գիտնականի թաղման ենթադրյալ վայրում՝ Դերբենդից 50 վերստ հեռավորության վրա գտնվող Կայաքենդ (Ահմեդքենդ) գյուղի մոտ, գերեզմանաքար է տեղադրում, որը 1903 թ. վերականգնվում է:

Առաջին հայացքից թվում է, թե կայսերական ամենաբարձր մակարդակով կազմակերպված և հովանավորվող գիտական արշավախումբն անմիջապես պետք է օգնություն ստանար ռուսական պետությունից: Սակայն արշավախմբի ղեկավար ակադեմիկոս Ս. Գմելինի գերեվարումը և մահն Արևելյան Այսրկովկաս Ռուսական կայսրության ռազմական ներխուժման համար առիթ էին ծառայել (1775 թ.): Ավելին, Եկատերինա Բ-ի՝ Կովկասյան գծի ռուսական զորքերի հրամանատար գեներալ դը Մեդեմին 1774 թ. սեպտեմբերի 5 ին գրած ցուցումներում, կատարված փաստին անդրադառնալով, նշում է, որ դաղստանյան

---

[33] Նույն տեղում, էջ 14:

[34] Նույն տեղում:

[35] О смерти академика С. Г. Г. Гмелина в плену у одного горского кавказского владетеля, стр. 14.

տիրակալները և «պարսկական ղեկավարները» կովկասյան լեռնական ժողովուրդների հյուրընկալության սովորույթի խախտում են թույլ տվել[36]: Հաշվի առնելով այսրկովկասյան խնդիրների լուծման գործում դաղստանյան տիրակալների դերակատարությունը՝ կայսրության հպատակի նկատմամբ ուցմիի անհարգալից վերաբերմունքն արժանանում էր «մեղմ» գնահատականի:

Ակադեմիկոս Ս. Գմելինի «Ճանապարհորդություն» վերտառությամբ բազմահատոր աշխատությունը հրատարակվել էր դեռևս նրա ճանապարհորդության ընթացքում գերմաներենով 1770-1784 թթ. և կազմել 4 մաս, 5 գիրք: Կայսերական ակադեմիան աշխատությունը 1771-1785 թթ. նույն ծավալով թարգմանաբար ներկայացրել է նաև ռուս ընթերցողին:

Ճանապարհորդության ողջ ընթացքում Ս. Գմելինը ստիպված էր խստորեն հետևել Ակադեմիայի հանձնարարություններին և պահանջներին՝ օրական գրառումներ կատարելով և պարբերաբար դրանք Սանկտ Պետերբուրգ ուղարկելով: Անշուշտ, բոլոր ժամանակներում ճանապարհորդները գրի են առել իրենց ուղեգրությունները, սակայն Ս. Գմելինի հաղորդումները լոկ սիրողական և ճանաչողական բնույթի գրառումներ չէին: Դրանք հավաստի տեղեկությունների հիման վրա կատարված գիտական ուսումնասիրություններ էին՝ հասցեագրված կայսերական ակադեմիային հաշվետվությունների տեսքով:

Արշավախմբի աշխատանքների արդյունքում հանրության արժեք են դառնում հետազոտության ենթակա երկրների ժողովուրդների ազգագրությանը, պատմությանը, սովորույթներին վերաբերող նյութեր, բացահայտում հոգևոր և նյութական արժեքները: Ս. Գմելինի արշավախումբը հետազոտում է հսկայական մի տարածք՝ Պետերբուրգից մինչև Կասպից ծովի արևմտյան ափերը և Իրանի հյուսիսային շրջանները: Նա մեծ դժվարությամբ է կարողանում ուսումնասիրել տեղանքի աշխարհագրական դիրքը, բնական հանածոները, կենդանական ու բուսական աշխարհի մինչ այդ հայտնի ու անհայտ տեսակների մասին

---

[36] Сборник Императорского русского исторического общества, т. 135, СПб., 1911, стр. 210.

տեղեկությունները՝ դրանք ուղեկցելով նկարազարդումներով և գծապատկերներով:

Վերջապես, Ս. Գմելինի ջանքերով Ռուսական կայսրությունում սկիզբ է առնում Արևելյան Այսրկովկասի ակադեմիական ուսումնասիրությունը՝ հաջորդ հարյուրամյակում դառնալով ռուսական կովկասագիտության հիմքերից մեկը:

MKHITARYAN GOHAR

S. GMELIN'S TRAVEL TO THE EASTERN TRANSCAUCASIA AND NORTHERN REGIONS OF IRAN

During the Russo-Turkish War (1768–1774) the expedition organized by the Russian Imperial Academy of Sciences building in Saint Petersburg, in the person of S. Gmelin, for research purposes explored the western shores of the Caspian Sea and the northern regions of Iran. As a result of their research, the ethnography, history and the materials on the customs of the people of these territories are accepted as public value, the spiritual and material values are revealed as well.

During the study of the northern provinces of Iran and the Eastern Transcaucasia the expedition had to overcome many obstacles by putting S. Gmelin's life on the line.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԵՐԽՈՒԺՈՒՄՆ ԱԼԺԻՐ 1830 Թ. ՊԱՏՃԱՌՆԵՐՆ ՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

XIX դարի սկզբին Ալժիրն ավատատիրական պետություն էր՝ դեյի[1] գլխավորությամբ: Փաստացի գտնվելով Օսմանյան կայսրության կազմի մեջ՝ նա վարում էր ինքնուրույն քաղաքականություն: XVI դարում Ալժիրում հիմնված ենիչերաձովահենային պետությունն արդեն XVII դարում հասավ իր ծաղկման գագաթնակետին: Այդ ժամանակաշրջանում Ալժիրը տնօրինում էր Միջերկրական ծովի ամենահզոր ռազմական նավատորմը: Երկրների մեծ մասն իրենց նավերի անվտանգությունն ապահովելու համար տարեկան հարկ էր վճարում Ալժիրի կառավարչին:

1671 թ. երկիրը սկսեց կառավարել դեյը, որն ընտրվում էր Ալժիրում տեղակայված ենիչերիական զորքերի հրամանատարների՝ աղաների և նավապետների դիվանի կողմից[2]: Դեյը վայելում էր գրեթե լիակատար անկախություն և չէր ենթարկվում կենտրոնական իշխանություններին, սակայն պարբերաբար թանկարժեք նվերներ էր ուղարկում սուլթանին, ինչի շնորհիվ ստանում էր զենք և Թուրքիայում ենիչերիների հավաքագրման իրավունք:

Սկսած XVIII դարի վերջից՝ դեյերի «ծովահենային» պետությունը գտնվում էր խոր ճգնաժամի մեջ: Անգլիայի, Ֆրանսիայի և Հոլանդիայի ռազմածովային նավատորմերի պատժիչ գործողությունների արդյունքում կտրուկ նվազել էին ծովահենության միջոցով ստացվող եկամուտները: Քչացել էր նաև Օսմանյան կայսրությունից եկող օժանդակությունը, գրեթե լիովին դադարել էր նաև զենքի և զինամթերքի ներմուծումը, և, ինչն առավել կարևոր էր, ենիչերիների զորքն այլևս չէր համալրվում նորակոչիկներով: Այս ամենի հետ մեկտեղ երկրի բեյլիքությունների[3] ղեկավարները՝ բեյերը, ժամանակի ընթացքում իրենց

---

[1] Դեյը անվանաձևն առաջացել է թուրքերեն դայի՝ հորեղբայր, քեռի բառից:

[2] Ланда Г. "История Алжира XX век". Москва 1999, стр. 8.

[3] Ալժիրը բաժանված էր վարչական երեք շրջանների (բեյլիք)՝ Ալժիր, Օրան և Կոնստատինա:

ենթակայության տակ գտնվող տարածքներում ձեռք բերելով անսահմանափակ իշխանություն և հեղինակություն, հրաժարվեցին ենթարկվել կենտրոնական իշխանությանը, ինչն էլ հասկանալիորեն հանգեցրեց երկրի մասնատվածությանն ու թուլացմանը: Անհրաժեշտ է նշել նաև, որ դեյի իշխանությունը երբեմն չէր տարածվում և էական ազդեցություն չուներ քոչվոր ցեղերով բնակեցված տարածքներում: 1830 թ. Ալժիրի բնակչության թիվը կազմում էր մոտ երեք միլիոն, որոնցից 30 հազարը թուրքեր էին, իսկ 20 հազարը՝ թուրքերի և տեղացիների խառը ամուսնությունների սերունդ[4]: Նաև այդ հանգամանքով էր պայմանավորված, որ Ալժիրի թուրք-ենիչերիական վերնախավի անմիջական իշխանությունը տարածվում էր միայն ծովափնյա շրջանների վրա, ինչը կազմում էր երկրի տարածքի ընդամենը մեկ վեցերորդ մասը: Ալժիրի մյուս հատվածները, ինչպես Կաբիլիան, Տուգուրտը, Այն-Մադինը, լիովին անկախ էին[5]:

Այսպիսով, XIX դարի սկզբին Ալժիրը վերածվել էր թույլ և մասնատված երկրի, ինչն էլ պատճառ հանդիսացավ, որ այն դառնա Հյուսիսային Աֆրիկայում ֆրանսիական գաղութային նվաճումների առաջին թիրախը:

Ալժիրի զավթման ծրագրերը հասունացել էին շատ ավելի վաղ՝ դեռևս Նապոլեոն I-ի օրոք (1804-1815 թթ.): Ալժիրի գրավումը ոչ միայն նոր տարածքների ձեռքբերման, այլև, ինչն ավելի կարևոր էր, ֆրանսիական արտադրանքի համար նոր շուկաների ստեղծման հնարավորություն կհանդիսանար: Բացի դրանից Ֆրանսիայի թագավոր Կարլոս X-ը (1824-1830 թթ.) հույս ուներ Ալժիրի գրավմամբ ամրապնդել Բուրբոնների արքայատոհմի թուլացած դիրքերը:

Որպես ներխուժման հիմնական պատճառներ Ֆրանսիան առաջ քաշեց ծովահենության խնդիրը և ֆինանսական տարաձայնությունները երկու երկրների միջև: Իհարկե, հասկանալի է, որ այս պատճառ-

---

[4] Аникин В., Вайлов М. "Историческая трансформация стран Магриба (алжирский вариант)", Москва 2016, стр. 56. Ալժիրի բնակչությունը հիմնականում կազմում էին արաբները և բերբերները, ինչպես նաև քրիստոնյաներ, Սահարայի սևամորթներ և հրեաներ: Գյուղացիական բնակչության գրեթե կեսը կազմում էին կաբիլները՝ նստակյաց բերբերները:

[5] Хмелева Н. "Государство Абд аль-Кадира Алжирского", Москва 1973, стр. 11.

ները որևէ էական հիմնավորում չունեին: Անհրաժեշտ է նշել, որ մաղրիբյան ծովահենությունը, ինչպես արդեն նշել ենք, XVIII դարի վերջում արևմտյան նավատորմերի պատժիչ գործողությունների արդյունքում բավականին թուլացել էր և կորցրել իր նախկին հզորությունն ու դադարել էր որևէ էական վտանգ ներկայացնել միջերկրածովյան նավագնացության համար:

Ինչ վերաբերում է ֆինանսական խնդիրներին, ապա դեյը, որին ֆրանսիական կառավարությունը տասնյակ միլիոնների պարտք ուներ, բավարարված չէր այդ պարտքի մարման պայմաններով: Նշված պարտքը կուտակվել էր դեռևս Նապոլեոն Բոնապարտի եգիպտական արշավանքի օրերին, երբ Ալժիրը Նապոլեոնի բանակին և շրջափակման մեջ գտնվող Ֆրանսիային սննդամթերք էր մատակարարում: Դեյը համոզված էր, որ ֆրանսիական պարտքը ամբողջովին մարված չէ, ինչի արդյունքում Ալժիրի գանձարանը մի քանի միլիոն ֆրանկի վնաս էր կրել[6]:

Վերոհիշյալ խնդիրները և տարաձայնություններն ուռճացվում և շահարկվում էին Ալժիրում Ֆրանսիայի հյուպատոս Պիեռ Դևալի կողմից, ինչը հաճախ դառնում էր դեյի և հյուպատոսի միջև վեճերի պատճառ: Եվ այդպիսի բուռն վեճերից մեկի ժամանակ դեյը հովհարով հարվածեց Պ. Դևալին, որն էլ և դարձավ այն պատրվակը, որին երկար սպասում էր ֆրանսիական իշխանությունը:

«Հովհարով հարվածից» անմիջապես հետո՝ 1827 թ., Ֆրանսիան խզեց դիվանագիտական հարաբերությունները Ալժիրի հետ, իսկ ֆրանսիական նավատորմն արգելափակեց երկրի ծովափնյա շրջանները[7]:

Հարկ է նշել նաև, որ Ֆրանսիայի զավթողական ծրագրերը, շնորհիվ եվրոպական երկրներում մինչ այդ իրականացրած մեծածավալ դիվանագիտական աշխատանքի, բացառությամբ Անգլիայի, որևէ ընդդիմություն չառաջացրին: Ինչ վերաբերում է Անգլիային, ապա Ֆրանսիան քաջ գիտակցում էր, որ Լոնդոնն այդ պահին այդ ծրա-

---

[6] Луцкий В. "Новая история арабских стран", Москва, 1965, стр. 14.

[7] Lorcin P., Imperial Identities: Stereotyping, Prejudice and Race in Colonial Algeria, Tauris, 1999. p. 17.

գրերի իրականացումը կանխելու ուղղությամբ որևէ վճռական գործողություն չէր կարող ձեռնարկել: Մեծ նշանակություն ուներ նաև Ավստրիայի և Ռուսաստանի դրական վերաբերմունքը[8], որոնք այդ ժամանակաշրջանում լարված հարաբերություններ ունեին Օսմանյան կայսրության հետ:

Այսպիսով, գրեթե ամեն ինչ պատրաստ էր ներխուժման համար: Սկզբնական շրջանում Ֆրանսիան Ալժիրի գրավումը որոշել էր իրականացնել տարածաշրջանում իր դաշնակից Եգիպտոսի խեդիվ Մուհամմեդ Ալիի օգնությամբ: Սակայն վերջինիս հետ մի շարք քաղաքական խնդիրներ ունենալու, ինչպես նաև պարգևավճարի չափի վերաբերյալ համաձայնության չգալու պատճառով[9] Կառլոս X-ի կառավարությունը որոշեց գործել ինքնուրույն՝ ֆրանսիական զենքի միջոցով:

1830 թ. հունիսի 14-ին ֆրանսիական 37-հազարանոց բանակը գեներալ դե Բուրմոնի հրամանատարությամբ ափ իջավ Ալժիր քաղաքից 23 կիլոմետր հեռավորության վրա գտնվող Սիդի Ֆարուշ ծովածոցում[10]: Ալժիրի դեյ Հուսեյնը գիտակցելով, որ այս անգամ ֆրանսիացիները չեն բավարարվի միայն պատժիչ գործողություններով, սկսեց մոբիլիզացնել իր ենիչերիներին: Դեյին ռազմական օգնություն տրամադրեցին նաև Կոնստանտինայի բեյ Ահմեդը և Թիթերիի բեյ Մուսթաֆան, չնայած նրան, որ վերջիններս ցանկանում էին ազատվել կենտրոնական իշխանության վերահսկումից: Այսպիսով, ալժիրյան բանակի ընդհանուր թիվը հասավ 40 հազարի[11], և այս ուժերով որոշվեց հարձակվել Սիդի Ֆարուշում տեղակայված ֆրանսիական բանակի վրա: Սակայն Իբրահիմ աղայի գլխավորած ալժիրյան բանակի հարձակումը չունեցավ սպասված արդյունքը: Ֆրանսիացիները, սկզբնական անհաջողությունից արագ վերականգնվելով, անցան հակահարձակման և մի շարք հաղթանակներից հետո փախուստի մատնեցին Իբրահիմ աղայի զորքերին: Հետապնդելով վերջինիս զորքերի

---

[8] Ланда Г. "Борьба алжирского народа против европейской колонизации (1830 1918)", Москва 1976, стр. 63.

[9] Хмелева Н., նշվ. աշխ., էջ 18:

[10] Луцкий В., նշվ. աշխ., էջ 14:

[11] Куропаткин А.Н. "Алжирия", Санкт-Петербург, 1877, стр. 16.

մնացած մասին՝ ֆրանսիացիները հունիսի 24-ին ընդհուպ մոտեցան Ալժիր քաղաքին՝ կանգ առնելով նրանից ընդամենը 5 կիլոմետր հեռավորության վրա[12]:

Ալժիրի գրոհը սկսվեց հունիսի 29-ին, և հինգ օր անց՝ հուլիսի 4-ին, երբ գրավվեց «Կայսրի ամրոցը», դեյ Հուսեյնը անձնատուր եղավ հետևյալ պայմաններով.

1. Կազբայի ամրոցը և Ալժիրը պաշտպանող մյուս ամրոցները, ինչպես նաև քաղաքի նավահանգիստը հանձնվում են ֆրանսիացիներին:

2. Ֆրանսիական զորքերի հրամանատարը պարտավորվում է ապահովել դեյի և նրա ունեցվածքի անձեռնմխելիությունը:

3. Դեյն ազատ իրավունք ուներ իր ընտանիքի հետ միասին և իր ունեցվածքով լքելու Ալժիրը:

4. Նույն իրավունքները տրվում էին նաև ենիչերիներին[13]:

Հուլիսի 5-ին քաղաքը հանձնվեց ֆրանսիացիներին: Դեյ Հուսեյնը մեկնեց Նեապոլ, իսկ ենիչերիների զորքի հիմնական մասը դուրս բերվեց Ալժիրից: Քաղաքի հետ միասին ֆրանսիացիները տիրացան մեծաքանակ ավարի, այդ թվում նաև Ալժիրի պետական գանձարանին, որը կազմում էր մոտ 50 միլիոն ֆրանկ[14]:

Քաղաքի նվաճումից հետո Ֆրանսիան դեռևս վերջնականապես չէր որոշել՝ ինչպիսին պետք է լինի Ալժիրի հետագա կարգավիճակը: Ֆրանսիական իշխանությունները տատանվում էին մի քանի հնարավոր տարբերակների վրա՝ Ալժիրի վերածումը ֆրանսիական պրոտեկտորատի, վերականգնել երկրի վրա օսմանյան սուլթանի անմիջական հսկողությունը, վերածել Ալժիրը ֆրանսիական գաղութի կամ բաժանել այն ազդեցության երկու գոտիների՝ թուրքական և ֆրանսիական[15]:

1830 թ. Փարիզում տեղի ունեցած «հուլիսյան» հեղափոխությունը փոխեց ոչ միայն իշխանությունը Ֆրանսիայում, այլ նաև Ֆրանսիայի ալժիրյան ծրագրերը: Կառլոս X Բուրբոնին փոխարինած Լուի

---

[12] Նույն տեղում:

[13] Նույն տեղում, էջ 17:

[14] Аникин В., Вайлов М., նշվ. աշխ., էջ 58:

[15] Ланда Г. "Борьба алжирского народа против европейской колонизации (1830-1918)", стр. 64.

Ֆիլիպ Օռլեանցին որոշեց շարունակել ալժիրյան պատերազմը. 1834 թ. «Աֆրիկյան հանձնաժողովի» առաջարկությունների հիման վրա նա հայտարարեց Ալժիրի՝ Ֆրանսիայի հետ միավորման մասին և կազմակերպեց «Հյուսիսային Աֆրիկայի ֆրանսիական տարածքների» քաղաքացիական վարչակազմ՝ գեներալ-նահանգապետի գլխավորությամբ[16]:

Դեյ Հուսեյնի հեռանալուց անմիջապես հետո երկրի թե՛ կենտրոնական և թե՛ հեռավոր շրջանների արաբական ցեղերը, պահը հարմար համարելով, ապստամբեցին ոչ միայն տեղի դեռևս իրենց դիրքերը պահպանող թուրք կառավարիչների, այլ նաև ֆրանսիացի նվաճողների դեմ: Զինված դիմադրության օջախներ ձևավորվեցին Կոնստանտինայում՝ բեյ Ահմեդի, Թիթերիում՝ Բու Մեզրագի գլխավորությամբ: Օրանի շրջանում հակաֆրանսիական շարժումը գլխավորեց մարաբուտ[17] Մախի ալ-Դինը, որին հաջողվել էր իր շուրջը համախմբել տեղի մի շարք ցեղերի:

Որոշ խոշոր ավատատերեր, զգալով իրենց դիրքերի թուլությունը և ցանկանալով ամեն գնով պահել իրենց իշխանությունը, դիմեցին ֆրանսիացիների օգնությանը՝ խնդրելով զսպել ժողովրդական հուզումները: Նման համաձայնության էր եկել Թիթերիի բեյը, սակայն տեղի ապստամբ ուժերը պարտադրեցին վերջինիս հրաժարվել ֆրանսիացիների հետ համագործակցությունից[18]: Այստեղ անհրաժեշտ է նշել, որ, համաձայն այլ տեղեկությունների, ֆրանսիացիների հետ պայմանավորվածությունն ընդամենը խորամանկ քայլ էր, ինչի շնորհիվ Թիթերիի բեյ Բու Մեզրագին հաջողվեց գեներալ Քլոզելի ջոկատներին Բլիդա քաղաքի մոտ գցել ծուղակը և պարտության մատնել[19]: Դա առաջին, թեկուզ և փոքր հաղթանակն էր ֆրանսիական զորքերի նկատմամբ, ինչը ցուցադրեց նվաճողներին հաջողությամբ դիմադրելու հնարավորությունը:

---

[16] Charles Robert Ageron, Modern Aljeria, A History from 1830 to the Present, London, 1990, p. 9.

[17] Հյուսիսային Աֆրիկայում այդպես էին անվանում ճգնավորներին, կրոնական միաբանությունների անդամներին:

[18] Хмелева Н., նշվ. աշխ., էջ 26:

[19] Куропаткин А.Н., նշվ. աշխ., էջ 19:

Ֆրանսիացիների նահանջից հետո Բլիդա քաղաքի բնակիչների մի մասը, որոնք մինչ այդ անցել էին ֆրանսիացիների կողմը, գլխովին կոտորվեցին կաբիլների և արաբների կողմից:

Գեներալ Բերտեզենը պատժիչ ջոկատներ ուղարկեց ապստամբների դեմ: Ֆրանսիացիները մեծ զոհերի գնով վերադարձրին Բլիդա քաղաքը և, շարունակելով առաջխաղացումը, ծանր մարտերից հետո գրավեցին Թիթերիի բեյի տիրույթների կենտրոնը՝ Մեդեա քաղաքը[20]: Քաղաքի գրավմամբ ֆրանսիացիները հույս ունեին վերջ դնելու բեյի ապստամբությանը, բայց, ինչպես և կարելի էր սպասել, ալժիրցիները, հանձնելով Բլիդան և Մեդեան, ֆրանսիական գլխավոր ուժերի հեռանալուց հետո անմիջապես շրջափակման մեջ գցեցին այստեղ թողնված կայազորը: Ի վերջո ֆրանսիացիները ստիպված եղան օգնական ուժեր ուղարկել՝ իրենց հայրենակիցներին շրջափակումից դուրս բերելու համար: Սակայն այս արշավանքի ընթացքում ֆրանսիացիները մեծ կորուստներ ունեցան՝ ենթարկվելով անդադար հարձակումների տեղի արաբական ցեղերի կողմից[21]:

Ֆրանսիական այս արշավանքի անհաջողությունը ոգևորեց ալժիրցիներին. վերջիններս սկսեցին գործել ավելի համարձակ և արդյունավետ: Բռնկվեցին մի շարք ապստամբություններ նաև Ալժիրի հյուսիսային շրջաններում:

Ինչ վերաբերում է Կոնստանտինայի հեղինակավոր բեյ Ահմեդին, որը նույնիսկ հավակնում էր տապալված դեյի իշխանության ժառանգությանը, ապա նրան հաջողվեց ոչ միայն պահպանել իր իշխանությունը, այլև նա սկսեց ամրապնդել իր բանակը, որն այս անգամ կազմված էր ոչ թե ենիչերիներից, այլ արաբաբերբերական աշխարհազորից[22]: Սակայն բեյ Ահմեդի իշխանությունը չէր ընդունվում նրա բեյլիքության սահմաններից դուրս:

Ֆրանսիական ներխուժման երկու տարիների ընթացքում օտարերկրյա զավթիչների դեմ արդյունավետ զինված պայքար էին սկսել առանձին ցեղեր և մարաբուտների կրոնական միաբանություններ

---

[20] Куропаткин А. Н., նշվ. աշխ., էջ 19:

[21] Նույն տեղում:

[22] Аникин В., Вайлов М., նշվ. աշխ., էջ 59:

(եղբայրություններ), մասնավորապես Դերկավիյան, Թաջինիյան և, իհարկե, Կադիրիյան: Վերջիններս ունեին երկարամյա հակաթուրքական պայքարի փորձ, որը և նրանք այս անգամ օգտագործեցին ֆրանսիացիների դեմ: Այսպես, օրինակ, Դերկավիյա միաբանության գլխավորած մահզեն ցեղերի, 1810-1813 թթ. ապստամբության արդյունքում թեկուզ և ժամանակավորապես դեյը կորցրել էր վերահսկողությունը մի շարք շրջանների վրա[23]: 1810-1815 թթ. Դերկավիյա և Թաջինիյա միաբանությունների մարաբուտները Մարոկկոյի սուլթանի աջակցությամբ գլխավորեցին Ջուրջուրի և Բաբորիի կաբիլների ապստամբությունը[24]:

Այսպիսով, ակնհայտ է, որ կրոնական միաբանությունները դարձել էին ոչ միայն հոգևոր, այլ նաև հասարակական, տնտեսական և նույնիսկ ռազմական կենտրոններ: Միաբանությունների հեղինակությունն այնքան մեծ էր, որ վերջիններս կարողացել էին իրենց ազդեցությունը տարածել ցեղային ազնվականության վրա:

Ալժիրցիները, որոնք բավական երկար ժամանակ պայքարել էին թուրքական գերակայության դեմ, ողջունեցին դեյի պարտությունը, սակայն երբ ֆրանսիացիների վարած քաղաքականությունը սպառնալիք դարձավ Ալժիրի անկախության համար, և, երբ ֆրանսիական զորքերը սկսեցին խորանալ դեպի երկրի ներքին շրջանները, արաբական ցեղերն ընդվզեցին: Սկզբնական շրջանում այդ շարժումները չունեին ընդհանուր ղեկավարություն. առավել հեղինակավոր շեյխերի միջև առկա տարաձայնությունները թույլ չէին տալիս վերջիններին գլխավորել բռնկված հակաֆրանսիական ապստամբությունը:

Իրավիճակը փորձեց շտկել Օրանի շրջանի մարաբուտ Կադիրիյա միաբանության ղեկավար Մահի ալ-Դինը[25]: Հույս չդնելով արաբական ցեղերի մոտալուտ միավորման վրա՝ նա որոշեց օգնության խնդրանքով դիմել Մարոկկոյի սուլթանին, ում միացան նաև մի քանի հեղինակավոր շեյխեր: Մարոկկոյի սուլթանը, չհամարձակվելով իր աջակցությունը բացահայտ ցուցադրել, այսուհանդերձ իր եղբորորդի

---

[23] Ланда Г., նշվ. աշխ., էջ 56:

[24] Андре-Жюльен Ш. "История Северной Африки, Тунис, Алжир, Марокко, от арабского завоевания до 1830", Москва, 1961, стр. 353.

[25] Хмелева Н., նշվ. աշխ., էջ 28:

Մուլայ Ալիի գլխավորությամբ մի ջոկատ ուղարկեց Օրան, որը պետք է ղեկավարեր Օրանի շրջանը՝ որպես սուլթանի ներկայացուցիչ: Օրանի ցեղերի մեծ մասը հավատարմության երդում տվեց Մուլայ Ալիին: Ի պատասխան ֆրանսիական իշխանությունները վերջնագիր ներկայացրին Մարոկկոյի սուլթանին՝ պահանջելով հետ կանչել իր ներկայացուցչին: 1832 թ. Մուլայ Ալին վերադարձավ Մարոկկո՝ իր փոխարեն թողնելով Մահի ալ-Դինին[26]:

Անհրաժեշտ է նշել, որ այս ժամանակահատվածում Ֆրանսիայի անմիջական հսկողության տակ էին գտնվում միայն ծովափնյա շրջանները՝ Ալժիր, Բոն, Օրան և Բոժ քաղաքները[27]: Ալժիրի մյուս տարածքները չէին ենթարկվում ֆրանսիական իշխանություններին:

Այսպիսով, Ֆրանսիայի ներխուժման առաջին տարիների ընթացքում երկրի որոշ շրջաններում բռնկվեցին հակաֆրանսիական ապստամբություններ և ընդվզումներ, որոնք, սակայն, չէին կարող էականորեն ազդել և վերջ դնել ֆրանսիական աճող ներկայությանը Ալժիրում, քանի որ այս շարժումները կրում էին տարերային բնույթ և, ինչն առավել կարևոր էր, չունեին մեկ միասնական ղեկավարություն:

Ընդհանուր առմամբ ֆրանսիացիների կողմից ծովափնյա Ալժիրի համեմատաբար հեշտ և արագ նվաճումը պայմանավորված էր երկրի բնակչության էթնիկ բազմազանությամբ և տարբեր բեյերի միջև իշխանության համար անդադար ու անզիջում պայքարով:

Նման պայմաններում Ալժիրի ամբողջական գրավումը կարող էր շատ արագ ավարտվել, եթե ասպարեզում չհայտնվեր տաղանդավոր պետական գործիչ, հմուտ զորավար և ազգային հերոս Աբդ ալ-Կադիրը: Նա Կադիրիյա միաբանության ղեկավար Մահի ալ-Դինի որդին էր և նրանից հետո գլխավորեց միաբանությունը: Աբդ ալ-Կադիրին հաջողվեց վերջ դնել ցեղային հակասություններին և միավորել արաբներին մեկ ընդհանուր նպատակի շուրջ՝ պայքար օտար նվաճողների դեմ:

1830 թ. ֆրանսիացիների ներխուժումը Ալժիր և նրա հետագա գաղութացումը անմիջապես փոխեցին երկրի պատմական ողջ ըն-

---

[26] Նույն տեղում:

[27] Charles-Robert Ageron, նշվ. աշխ., էջ 9:

թացքը՝ սկիզբ դնելով անկախության համար ալժիրցիների երկարատև և անզիջում պայքարին:

GASPARYAN ARAM

THE FRENCH INVASION OF ALGERIA IN 1830: THE RESULTS AND THE EFFECTS

At the beginning of the 19th century Algeria was a weak and divided country, so it became the first target of the French colonial acquisition in North Africa. On June 4, 1830. The French army under general de Bourmont conquested Algeria. The ruler of the Ottoman Regency of Algiers Hüseyin Dey left for Naples while most of his troops, the janissaries, moved to Turkey and Syria. The French managed to take control of the coastal communities in a short period but the other regions of Algeria were not submitted to the French authorities.

The Arab tribes, considering the moment suitable, rebelled not only against the Turkish rulers who were still holding their positions, but also against the French conquerors. The armed resistance hubs were formed in Constantina, Titteri and Oran.

The initial successes of France were largely due to the ethnic diversity of the country's population as well as by the uncompromising struggle for power between the different bays. In this situation, the full occupation of Algeria could have been completed very quickly if an Algerian "Sharif" religious and military leader, known as the Emir Abd al-Qadir, didn't appear in the arena.

СОЕГОВ МУРАДГЕЛДИ

КАК ПОЯВИЛИСЬ ЗАПИСИ НА АРМЯНСКОМ ЯЗЫКЕ НА ПЕРВЫХ ТУРКМЕНСКИХ ДЕНЕЖНЫХ КУПЮРАХ 1919 ГОДА

Поводом для подготовки настоящей статьи послужил тот факт, что необходимые сведения о денежных банкнотах, выпущенных Закаспийским Временным Правительством (ЗВП) в 1919 году в Ашхабаде с надписями не только на русском и туркменском языках, но и записями на армянском языке в армянском алфавите, по нашим наблюдениям не содержатся ни в опубликованных научных статьях по данной области знаний[1], ни в интернет-сайтах, предназначенных широкому кругу пользователей[2]. Но все это относится только к русскоязычным работам, ибо в нашей статье, выполненной на турецком языке и опубликованной в 2016 году, данная тема впервые в той или иной степени полноты получила свое освещение[3].

---

[1] Григорьянц В. "Переселение армян в Закаспийскую область (конец XIX - начало XX вв.)", Լ<Գ, 1977, № 2, стр. 64-73; Григорьянц В. "Участие армян-переселенцев в развитии торговли в Закаспийской области (конец XIX - начало XX вв.)", Լ<Գ, 1978, № 6, стр. 53-66; Кадырбаев А. Ш. "Армянская диаспора и Дашнакцутюн в Туркестане. 1917–1921 годы". Восточный архив, 2013, № 2(28), стр. 32–39.

[2] Ерканян А., Армяне Туркмении [Электронный ресурс] URL: http: //sobesednikarmenii.ru/index.php/diaspora/85456 armyane turkmenii (дата обращения: 24.10.2016); Многонациональный Туркменистан. Армяне [Электронный ресурс] URL: http://asgabat.net/stati/obschestvo/mnogonacionalnyi turkmenistan armjane .html (дата обращения: 23.10.2016); Петросян А. Армяно туркменские отношения: взгляд из Еревана [Электронный ресурс] URL: http://infoabad.goodforum.net/t159-topic (дата обращения: 21.10.2016) и др.

[3] Söyegov M., Yüzünde Çaşdaş Türkmence Yazi Bulunan İlk Kağit Paralar, Çağdaş Türk Dili. Ekim Sayi: 344, Ankara (Türkiye), 2016, s. 504–507.

Рис. 1, 2. Аверс 10 и 250 рублевых банкнотов.





Рис. 3, 4. Реверс 10 и 250 рублевых банкнот с соответствующими надписями на армянском языке (на правой стороне).

В этой связи в первую очередь следует отметить, что в отличие от русскоязычных записей в купюрах, которые напечатаны на кириллице, туркменские записи в них, как и следует, выполнены арабской вязью (на левой стороне реверса банкнотов). Можно утверждать, что записи на туркменском языке предназначались также казахам, азербайджанцам и представителям других тюркоязычных народов, населявших область и пользовавшихся в ту пору арабской графикой.

Для того, чтобы разобраться в причинах появления записей на армянском языке на банкнотах Временного Правительства Закаспийской (с 1921 года Туркменской) области, выпущенных в Ашхабаде в 1919 году, следует кратко рассмотреть некоторые вопросы истории Закаспийской области вообще, а также события, происходившие в области после февраля и октября 1917 года. Начиная с 80-х годов XIX века, т.е. сразу же после присоединения значительной части туркменских земель к Российской империи под названием Закаспийская область, деловые представители армянских переселенцев приняли довольно заметное участие в развитии внутренней и внешней торговли в регионе. Армянские торговцы стали открывать в области различные торговые заведения, магазины, лавки, трактиры, гостиницы и т. п., причем интересы армянской торговой прослойки не ограничивались рамками крупных городов Закаспийского края, но проникали и во все мелкие городские поселения области и даже в сельские районы, непосредственно в аулы с местным населением. Крупные торговцы из армян принимали также видное участие в развитии внешней торговли с сопредельными странами: Ираном, Хивой, Бухарой и Афганистаном, ввозили товар в область с западного побережья Каспийского моря и из центральной России и выступали посредниками в русско-иранской торговле через Закаспийскую область. Армянское торговое население области часто выступало в роли предпринимателей промышленников, многие крупные торговцы из армян были одновременно и владельцами промышленных предприятий в Закаспийской области[4]. Это во

---

[4] Григорьянц В. "Переселение армян в Закаспийскую область (конец XIX - начало XX вв.)", ԼՀԳ, 1977, № 2, стр. 65; См. еще: Григорьянц В. "Участие

первых. Во-вторых, в июне 1918 года большевистский Совнарком Туркестана объявил мобилизацию для использования сил против казаков с намерением отправить мобилизованных на Урал. Население Закаспийской области, где наряду местными туркменами проживало немало русских и армян, саботировало эту мобилизацию. Поэтому в Ашхабад был направлен из Ташкента отряд красногвардейцев во главе с чрезвычайным комиссаром Совнаркома Туркестанской Автономной Социалистической Республики (ТАСР) по Закаспийской области А.И. Фроловым, бойцы которого 12 июля 1918 года были полностью уничтожены восставшими в области.

В те же дни в Ашхабаде было создано Закаспийское Временное Правительство (Временный Исполнительный Комитет Закаспийской области), состоящее в основном из социалистов-революционеров и социал-демократов во главе с эсером Ф. А. Фунтиковым. Членами временного правительства состояли эсер Б.В. Курилов (товарищ, т.е. заместитель председателя), Л.А. Зимин, В. Духов, граф А.И. Доррер, генерал-лейтенант И.В. Савицкий; местное туркменское население в правительстве представляли участники Первой мировой войны: генерал-майор Ораз-сердар, офицеры бывшей Царской Армии Ходжагелди Хаджимурадов (Хаджи-Мурат), Сейитмурад Овезбаев и Хан Иомудский[5]. Была организована Закаспийская армия, которая под командованием главнокомандующего Закаспийским фронтом, генерал-майора Ораз-сердара вела не всегда успешные бои против Красной Армии[6].

армян-переселенцев в развитии торговли в Закаспийской области (конец XIX - начало XX вв.)", ԼՀԳ, 1978, № 6, стр. 53-66.

[5] См. Соегов М. "Уроженец Орла - один из первых доцентов БГУ, функционирующего с 1919 года", Ученые записки Орловского государственного университета. Серия: Гуманитарные и социальные науки. Орел, 2015, № 6 (69), стр. 74 78; Цветков В.Ж. "Между белым югом и Сибирью: специфика управления в Закаспийской области в 1918 1920 гг." [Электронный ресурс] URL: https://www.permgani. ru/publikatsii/konferentsii/grazhdanskaya vojna na vostoke rossii/v-zh-tsvetkov mezhdu-belym yugom-i sibiryu spetsifika-upravleniya-v-zakaspijskoj-oblasti-v-1918-1920-gg.html (дата обращения: 12.11.2016).

[6] См. Соегов М. "Туркмены-командиры Царской и "Белой" Армий: генерал

Закаспийское правительство обратилось 11 августа 1918 за помощью к главе британской военной миссии в Мешхеде (Персия) генералу У. Маллесону. Тот откликнулся на просьбу отправкой тогда и в последующем необходимой военной помощи антибольшевистскому правительству.

19 августа 1918 года Закаспийское Временное Правительство подписало с генералом Малессоном соглашение, по которому Закаспийская область фактически переходила под власть английских интервентов. В январе 1919 года английский генерал разогнал Закаспийское Временное Правительство и установил военную диктатуру, создав марионеточный Комитет общественного спасения (в составе 5 чел.). Вскоре после ухода английских войск из области (апрель - июль 1919 г.) части Красной армии освободили Ашхабад (9 июля 1919 г.), а в феврале 1920 года - всю Закаспийскую область[7].

В литературе отсутствуют сведения о непосредственном участии представителей армянского населения области в составе Закаспийского Временного Правительства, хотя говорится, что данное правительство объединило в себе все антибольшевистские силы области, в том числе представителей партии дашнаков[8]. В другом источнике содержатся данные о том, что к 25 сентября 1918 года "Белая" армия области состояла примерно из 1,2 тыс. индийцев и британцев плюс 1,5 тыс. русских, армян и туркмен[9].

Подведя некоторые итоги вышеизложенному, можем констатировать, что во время правления Закаспийского Времен-ного Прави-

---

Ораз-сердар, сын Дыкма-сердара", Научный Татарстан. Гуманитарные науки, 2015, № 3, стр. 43–49.

[7] См. Закаспийское Временное Правительство [Электронный ресурс] URL: http://www.hrono.ru/organ/ukaz_z/ru19170220.php (дата обращения: 12.11.2016); Интервенция 14 держав в Советскую Россию [Электронный ресурс] URL: http://volk59.narod.ru/inter14.htm (дата обращения: 12.11.2016).

[8] См. Закаспийское Временное Правительство [Электронный ресурс] URL: http://www.hrono.ru/organ/ukaz_z/ru19170220.php (дата обращения: 12.11.2016).

[9] См. Интервенция 14 держав в Советскую Россию [Электронный ресурс] URL: http://volk59.narod.ru/inter14.htm (дата обращения: 12.11.2016).

тельства и затем Комитета общественного спасения торговля и финансового положения области регулировались через местные банки, как это было и раньше, при активном участии крупных армянских торговцев, которые одновременно были и владельцами промышленных предприятий. Таким образом, большой вес армянских предпринимателей в торгово-финансовой системе Закаспийской области, в том числе в период правления Временного Правительства, обусловил появления записей на их родном армянском языке на денежных банкнотах, выпущенных в 1919 году.

Было выпущено всего 6 видов денежных знаков с достоинствами 5, 10, 25, 50, 100 и 250 рублей, каждый из которых имел оригинальное графическое оформление и отличительную цветовую основу напечатанных бумаг (желто-серую, зеленую и др.). У всех купюр в аверсе изображен Герб Закаспийской области и несколько раз указывается в цифрах их достоинство. Наверху Герба написаны слова: "Разменный денежный знак Асхабадского отделения Народного банка". Приводятся подписи управляющего, кассира и контролера, а также год выпуска банкноты - 1919 г.

Рис. 4, 5. Аверс 5 и 50 рублевых банкнотов.

Рис. 6, 7. Реверс 5 и 50 рублевых банкнотов с соответствующими надписями на армянском языке (на правой стороне).

Реверс купюр в своем центре содержит сокращение в виде больших по объему букв З.В.П., которое расшифровывается как Закаспийское Временное Правительство. Основу реверса составляют следующие предложения: "Выпущен по Распоряжению Закаспийского Временного Правительства. Имеет хождение наравне с государственными кредитными билетами. Подделка преследуется законом". Как в аверсе, достоинство банкнотов повторяется в реверсе приведением соответствующих цифр, а именно 5, 10, 25, 50, 100 и 250. Они повторяются словами на русском, туркменском и армянском языках (транскрипция туркменских слов в квадратных скобках с применением современного алфавита добавлены автором данной статьи):

Пять рублей –بش مناتb(ä)ş m(a)nat] – hինգ ռուբլի. Десять рублей - اون مناتon m(a)nat] - տասը ռուբլի. Двадцать пять рублей ایکرمی مناتـ [ýigrimi b(ä)ş m(a)nat] - քսանհինգ ռուբլի. Пятьдесят рублей - الّی مناتelli m(a)nat] - հիսուն ռուբլի.Сто рублей یوز مناتـ [ýüz m(a)nat] - հարիւր ռուբլի. Двести пятьдесят рублей - ایکی یوز مانتiki ýüz elli m(a)nat] - երկու

հարիւր յիսուն ռուբլի. Пятьсот рублей بش یوز منات [b(ä)ş ýüz m(a)nat] - հինգ հարյուր ռուբլի.

В конце отметим, что в том же 1919 году, когда Закаспийское Временное Правительство выпускало в Ашхабаде свои деньги с записями на купюрах на русском, туркменском и армянском языках, на севере современного Туркменистана глава туркменских повстанцев Джунейд-хан (Курбанмаммед-сердар), сменив прежнего хана на другого, более послушного хана на престоле Хивинского ханства (правопреемник древнего Хорезма), также выпускал свои деньги, но не на бумаге, а на шелке, с записями на туркменском языке, выполненными арабской вязью с использованием туркменского слова مـنـات [m(a)nat]. Но это тема уже для другой самостоятельной работы.

ՍՈՅԵԳՈՎ ՄՈՒՐԱԴԳԵԼԴԻ

ԻՆՉՊԵՍ ՀԱՅՏՆՎԵՑԻՆ ՀԱՅԵՐԵՆ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 1919 Թ. ԹՈՒՐՔՄԵՆԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՎՐԱ

Հոդվածում քննարկվում է Անդրկասպյան ժամանակավոր կառավարության կողմից 1919 թ. թողարկված դրամական միավորների վրա հայերեն գրությունների հարցը:

Քննության են ենթարկվում նաև 1917 թ. հեղափոխությունից հետո նախկին Ռուսական կայսրության այդ երկրամասում (ներկայիս Թուրքմենստանի տարածքում) տեղի ունեցած քաղաքական գործընթացները:

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ԽՆԴԻՐԸ 1960-ԱԿԱՆ ԹԹ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

1960-ական թվականների երկրորդ կեսին՝ Մեծ եղեռնի 50-րդ տարելիցի միջոցառումներից հետո, սփյուռքահայությունը շարունակում էր պայքարը Հայկական հարցի լուծման և Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման համար: Այդ ժամանակահատվածում նկատելիորեն մեծանում է համաշխարհային հանրության հետաքրքրությունը Հայկական հարցի նկատմամբ. սկսվում են քննարկումներ միջազգային տարբեր կազմակերպություններում, գիտական և հասարակական համաժողովներում ու խորհրդաժողովներում: Այդ գործընթացները լայն արձագանք են գտնում նաև թուրքական մամուլում, և վերջիններիս ձեռնարկած քայլերը դառնում են թուրքական ժխտողական քաղաքականության և հակահայկական քարոզչության հիմքերը:

Բացի դրանից, 1960-ական թթ. Հայկական հարցը շահարկվում էր Մեծ տերությունների կողմից, երբ վերջիններս ցանկանում էին ճնշում գործադրել Թուրքիայի վրա: Նախ, նկատենք, որ կիպրական խնդրի շուրջ Թուրքիայի որդեգրած քաղաքականության և ծավալած գործընթացների հետևանքով լարվել էին թուրք-ամերիկյան հարաբերությունները, և պաշտոնական Վաշինգտոնը սպառնում էր չպաշտպանել Թուրքիայի տարածքային ամբողջականությունը: Այդ մասին է վկայում 1974 թ. օգոստոսի 22-ին Թուրքիայի վարչապետ Բ. Էջևիթի հայտարարությունը, «1964 թ. հունիսի 5-ին ԱՄՆ-ի նախագահ Լինդոն Ջոնսոնը վարչապետ Իսմեթ Ինյոնյուին ուղղած իր նամակում սպառնում էր, որ հանդիսանալով ՆԱՏՕ-ի դաշնակից՝ չի աջակցի Թուրքիային Խորհրդային Միության հարձակման դեպքում, եթե Թուրքիան իր զորքերը մտցնի Կիպրոս՝ ընդդեմ Հունաստանի»[1]: Դեռևս 1964 թ. մայիսի 10-ի՝ ԱՄՆ-ի պետքարտուղարության «կիպրական հարցին» վերաբերող փաստաթղթում առաջարկվում էր վեր հանել Թուրքիային

[1] "Hürriyet", 23. 08. 1974.

անհանգստացնող խնդիրները՝ վերջինիս վրա ճնշում գործադրելու նպատակով[2]: Փաստաթղթում չի նշվում, թե որ խնդիրների մասին է խոսքը, սակայն կարելի է ենթադրել, որ հայկական տարածքների հարցը ևս ընդգրկված էր: Հատկապես Միացյալ Նահանգները Հայկական հարցը շահարկում է 1967 թ., ինչը մեծ արձագանք է գտնում թուրքական մամուլում:

1960-ական թթ. ԽՍՀՄ-ը, օգտվելով թուրք-ամերիկյան լարված հարաբերություններից, փորձում է բարելավել խորհրդա-թուրքական կապերը: Չնայած այն հանգամանքին, որ ԽՍՀՄ-ը վստահեցնում էր, որ Թուրքիայից որևէ տարածքային պահանջ չունի, սակայն պաշտոնական Անկարային անհրաժեշտ էին երաշխիքներ: Դրանով է պայմանավորված, որ Թուրքիայի վարչապետ Ս. Դեմիրելը 1966 թ. դեկտեմբերի 26-ին ԽՍՀՄ-ի վարչապետ Ա. Կոսիգինի՝ Թուրքիա այցի ժամանակ մեկ անգամ էլ պահանջում է, որ երկու երկրների փոխհարաբերությունները զարգանան «տարածքային ամբողջականության փոխադարձ հարգանքի հիման վրա»[3]: Մի քանի օր անց՝ 1967 թ. հունվարի 2-ին, ամերիկյան «Newsweek» շաբաթաթերթը, Ա. Կոսիգինի՝ Անկարա կատարած այցի հետ կապված, հրատարակում է «Հանդիպում Անկարայում» («Set Appointment in Ankara») խորագիրը կրող հոդվածը, որտեղ բացահայտ ցույց է տրվում, որ ԱՄՆ-ի կառավարությունը դժգոհ է խորհրդային բարձրաստիճան պատվիրակությանը ցուցաբերած ջերմ ընդունելությունից, հատկապես թուրքական իշխանությունների որդեգրած կեցվածքից: Հոդվածում անհայտ հոդվածագիրը ներկայացնում էր, թե վերջին երեք դարերի ընթացքում ինչպես են զարգացել ռուս-թուրքական հարաբերությունները՝ մանրամասն նկարագրելով ռուս-թուրքական պատերազմները, նույնիսկ հիշեցնում էր, որ 1945 թ. ԽՍՀՄ-ը հավակնություններ է ունեցել սևծովյան նեղուցների նկատմամբ, ինչը պատճառ է հանդիսացել նոր լարվածության[4]: Սակայն այս ամենի հետ մեկտեղ չի խոսվում Կարսի և

---

[2] Foreign Relations Of The United States, Cyprus; Greece; Turkey, 1964 1968, Volume XVI, United States Government Printing Office. Washington, 2000, p. 81.

[3] "Milliyet", 27.12.1966.

[4] Set Appointment in Ankara, Newsweek, Vol. LXIX, No. 1, January 2, 1967, pp. 26-27.

Արդահանի պահանջի մասին, որն արվել էր նույն 1945 թ.: Հոդվածի վերջում բերվում են Թուրքիայի վարչապետ Ս. Դեմիրելի խոսքերը. «Թուրքիայի կառավարությունը անկեղծ ցանկանում է, որ խորհրդա-թուրքական հարաբերությունները զարգանան ազգային գերիշխանության, հողային ամբողջականության, իրավունքների հավասարության և միմյանց ներքին քաղաքականությանը չմիջամտելու սկզբունքների հիման վրա»[5]: Ակնհայտ է, որ Անկարայի հիմնական նպատակն էր Մոսկվայից «տարածքային ամբողջականության» վերաբերյալ երաշխիքներ ստանալ, այդ դեպքում Վաշինգտոնի սպառնալիքներն արժեզրկվում էին, և Թուրքիայի դերակատարումը փոխվում էր՝ կատարողից վերածվելով թելադրող երկրի: Ամերիկյան հոդվածի անհայտ հեղինակը ևս զարգացնում էր այդ գաղափարը՝ նշելով, թե «Թուրքիան, ինչպես և Եվրոպան, այլևս Խորհրդային Միությունից անմիջական վտանգ չի տեսնում և ցանկանում է թուլացնել ԱՄՆ-ի հետ կապը»[6]: Միաժամանակ առաջ քաշելով այն տեսակետը, որ Անկարան փորձում է «երկակի խաղ խաղալ Արևելքի և Արևմուտքի հետ՝ լավագույն տնտեսական և դիվանագիտական պայմաններ ապահովելու համար»[7]: Այսինքն՝ ԱՄՆ-ը բացահայտ ցույց էր տալիս, որ հասկանում է Թուրքիայի որդեգրած խաղը և պատրաստ է հակահարվածի: Եվ կրկին օրակարգում հայտնվում է Հայկական հարցը:

Հոդվածի հրապարակումից երեք օր անց՝ հունվարի 5-ին, Հայ դատի հանձնախումբն ամերիկյան մամուլում հրապարակում է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի Փոքրամասնությունների խտրականության կանխման ու պաշտպանության ենթահանձնաժողովին ուղղված մի հայտարարություն, որում կոչ էր արվում հանձնախմբին քննարկել 1915-1923 թթ. հայերի ցեղասպանության հարցը[8]: Հունվարի 16-ին ենթահանձնաժողովին են փոխանցում հուշագիր[9], դրա հետ համատեղ հունվարի 18 22-ին Հայ դատի կենտրոնական

---

[5] Նույն տեղում, էջ 27:

[6] Նույն տեղում, էջ 26:

[7] Նույն տեղում, էջ 26-27:

[8] Հայ դատի աշխատանքներ, Հայ դատի կենտրոնական հանձնախումբ, Պոստըն, 1967, էջ 1-2:

[9] Նույն տեղում, էջ 3-4:

հանձնախումբը Նյու Յորքի ՄԱԿ ի գրասենյակի առջև բազմահազարանոց ցույցեր է կազմակերպում: Ներկաները պահանջում էին «պատժել ցեղասպանության հեղինակներին», «վավերացնել Ցեղասպանության դեմ համաձայնագրի 6-րդ հոդվածը»[10], «պաշտպանել հայության իրավունքները՝ արդարացի հատուցումով», «վերահաստատել անկախությունը այն ժողովուրդների, որոնք տառապել են ցեղասպանության ոճիրների հետևանքով»[11] և այլն:

Հայկական ցույցերը լայն արձագանք են գտնում թուրքական մամուլում: Հունվարի 24-ին «Yeni İstanbul» թերթը, անդրադառնալով ամերիկահայերի բողոքի ցույցերին, գրում է, թե «Հայերը համաշխարհային մակարդակով պայքար են սկսել թուրքերի դեմ»[12]:

Ամերիկյան մամուլը, հայերի բողոքի ցույցերի լուսաբանումից բացի, նոր հրապարակումներով է հանդես գալիս: Հունվարի 23-ին «Newsweek» շաբաթաթերթը հրատարակում է Զավեն Մսըրյանի՝ «Your Land is My Land» խորագիրը կրող նամակը: Պարբերականը տպագրում է նաև Ս. Դեմիրելի նկարը, որի տակ գրված էր. «Դեմիրել. ու՞մն է տարածքը» («Demirel: Whose Territory?»): Նամակն ուներ հետևյալ բովանդակությունը. «Թուրքիայի վարչապետ Սուլեյման Դեմիրելը հայտարարել է, որ «թուրք - խորհրդային հարաբերությունները զարգանում են տարածքային ամբողջականության սկզբունքի հիման վրա»: Ես նկատում եմ խաղաղության հաստատում անարդար հիմքերի վրա: Խորհրդային կառավարությունն իրավասու չէ երաշխավորելու Թուրքիայի տարածքային ամբողջականությունը, քանի որ Հայաստանում և Սփյուռքում 5.5 միլիոն հայեր կան: Պետք է հիշել, որ հայերը տեղահանվեցին իրենց 3000 տարվա հայրենիքից, ու չպետք է մոռանալ 1915-1921 թթ. 1.5 միլիոն հայերի կոտորածները, որոնք ենթարկվեցին XX դ. առաջին ցեղասպանությանը:

Հայերը չեն հրաժարվել և երբեք չպիտի հրաժարվեն այն իրավունքներից, իրենց բռնագրաված հայրենիքից, որն այսօր կոչվում է

---

[10] Ցեղասպանության դեմ համաձայնագրի 6 րդ հոդվածը նախատեսում էր միջազգային դատական ատյան ստեղծել, որը կքններ ցեղասպանական արարքները:

[11] Հայ դատի աշխատանքներ, Հայ դատի կենտրոնական հանձնախումբ, էջ 5:

[12] "Yeni İstanbul", 24.01.1967.

Արևելյան Անատոլիա»[13]:

Այս նամակը կարծես թե նախազգուշացում էր Թուրքիային: Վերջինիս միջոցով ԱՄՆ-ը մեկ անգամ ևս հիշեցնում էր պաշտոնական Անկարային, որ գոյություն ունի Հայկական հարց, որը մոռացված չէ, և անհրաժեշտության դեպքում, եթե Թուրքիան շարունակի իր քաղաքական խաղերը, կարող է օրակարգում հայտնվել, և չի բացառվում, որ այդ դեպքում Թուրքիան կկորցնի Արևմտյան Հայաստանի տարածքները: Այլ կերպ ասած՝ ԱՄՆ-ը սպառնում էր Թուրքիայի տարածքային ամբողջականությանը:

Նկատենք, որ Զ. Մսըրլյանի «Newsweek» շաբաթաթերթին ուղարկած նամակը որոշակի խմբագրական փոփոխության էր ենթարկվել: Ինչը պարզ երևում է նամակի բնօրինակից, որն ամբողջությամբ հրատարակվել էր սփյուռքահայ մամուլում[14], բացի դրանից, նամակի հեղինակը ևս դա արձանագրում է: Նախ՝ թերթը չէր հրատարակել այն հատվածը, որտեղ ներկայացվում էր Երևանում Մեծ եղեռնի 50-րդ տարելիցի առնչությամբ կազմակերպված բազմահազարանոց ցույցը: Բացի դրանից, հայերի թիվը 5 միլիոնից հասցվել էր 5.5-ի, իսկ զոհերի թիվը 2 միլիոնից նվազեցվել էր 1.5-ի: Վերջին պարբերության մեջ ավելացվել էր «երբեք» բառը, որը սրություն էր տվել բովանդակությանը: Սակայն տեքստից չէր հեռացվել այն հատվածը, որտեղ 1915-1921 թթ. հայերի կոտորածները հստակ որակվում էին «20-րդ դ. առաջին ցեղասպանություն»: Այսինքն՝ այդ կերպ ԱՄՆ-ը սպառնում էր, որ պատրաստ է ճանաչելու Հայերի ցեղասպանությունը: Միաժամանակ, ինչպես հայտնի է, ԱՄՆ-ի Կալիֆոռնիա նահանգի Մոնթեբելլո քաղաքի քաղաքապետարանի ժողովը 1965 թ. հայերին թույլատրել էր հանրային այգում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշահամալիր կառուցել[15]: Վերջինիս աշխա-

---

[13] Բերված է հրատարակված նամակի ամբողջական թարգմանությունը: Տե՛ս Messerlian Z., Your Land is My Land, "Newsweek", Vol. LXIX, No. 4, January 23., 1967, p. 3.

[14] «Ազդակ», Բեյրութ, 30.01.1967:

[15] Molina S., Thousands commemorate Armenian genocide at site of Montebello monument, Whittier Daily News, 24.04.2012,

տանքներն արդեն սկսվել էին, և ամերիկյան մամուլն այդ օրերին լուսաբանում էր այն:

«Newsweek» թերթում հրատարակված Զ. Մսըրլյանի նամակը, սփյուռքահայ մամուլից[16] բացի, լայն արձագանք է գտնում նաև թուրքական թերթերում: Հոդվածին առաջինն արձագանքում է «Yeni Gazette»-ը: Վերջինիս հոդվածի տեքստը թարգմանվում և հրատարակվում է սփյուռքահայ մամուլում:

«Հայկական պահանջներուն արձագանքը Թուրքիոյ մէջ» խորագիրը կրող հրապարակումը ներկայացնում է «Yeni Gazette» թերթի հոդվածի թարգմանությունն ամբողջությամբ: Թարգմանության համաձայն՝ մամուլը գրում էր. «Անցեալ շաբաթ, արտասահմանի հայերը, Թուրքիոյ դէմ բազմաթիւ քարոզչութիւններ ըրին: Նախ ամերիկահայ ամէնէն շատ կարդացուած մէկ պարբերաթերթին՝ «Նիւզուիք»ի մէջ Պէյրութէն հայ փրոֆեսոր մը նամակ մը հրատարակեց, մեղադրելով Խորհրդային Ռուսիան, աւելի ճիշդը Թուրքիան, առարկելով որ Արեւելեան Անատոլուն հայերունն է եւ իբր այդ՝ Ռուսիա չի կրնար երաշխաւորել Թուրքիոյ հողային ամբողջութիւնը (առանձին կու տանք այդ նամակը)»[17]: Զ. Մսըրլյանի նամակի թարգմանությունը տալուց բացի, թերթը պահը բաց չէր թողնում մեկ անգամ էլ անդրադառնալու ԱՄՆ-ի Մոնթեբելլո քաղաքում Հայոց ցեղասպանության հուշահամալիրի կառուցմանը, ինչպես նաև հիշատակում է Նյու Յորքի ՄԱԿ-ի շենքի առջև հայերի կազմակերպած բազմահազարանոց ցույցը՝ ավելացնելով, որ «դրանով չբավարարվելով հայերը խնդրագիր են փոխանցել ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի Փոքրամասնությունների խտրականության կանխման ու պաշտպանության ենթահանձնաժողովին՝ խնդրելով թուրքերին դատել 1915 թ. Ցեղասպա-

---

http://www.whittierdailynews.com/general news/20120424/thousands commemorate armenian genocide at site of montebello monument

[16] Նկատենք, որ "Newsweek" շաբաթաթերթում հրատարակված Զավեն Մսըրլյանի նամակը սփյուռքահայ մամուլում արտատպվել է մինչև 1967 թ. ապրիլ ամիսը: Մանրամասն տե՛ս «Յառաջ», Փարիզ, 28.01.1967, «Ազդակ», Բեյրութ, 30.01.1967, «Զարթօնք», Բեյրութ, 31.01.1967, «Հայրենիք», Բոստոն, 7. 02. 1967, «Արև», Կահիրե, 15.02.1967, «Պայքար», Բոստոն, 15.03.1967 և այլն:

[17] «Ազդակ», Բեյրութ, 30.01.1967:

նության առթիվ, իբրև մարդկության դեմ հանցանք գործած»[18]: Հոդվածի վերջում թուրքական թերթը գրում է. «...պատմության մեջ 50 տարի առաջ պատահած ու մոխրացված դեպքերին վերադառնալը ցավ է պատճառում այն 77 հազ. հայերին, որոնք Թուրքիայի մեջ են ապրում իբրև հավատարիմ և լավ հայրենակիցներ: Մեր այդ հայրենակիցներն ազատ ու երջանիկ են, և նրանք են, որ ամենից ավելի յուրացրել են թուրքական մշակույթը»[19]: Նման եզրակացությամբ թուրքական կողմը փորձում էր հիշեցնել, որ դեռևս Թուրքիայի տարածքում ապրում են հայեր, որոնց կյանքի համար իրական սպառնալիք են Սփյուռքում ընթացող հակաթուրքական գործողությունները:

Թուրքերի նախազգուշացումը որևէ կերպ չկասեցրեց սփյուռքահայերի ծրագրերի իրականացումը, ընդհակառակը, վերջիններս պատրաստվում էին էլ ավելի լայն գործունեություն ծավալել: Մեկ օր անց՝ 1967 թ. հունվարի 31-ին, նույն «Ազդակ» թերթը հրատարակում է «Ակնարկ. Անհրաժեշտ աշխատանք մը» խորագիրը կրող մի հոդված, որում անդրադարձ է կատարվում «Newsweek»-ի հոդվածին, և անհայտ հոդվածագիրը շեշտում էր, որ արևմտյան մամուլն անհրաժեշտության դեպքում այսքան շռայլ չի եղել Հայկական հարցում և խոսել է միայն «պարագայական առիթներով»[20]: Ակնարկելով, որ իրենց հանդեպ արևմտյան պետությունների վերաբերմունքը փոխվել է, ինչը պայմանավորված է թուրք-ամերիկյան հարաբերություններում նկատվող լարվածությամբ: Ավելին՝ հույս էին հայտնում, որ «Մեծ եղեռնի յիսնամեակին առթիւ արտահայտված համազգային վրդովումը ու նաեւ Միացյալ Ազգերուն կատարուած դիմումները որոշ արձագանք կգտնեն միջազգային մամուլի մեջ»[21]: Հոդվածի համաձայն՝ հայերն այս ուղղությամբ դեռ մեծ աշխատանք ունեն անելու. «Ունինք գիտնականներ, գրագէտներ, օտար լեզուներով արտայայտուող հրապարակագիրներ, որոնք աշխարհի ամէն անկիւն դեր մը ունին կատարելիք: Իւրաքանչիւրը դեսպան մըն է իր գտնուած միջավայրին մէջ և կրնայ քաղաքական մտայնութիւններու մէջ ի նպաստ հայկական դատին մթնոլորտ

---

[18] Նույն տեղում:

[19] Նույն տեղում:

[20] «Ազդակ», Բեյրութ, 31.01.1967:

[21] Նույն տեղում:

ստեղծել: Կասկած չկայ նաեւ, որ թէ բոլոր այդ ներկայացուցիչները ունեն իրենց անձնական բարեկամները, - գիտնական, գրագետ կամ հրապարակագիր, որոնց խօսքը կշիռ կրնայ ունենալ եւ որոնք պիտի զգան, թէ միջազգային խաղաղութեան եւ արդարամտութեան ի նպաստ ձայն բարձրացնելը պատուաբեր գործ մըն է»[22]: Այլ կերպ ասած՝ կոչ էր արվում արտերկրում ապրող հայերին լայնածավալ քարոզչություն իրականացնել ի նպաստ Հայկական հարցի՝ օգտագործելով սփյուռքահայ մտավորականությանը, որոնք արդեն մեծ հեղինակություն էին վայելում:

«Newsweek»-ում հրատարակված Զ. Մսըրլյանի նամակը և սփյուռքահայերի ծավալած գործունեությունը պատճառ են հանդիսանում, որ Հայկական հարցը հայտնվի Թուրքիայի կառավարության ուշադրության կենտրոնում: 1967 թ. հունվարի 30-ին Թուրքիայի ազգային անվտանգության խորհուրդը երկարատև՝ հինգժամյա նիստի ընթացքում կիպրական խնդրի հետ համատեղ քննարկում է նաև այն: Նիստին ներկա էին Թուրքիայի նախագահ Ջ. Սունայը, վարչապետ Ս. Դեմիրելը, զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Ջ. Թուրալը, պաշտպանության նախարար Ա. Թոփալօղլուն և այլ բարձրաստիճան պաշտոնյաներ, ինչպես նաև ցամաքային բանակի, նավատորմի և օդուժի հրամանատարներ[23]: Ս. Դեմիրելը, ներկայացնելով խնդիրը, նշում էր, որ վերջին ամիսներին Միացյալ Նահանգների և Լիբանանի հայերը հակաթուրքական քարոզչություն են իրականացնում, ինչը որոշ լարվածություն է առաջացրել[24]: Ներկաները, քննարկելով հարցը, որոշում են հակազդող քայլեր ձեռնարկել ընդդեմ հայերի միջոցառումների[25]: Եվ քանի որ Թուրքիայի ազգային անվտանգության խորհրդի որոշումները հիմնականում չեն բացահայտվում, միայն կարելի է ենթադրել, թե ինչ միջոցառումների մասին է խոսքը:

Հավանական է, որ սփյուռքահայերի վրա ճնշում գործադրելու համար օգտագործում են ստամբուլահայերի գործոնը: Այդ օրերին թուրքական մամուլը հրատարակում էր հակահայկական հոդվածներ,

---

[22] Նույն տեղում:

[23] «Մարմարա», 31. 01. 1967:

[24] Նույն տեղում:

[25] Նույն տեղում:

որոնք բորբոքում էին թուրք հասարակությանը: Առանձնացնենք փետրվարի 1-ին «Yeni Gazette» ում լույս տեսած Հիքմեթ Բիլի[26] «Այսօր Ցեղասպանությունն ինչպե՞ս է լինում» («Bugün genosid nasil oluyor?») խորագիրը կրող հոդվածը: Հոդվածագիրը փորձում է հերքել Հայոց ցեղասպանության փաստը՝ հայերին մեղադրելով թուրքերին վարկաբեկելու համար: «Ցեղասպանությունը, ստուգաբանորեն, նույն հողում ապրող երկու ցեղերից մեկի բնաջնջումն է մյուսի կողմից: Ներկայումս արտերկրում ապրող հայերը կես դար առաջ Արևելյան Անատոլիայում թուրքերի կողմից ցեղասպանության ենթարկրկվելու մասին պնդելու հիվանդությամբ են տառապում»[27],- գրում է նա: Բացահայտ հայտարարելով, որ հայերը մեղավոր են տեղի ունեցածում[28]:

Հիքմեթ Բիլը նաև խոսում է ներկայիս ստամբուլահայերի մասին՝ շեշտելով, որ վերջիններս «Ստամբուլի և ողջ Թուրքիայի բարիքներից» իրենցից ավելի են օգտվում[29], սփյուռքահայերին հարցնելով. «արդյո՞ք չեք մտածում, որ Ստամբուլում բնակվող հայերը իրենց տեղերում հանգիստ կարող են ապրել, թե՞ ոչ»[30]: Հոդվածն ավարտվում է հետևյալ եզրահանգումով. «Այս դարում ցեղասպանությունն այլևս չի լինում նախկինի պես: Ցեղասպանությունը՝ Թուրքիայից դուրս խեղճ ու գաղթական ապրող հայերի ընտրած այս նոր ճանապարհով է կատարվում: Այլևս մեկը մյուսին հեշտությամբ չի կարողանում կոտորել, բայց կարող է օդը անշնչելի աստիճանի հասցնել: Ահա այն ամենը, որի արդյունքում Ստամբուլի մեջ ոչ մի հայ չի մնա: Որովհետև նրանց միակ ելքը հայրենիքի վերջին այս պատառից փախչելու մեջ է լինելու....»[31]: Հոդվածից բերված վերջին այս պարբերությունը բացահայտ ստամբուլահայությանն ուղղված սպառնալիք էր:

---

[26] Հիքմեթ Բիլ (1918-2003 թթ.) թուրք լրագրող և իրավաբան: Նա Կիպրոսի թուրքական ասոցիացիայի նախագահն էր և 1955 թ. սեպտեմբերի 6 7 ին Ստամբուլում հույների և հայերի նկատմամբ իրականացրած դեպքերի հրահրողներից մեկը:

[27] "Yeni Gazette", 01.02.1967.

[28] Նույն տեղում:

[29] Նույն տեղում:

[30] Նույն տեղում:

[31] Նույն տեղում:

Ի պատասխան մեկ օր անց՝ փետրվարի 3 ին, Ստամբուլում լույս տեսնող «Ժամանակ» օրաթերթը հրատարակում է Կարպիս Կ. Մուրատեանի «Ալ հանգիստ ձգեցէք հայերը» խորագիրը կրող հոդվածը, որտեղ ստամբուլահայերն իրենց բողոքի ձայնն էին բարձրացնում՝ փորձելով հասկանալ, թե ինչու իրենք պետք է պատասխան տան, երբ իրենք երկրի օրինապահ քաղաքացիներ են[32]: Մինչդեռ մի քանի օր անց Ստամբուլում հրատարակվող հայկական «Մարմարա» օրաթերթը տեղեկացնում է, որ արտասահմանյան հայերի հակաթուրքական գործունեության և մամուլի հրապարակումների արդյունքում երկրի ոստիկանությունն իր պաշտպանության տակ է վերցրել Գում Գափուի Հայոց պատրիարքարանը[33]:

«Զարթօնք» թերթի խմբագիր Գ. Ահարոնյանը «Թրքական ծանր գրգռութիւն Պոլսոյ հայութեան դէմ....» խորագիրը կրող հոդվածում, անդրադառնալով «Մարմարա» թերթի հրապարակած լուրին, Թուրքիայի իշխանություններին հարցնում էր, թե «ինչու՞ է առաջացել նման պաշտպանության անհրաժեշտություն» և միաժամանակ պատասխանում. «Իրողությունը այն է, որ թրքական շատ մը թերթեր, - «Ենի Կազեթէ», «Ճումհուրիյեթ», եւ այլն, - անցնող շաբաթներուն ոչ միայն անվայել յարձակումի թիրախ դարձուցին լիբանանահայութիւնը եւ ամերիկահայութիւնը, այլեւ ահավոր զրպարտութիւն եւ ամբաստանութիւն կատարեցին պոլսահայութեան եւ յատկապէս Հայոց Պատրիարքարանին դէմ»[34]: Ավելին՝ հոդվածագիրը տեղեկացնում է, որ, համաձայն թուրքական մամուլի, արտասահմանում հակաթուրքական քարոզչությունը ֆինանսավորվել է Պոլսո Հայոց պատրիարքարանի կողմից[35]: Իհարկե, դա ընդամենը զրպարտանք էր, որ էլ ավելի էր գրգռել թուրք հասարակությանն ընդդեմ հայերի:

Հակահայկական մթնոլորտին անդրադառնում է նաև Ստամբուլի՝ ԽՍՀՄ-ի հյուպատոսարանը՝ տեղեկացնելով, որ «1965-1967 թթ. տեղի են ունեցել մի շարք իրադարձություններ, որոնք անդրադարձել

---

[32] «Ժամանակ», Ստամբուլ, 03.02.1967:

[33] «Մարմարա», 05. 02. 1967: «Այգ», Բեյրութ, 08.02.1967 (արտատպված է «Մարմարա» թերթից):

[34] «Զարթօնք», 11.02.1967:

[35] Նույն տեղում:

են հայ համայնքի կյանքի վրա: Հատկապես 1965 թ. Հայոց ցեղասպանության 50 րդ տարելիցի միջոցառումները հակահայկական մթնոլորտ են ստեղծել երկրում: Թուրքական մամուլում հրատարակվել են հակահայկական հոդվածներ: Թուրքիայի կառավարությունն էլ ստիպում է երկրում ապրող հայերին հանդես գալ հայտարարություններով, որտեղ նրանք դատապարտում են սփյուռքահայերի հակաթուրքական գործունեությունը: Դրանք տպագրվում են երկրի առաջատար պարբերականներում: Ելույթով հանդես է եկել նաև Պոլսո Հայոց պատրիարք Շնորհք Գալուստյանը: Նա իր խոսքում քննադատել է սփյուռքահայերի հակաթուրքական տրամադրությունները»[36]: Այս փաստաթղթում հստակ նշված է, որ Թուրքիայում ապրող հայերը հայտարարություններ են անում կառավարության ճնշման ներքո:

Տեղեկացնենք, որ 1967 թ. մարտին Վաշինգտոնի՝ Թուրքիայի դեսպանատան տեղեկատվության խորհրդատու Էրդողան Ուլուսը «Պատմության ծանոթագրություն» («Footnote to History») խորագրով պատասխան-նամակ է հղում «Newsweek»-ին, որում ներկայացնում է պաշտոնական Անկարայի՝ Հայկական հարցի վերաբերյալ առաջ քաշած թեզը: Այն չի տարբերվում մյուս հոդվածներից: Նամակագիրը կրկին ամեն ինչում մեղադրում է «արտաքին ուժերին»[37]: Թուրքական մոտեցումը բավականին հստակ էր. Օսմանյան կայսրությունում հայերը և թուրքերը եղբայրաբար էին ապրում, հայերը երջանիկ և բարգավաճ էին, օտարը եկավ և լարվածություն մտցրեց, դժբախտ դեպքեր տեղի ունեցան, երկու կողմերն էլ տուժեցին: Բայց հիմա պետք է մոռանալ անցյալը, համակերպվել իրականության հետ, հատկապես այն, ինչ վերաբերում է հողային հարցին: Այս տեսակետն արտահայտված էր ոչ միայն «Newsweek»-ում հրատարակված թուրք դիվանագետի նամակում, այլև Հիքմեթ Բիլի հոդվածում և թուրք պաշտոնյաների

---

[36] ՀԱԱ, ֆ. 326 (Արտաքին գործերի նախարարության ֆոնդ), ց. 1, գ. 408 (Ստամբուլի՝ ՍՍՀՄ Գլխավոր հյուպատոսարանի փոխհյուպատոսի տեղեկանքը «Ստամբուլի հայկական համայնքի վիճակի մասին», 16. 05.1966 թ.), թ. 2-3:

[37] Ulus E., Footnote to History, "Newsweek", Vol. LXIX, No. 10, March 6, 1967, p. 2.

հայտարարություններում: Այսինքն՝ 1960-ական թթ. դա Թուրքիայի պաշտոնական տեսակետն էր:

Հետաքրքիր է նաև այն փաստը, որ այս նամակից հետո ամերիկյան շաբաթաթերթը, որը հանդես էր գալիս հակաթուրքական հոդվածներով, ոչ միայն չի տպագրում հայերի ուղարկած պատասխան-նամակը, այլև խուսափում էր վերջիններիս հետ կապ հաստատելուց, ինչը վկայում էր, որ թուրք-ամերիկյան հարաբերություններում կրկին փոփոխություններ էին տեղի ունեցել:

Մինչդեռ սփյուռքահայերը շարունակում են իրենց գործունեությունը: 1967 թ. ապրիլին՝ Թուրքիայի նախագահ Ջևդեթ Սունայի՝ ԱՄՆ այցի նախօրեին, «New York Times» թերթը տպագրում է Ամերիկահայ ազգային կոմիտեի նամակը: Այն պահանջում էր ՄԱԿ-ի օրակարգ ներառել Հայկական հարցը[38]: Նույն պահանջն առաջ է քաշում նաև ֆրանսիական մամուլը Սունայի՝ Փարիզ կատարած այցի ընթացքում[39]: Ի պատասխան թուրքական մամուլը 1967 թ. ապրիլին լուրեր է տարածում, որ Թուրքիայի արտաքին գործերի նախարար Ի. Չաղլայնօղլուն դրական արդյունքների է հասել ԱՄՆ-ի Մոնթեբելլո հուշահամալիրի հետ կապված[40]: Սակայն իրականում դրանք սուտ լուրեր էին, քանի որ Մոնթեբելլոյի Հայոց ցեղասպանության հուշահամալիրի բացումը տեղի է ունեցել 1968 թ.[41]:

Եվս մեկ կարևոր հանգամանք. 1967 թ. փետրվարին Թուրքիայի կառավարությունը, հիմք ընդունելով 1965 թ. Մայիսի՝ ԽՍՀՄ-ի արտաքին գործերի նախարար Ա. Գրոմիկոյի՝ երկու երկրների միջև սահմանների վերագծման առաջարկը, համաձայնվում է կնքել խորհրդա-թուրքական արձանագրություն: Այն ստորագրվում է 1967 թ. փետրվարի 28-ին Անկարայում: 1967 թ. ապրիլին էլ թուրքական մամուլը տեղեկացնում էր, որ Թուրքիան ԽՍՀՄ-ի հավանական

---

[38] "New York Times", 19.04.1967.

[39] «Զարթօնք», 02. 07. 1967:

[40] «Զարթօնք», 23. 04. 1967:

[41] Molina S., Thousands commemorate Armenian genocide at site of Montebello monument, Whittier Daily News, 24.04.2012, http://www.whittierdailynews.com/general-news/20120424/thousands-commemorate-armenian-genocide-at-site-of-montebello-monument

հարձակումից պաշտպանվելու համար առաջարկել է ՆԱՏՕ-ին «աթոմական ականներու դաշտեր հաստատուին թուրք և ռուս սահմանին վրայ, նկատելով, որ Թուրքիա հինգ զորաբաժին ունի հոն»[42]: Թուրքական կողմի այս հայտարարությունները վկայում են, որ պաշտոնական Անկարան փոփոխական էր իր արտաքին քաղաքականության մեջ: Փորձում էր հավատացնել արևմտյան դաշնակիցներին, որ իրեն անհանգստացնում է տարածքային ամբողջականության հարցը և բոլորովին չի վստահում ԽՍՀՄ-ին: Ավելին՝ անհրաժեշտության դեպքում պատրաստ է վերանայելու վերջին տարիներին երկու երկրների միջև հաստատված ջերմ հարաբերությունները: Չնայած ժամանակ առ ժամանակ թուրքական մամուլի կողմից տարածվող այս սպառնալիքներին՝ 1967 թ. սեպտեմբերին Թուրքիայի վարչապետ Ս. Դեմիրելը պաշտոնական այց է կատարում Մոսկվա և Բաքու՝ արժանանալով ջերմ ընդունելության: Հետագայում՝ 1968-1969 թթ. խորհրդա-թուրքական հանդիպումների ընթացքում հիմնականում քննարկում էին սահմանի վերագծման հարցը: Թուրքական մամուլն էլ այդ առիթով տարաբնույթ լուրեր էր տարածում, որոնք էլ ավելի էին լարում իրավիճակը:

Այսպիսով, 1960-ական թթ. երկրորդ կեսին Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության ճանաչման համար մղվող պայքարում արմատական շրջադարձ այդպես էլ չի կատարվում: Սակայն 1965 թ. Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցի լայնածավալ նշումը սփյուռքահայ գաղթօջախներում և հայրենիքում լայն արձագանք է գտնում միջազգային մամուլում և մեծ խթան է հանդիսանում հետագա տարիներին Հայոց ցեղասպանության դատապարտման ու նրա պաշտոնական ճանաչման համար աշխարհի առաջադեմ ուժերի համախմբման գործում: Սփյուռքահայերի գնահատմամբ Մեծ եղեռնի 50-րդ տարելիցը եկել էր ամփոփելու հայության անցած ուղու արդյունքները և դնելու գործունեության նոր ուղիների, նոր մարտավարության սկիզբը: Ավելին՝ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանն ուղղված սփյուռքահայերի գործողությունները Թուրքիայում լուրջ անհանգստություն են պատճառում և ստիպում որոշ հակաքայլեր ձեռ

---

[42] «Մարմարա», 21. 04. 1967:

նարկել, որոնք կարճ ժամանակ անց դառնում են թուրքական ժխտողական քաղաքականության ու հակահայկական քարոզչության հիմքերը:

MELKONYAN CHRISTINE

THE ISSUE OF RECOGNITION OF THE ARMENIAN GENOCIDE IN THE SECOND HALF OF THE 1960S

In the second half of the 1960s the struggle of the Armenians in the Diaspora, for the recognition of the Armenian Genocide by the international community, became more active. As a result of the interest of the international community to the Armenian Question became more intensified and was discussed in international press. In the January 23, 1967 the newspaper "Newsweek" has published a letter in which stressed that the Soviet Union had no right to guarantee the territorial integrity of Turkey as Armenians rightfully claim part of this territory as theirs. The author added that one should remember that the Armenians were ejected from their homeland of 3000 years and were the victims of the first genocide of the 20th century. The letter was welcomed by the diaspora press. However, the Turkish reaction was hostile.

ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ ՎԱՀԱՆ

ՔՐԴԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՉԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՆ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Իրանական Քրդստանը, որն ընդունված է անվանել նաև Արևելյան Քրդստան, գտնվում է հյուսիսարևմտյան Իրանում՝ Փոքր Արարատից և Զագրոսյան լեռնաշղթայից հարավ-արևելք: Իրանում քրդերի թվաքանակի մասին ստույգ տվյալներ գոյություն չունեն: Վերջին տվյալներով նրանց թիվը հասնում է մոտ տասը միլիոնի: Իրանի քրդերը ցրված են Քերմանշահ, Իլամ, Արևմտյան Ադրբեջան և Քրդստան նահանգներում: Իրանական Քրդստանի քաղաքական կենտրոն է համարվում Մահաբադ (Մեհաբադ) քաղաքը, որը նաև Իրանի քրդական ազգայնականության օրրանն է: Այն գտնվում է Ուրմիա լճից հարավ ընկած շրջանում: Իրանում քրդեր են բնակվում նաև երկրի արևելքում, Թուրքմենստանին սահմանակից Խորասան նահանգում, ինչպես նաև երկրի խոշոր քաղաքներում՝ Թեհրանում, Թավրիզում և այլն: Իրանի քրդերի մոտ երկու երրորդը սուննիներ են, իսկ 27 տոկոսը՝ շիաներ: Շիա քրդերը բնակվում են մեծ մասամբ Քերմանշահում և Իլամում: Իրանաբնակ քրդերի մեծ մասը՝ 70 տոկոսը, իսլամի շաֆիական մազհաբի հետևորդ սուննիներ են: Կան նաև «ահլ-ե հաղղ» աղանդին պատկանող քրդեր, Ղադերի և Նաքշբանդի թարիքաթների հետևորդներ, ինչպես նաև սակավաթիվ եզդիներ:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ընկած ժամանակաշրջանը Իրանական Քրդստանի համար բուռն իրադարձություններով, քաղաքական պայքարի վերելքներով ու վայրէջքներով հարուստ մի շրջան է:

1946 թ. ստեղծվեց պետական մի կազմավորում՝ Մեհաբադ կենտրոնով, որը հայտնի է Քրդական Ինքնավար Շրջան կամ Մեհաբադի Հանրապետություն անունով[1], որը, սակայն, ունեցավ կարճ

[1] Մեհաբադի Հանրապետության մասին մանրամասն տե՛ս Eagleton E., The Mehabad Republic, London, 1966:

կյանք, ընդամենը 11 ամիս: Դրանով հերթական ձախողման մատնվեց քրդական պետություն ստեղծելու փորձը:

1960-ական թվականներին Մոհամմադ Ռեզա շահ Փահլավիի կողմից իրականացված «Սպիտակ հեղափոխությունը» ակնառու փոփոխություններ չմտցրեց Իրանական Քրդստանում: Շահի պաշտոնական գաղափարախոսությունը խարսխված էր թունդ ազգայնականության գաղափարների վրա, որը տեղ չէր թողնում փոքրամասնությունների ազգային իրավունքների համար: Կառավարությունը շարունակում էր ցեղերի զինաթափման իր վաղեմի քաղաքականությունը, հակապետական շարժումների մեջ մեղադրվող ցեղերը և նրանց առաջնորդները ենթարկվում էին հալածանքների և այլն: Շահի կողմից Իրանի աշխարհիկացումը և նրա կողմից իսլամի բնորոշումը որպես հետադիմական ուժ՝ լրացուցիչ գործոն էին քրդական ցեղերի դժգոհության համար: Այդ բոլորի հետևանքով Իրանական Քրդստանը գտնվում էր ծայրահեղ լարված վիճակում:

1960-ական թվականներին շահական վարչակարգն ակտիվորեն աջակցում էր Իրաքի քրդերի զինված պայքարին ընդդեմ Բաղդադի վարչակարգի: Սակայն 1975 թ. Մոհամմադ Ռեզա շահը որոշեց հրաժարվել այդ աջակցությունից, և նույն թվականի մարտի 6-ին երկու երկրների միջև կնքվեց հարաբերությունների կարգավորման վերաբերյալ համաձայնագիր: 1975 թ. հունիսի 13-ին Բաղդադում ստորագրվեց նաև պետական սահմանների և բարիդրացիական հարաբերությունների վերաբերյալ համաձայնագիր: Վերջապես 1975 թ. Իրաքի հետ Ալժիրյան համաձայնագրի կնքումից հետո շահական վարչակարգն ուժեղացրեց իր բռնաճնշումները քրդերի նկատմամբ:

Իրանում քրդական ազգային շարժման նոր փուլը կապված է իսլամական հեղափոխության հետ[2]: Աստիճանաբար ողջ երկրում ծավալվող հակամիապետական ցույցերն ու հանրահավաքներն ընդգրկեցին նաև Իրանական Քրդստանը: Եթե մինչև 1978 թ. ամառը քրդական շրջաններում տեղի ունեցող հուզումները հիմնականում

---

[2] Տե՛ս Franjo Butorac, Irans revolution and the Kurds, Review of International Affairs, Belgrade, 1980, 20 April; Shaul Bakhash, The Reign of the Ayatollahs, London, 1985.

ուղղված էին սոցիալական ճնշման դեմ, ապա հետագայում դրանք ավելի հստակորեն սկսեցին ընդունել քաղաքական բնույթ[3]: Ուշագրավ է նշել, որ քրդական հակակառավարական շարժումը ծայր առավ ոչ թե բուն Իրանական Քրդստանում, այլ երկրի ծայր հյուսիս-արևելքում գտնվող Խորասան նահանգում, որտեղ, դեռևս XVII-XVIII դարերից սկսած, բնակություն էին հաստատել իսլամի շիա դավանանքին հետևորդ քրդական ցեղեր: Այնտեղ հուզումների սկիզբ հանդիսացավ 1978 թ. հուլիսին Խորասանի կենտրոն Մաշհադ քաղաքում տեղի ունեցած ցույցը, որը տարերայնորեն սկսվեց քրդական շարժման հայտնի գործիչ Ազիզ Յուսեֆի թաղումից հետո, որը քսանհինգ տարի անցկացրել էր բանտերում: Նրա թաղումը վերածվեց հզոր բողոքի ցույցի շահական վարչակարգի դեմ: Թեև իրանական գաղտնի ոստիկանությունը՝ ԱԱՎԱԿ-ը, եռանդուն միջոցառումներ ծավալեց՝ կանխելու համար հակակառավարական շարժումների տարածումը երկրի արևմտյան շրջաններում, այսինքն՝ բուն Իրանական Քրդստանում, սակայն դա նրան չհաջողվեց: Արդեն 1978 թ. օգոստոսին Սենեդեջում, Ռեզայեում և քրդաբնակ մյուս քաղաքներում տեղի ունեցան ցույցեր, որոնց մասնակիցները բողոքում էին ոչ միայն իրենց նյութական ու սոցիալական վիճակի վատթարացումից, այլև պահանջում էին տապալել շահական վարչակարգը[4]:

Երկրում ծայր առած հակամիապետական շարժման հետևանքով կառավարությունը որոշեց գնալ որոշ զիջումների: 1978 թ. օգոստոսին Իրանի վարչապետ Շարիֆ Իմամին հայտարարեց քաղաքական կուսակցությունների ազատ գործունեության արգելքը վերացնելու, ընտրովի կարգով քաղբանտարկյալներին ազատ արձակելու, ինչպես նաև վտարանդիության մեջ գտնվող ընդդիմադիր գործիչներին թույլատրելու, որ վերադառնան հայրենիք: Թվով 14 արգելված կուսակցություններ ու կազմակերպություններ Իրանում վերսկսեցին իրենց գործունեությունը: 1978 թ. վերջին արտասահմանից սկսեցին վերադառնալ նաև Իրանական Քրդստանի Ժողովրդավարական կուսակցության

---

[3] Gotlieb Y., Self Determinations in the Middle East, New York, 1982, p. 100.

[4] Nader Entessar, The Kurds in Post-Revolutionary Iran and Iraq. Third World Quarterly 6, no. 4, October 1984, p. 923.

(ԻՔԺԿ) անդամները, այդ թվում նաև՝ վտարանդիության մեջ գտնվող հիշյալ կուսակցության ղեկավար գործիչներից Աբդ ալ Ռահման Ղասեմլուն: Աշխուժացավ նաև մյուս քրդական կուսակցությունների ու կազմակերպությունների գործունեությունը, ստեղծվեցին նորերը: Արտասահմանից քուրդ ուսանողների վերադարձը ևս նոր մղում հաղորդեց բնակչության հեղափոխական եռանդին:

Այդ օրերին Փարիզի Նոֆլ-լե-Շաթո արվարձանում հաստատված այաթոլլա Խոմեյնին, որն այնտեղից ղեկավարում էր հեղափոխական շարժումներն Իրանում, հանդես եկավ քուրդ ժողովրդին ուղղված մի շարք հայտարարություններով և ուղերձներով, որոնցում շեշտում էր Իրանում բնակվող տարբեր ժողովուրդների դերը հեղափոխության հաղթանակի գործում: Բնականաբար այդ հայտարարությունները միտված էին ապահովելու քրդերի աջակցությունը շահական վարչակարգի տապալման գործում: Խոմեյնին դիմում էր նաև քրդերի կրոնական զգացումներին՝ կոչ անելով հանուն մեծ գործի դրսևորել իսլամական համերաշխություն Իրանում բնակվող բոլոր մուսուլմանական ժողովուրդների հետ: Հեղափոխության առաջնորդի այդ հայտարարություններն ու ուղերձները ոգևորությամբ ընդունվեցին իրանական քրդերի զգալի մասի կողմից, որոնք ենթադրեցին, որ հեղափոխության հետևանքով իշխանության եկած վարչակարգը կհրաժարվի շահական կառավարության վարած կենտրոնացման քաղաքականությունից և երկրի փոքրամասնություններին կտրամադրի ինքնավարություն[5]:

Սակայն Իրանական Քրդստանի ազդեցիկ կրոնական և քաղաքական գործիչների շրջանում առկա էին տարբեր մոտեցումներ հեղափոխության հետևանքով երկրում ստեղծվելիք պետական կարգի վերաբերյալ: Այսպես, եթե Սենենդեջ քաղաքից ազդեցիկ սուննի հոգևորական Ահմադ Մոֆթիզադեն կողմնակից էր իսլամական հանրապետության ստեղծմանը, ապա Մեհաբադից մեկ այլ ազդեցիկ քուրդ հոգևորական՝ շեյխ Էզադդին Հոսեյնին, աշխարհիկ պետության ջատագով էր[6]: Ինչ վերաբերում է ԻՔԺԿ ին, ապա նա առաջ էր քաշում

---

[5] Entessar N., Kurdish Ethnonationalism, London, 1984, p. 29.

[6] Phillips D. L., The Kurdish Spring. A New Map of the Middle East, New Brunwick and London, 2015, p. 89.

հետևյալ կարգախոսը. «Ժողովրդավարություն Իրանին, ինքնավարություն՝ Քրդստանին»[7]: Ընդ որում հիշյալ կուսակցության ղեկավարությունը երկրում հեղափոխական շարժման վերելքի շրջանում, օգտվելով կենտրոնական իշխանության թուլությունից, արդեն ձեռնամուխ էր եղել իր առաջադրած դրույթի գործնական իրականացմանը: Կուսակցության կողմից ղեկավարվող քրդական զինված ջոկատներն իրենց հսկողությունն էին հաստատել Իրանական Քրդստանի տարածքների զգալի մասի, այդ թվում նաև՝ խոշոր քաղաքների նկատմամբ: Այդ վայրերում իշխանությունն իրականացվում էր հեղափոխական խորհուրդների կողմից: Քրդերենով ձայնասփռվում էին ռադիոհաղորդումներ, որոնցում կոչ էր արվում պայքար մղել հանուն իրանական պետության շրջանակներում քրդերի ազգային ինքնավարության:

1979 թ. փետրվարի 1-ին (1357 թ. բահմանի 12-ին) 15-ամյա հարկադրական վտարանդիությունից հետո Րուհոլլա Մուսավի Խոմեյնին Փարիզից վերադարձավ Թեհրան: Նույն թվականի փետրվարի 12-ին Թեհրանի ռադիոն հայտարարեց հեղափոխության հաղթանակի և շահական վարչակարգի տապալման մասին:

Հեղափոխության հաղթանակի հետևանքով Իրանում գերագույն իշխանությունը փաստորեն անցավ շիայական կրոնաքաղաքական գործիչների ձեռքը: 1979 թ. մարտի 30-31-ին երկրում անցկացվեց հանրաքվե, որը հավանություն տվեց իսլամական հանրապետության ստեղծմանը: Ապրիլի 1-ին Իրանը հայտարարվեց իսլամական հանրապետություն: Օրակարգում դրվեց սահմանադրություն ընդունելու հարցը: 1979 թ. դեկտեմբերի 2-3-ին տեղի ունեցավ նոր հանրաքվե, որը հավանություն տվեց երկրի նոր սահմանադրությանը: Նրանում շարադրված դրույթները խոր հիասթափություն առաջ բերեցին քրդական ինքնավարության կողմնակիցների շրջանում: Դեռևս 1979 թ. մարտին ԻՔԺԿ-ի անդամներից և քրդական մի շարք ազդեցիկ կրոնական և աշխարհիկ գործիչներից կազմված մի պատվիրակություն մեկնել էր Ղում քաղաք՝ հանդիպելու այաթոլլա Խոմեյնիի հետ, նրան ներ

---

[7] McDowall D., A Modern History of the Kurds, I. B. Tauris, New York, 2013, p. 261.

կայացնելու քրդերին ինքնավարություն տրամադրելու պահանջը[8]: Այդ հանդիպման ժամանակ պարզվել էր, որ քրդական հարցում կողմերը գտնվում են տրամագծորեն միանգամայն հակառակ դիրքերի վրա: Խոմեյնին դավանում էր «մուսուլմանական ումմայի միասնության» տեսակետը, ըստ որի՝ բոլոր մուսուլմանները, անկախ իրենց ազգությունից, իսլամական միասնական համայնքի՝ ումմայի անդամ են և միմյանց հետ կապված են հոգևոր հարազատությամբ և ավանդույթներով[9]: Իմամն իր զրուցակիցներին հասկացրել էր, որ շիական գաղափարախոսությունը և օրենսդրությունը որպես կրոնական փոքրամասնություն ճանաչում են միայն քրիստոնյաներին, հուդայականներին և զրադաշտականներին: Այսպիսով, իսլամական պետության պաշտոնական սկզբունքը առաջնությունը տալիս էր կրոնական համայնքներին՝ հաշվի չառնելով ազգային-էթնիկական տարբերությունները, որը բնականաբար տեղ չէր թողնում ազգային փոքրամասնությունների ինքնավարության համար: Այլ կերպ ասած, Իրանի քուրդ, թյուրք, արաբ, թուրքմեն, բալուջ և մյուս իսլամադավան բնակչությունը հայտարարվում էր «իսլամական ազգի» բաղկացուցիչ մաս և ոչ թե ազգային փոքրամասնություն:

Այս բոլոր դրույթները տեղ էին գտել Իրանի Իսլամական Հանրապետության սահմանադրության մեջ: Այն ամբողջապես խարսխված էր նաև կառավարման իսլամական ձևի կամ «վելայաթ-ե ֆաղիհ» սկզբունքի վրա[10]: Դա նշանակում էր, որ Իրանում ժամանակակից իրավունքը ենթակա է կրոնական նորմերին, որ իրավունքի երեք հիմնական աղբյուրներից (կրոնական, սահմանադրական և աշխարհիկ օրենսդրության)՝ առաջնությունը պատկանում է իսլամական սկզբունքներին: Այլ կերպ ասած, վելայաթե-ֆաղիհը պետության մեջ ղեկավար դերը ամբողջապես հատկացնում էր շիա հոգևորականությանը: Սահմանադրության մեջ ֆարսի լեզուն և շիայական իսլամը հայտարարվում էին պաշտոնական լեզու և կրոն, իսկ արաբերենը հայտարարվում

---

[8] People without a Country. The Kurds and Kurdistan, London, 1980, p. 229.

[9] Menashri D., Khomeini's Policy toward Ethnic and Religious Minorities. In Milton J., Esman and Itamar Rabinovich etc., Ethnicity, Pluralism, and the State in the Middle East, Ithaca, New York, 1988, p. 217.

[10] Տե՛ս Բայբուրդյան Վ., Իրանն այսօր, Երևան, 1999, էջ 79:

էր Ղուրանի և կրոնի լեզու: Ժխտվում էր նաև առանձին ժողովուրդների ինքնավարության գաղափարն այն հիմնավորմամբ, որ պարսիկները, թյուրքերը, քրդերը, արաբները, բալուջները, թուրքմենները և Իրանի այլ իսլամադավան ժողովուրդներն օգտվում են հավասար իրավունքներից:

Քրդերը բոյկոտեցին նոր սահմանադրության հանրաքվեն և բուն սահմանադրությունը՝ առաջադրելով ինքնավարության պահանջ[11]: Շեյխ Էզադդին Հոսեյնին հանդես եկավ «վելայաթ-ե ֆաղիհի» խիստ քննադատությամբ՝ նշելով, որ այն հակաժողովրդական սկզբունք է և անհարիր է իսլամի հիմնարար սկզբունքների հետ, որ այն պետությունն ուղիղ ճանապարհով կտանի դեպի բռնատիրություն[12]: Այնուհետև մեկնաբանելով ինքնավարության համար Իրանի քրդերի մղած պայքարի իմաստը՝ Էզադդին Հոսեյնին անում էր հետևյալ հայտարարությունը. «Քրդերը ինքնավարության համար պայքարել են արդեն հիսուն տարի, նրանք ակտիվ մասնակցություն ցուցաբերեցին շահի դեմ մղվող պայքարին: Մենք անկախություն չենք պահանջում: Ինքնավարության և անջատողականության միջև մեծ տարբերություն կա: Մենք ցանկանում ենք կայուն կապեր ունենալ Իրանի կենտրոնական կառավարության հետ: Մենք ցանկանում ենք ապրել Իրանում»[13]:

Սակայն Իրանի շիայական քաղաքական վերնախավը գտնում էր, որ փոքր ժողովուրդների ինքնավարության գաղափարն ուղիղ «ճանապարհ է հարթում դեպի անջատողականություն»: Ուստի առաջ քաշվեց փոքր ժողովուրդներով բնակեցված շրջանների վարչական և մշակութային այսպես կոչված ինքնակառավարման սկզբունքը: Իրանի «փոքր ժողովուրդների» խնդիրներին անդրադառնալիս Խոմեյնին մշտապես օգտագործում էր հետևյալ կարգախոսը. «ինքնակառավարումը՝ այո, ինքնավարությունը՝ ոչ»:

1979 թ. մայիսին հրապարակվեց «Իրանի Իսլամական Հանրապետության ինքնակառավարվող շրջանների իրավունքներն ու պարտավորությունները» անունով կառավարության նախագիծը, որը

---

[11] McDowall D., նշվ. աշխ., էջ 263:

[12] Տե՛ս Middle East Report, no. 113, March-April, 1983, pp. 9-10.

[13] Տե՛ս Ezzedin Hussein's Interview in MERIP Reports, no. 113 (March-April 1983), pp. 9-10.

նախատեսում էր «ոչ պարսիկ բնակչություն ունեցող առանձին շրջանների ներքին ինքնակառավարում»: Ստեղծվելու էին կառավարման տեղական մարմիններ՝ նահանգային խորհուրդներ, որոնք կոչված էին «ապահովելու կարգն ու հանգստությունը, իրագործելու օրենսդրական գործառույթներ, զբաղվելու նահանգների զարգացման հարցերով»: Թույլատրվում էր տարրական դպրոցներում, բարձրագույն ուսումնական հաստատություններում ազգային լեզուների դասավանդումը, ինչպես նաև նրա օգտագործումը ռադիոյի և հեռուստատեսության հաղորդումների ժամանակ: Հասարակական գործունեության մնացած բոլոր բնագավառները պետք է գտնվեին կենտրոնական կառավարության հսկողության ներքո:

ԻՔԺԿ-ը և քրդական մյուս քաղաքական կազմակերպությունները կտրուկ մերժեցին քրդական հարցի լուծման նման տարբերակը: Ի դեպ, այդ նախագիծն այդպես էլ կյանքի չկոչվեց և մնաց թղթի վրա, քանի որ այն չընդունվեց նաև Իրանի այլ փոքր ժողովուրդների կողմից:

ԻՔԺԿ-ի ղեկավարությունը որոշեց երկրի նոր իշխանություններին ներկայացնել քրդական ինքնավարության պահանջի վերաբերյալ մի նախագիծ, որը բաղկացած էր երեք տարբերակներից[14]: Կառավարության իրավասությանն էր թողնվում այդ երեք տարբերակներից որևէ մեկին նախապատվություն տալու իրավունքը: Սակայն հիշյալ տարբերակներից երեքն էլ մերժվեցին Թեհրանի կողմից, քանի որ ինքնավարականների պահանջները չէին համապատասխանում նոր իշխանությունների սահմանած պետականաշինության իսլամական սկզբունքներին: Որպես դրա պատասխան՝ Իրանական Քրդստանում սկսվեցին հուզումներ, որոնք վերածվեցին զինված ելույթների: Իր հերթին Թեհրանի կրոնական-աստվածապետական վարչակարգն ուժեղացրեց իր հակաքրդական քաղաքականությունը՝ քրդերի դեմ կիրառելով ռազմաքաղաքական միջոցառումներ: Այդ օրերին ԻՔԺԿ կենտկոմի գլխավոր քարտուղար Ղասեմլուն Իրանական Քրդստանում տիրող վիճակը գնահատեց որպես «պայթյունավտանգ»[15]:

---

[14] "История Курдистана". Москва, 1999, стр. 412.

[15] «Այանդեգան» (պարսկ. լրագիր), 14.06.1979:

Կառավարությունը որոշեց դիմել վճռական գործողությունների: Քրդաբնակ շրջաններ ուղարկվեցին զորքեր, որոնք սկսեցին զինաթափ անել քրդական մարտական ջոկատներին, ցրել կառավարման տեղական մարմինները՝ դրանք համարելով անօրինական, և կատարել ձերբակալություններ[16]: Իրադրությունն էլ ավելի սրվեց քրդերի և ազերի թյուրքերի բախումների պատճառով, որի հետևանքով եղան զոհեր, և 12 հազար քուրդ ընտանիքներ դարձան տնազուրկ: Սրվեցին նաև շիա-սուննի կրոնական հակասությունները և փոխադարձ անհանդուրժողականությունն ու թշնամանքը[17]: ԻՔԺԿ-ի զինված ստորաբաժանումները (փեշմերգա) «Կոմալայի» (Քրդստանի աշխատավորության հեղափոխական կուսակցություն) ֆիդայիները, մոջահեդների աշխարհազորային ուժերն ուժգին դիմադրություն էին ցույց տալիս կառավարական զորքերին ու իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի ստորաբաժանումներին[18]:

Կողմերի միջև ընդհարումներն ընդգրկեցին Հյուսիս-արևմտյան Իրանի մի շարք խոշոր քաղաքներ՝ Մեհաբադը, Սենենդեջը, Բոքանը, Սերդեշտը, Ուրմիան, Քամյարանը և այլն: Մի քանի քաղաքներում (օրինակ՝ Մարիվանում) քրդական ջոկատները վտարեցին կառավարության կողմից նշանակված տեղական իշխանության մարմինը՝ Իսլամական հեղափոխության խորհուրդը, և իշխանությունը վերցրին իրենց ձեռքը[19]:

Այդ իրադարձություններն առաջ բերեցին Թեհրանի անհանգստությունն ու տագնապը, մանավանդ որ մտավախություն կար, որ Իրաքից և Թուրքիայից քրդական ռազմական ստորաբաժանումներ կարող են անցնել սահմանը և աջակցություն ցույց տալ իրենց եղբայրակիցների զինված պայքարին:

Սրված իրադրությունը հարթելու և երկրամասի կյանքը բնականոն հունի մեջ մտցնելու նպատակով 1979 թ. հուլիսի 25-ին Մարիվան ուղարկվեց կառավարական մի պատվիրակություն՝ Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի հրամանատար այաթոլլա

---

[16] «Քեյհան» (պարսկ. լրագիր), 09.12.1980:

[17] McDowall D., նշվ. աշխ., էջ 270:

[18] Տե՛ս Չամրան Մ., Քորդեսթան, Թեհրան, 1985, էջ 45-70 (պարսկ. լեզվ.):

[19] «Էթթելաաթ» (պարսկ. լրագիր), 19.07.1979:

Լահութիի գլխավորությամբ՝ քրդերի հետ բանակցություններ վարելու նպատակով: Սակայն կառավարությունն անընդունելի համարեց քրդերի ներկայացրած պահանջները, որից հետո իրադրությունն էլ ավելի սրվեց: Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի ստորաբաժանումները մուտք գործեցին Մարիվան և ձեռնամուխ եղան քուրդ ինքնավարականների ձերբակալություններին[20]:

Զինված պայքարի հետ միաժամանակ քրդերը սկսեցին լայնորեն օգտագործել նաև պայքարի խաղաղ մեթոդները: Օրինակ, ԻՔԺԿ-ի, «Կոմալայի» և մի շարք այլ կազմակերպությունների կոչով հուլիսի վերջին Սենենդեջ քաղաքում տեղի ունեցավ բազմամարդ բողոքի քայլարշավ կառավարության դեմ: Քայլարշավի մասնակիցները բողոքում էին քրդաբնակ շրջանները զորքեր մտցնելու դեմ, պահանջում էին ազատ արձակել ձերբակալվածներին և դադարեցնել հալածանքները:

1979 թ. օգոստոսին քուրդ վետերան-ազգայնական գործիչ Ռահիմ Սեյֆ Ղազին մեկնեց Թեհրան՝ ազդեցիկ բարձրաստիճան հոգևորականներից մեկի՝ այաթոլլա Թալեղանիի հետ զինադադարի վերաբերյալ բանակցություններ վարելու համար: Թեև կողմերը եկան որոշակի համաձայնության, սակայն Խոմեյնին չեղյալ համարեց այդ համաձայնությունը[21]: Կառավարական զորքերի և քուրդ ապստամբների միջև վերսկսվեցին կատաղի ռազմական գործողությունները, որոնք ընդգրկեցին համարյա ողջ Իրանական Քրդստանը, այդ թվում նաև՝ նրա խոշոր քաղաքներ Փավեն, Բանեն, Սաքքիզը, Միանդոաբը, Մարիվանը, Սենենդեջը և այլն: Օգոստոսի 19-ին Խոմեյնին ջիհադ՝ սրբազան պատերազմ հայտարարեց «քուրդ խռովարարների» դեմ՝ նրանց անվանելով «շայթանի զավակներ» և «Ալլահի թշնամիներ»[22]:

Ռազմական գործողությունների թեժ պահին՝ 1979 թ. օգոստոսի 26-ին, հինգ հոգուց բաղկացած քրդական մի պատվիրակություն՝ մոլլա Ռահիմ Աբբասիի գլխավորությամբ մեկնեց Թեհրան՝ մարտերը դադարեցնելու և կողմերի միջև խաղաղություն հաստատելու բա-

---

[20] «Էթթելաաթ», 25.07.1979:

[21] McDowall D., նշվ. աշխ., էջ 264:

[22] Phillips D. L., նշվ. աշխ., էջ 90:

նակցություններ վարելու նպատակով: Թեհրանում որպես բանակցող կողմ հանդես եկան այաթոլլա Թալեղանին, պաշտպանության նախարար Մուստաֆա Չամրանը և փոխվարչապետ Սադեղ Թաբաթաբային[23]: Սակայն բանակցությունները մտան փակուղի, որից հետո՝ 1979 թ. սեպտեմբերի սկզբին, կառավարական զորքերը, ժանդարմերիան, ոստիկանությունը, Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի ստորաբաժանումները վերստին վճռական հարձակում կազմակերպեցին քրդերի կողմից վերահսկողություն սահմանած շրջանների վրա: Ընդ որում օգտագործվում էր նաև ռազմական ավիացիա:

Չդիմանալով այդ խոշոր ուժերի ճնշմանը՝ ինքնավարական շարժման ղեկավարները, այդ թվում նաև՝ ԻՔԺԿ գլխավոր քարտուղար Աբդուլ Ռահման Ղասեմլուն, կրոնական-քաղաքական գործիչ Է. Հոսեյնին և այլ քրդական ղեկավարներ խոշոր կորուստներ կրած և ապստամբների նոսրացած ջոկատների հետ բարձրացան անմատչելի լեռները՝ պարտիզանական պատերազմը շարունակելու համար[24]: Է. Հոսեյնին սրբազան պատերազմ՝ ջիհադ հայտարարեց կենտրոնական կառավարության դեմ[25]: Փարիզի «Լիբերասիոն» թերթը հրապարակեց Ա. Ղասեմլուի հայտարարությունը, որտեղ ասվում էր. «Մենք պատրաստվում ենք երկարատև պատերազմի, ողջ Իրանական Քրդստանում պարտիզանական պատերազմի, մենք այն մղելու ենք մինչև հաղթական վախճանը, մինչև Քրդստանին ինքնավարություն տրամադրելը ժողովրդավարական Իրանի պայմաններում»[26]:

1979 թ. հոկտեմբերի 17-ին վարչապետ Մահդի Բազարգանի կառավարությունը Քրդստան ուղարկեց մի պատվիրակություն՝ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար, ազգությամբ քուրդ Դ. Ֆորուհարի գլխավորությամբ՝ ապստամբների հետ բանակցություններ վարելու նպատակով[27]:

---

[23] Sim R., Kurdistan: The Search for Recognition, Conflict Studies, 1980, N 124, November, p. 7.

[24] People without a Country, p. 230.

[25] Курдское движение в новое и новейшее время, Москва, 1987, стр. 249.

[26] "Le Riberation", 10.09.1979.

[27] Nader Entessar, The Kurds..., pp. 927-928.

Քրդստանում Ֆորուհարը երկու նվագով գաղտնի բանակցություններ վարեց շեյխ Է. Հոսեյնիի և քրդական ինքնավարական շարժման մյուս ներկայացուցիչների հետ: Իրանական մամուլի հաղորդման համաձայն՝ այդ բանակցություններին մասնակցում էր նաև իրաքցի քուրդ գործիչ, Քրդստանի հայրենակցական միություն կուսակցության նախագահ Ջալալ Թալաբանին[28]:

Բանակցությունների արդյունքները Ֆորուհարը ներկայացրեց վարչապետ Մ. Բազարգանին: Վերջինս իր կառավարության հինգ անդամների հետ մեկնեց Ղում քաղաքը, որտեղ հոկտեմբերի 21-ին տեղի ունեցավ հանդիպում Խոմեյնիի հետ: Հանդիպման ժամանակ իրանական կառավարության ղեկավարը իմամին հանձնեց քրդական ապստամբական և կրոնական այն գործիչների առաջարկները, որոնց հետ Ֆարուհարը վարել էր բանակցություններ[29]: Միաժամանակ վարչապետը իմամին ներկայացրեց քրդական հարցի կարգավորման մի նախագիծ, որը Խոմեյնիի կողմից համարվեց ընդունելի և հաստատվեց: Հիշյալ նախագծում առաջարկվում էր Իրանական Քրդստանում իրականացնել մի շարք սոցիալ-տնտեսական բնույթի միջոցառումներ և շարունակել քրդերի հետ սկսված բանակցությունները՝ «քրդական թնջուկին» վերջնական լուծում տալու համար: Նախագծում շեշտվում էր, որ քրդական հարցը ռազմական լուծում չունի, և կառավարությունը դեմ է զենքի ուժով նրա լուծման տարբերակին:

Սակայն չնայած առճակատող կողմերի միջև հարաբերությունների կարգավորման առաջընթացին՝ նախկինի պես նրանց միջև վստահության մթնոլորտը բացակայում էր, ուստի բանակցությունների հետևանքով հաստատված խախուտ զինադադարը երկուստեք պարբերաբար խախտվում էր: Քրդական կողմից առկա էին առանձին խմբեր, որոնք կամ դեմ էին կառավարության հետ բանակցություններ վարելուն, կամ տարված լինելով ռազմատենչ մղումներով, պահանջում էին զինված պայքարը շարունակել մինչև հաղթական ավարտը: Իրենց հերթին, Թեհրանից մի շարք քաղաքական և կրոնական գործիչներ թույլ էին տալիս կոշտ արտահայտություններ քուրդ ապստամբների

---

[28] «Բամդադ» (պարսկ. լրագիր), 17.10.1979:

[29] Nader Entessar, Kurdish Ethnonationalism, p. 37.

հասցեին: Նույնիսկ վարչապետ Մ. Բազարգանը, որը, ինչպես նշվեց, հարցի լուծման բանակցային ճանապարհի կողմնակից էր, թույլ տալով անզգուշություն, իր ելույթներից մեկի ժամանակ հայտարարեց, որ քրդերի պահանջն իրական ինքնավարությունը չէ, այլ պարզապես նրանք ցանկանում են անջատվել Իրանից[30]: Որպես այդ հայտարարության պատասխան՝ քրդական շարժման մի շարք ձախ կենտրոնամետ և ազգայնական ֆրակցիաների խմբավորումներ («Կոմալա», «Ռըզգարի» և այլն) իրենց սադրիչ ելույթներով ձգտում էին էլ ավելի բորբոքել թշնամանքը, ուժեղացնել ռազմական գործողությունների թափը և ձախողել բանակցությունները կենտրոնական կառավարության հետ[31]:

1980 թ. մարտին ԻՔԺԿ-ը նախագահ Աբուլ Հասան Բանիսադրի անունով ուղարկեց մի բաց նամակ, որտեղ կոչ էր արվում կրկին նստել բանակցությունների սեղանի շուրջը և քրդական հարցը լուծել խաղաղ ճանապարհով: Իր պատասխան նամակում, նշելով քրդերի առաջարկած մի շարք ընդունելի պայմանների մասին, նախագահը միաժամանակ ասում էր. «Եթե նրանք (քրդերը - Վ. Բ.) ցանկանում են ինքնավարություն Իրանի կազմում, ապա այն պետք է լինի Իսլամական Հանրապետության գաղափարական շրջանակներում: Նրանք պետք է մուսուլմաններ լինեն: Ինչպե՞ս մենք կարող ենք իսլամական հասարակության շրջանակներում ինքնավարություն տրամադրել նրանց, ովքեր իրենց պարտավոր չեն համարում ենթարկվել իսլամական օրենքին»[32]:

Միանգամայն ակնհայտ է, որ Իրանի Իսլամական Հանրապետության բարձրագույն ղեկավարության ներկայացուցիչները գտնում էին, որ անկախ կամ թեկուզ ինքնավար Քրդստանը վտանգ կարող է ներկայացնել Իրանի անվտանգության ու կայունության համար, և որ քրդական շրջաններում ինքնավար ինստիտուտների արմատավորումը անխուսափելիորեն ուղի կբացի դեպի անջատողականություն: Ուստի նախագահ Բանիսադրը կտրականապես մերժեց քրդերին ինքնա-

---

[30] McDowall D., նշվ. աշխ., էջ 269:
[31] Նույն տեղում, էջ 166:
[32] "История Курдистана". стр. 418.

վարություն տրամադրելու գաղափարը: Հաղորդելով այդ մասին՝ «Էթթելաաթ» պաշտոնաթերթն իր կողմից ավելացնում էր, որ քրդերը որպես մուսուլմաններ միասնական իսլամական համայնքի՝ ումմայի անդամներ են, հետևաբար՝ պետք է գտնվեն երկրի «մահմեդական ընտանիքի» մեջ[33]: Միանգամայն ակնհայտ է, որ ինքնավարության տակ Թեհրանը հասկանում էր մի բան, քրդերը՝ մեկ այլ բան: Թեհրանի համար ինքնավարությունը («խոդմոխթարի») իսլամական պետության շրջանակներում մուսուլմանական ումմայի մաս կազմող փոքրամասնություններին հատկացվող իրավունքներն էին, որոնք բխում էին Իսլամական Հանրապետության օրենքներից և գաղափարական սկզբունքներից: Մինչդեռ քրդերը ինքնավարությունը հասկանում էին ավելի լայն առումով, որն ըստ էության մոտ էր կես անկախությանը:

Այդ բոլորով հանդերձ իրանական ղեկավարությունը դեմ չէր, որ կենտրոնական կառավարությունը գնար որոշ զիջումների, և երկրի քրդաբնակ շրջաններում ապահովվեր ավելի լայն ապակենտրոնացում:

Թեհրանի հրաժարումը քրդերի կողմից առաջարկվող ինքնավարության պայմաններն ընդունելուց տարբեր մեկնաբանությունների արժանացավ ԻՔԺԿ ղեկավար մարմինների և շարքային անդամների կողմից: Նրանց միջև ծավալվեցին թեժ վեճեր, որոնք ի վերջո հանգեցրին կուսակցության պառակտմանը: Ա. Ղասեմլուի կողմնակիցները, որոնք սկզբնական շրջանում ենթադրում էին, որ ԻՔԺԿ-ը կարող է համագործակցել իսլամական կառավարության և իմամ Խոմեյնիի հետ, վերոհիշյալ իրողությունների ճնշման տակ փոխեցին իրենց տեսակետը՝ հանգելով այն գաղափարին, որ իսլամական վարչակարգի հետ համագործակցությունն անհեռանկար և անօգուտ է քրդական հարցի լուծման առումով: Ուստի Ղասեմլուն և նրա կողմնակիցները հրաժարվեցին կառավարության հետ համագործակցելու և իսլամական հեղափոխությանն աջակցելու գաղափարից՝ հակվելով զինված պայքարի ճանապարհով նպատակին հասնելու մտայնությանը:

Ղասեմլուի այդ տեսակետը կտրուկ առարկության արժանացավ ԻՔԺԿ մի քանի ազդեցիկ ներկայացուցիչների կողմից: Մասնավորա

---

[33] «Էթթելաաթ», 29.05.1980:

պես կուսակցության գլխավոր քարտուղարի տեղակալ Ղանի Բլուրիանը գտնում էր, որ Ղասեմլուի որդեգրած նոր մարտավարությունը քրդական հարցն ուղիղ ճանապարհով տանում է դեպի փակուղի: Հետևաբար՝ նա համարում էր, որ անհրաժեշտ է դրսևորել ճկունություն և որոնել դրությունից ելք գտնելու նոր ուղիներ: Նրա կարծիքով անհրաժեշտ է կոորդինացնել քրդերի պահանջները իսլամական վարչակարգի գաղափարական սկզբունքներին համապատասխանեցնելու առումով: Դա նշանակում էր, որ անհրաժեշտ է շարունակել երկխոսությունը կենտրոնական կառավարության հետ և չայրել դեպի Թեհրան տանող կամուրջները:

Քանի որ վիճող կողմերը չկարողացան գալ ընդհանուր հայտարարի, Ղ. Բլուրիանը և նրա գաղափարակիցները դուրս եկան ԻՔԺԿ-ի կազմից և ստեղծեցին իրենց քաղաքական նոր կազմակերպությունը, որը կոչվեց «Իրանական Քրդստանի ժողովրդավարական կուսակցություն - IV համագումարի հետևորդներ»:

Թեհրանը չհապաղեց օգտագործել քրդերի առաջատար կուսակցության մեջ տեղի ունեցած պառակտումը: 1980 թ. կեսերին կառավարությունը հրաման իջեցրեց ուժային կառույցներին ուժեղացնել ճնշումը քրդական շրջաններում: Բանակի, ոստիկանության և իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի ստորաբաժանումները սկսեցին լայնամասշտաբ համատեղ պատժիչ գործողություններ ծավալել քրդական զինված խմբավորումների դեմ: Գործնականում Իրանական Քրդստանի բոլոր խոշոր քաղաքներն անցան կառավարական ուժերի հսկողության տակ[34]:

1980 թ. սկսված իրան-իրաքյան պատերազմի ժամանակ Թեհրանը և Բաղդադը երկուստեք աշխատում էին քրդերին օգտագործել իրենց հակառակորդի դեմ: Սակայն միաժամանակ իրանական կառավարությունը շահագրգռված էր, որ Քրդստանում հաստատվի խաղաղություն, որը երաշխիք կհանդիսանար կայուն և անվտանգ թիկունք ապահովելու համար[35]: Այդ հանգամանքը գիտակցվում էր նաև քրդա-

---

[34] «Քեյհան», 03.07.1980:

[35] Gunter M. M., The Kurds: A Modern History, Princeton, New Jersey, 2016, p. 145.

կան ղեկավար գործիչների կողմից, որոնք ենթադրում էին, որ պատերազմը կարող է կառավարությանն ավելի զիջող դարձնել, մանավանդ որ նա շահագրգռված էր քրդական մարդկային ռեսուրսներն օգտագործելու հարցով: Ուստի շեյխ Է. Հուսեյնին կենտրոնական կառավարությանն առաջարկեց բանակցություններ սկսել՝ օրակարգում ունենալով քրդերին ինքնավարություն տրամադրելու հարցերը: Իրանական կառավարությունը տվեց իր համաձայնությունը, որից հետո սկսվեցին բանակցությունները: Դրանք, անցնելով երեք փուլ, շարունակվեցին մինչև 1980 թ. դեկտեմբեր ամիսը: Այդ ընթացքում Իրանական Քրդստանում սահմանվել էր զինադադար և ռազմական գործողությունները դադարեցվել էին: Սակայն ի սկզբանե այդ բանակցությունները դատապարտված էին ձախողման, քանի որ կողմերն անզիջում էին իրենց որդեգրած դիրքորոշումներից: Քրդերը պահանջում էին, որ իրենց ինքնավար կարգավիճակը հաստատագրվի իրանական սահմանադրության մեջ, ինքնավար շրջանն ընդգրկի Իլամ նահանգից մինչև Արևմտյան Ադրբեջան նահանգը հասնող տարածքները, որպեսզի Քրդստանի Ազգային ժողովի կազմը ընտրվի ազատորեն, փակ գաղտնի քվեարկությամբ, քրդերենը հռչակվի առաջնային լեզու Քրդստանի տարածքի դպրոցներում, ինչպես նաև պաշտոնական գրագրության մեջ, Իրանի պետական բյուջեի մի մասը հատկացվի Քրդստանին՝ հետամնաց շրջանները զարգացնելու համար, կենտրոնական կառավարության կազմ ընդգրկվեն նաև քրդեր: Ինչ վերաբերում է արտաքին քաղաքականությանը, ազգային անվտանգությանն ու պաշտպանությանը և տնտեսական պլանավորմանը, ապա դրանք պետք է պատկանեն կենտրոնական կառավարության իրավասությանը: Իրանի ամբողջ տարածքում պետք է տիրապետեն հիմնարար ժողովրդավարական սկզբունքները, և գործի խոսքի և կրոնական ազատության սկզբունքը[36]:

Այսպիսով, Թեհրանի համար պարզ դարձավ, որ քրդերի դիրքորոշումների մեջ էական փոփոխություններ տեղի չեն ունեցել: Իրենց հերթին քրդերը ևս համոզվեցին, որ իրանական կառավարությունը նախկինի պես հրաժարվում է բավարարել իրենց՝ Իրանի Իսլամական

---

[36] McDowall D., նշվ. աշխ., էջ 281:

Հանրապետության շրջանակներում քրդերի համար ազգային ինքնավարություն ստեղծելու պահանջը: Այդ բոլորի հետևանքը հանդիսացավ կողմերի միջև առճակատման սրումը: Թեհրանը հայտարարեց, որ քրդերի պահանջներն անընդունելի են, իսկ քրդերն իրենց հերթին հայտարարեցին, որ իրենք հրաժարվում են Իրան-իրաքյան պատերազմի ռազմական գործողություններին մասնակցելուց: Այսպիսով, խախուտ զինադադարը խախտվեց, և կողմերի միջև վերսկսվեցին թեժ ու արյունահեղ զինված ընդհարումները: Ընդ որում, քրդերը հիանալի տիրապետում էին լեռնային պարտիզանական պատերազմի մեթոդներին և կառավարական զորքերին ցույց էին տալիս հուժկու դիմադրություն՝ նրանց պատճառելով հսկայական զոհեր[37]:

Թեև և՛ Իրանը, և՛ Իրաքը իրենց սահմանամերձ գոտիներում ձեռնամուխ էին լինում անվտանգությունն ապահովող միջոցառումների ստեղծմանը, որպեսզի թույլ չտան Իրանի և Իրաքի քրդերի շփումները և բացառեն մեկը մյուսին ռազմական աջակցություն ցուցաբերելու հնարավորությունը, սակայն քրդերը հաշվի չէին նստում պետական սահմանների և այսպես կոչված «սանիտարական գոտիների» առկայության հետ[38]:

1982-1983 թթ. ընթացքում իրանական կառավարությանը հաջողվեց սահմանափակել քրդական զինված ջոկատների գործողությունները, սակայն միայն 1985 թ. վերջին կառավարական զորքերը կարողացան հետ գրավել քուրդ ապստամբների հսկողության տակ գտնվող տարածքները, օգտագործելով ռազմական ավիացիա: Քրդական ջոկատները ստիպված էին անցնել իրաքյան սահմանը և այնտեղից շարունակել պայքարը:

Ապստամբներից «մաքրված» շրջաններում իրանական իշխանություններն իրականացնում էին ոչ միայն անվտանգությունն ապահովող միջոցառումներ, այլև իսլամականացման քաղաքականություն: «Սրբազան ստեղծագործական պատերազմ» կազմակերպությունն Իրանական Քրդստանում տարածում էր իսլամական գրականություն,

---

[37] Kreyenbroek Ph. G., and Sperl S., The Kurds: A Contemporary Overview, London, 1992 (հղումը ըստ David L. Phillips, նշվ. աշխ., էջ 90).

[38] McDowall D., նշվ. աշխ., էջ 275:

դպրոցներում աշակերտներին ներշնչում էին իսլամական համերաշխության գաղափարներ և այլն: «Էթթելաաթ» թերթը, օրինակ, գրում էր, որ իրանական ժողովրդի համախմբվածության և միասնության համար երբեք լեզուն, մաշկի գույնը, ավանդույթները, մշակույթը, հոգևոր և հոգեբանական առանձնահատկությունները գործոն չեն հանդիսացել[39]: Հիշյալ թերթը ոգի ի բռին դատապարտում էր ազգային փոքրամասնությունների կողմից ազգայնական գաղափարներով տարվելը և ազգայնականությանը տուրք տալը՝ հատկապես շեշտելով, որ իսլամը և ազգայնականությունն իրարամերժ հասկացություններ են, որ իսլամական ումմայի բնորոշ հատկանիշը մուսուլմանական եղբայրակցությունն է, և որ ազգայնականությունը գաղութատիրության հնարքն է, որ այն ստեղծել են, որ բորբոքեն ազգայնական կրքերը, պառակտեն ու թշնամացնեն ժողովուրդներին: Սակայն Թեհրանը գիտակցում էր նաև, որ երկրամասը կարիք ունի նաև տնտեսական ու մշակութային միջոցառումների իրականացման, քրդական զանգվածների կյանքի պայմանների բարելավման և նմանատիպ այլ միջոցառումների, որպեսզի քրդերը դադարեցնեն զինված պայքարը և անցնեն խաղաղ կյանքի: Իրանական մամուլում զարգացվում էր այն միտքը, որ շահական վարչակարգի ժամանակ քրդերը ենթարկվել են դաժան շահագործման, տեղական իշխանությունների սանձարձակ հալածանքների ու բռնությունների, որ նրանց իրավունքները ոտնահարվել են և այլն: Ուստի երկրի նոր իշխանությունները լի են վճռականությամբ՝ Իրանական Քրդստանում իրականացնելու սոցիալ-տնտեսական բնույթի արմատական բարեփոխումներ, ազգամիջյան հարաբերությունները դնելու առողջ հիմքերի վրա և վերջապես հասնելու քրդական հարցի քաղաքական կարգավորմանը: Հատուկ ուշադրություն էր դարձվում նաև շիականության ու սուննիականության խնդիրների վրա՝ նկատի ունենալով, որ քրդական կողմը կառավարությանը մեղադրում էր Քրդստանում կրոնական այլամերժության և անհանդուրժողականության հրահրման մեջ:

Այդ բոլորի հետ միաժամանակ, ինչպես իրանական բարձրագույն ղեկավարության ներկայացուցիչները, այնպես էլ զանգվածային

---

[39] «Էթթելաաթ», 09.03.1984:

տեղեկատվության միջոցները նրբին ձևով, իսկ հաճախ նաև բացահայտ ու կոշտ, Իրանական Քրդստանում իրադրության անկայուն վիճակի պատասխանատվությունն ամբողջապես բարդում էին քուրդ ապստամբների վրա:

1980-ական թվականներին երկիրը լարել էր իր ուժերը Իրաքի դեմ ծանր ու հյուծիչ պատերազմը շարունակելու համար, որը ոչ միայն խլում էր հարյուր-հազարավոր մարդկային կյանքեր, այլև վիթխարի նյութական վնասներ էր պատճառում Իրանին: Իմամ Խոմեյնին դեմ էր պատերազմն ավարտելուն՝ պնդելով, որ այն պետք է շարունակել մինչև հաղթական ավարտը, որն իր կարծիքով հնարավորություն կտար պատժելու Իրաքի վարչակարգի ղեկավարությանը և անձամբ նախագահ Սադդամ Հուսեյնին, որին նա անվանում էր պատերազմի հանցագործ:

1989 թ. հունիսի 3-ին՝ Խոմեյնիի մահից հետո, կարծես թե հայտնվեցին որոշ հնարավորություններ՝ քրդական հարցի բնագավառում առաջխաղացում արձանագրելու համար: Սակայն հետագա իրադարձությունները եկան վկայելու, որ իրանական կառավարող շրջանները դեռ պատրաստ չեն քրդական հարցի կապակցությամբ ճեռնամուխ լինելու նոր նախաձեռնությունների: Ավելին, միանգամայն ակնհայտ դարձավ, որ իրանական կառավարող շրջաններում «ոչ մի զիջում քրդերին» սկզբունքի կողմնակից «բազեները» ունեն կարևորագույն դիրքեր: 1989 թ. հուլիսի 13-ին քրդերի հետ բանակցություններ վարելու քողի տակ իրանական հատուկ ծառայությունները Վիեննայում սպանեցին ԻՔԺԿ-ի գլխավոր քարտուղար Աբդ ալ Ռահման Ղասեմլուին և հիշյալ կուսակցության երկու այլ ղեկավար անձանց՝ Աբդուլլա Ղադերի-Ազարին և Մահմուդ Ֆադիլ Ռասուլին[40]: Դրանով իսկ բանակցային գործընթացը ձախողվեց: Իսկ 1992 թ. սեպտեմբերի 17-ին իրանական հատուկ ծառայությունները Բեռլինում կազմակերպեցին ԻՔԺԿ-ի նոր գլխավոր քարտուղար Սադեղ Շարաֆքանդիի և նրա մի քանի գինակիցների սպանությունը[41]: Վերջիններս Բեռլին էին

---

[40] «Քեյհան», 28.07.1989; Entessar, Kurdish Ethnonationalism, p. 42.

[41] Kinzer Stephen, Iran Kurdish Leader among 4 Killed in Berlin, "The New York Times", 18 Sept. 1992. Web. 23 July 2014,

մեկնել՝ Սոցիալիստական Ինտերնացիոնալի կոնգրեսին մասնակցելու համար: 1990-ական թվականներին քրդական գործիչների քաղաքական սպանություններն ունեցան իրենց շարունակությունը: Ըստ արևմըտյան աղբյուրների հաղորդած տեղեկությունների՝ Կիպրոսի Լարնաքա քաղաքում ահաբեկչության ենթարկվեց «Կոմալայի» առաջնորդը: Քաղաքական սպանությունների թիրախ դարձավ նաև Արևմտյան Իրանը, որտեղ 1996 թ. դեկտեմբերին սպանվեց հայտնի սուննի հոգևորական, Քերմանշահի Ալ-Շաֆեի մզկիթի իմամ (աղոթքի ղեկավար) մոլլա Մոհամմադ Ռաբիեյին[42]:

Վկայակոչելով իր անդամների և համակիրների նկատմամբ քաղաքական սպանությունները՝ «Կոմալայի» զինյալներն ակտիվացրին իրենց ռազմական գործողություններն իրանական վարչակարգի դեմ: Սակայն ԻՔԺԿ-ի և «Կոմալան» ունեին բավականին լուրջ ներկուսակցական խնդիրներ, որոնց պատճառով նրանք նշանակալիորեն թուլացան: Այդ երկու կուսակցություններն ի վիճակի չեղան նաև իրենց կուսակցական գաղափարների շուրջ համախմբելու Իրանական Քրդստանի քուրդ բնակչության մեծամասնությանը: Հիշյալ երկու կուսակցությունների միջև առաջնություն ձեռք բերելու պայքարը և նրանց ղեկավարների անձնական փառասիրական հակումները հաճախ հանգեցնում էին նրանց միջև ընդհարումների և նույնիսկ զինված բախումների: Եվ թեև 1996 թ. «Կոմալայի» և ԻՔԺԿ-ի միջև հաստատվեց զինադադար[43], սակայն դրանից հետո ևս նրանց թաքնված և բացահայտ առճակատումը շարունակվում էր՝ թուլացնելով նրանց երկուսին էլ:

Քրդական այդ երկու կուսակցությունների ղեկավարները, չնայած միմյանց միջև գոյություն ունեցող տարաձայնություններին, համաձայնության եկան քրդական հարցին օժանդակելու խնդրանքով դիմել ԱՄՆ-ին: 2006 թ. մայիսին ԻՔԺԿ ի առաջնորդ Մուստաֆա Հիջրին և «Կոմալայի» ղեկավար Աբդուլլա Մոհդադին Վաշինգտոնում հանդիպե

---

http://www.nytimes.com/1992/09world/Iran Kurdish leader among 4 killed in berlin.html (հղումը ըստ Phillips D. L., նշվ. աշխ., էջ 91):

[42] Russel Jesse, Iranian Kurdistan, S. I. Book on Demand, 2013, Web. Phillips D. L., նշվ. աշխ., էջ 91:

[43] Phillips D. L., նշվ. աշխ., էջ 91:

ցին ամերիկյան բարձրաստիճան պաշտոնյաների հետ՝ փորձելով ստանալ ԱՄՆ-ի օգնությունը, սակայն այդ բանակցություններն արդյունք չտվեցին:

1997 թ. մայիսին քրդերը գոհունակությամբ ընդունեցին Մոհամմադ Խաթամիի ընտրությունը ԻԻՀ նախագահի պաշտոնում: Վերջինս քրդական հարցում որդեգրեց որոշ ազատականացման քաղաքականություն աշխատելով հնարավորինս թուլացնել իրանական կառավարության և քրդերի միջև տարիներով շարունակվող լարվածությունը: Խաթամին, օրինակ, Աբդուլլա Ռամազանզադեին (շիա քուրդ) նշանակեց Իրանական Քրդստանի գեներալ-նահանգապետ: Վերջինս քրդերի շրջանում շիա-սուննի հակամարտությունն ինչ-որ չափով մեղմելու համար իրեն ենթակա նահանգապետության վարչական մարմիններում մի շարք սուննի քրդերի նշանակեց բարձր պաշտոնների: Խաթամիի նախաձեռնությամբ իրանական խորհրդարանում՝ մեջլիսում, ձևավորվեց խորհրդարանական քրդական խմբավորում, որի անդամներն ընտրված էին Քրդստան և Քերմանշահ նահանգներից: Այնուհետև Սենենդեջ քաղաքի համալսարանում բացվեց քրդերենի լեզվի ուսումնասիրության բաժին և այլն[44]:

Սակայն ԻԻՀ հաջորդ նախագահության թեկնածու Մահմուդ Ահմադինեժադը, դեռևս իր նախընտրական քարոզարշավի ժամանակ անդրադառնալով Իրանում քրդական հարցին, կոշտ արտահայտություններ թույլ տվեց քրդերի և նրանց առաջատար կուսակցությունների հասցեին: Ուստի քրդերը բոյկոտեցին Ահմադինեժադին և՛ 2005 թ. հունիսին, և՛ 2009 թ. հուլիսին տեղի ունեցած նախագահական ընտրություններում[45]:

XXI դարի հենց արշալույսին Իրանում քրդական շարժման մեջ նկատվեցին նոր տեղաշարժեր: Նախ՝ 2005 թ. «Ժողովրդավարություն Իրանին, ինքնավարություն Քրդստանին» կարգախոսը փոխարինվեց «Քրդերին ազգային իրավունքներ ժողովրդավարական և դաշնային Իրանի շրջանակներում» կարգախոսով: Դա անշուշտ վկայում էր այն մասին, որ քրդական քաղաքական միտքը շարունակում է քրդական

---

[44] Նույն տեղում, էջ 91, 92:

[45] Gunter M. M., նշվ. աշխ., էջ 145-146:

հարցի լուծման որոնումները տարածաշրջանում ստեղծված նոր իրողությունների համատեքստում:

Երկրորդ կարևոր իրադարձությունը 2004 թ. մարտին «Փարթի ժիյանի Ազադի Քուրդիստան» (ՓԺԱՔ) (Քրդստանի ազատ կյանքի կուսակցություն) կուսակցության ստեղծումն էր, որը կարճ ժամանակամիջոցի ընթացքում դարձավ ազդեցիկ քաղաքական ուժ: Նրա ծրագրային կարևորագույն դրույթն էր Իրանում աստվածապետության տապալումն ու ժողովրդավարական արժեքների հիմքի վրա դաշնային Իրանի ստեղծումը: Թեև ՓԺԱՔ-ի առաջնորդ Ռահման Հաջի Ահմադը պնդում էր, թե այդ կուսակցությունն անկախ կառույց է, սակայն որոշ ուսումնասիրողների և վերլուծաբանների կարծիքով այն «փակ» շփումների մեջ է Թուրքիայում գործող Քրդական աշխատավորական կուսակցության հետ՝ հանդիսանալով նրա քույր կազմակերպությունը[46]: ՓԺԱՔ-ը ՔԱԿ-ի հետ համատեղ հենակետեր է ստեղծել Արևմտյան Իրանում, Թուրքիայի սահմանամերձ Քանդիլի լեռների շրջաններում: ՓԺԱՔ-ը և ՔԱԿ-ը անդամակցում են այսպես կոչված Քրդստանի Համայնքների Խմբին, որը պանքրդական մի կազմակերպություն է, որը ներգրավում է Թուրքիայի, Իրանի, Իրաքի և Սիրիայի քրդերին:

ՔԱԿ-ԲԺԱՔ օրգանական գաղափարական և քաղաքական կապի ցայտուն վկայությունն է ՓԺԱՔ-ի զինյալների մասնակցությունը Թուրքիայի հարավարևելյան շրջաններում Քրդական աշխատավորական կուսակցության կազմակերպած օպերատիվ գործողություններին:

Հյուսիսային Իրաքում ՓԺԱՔ-ն ունի 3000 զինյալ, զորակայաններ, ինչպես նաև հազարավոր համախոհներ, որոնք ընդհատակյա գործունեություն են ծավալում Իրանում՝ ձգտելով իրանական քրդերի մեջ ձևավորել միասնական ազգային ինքնագիտակցություն: Ռազմական գործողությունների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսավորումն ապահովում են Եվրոպայի քրդական համայնքները: Որոշ տվյալներով ՓԺԱՔ ին զենք, զինամթերք ու ֆինանսավորում են տրամադրում նաև ԱՄՆ ը և Իսրայելը: Ներկայումս, սակայն, Վաշինգտոնը

---

[46] Նույն տեղում, էջ 147:

ՓԺԱՔ-ը ներառել է ահաբեկչական կազմակերպությունների թվում՝ սառեցնելով նրա ֆինանսական հաշիվները:

ՓԺԱՔ-ը կողմնակից է Իրանի աստվածապետական համակարգը ժողովրդավարական դաշնային համակարգով փոխարինելուն, ինչպես նաև պաշտպանում է ոչ միայն քրդերին, այլև Իրանի ազերիներին, բալուջներին և արաբներին բարձր կարգի ինքնավարություն տրամադրելու գաղափարը: Այդ կուսակցության մեջ կանայք ևս խաղում են կարևոր դեր, և ըստ որոշ տվյալների՝ նրա կազմում գտնվող երեք հազար զինյալներից 45 տոկոսը կանայք են[47]: ՓԺԱՔ-ը ներտորեն համագործակցում է «Կոմա գիվաքեն Քրդստան» և «Քրդստանի համայնքների միություն» կազմակերպությունների, ինչպես նաև մի շարք այլ կազմավորումների հետ, ինչպիսիք են, օրինակ, Արևելյան (իրանական) Քրդստանի կանանց միությունը, Արևելյան Քրդստանի երիտասարդական միությունը, ժողովրդավարական մամուլի միությունը և այլն:

Հարկ է նշել, որ ՓԺԱՔ-ի ազդեցությունը հետզհետե աճում է՝ դուրս գալով նաև Իրանի սահմաններից և տարածվելով հատկապես Իրաքի և Սիրիայի քրդերի վրա:

Ինչպես անցյալում, այնպես էլ ներկայումս քրդական հարցի խոցելի կողմն այն է, որ քրդերի մոտ առ այսօր գերիշխում է ցեղային և աշիրեթային մտածողությունը, որի անխուսափելի հետևանքն է դառնում նրանց մոտ միասնության բացակայությունը: Նրանց մոտ չկա նաև ընդհանուր ազգային հանրությանը պատկանելու գիտակցությունը: Որպես այդ բոլորի հետևանք՝ Իրանում քրդերի քաղաքական շարժմանն ընդհանուր առմամբ բնորոշ է միաբանության բացակայությունը: Քրդական հասարակության ղեկավարների՝ աշիրեթապետերի, շեյխերի, քաղաքական կուսակցությունների առաջնորդների միջև գաղափարների և գործողությունների միասնությունը բացակայում է: Որպես կանոն նրանք հանդես են գալիս միմյանց հակասող քաղաքական դիրքորոշումներով ու նպատակներով, առաջնորդվում են զուտ անձնական շահերով, իրենց սեփական հեղինակությունն ու դիրքերն ապահովելու գերակշիռ հակումներով: Իրանում քրդական

---

[47] Նույն տեղում:

շարժման բնորոշ առանձնահատկությունն այն է, որ եթե քուրդ կուսակցական գործիչների հիմնական նպատակները սահմանափակվում են միասնական ազգային ինքնագիտակցության ձևավորման և Իրանի կազմում ինքնավարության ստեղծման շրջանակներում, ապա ցեղապետ-աշիրեթապետերը, ցեղային համադաշնությունների առաջնորդները ձգտում են լիակատար անկախության: ԻՔԺԿ-ը, «Կոմալան» և ՓԺԱՔ-ը իրենց ծրագրերը մշակել են արևմտյան քաղաքական մշակույթի հենքի վրա, մինչդեռ երկրամասում իրական իշխանություն և ցեղերի վրա մեծ ազդեցություն ունեցող ցեղապետերը և շեյխերը ոչ միայն պատրաստ չեն համախմբվելու կուսակցությունների առաջադրած գաղափարների շուրջ, այլև հաճախ հանդես են գալիս դրանց դեմ: Կարելի է նույնիսկ անվարան ասել, որ գոյություն ունի անջրպետ քրդական ցեղային և կուսակցական վերնախավերի միջև:

Իրանական իշխանությունների կողմից քրդական կուսակցությունները դիտվում են որպես անջատողական, որոնց գործունեությունը կարող է հանգեցնել ոչ միայն երկրի ապակայունացմանը, այլև մասնատմանը: Թեհրանին առանձնակի մտահոգություն է պատճառել այն իրողությունը, որ 2006 թ. մարտին Էրբիլում ստեղծվեց Արևելյան Քրդստանի միացյալ ճակատ անունով մի կազմակերպություն, որի կազմի մեջ մտան ԻՔԺԿ-ը, Իրանական Քրդստանի Պայքարի կազմակերպում և Քրդստանի Հեղափոխական դաշինք կազմակերպությունները, որոնք ունեն սեփական զինված կազմավորումները, և նրանց զինյալներն Իրաքից թափանցում են Իրանական Քրդստանի տարածք՝ նրա ներքին քաղաքական իրադրությունն ապակայունացնելու նպատակով[48]:

Ներկայումս Իրանի իշխանությունները որդեգրել են քրդերի հետ բացահայտ բախումներից խուսափելու ուղեգիծ: Կառավարության կողմից Քրդստանում իրականացվում են որոշ սահմանափակ բնույթի սոցիալ-տնտեսական բարեփոխումներ, կառուցվում են ճանապարհներ, ստեղծվում են աշխատատեղեր և այլն: ԻԻՀ նախագահ Հասան Ռոուհանին Իրանի քրդաբնակ տարածաշրջանում աշխատում է իրա

---

[48] Жигалина О. И. "Курды и иранский ядерный кризис". http://www.inetcommerce.ru/news59965.html.

կանացնել որոշ ազատականացման քաղաքականություն: Նա անդրադարձել է երկրի փոքրամասնությունների հարցին՝ մասնավորապես շեշտելով դպրոցներում քրդերենի դասավանդման անհրաժեշտությունը[49]:

Դրանով հանդերձ, անհրաժեշտության դեպքում իրանական իշխանությունները չեն խորշում նաև կտրուկ միջոցառումներից:

Կասկածից վեր է, որ Իրանի Իսլամական Հանրապետության քրդական քաղաքականությունը որոշակիորեն տարբերվում է Թուրքիայի վարած քաղաքականությունից, որտեղ այն բնորոշվում է իր կոշտ ու անհաշտ բնույթով: Իրանում քրդերենով իրականացվում են ռադիո և հեռուստատեսային հաղորդումներ, առկա են որոշ հնարավորություններ քրդերենով հրատարակությունների համար և այլն: Այդ բոլորը, սակայն, ունի խստիվ որոշված սահմաններ, որը քրդերին թույլ չի տալիս հայտնվել քաղաքական-իրավական դաշտում՝ որպես առանձին էթնոս:

Ներկայումս Իրանական Քրդստանը շարունակում է մնալ Իրանի Իսլամական Հանրապետության ամենաթույլ զարգացած շրջաններից մեկը: Շիական աստվածապետության պայմաններում որոշակիորեն սահմանափակվում են նաև իսլամի սուննիական ուղղության հետևորդ քրդերի իրավունքները: Համարվելով ընդհանուր իսլամական համայնքի՝ ումմայի անդամ՝ նրանք իրանական խորհրդարանում՝ մեջլիսում, չունեն նպատակայնորեն հատկացված տեղեր: Սուննի քրդերը չունեն նաև մզկիթներ: 1993 թ. Քրդստանի վարչատարածքային միավորի կենտրոնում՝ Սենենդեջ քաղաքում, կառուցվող սուննիական մզկիթը ոչնչացվեց շիա մոլեռանդների ձեռքով:

Իրանի Իսլամական Հանրապետության դիրքորոշումն Իրաքյան Քրդստանի ինքնավար շրջանի անկախացման հարցում բացասական է, քանի որ այն դիտվում է որպես իսրայելա-ամերիկյան նախագիծ: Բացի դրանից, Թեհրանի կարծիքով քրդական պետության ստեղծումը

---

[49] Abdullah Mohtadi. "The Case of Iranian Kurds: Under Rouhani Government Kurds Continue to Suffer", Kurdish Policy Foundation, October 2, 2014http://kurdishpolicy.org/2014/10/02the-case-of-iranian-kurds-under-rouhani..., accessed April 4, 2015 (հղումը ըստ Michael M. Gunter, նշվ. աշխ., էջ 149).

կակտիվացնի Իրանի քրդերին: Առհասարակ Իրանի, Թուրքիայի, Իրաքի և Սիրիայի կառավարող շրջանները մշտապես համատեղ ջանքեր են գործադրում քրդական ազգայնականությանը հակազդելու ուղղությամբ, որպեսզի այն շփումներ չունենա իրենց երկրների քուրդ քաղաքական ընդդիմության հետ: Թեհրանը նաև մտավախություն ունի, որ քրդական գործոնը կարող է գործողության մեջ դրվել իր հնարավոր հակառակորդների կողմից:

Թեև Իրանում քրդերն առայժմ լուրջ զինված ելույթներ չեն ունենում, սակայն սովորաբար նրանց համեմատում են անթեղված կրակի հետ, որն ամեն վայրկյան կարող է բռնկվել:

Ներկայումս իրանական քրդերի ակտիվ քաղաքական կուսակցությունների մեծ մասը գտնվում է արտասահմանում, քանի որ, ԻԻՀ սահմանադրության համաձայն, այդ երկրում արգելված է քաղաքական կուսակցությունների գործունեությունը: ԻԻՀ կառավարության և արտասահմանում գտնվող քրդական կուսակցությունների միջև բանակցությունների բազմաթիվ փորձերը հայրենիք վերադառնալու վերաբերյալ ավարտվել են ձախողմամբ: Վտարանդիության մեջ գտնվող Իրանի քրդական կուսակցությունների ներկայացուցիչները կառավարության հետ բանակցությունների ժամանակ դնում են հետևյալ նախապայմանը. իրենք կվերադառնան հայրենիք միայն այն դեպքում, եթե ճանաչվեն և գործողության մեջ դրվեն քուրդ ժողովրդի իրավունքները:

BAYBURDYAN VAHAN

DEVELOPMENTS OF THE KURDISH QUESTION IN THE ISLAMIC REPUBLIC OF IRAN

After the 1979 Islamic revolution in Iran, the leaders of the Kurdish parties and organizations that had been in exile during the shah regime, returned to their motherland. One of the influential Kurdish parties, the Democratic Party of Iranian Kurdistan brought forth the following slogan: "Democracy to Iran, autonomy to Kurdistan". But this demand for autonomy was rejected by the Islamic regime and its leader

Imam Khomeini with the argumentation that the idea of autonomy for small nations paved the way for separatism and segregation of Iran. Thus, the government brought forward the principle of the administrative and cultural so-called self-management of the regions populated by small nations. This was rejected by the Kurds and other small nations living in Iran. The negotiations between the Islamic regime and different Kurdish political forces brought no result and the confrontation between the two parties sometimes turned into armed clashes.

During the 1980-1988 Iran-Iraq war the Iranian government wanted peace in the Iranian Kurdistan as this would guarantee a stable and secure rear under conditions of war.

The article shows that there is no unity between the leaders of Kurdish society, they have quite different views concerning the needs of the Kurdish people and as a rule they represent political positions and objectives contradicting each other.

Presently the Iranian authorities have adopted a policy of avoiding apparent clashes with the Kurds. The government makes social and economic reforms in the regions populated by Kurds, they build roads, create jobs, etc. Hassan Rouhani, the president of the Islamic Republic of Iran tries to demonstrate a policy of some liberalization in the Kurdish regions.

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ

«ԹՅՈՒՐՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ» ԳՈՐԾՈՆԸ ԻՐԱՆԻ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (1991-2016 ԹԹ.)

Խորհրդային Միության փլուզումից ու Հարավային Կովկասում երեք հանրապետությունների անկախության հռչակումից հետո տարածաշրջանում ստեղծված ռազմաքաղաքական նոր իրավիճակով պայմանավորված, Ադրբեջանը որպես շիական-թյուրքախոս երկիր, հայտնվեց Հարավային Կովկասում Թուրքիայի և Իրանի ծավալած մրցապայքարի առանցքում: Հետխորհրդային նորանկախ հանրապետությունների ձևավորմանը զուգընթաց թյուրքական գործոնը դարձավ հարավկովկասյան տարածաշրջանում և Կենտրոնական Ասիայում Թուրքիայի կողմից Իրանի Իսլամական Հանրապետության ազդեցությունը սահմանափակելու միջոցներից մեկը: Պանթյուրքիզմի գաղափարախոսության արդիականացված խմբագրությունները ԽՍՀՄ-ի փլուզումից հետո արդեն լայն տարածում էին ստացել Թուրքիայի իշխող վերնախավում: 1992 թ. Սուլեյման Դեմիրելը, զբաղեցնելով Թուրքիայի վարչապետի պաշտոնը, ազդարարեց «Թյուրքական աշխարհի» ծնունդը[1]:

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Իրանը փորձեց, պատմական, մշակութային և կրոնական ընդհանրություններն օգտագործելով, իր ներկայությունն ապահովել Ադրբեջանում, սակայն, ինչպես 1918-1920 թթ. Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության, այնպես էլ 1991 թ. Ադրբեջանի Հանրապետության քաղաքական էլիտայի որոշումների կայացման վրա նշանակալի ազդեցություն էր գործել «թյուրքականության» գործոնը: Նորանկախ Ադրբեջանը, որդեգրելով ընդգծված թուրքամետ դիրքորոշում և որպես զարգացման ուղի ընտրելով կառավարման «աշխարհիկ-թյուրքական մոդելը», մերժեց իսլամական կառավարման «իրանական մոդելը»՝ այն համարելով որպես սպառ-

[1] Սաֆրաստյան Ռ., Թուրքիայի քաղաքականությունը սեպտեմբերի 11-ի ողբերգությունից հետո (2001 թ.), Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, Երևան, 2007, էջ 90:

նալիք՝ ուղղված իր պետական շահերին[2]:

Ի տարբերություն Թուրքիայի՝ Իրանը փոքր ինչ ուշ ճանաչեց Ադրբեջանի անկախությունը: Բաքվի և Թեհրանի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման առաջին շրջափուլում, մասնավորապես Ադրբեջանի նախագահ Այազ Մութալիբովի (1991-1992 թթ.) պաշտոնավարման շրջանում Բաքվի և Թեհրանի հարաբերությունները բնականոն զարգացում ապրեցին, սակայն Աբուլֆազ Էլչիբեյի (1992-1993 թթ.) ղեկավարման օրոք երկկողմ հարաբերություններում արդեն ձևավորվել էր փոխադարձ անվստահության մթնոլորտ: Ա. Էլչիբեյի ղեկավարած «Ժողովրդական ճակատ» կուսակցության որդեգրած ազգայնական-պանթյուրքիստական գաղափարախոսության հիմքում ընկած էր այսպես կոչված «Հյուսիսային Ադրբեջանի» և «Հարավային Ադրբեջանի» (Իրանի Ատրպատական նահանգը) միավորումը «Մեծ Ադրբեջանի» կազմում[3]:

Հակառակ ադրբեջանցիների պնդման՝ «Բրիտանիկա» հեղինակավոր հանրագիտարանը նշում է, որ Իրանական Ատրպատականը սահմանակից է թալիշների երկրին, այսինքն՝ «Ադրբեջանի» ու «ադրբեջանցիների» մասին որևէ հիշատակություն չկա: Ավելին՝ Ատրպատականի բնակիչների թվում նշվում է թյուրքերի, հայերի, պարսիկների ու քրդերի գոյության մասին, բայց ոչ ադրբեջանցիների[4]:

Թյուրքական-ազգայնական գաղափարներն ադրբեջանցիների շրջանում արդեն իսկ լայն տարածում էին ստացել ԽՍՀՄ-ի գոյության

---

[2] كريم ز ده محمد. بررسي تطبيقي روابط تركيه و ايران با جمهوري آذربايجان، فصلنامه " تحقيقات سياسي و بين المللي"، تهران 1390، شماره 7، ص. 266: *(Քարիմզադե Մոհամմադ, Իրանի և Թուրքիայի մրցակցային քաղաքականությունն Ադրբեջանի նկատմամբ, «Միջազգային և քաղաքական հետազոտություններ» գիտական հոդվածների ժողովածու, Թեհրան, 2011, հատոր 7, էջ 266):*

[3] مهدی میری: رزیابی روابط ایران و جمهوری آذربایجان در قرن بیستم، مجلس و پژوهش، تهران 1385، شماره 53، صفحه 252-251: *(Մեհդի Ամիրի, Իրան Ադրբեջան հարաբերությունների գնահատումը 20 րդ դ., «Մաջլես վա Փաժուհեշ», Թեհրան, 2006, պրակ 53, էջ 251, 252):*

[4] Նահապետյան Հ., Քանի՞ տարեկան է ադրբեջանցի ժողովուրդը. կրկին ափշերոնյան մահմեդականների ինքնության շուրջ, «21-րդ դար», Երևան, 2014, թիվ 6 (58), էջ 66:

վերջին տարիներին: «Թյուրքականության» գաղափարներով ոգևորված՝ «Ժողճակատի» համակիրների մասնակցությամբ 1990 թ. հունվարի սկզբին Իրանի սահմանին արձանագրվել էին մի քանի լուրջ միջադեպեր, որոնք ուղղակիորեն սպառնում էին Իրանի տարածքային ամբողջականությանը: Նրանց հիմնական պահանջն այսպես կոչված «Հյուսիսային Ադրբեջանի» և «Հարավային Ադրբեջանի» միավորումն էր[5]:

Իրանի նկատմամբ Ադրբեջանի վարած քաղաքականության հիմնական թիրախներն Իրանի հյուսիսային՝ Արևմտյան Ատրպատական (*3 մլն բնակիչ*), Արևելյան Ատրպատական (*3.5 մլն բնակիչ*) և Արդաբիլ (*մինչև 1 մլն բնակիչ*) նահանգների թյուրքախոս բնակչությունը և նշված նահանգների թյուրքախոս այն ընդդիմադիր քաղաքական գործիչներն են, որոնք տարբեր պատճառներով քաղաքական ապաստան են ստացել Թուրքիայում, Ադրբեջանում և Եվրոպայում:

Ադրբեջանի կողմից «թյուրքականության» գործոնի շահարկումն ուղիղ համեմատական է Իրանի հետ այդ երկրի ունեցած հարաբերություններին: Այս համատեքստում 1993 թ. ԱՀ նախագահ Էլչիբեյը, «Turkish Times» պարբերականին տված հարցազրույցում, կասկածի տակ դնելով Իրանի տարածքային ամբողջականությունը, համոզմունք էր հայտնել, որ քրդերը, բելուջները, արաբները, ֆարսերն ու թուրքերն ԻԻՀ տարածքում իրենց անկախ պետությունները կձևավորեն[6]:

Պայմանականորեն 1991-1993 թթ. կարելի է համարել «թյուրքականության» ձևավորման շրջան, 1993-2003 թթ.՝ տարածման, իսկ արդեն 2003-2016 թթ. այն դարձավ Իրանի վրա ճնշում գործադրելու արդյունավետ գործիքներից մեկը:

Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևի (1993-2003 թթ.) պաշտոնավարման ընթացքում Բաքուն վերանայեց Թեհրանի նկատմամբ նախորդ իշխանությունների վարած հակաիրանական քաղաքականությունը: «Թյուրքականության» գործոնը բացահայտ շահարկելու փոխարեն Ադրբեջանի նոր իշխանությունները Թուրքիայի աջակցությամբ

---

[5] Բայբուրդյան Վ., Իրան Ադրբեջան. հարևաննե՞ր թե՞ աշխարհաքաղաքական ու աշխարհատնտեսական ախոյաններ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Երևան, 2003, XXII, էջ 10:

[6] Նույն տեղում:

ձեռնամուխ եղան Իրանում թյուրքական-ազգայնական վերահսկելի խմբավորումների ձևավորմանը, որոնց գործողությունները համակարգում էր Թեհրանում Ադրբեջանի դեսպանությունը[7]:

Նշված կառույցներից հատկապես աչքի են ընկնում «Հարավային Ադրբեջանի ազգային-ազատագրության ճակատ» (GAMAC) կազմակերպությունը, «Gunaz.tv» խոշոր մեդիա կազմակերպությունը, «Աշխարհի ադրբեջանցիների կոնգրեսը» (ԱԱԿ), որոնց կենտրոնակայանները գտնվում են Բաքվում: Այս կառույցների հիմնական առաքելությունն է, թյուրքախոս ատրպատականցիների շրջանում լեզվական հակասություններ առաջացնելով, այսպես կոչված «Պատմական Ադրբեջանն» անջատել Իրանից: Այդ նպատակով «թյուրքականության» գաղափարախոսությունն ամրակայվեց նաև Ադրբեջանի Հանրապետության գիտակրթական քաղաքականության մեջ: Մասնավորապես այդ երկրի դպրոցական դասագրքերում Իրանի հյուսիսային թյուրքախոս, այդ թվում և քրդաբնակ նահանգները ներկայացվում են որպես թյուրքական «Մեծ Ադրբեջանի» մաս[8]:

Պետք է նշել, որ թուրք-ադրբեջանական համատեղ գործողությունները, Միացյալ Նահանգների տարածաշրջանային քաղաքականությամբ պայմանավորված, վերջին տասնամյակում պարբերաբար ստացել են նաև Վաշինգտոնի աջակցությունը[9]:

ԱՀ նախագահ Իլհամ Ալիևի պաշտոնավարման երկրորդ շրջանում, երբ Իրան-Ադրբեջան հարաբերությունները հասան լարվածության գագաթնակետին, «թյուրքականությունը» ընտրվեց որպես Իրանի վրա ճնշում գործադրելու ազդեցիկ գործիք, և Ադրբեջանի

---

[7] حسین حمدی، جمهوری آذربایجان (23 سال تکاپو برای دولت و ملت سازی)، تهران 1394، صفحه 352-354.

(Սիամադի Հոսեյն, Ադրբեջանի Հանրապետություն, 23 տարվա փնտրտուք ազգ և պետություն ստեղծելու համար, Թեհրան, 2015, էջ 352 354):

[8] احمدی حسین ، بررسی کتاب های درسی جمهوری آذربایجان، فصلنامه فرهنگی پیمان، تهران 1391، شماره 59، ص. 54-56.

(Սիամադի Հոսեյն, Ադրբեջանի դպրոցական դասագրքերի ուսումնասիրությունը, «Պայման», Թեհրան, 2012, հ. 59, էջ 54-56):

[9] Olson R., The «Azeri» Question and Turkey-Iran relations, 2000-2002, Nationalism and Ethnic Politics, University of Kentucky, 2007, p. 67.

իշխանությունները սկսեցին ավելի ագրեսիվ քաղաքականություն վարել: Արտերկրից հեռարձակվող հեռուստաալիքների, ռադիոյի, տարատեսակ կայքերի ու սոցիալական ցանցերի միջոցով ատրպատականցիների շրջանում «թյուրքականության» ակտիվ քարոզչություն էր իրականացվում, և Իրանում թյուրքախոսներին առնչվող յուրաքանչյուր միջադեպ Բաքվի կողմից անարձագանք չէր մնում: Ավելին՝ Ադրբեջանի կողմից շահարկվում էր նաև Իրանի բարձրաստիճան պաշտոնյաների՝ թյուրքախոս և ծագումով Ատրպատականից լինելու հանգամանքը. շատ հաճախ նրանց հայտարարություններն ու գործողություններն ադրբեջանական քարոզչությունը ներկայացնում էր միանգամայն այլ տեսանկյունից[10]:

2006 թ. մայիսի 12-ին Իրանի հեղինակավոր և ամենաշատ տպաքանակ ունեցող պարբերականներից մեկը՝ «Իրան» օրաթերթը, մի ծաղրանկար հրապարակեց, որը թյուրքախոս ատրպատականցիներն ընկալեցին որպես վիրավորանք՝ ուղղված իրենց էթնիկական պատկանելությանը[11]: Այս առնչությամբ ամեն տարի մայիսին Իրանի թյուրքախոս նահանգներում բողոքի ցույցեր են կազմակերպվում, որոնք քարոզչական դաշտում աջակցություն են ստանում նաև Ադրբեջանից[12]:

Նման մի միջադեպ էլ արձանագրվել էր 2015 թ. նոյեմբերին, երբ Իրանի պետական հեռուստատեսությամբ հեռարձակվող հաղորդումներից մեկի ժամանակ ատրպատականցիների արժանապատվությունը վիրավորող դրվագներ էին ցուցադրվել, ինչը ոչ միայն հարուցել էր Իրանի թյուրքախոս բնակչության, այլև Իրանի Մեջլիսի՝ Ատրպատականից ընտրված պատգամավորների զայրույթը ու հանգեցրել

---

[10] Аятолла Хаменеи заговорил на азербайджанском языке
https://haqqin.az/oldage/63661

[11] بازداشت طراح کاریکاتور جنجالی و توقیف روزنامه ایران
(«Իրան» օրաթերթի գործունեության կասեցումն ու ծաղրանկարի հեղինակների ձերբակալումը)
http://www.bbc.com/persian/iran/story/2006/05/060523_mf_cartoon.shtml

[12] Пикет в Баку перед посольством Ирана
https://www.radioazadlyg.org/a/24183708.html

բազմահազարանոց ցույցերի[13]: Ադրբեջանի խորհրդարանի պատգամավորներն ու ադրբեջանական առաջատար լրատվամիջոցներն ակտիվորեն արձագանքել էին միջադեպին՝ իրենց հրապարակումներում առկա ձևակերպումներով ավելի սրելով իրավիճակը[14]:

Ադրբեջանի նախագահը, 2006 թ. ընտրվելով ԱԱԿ-ի համակարգող խորհրդի նախագահ, փաստացի Բաքվի հակաիրանական քաղաքականության իրականացման գործառույթը վերցրեց իր անմիջական վերահսկողության ներքո[15]:

2013 թ. Ադրբեջանն Իրանի մշակութային-պատմական արժեքների դեմ մի նոր արշավ սկսեց: Ադրբեջանի մշակույթի նախարարության որոշմամբ պարսից դասական գրականության մեծագույն բանաստեղծներից մեկի՝ Նիզամի Գյանջևիի գերեզմանի պատերին ամրացված պարսկերեն բանաստեղծությունների զարդաքանդակները քանդվեցին՝ փոխարինվելով թյուրքերեն տարբերակով: Ադրբեջանի այդ քայլն արժանացավ Իրանի ԱԳ և մշակույթի նախարարությունների խիստ քննադատությանը[16]:

2010-2013 թթ., երբ Իրան-Ադրբեջան հարաբերությունները գտնվում էին լարվածության գագաթնակետին, Ադրբեջանի խորհրդարանում մի խումբ պատգամավորների կողմից շրջանառության մեջ դրվեց մի առաջարկություն, որը նախատեսում էր երկիրը վերանվանել «Հյուսիսային Ադրբեջան», այն պատճառաբանությամբ, թե «*Թուրքմենչայի պայմանագրի կնքումից հետո Ադրբեջանը կիսվել է երկու մասի, իսկ «Հարավային Ադրբեջանը» մնացել է Արաքսի մյուս կողմում*՝

---

[13] واکنش نمایندگان آذربایجان به اهانت برنامه "فیتیله"

(Ադրպատրականի պատգամավորների արձագանքը՝ «Ֆիթիլե» հաղորդման վիրավորանքին)

http://www.isna.ir/news/94081710052/

[14] К протестам азербайджанцев присоединились и другие народы Ирана

https://haqqin.az/news/56871

[15] Состав координационного совета азербайджанцев мира

http://azertag.az/ru/xeber/645191

[16] نظامی امیر تحریف ها، روزنامه "کار و کارگر"، 2013 سپتامبر، شماره 6452، ص. 8:

(Նիզամին՝ զեղծարարությունների մասին, «Քար ո քարգար» օրաթերթ, 2013 թ. սեպտեմբեր, թիվ 6452, էջ 8):

Իրանի տարածքում»[17]:

Անջատողականության սպառնալիքին դիմագրավելու համար, Իրանի կողմից իրականացվող կանխարգելիչ միջոցառումների շրջանակներում, Ադրբեջանի հետ ընդհանուր ցամաքային սահմանը փոքրացնելու նպատակով, դեռ 1994 թ. ԻԻՀ Արևելյան Ատրպատական նահանգի տարածքում Արդաբիլ անվամբ նոր նահանգ էր կազմավորվել[18]:

Տարիներ շարունակ Ադրբեջանն ու Թուրքիան, Իրանի թյուրքախոս ատրպատականցիների (ազարիներ) մայրենի լեզվի հարցը շահարկելով, յուրաքանչյուր պատեհ առիթն օգտագործում են՝ բարձրաձայնելով, թե Իրանում բնակվող «25 միլիոն ադրբեջանցիները» (նկատի ունենալով թյուրքախոս բնակչությանը) զրկված են իրենց մայրենի լեզվով կրթություն ստանալու իրավունքից[19]:

Այս առումով «թյուրքականությունն» իր ազդեցությունն է գործել ոչ միայն Թավրիզի, Ուրմիայի և թյուրքախոս այլ քաղաքների բնակչության վրա, այլ դրա ազդեցությունը վերջին տարիներին նկատելի է նաև բարձրաստիճան պաշտոնյաների դիրքորոշումներում:

Մասնավորապես 2016 թ. հունիսին Թավրիզի «Tractor Sazi» ֆուտբոլային ակումբը ՀՀ ֆուտբոլի ազգային հավաքականի պաշտպան Վարազդատ Հարոյանի հետ երկու տարվա պայմանագիր էր կնքել, սակայն կարճ ժամանակ անց ակումբի ղեկավար Մոսթաֆա Աջորլուն հայտարարություն էր տարածել՝ նշելով, որ հրաժարվում է հայազգի ֆուտբոլիստի հետ գործարքից: Նա իր որոշումը բացատրել էր նրանով, թե «*եկել է Թավրիզ, որպեսզի միավորի թյուրքախոս ազարիներին, իսկ Հայաստանի ազգային հավաքականի ֆուտբոլիստի*

---

[17] Տե՛ս Азербайджан или Северный Азербайджан?
http://echo.az/article.php?aid=19047

[18] گزارش مرکز پژوهشها از نقش نمایندگان آذربایجان قبل از انقلاب
(Մեջլիսի հետազոտական կենտրոնի զեկույցը Ատրպատականի պատգամավորների՝ հեղափոխությունից առաջ ունեցած դերակատարության մասին):
http://rc.majlis.ir/fa/news/print_version/764661

[19] Протесты азербайджанцев в Иране набирают оборот
http://www.echo.az/article.php?aid=91899

հետ գործարքը կարող է սպառնալ Իրանի թյուրքախոս բնակչության միասնությանը»[20]:

Ատրպատականում տարածում ստացած «թյուրքականության» ալիքը թուլացնելու նպատակով վերջին տարիներին « **آذربایجان تُرک نیست، تُرک زبان است**» (*Ատրպատականը թյուրք չէ, թյուրքախոս է*) անվամբ շարժում է սկսվել, որի շրջանակներում կազմակերպվել են գիտաժողովներ, տպագրվել գրքեր, գործարկվել կայքեր և այլն[21]: Այդ շարժմանն իրենց աջակցությունն են ցուցաբերել նաև ԻԻՀ Մեջլիսի թյուրքախոս մի շարք պատգամավորներ:

2013 թ. նախագահ ընտրվելուց անմիջապես հետո Հասան Ռոուհանիի կառավարությունն էթնիկական խմբերի ու կրոնական փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությանն առնչվող շոշափելի բարեփոխումներ է իրականացրել[22], որոնց շրջանակներում Իրանի կառավարությունը Թավրիզի համալսարանում «թյուրքերեն լեզու և գրականություն» առարկան դասավանդելու մասին որոշում է կայացրել, իսկ 2015 թ. մայիսին Հասան Ռոուհանիի մասնակցությամբ Թավրիզում բացվել է «Ատրպատականի արվեստի և մշակույթի հիմնադրամի» շենքը:

Բացի դրանից՝ ԻԻՀ հեռուստառադիոընկերության կայացրած որոշման համաձայն, 2015 թ. մայիսից իրանական «Սահար» հեռուստաալիքը հեռարձակվում է նաև ատրպատականյան թյուրքերենով, որը հասկանալի է նաև Ադրբեջանի Հանրապետության բնակչության շրջանում: Այսպիսով, Իրանի իշխանություններին մի կողմից հաջողվել է լուծել թյուրքախոս ատրպատականցիների լեզվի՝ անպաշտպան լինելու շուրջ արհեստականորեն ստեղծված խնդիրը, իսկ մյուս կողմից

---

[20] **نگاه سیاسی و نژادپرستانه در یک انتقال فوتبالی**
(Քաղաքական և ռասիստական մոտեցում ֆուտբոլային գործարքին)
http://www.isna.ir/news/95031711255/

[21] کیامهر فیروزی، آذربایجان ترک نیست، ترک زبان است، تهران 1387، ص. 124:
(Քիամեհր Ֆիրուզի, Ատրպատականը թյուրք չէ, թյուրքախոս է, Թեհրան, 1999, էջ 124):

[22] President Rouhani in a statement while unveiling and signing Charter on Citizens' Rights
http://www.president.ir/en/96863

ԻԻՀ-ն հնարավորություն է ստացել Ադրբեջանի հասարակության շրջանում մեծացնելու կրոնական մշակութային ազդեցությունը:

Ամփոփելով կարող ենք նշել, որ, վերջին տասնամյակում Ատրպատականում տեղի ունեցած զարգացումներով պայմանավորված, «թյուրքականության» գործոնի սպառնալիքը զգալիորեն աճել է, և Իրանի քաղաքական էլիտայի մոտ առկա է այն գիտակցումը, որ Ադրբեջանի իշխանությունների՝ պատմությունը կեղծելու, նպատակաուղղված հակաիրանական քաղաքականություն վարելու արդյունքում այդ երկրում մեծանում է մի սերունդ, որը տարիներ անց Իրանը ու իրանցիներին կդիտի որպես թշնամիների:

Հետևաբար՝ ԻԻՀ ռազմաքաղաքական ղեկավարությունը հակադրություններից խուսափելու նպատակով, Իրանի թյուրքախոս բնակչության պահանջները բավարարելու հարցում վերոնշյալ քայլերն է իրականացրել՝ փաստացի Ադրբեջանին զրկելով Ատրպատականի թյուրքախոս բնակչության լեզվի հարցը շահարկելու հնարավորությունից:

ISRAYELYAN ARMEN

"TURKISM" FACTOR IN IRAN-AZERBAIJAN RELATIONS (1991-2016)

In the current article, we studied the impact of the "Turkism" factor on Iran-Azerbaijan relations after the USSR collapse.

Conditionally, we can consider that "Turkism" was formed in 1991-1993, and it began to spread in 1993-2003. In 2003-2016, "Turkism" became one of the effective instruments of putting pressure on Iran.

During Abulfaz Elchibey's presidency (1992-1993) in Azerbaijan, Baku's actions were a direct threat to Iran's territorial integrity.

During Heydar Aliyev's presidency (1993 2003), instead of openly speculating on "Turkism" factor, Azerbaijan's new authorities began to form turkic nationalistic groups with Turkey's help.

During the second phase of Ilham Aliyev's presidency, "Turkism" became one of the most effective instruments of putting pressure on Iran, and the Azerbaijani authorities adopted a more aggressive policy.

In the last decade, due to developments in Atropatene *(the provinces of East Azerbaijan and West Azerbaijan),* the threat of the "Turkism" factor has significantly increased.

The government of Hassan Rouhani, the current president of the Islamic Republic of Iran, has made a number of reforms in order to satisfy the needs of Iran's Turkic-speaking population and to prevent contrasts. Therefore, he in fact deprived Azerbaijan of the opportunity to speculate "Turkism" question.

ՄԻՆԱՍՅԱՆ ՆԵԼԼԻ

ՆՈՐ ՀԱՄԱԹՅՈՒՐՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ (ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ)

1980-ական թթ. վերջին - 1990-ական թթ. սկզբին Թուրքիայի արտաքին քաղաքականության ակտիվացումը պայմանավորված էր Խորհրդային Միության փլուզման գործընթացով, երբ միութենական հանրապետությունները, այդ թվում՝ թյուրքական, հայտարարեցին իրենց անկախության մասին: Այս փաստերը ենթադրում էին որոշակի ձևակերպումներ Թուրքիայի արտաքին քաղաքական գաղափարախոսության մեջ: Մասնավորապես խոսքը վերաբերում է պանթյուրքական գաղափարների կերպափոխությանը, դրանց նորովի ներկայացմանը և մեկնաբանմանը: Նոր համաթյուրքականության գաղափարները մեր դիտարկմամբ Թուրքիայի ղեկավարությունը փորձում էր ներկայացնել երեք հարթություններում և երեք փոխկապակցված հա-
մակարգերով.

1. ներկայացվում էր հոգևոր-մշակութային կերպով,
2. նպատակ ուներ դարձնել քաղաքական համակարգի բաղկացուցիչ մաս,
3. դարձնել թյուրք-իսլամական համադրության թյուրքական բաղադրիչի հիմքը:

Նոր համաթյուրքականության գաղափարները քարոզվում և ներկայացվում են պետական մակարդակով, ուստի դրանք տեղ են գբաղեցնում Թուրքիայի քաղաքական համակարգում, մասնավորապես դրանց դրսևորումները նկատելի են կուսակցությունների ծրագրերում ու գործողություններում:

Խորհրդային Միության փլուզման ժամանակաշրջանում Թուրքիայի Հանրապետության նախագահն էր Թուրգութ Օզալը, որը ներկայացնում էր «Մայր հայրենիք» կուսակցությունը (Anavatan Partisi): Քաղաքական համակարգում առաջատար դիրքերում էր գտնվում նաև «Ճշմարիտ ուղի» կուսակցությունը (Doğru Yol Partisi), որի ղեկավար Սուլեյման Դեմիրելը զբաղեցնում էր վարչապետի պաշտոնը: Այս երկու

քաղաքական գործիչները մեծ ոգևորությամբ ընդունեցին թյուրքական պետությունների անկախությունը, նրանք առաջինն էին, որ բարձրաձայնեցին պանթյուրքական գաղափարների մասին, խոսեցին նոր հնարավորությունների ու թյուրքական աշխարհի ծննդի մասին և փորձեցին նոր լիցքեր հաղորդել այդ գաղափարներին: Ուստի թյուրքական պետությունների նկատմամբ մշակվող քաղաքականության առաջին դրսևորումները նկատվեցին «Մայր հայրենիք» և «Ճշմարիտ ուղի» (ՃՈՒԿ) կուսակցությունների ծրագրերում: Այսպես՝ «Մայր հայրենիք» կուսակցության՝ 1991 թ. ընտրական ծրագրում ներկայացված է հետևյալը. «Արմատական փոփոխությունների գործընթացում գտնվող մեր մեծ հարևանը պատրաստվում է «ինքնիշխան պետությունների կամավոր միության», որի ստեղծման որոշումն արդեն կայացվել է: Ինչպես այս մտացածին միությունը, այնպես էլ Ադրբեջանը և մեզ հետ հատուկ մշակութային կապերի մեջ գտնվող մյուս հանրապետությունները, հատկապես ժողովուրդները, ազատ կամքով և օրինական միջոցներին համապատասխան, նշված միությանը մասնակցելուց բացի, ցանկության դեպքում կարող են բոլոր պետությունների հետ բարեկամության և համագործակցության հարաբերություններ հաստատել»[1]: Այս մեջբերումից ակնհայտ է, որ Թուրքիան հետաքրքրված էր ոչ միայն թյուրքական պետություններով, այլև Ռուսաստանի կազմում գտնվող ինքնավար հանրապետություններով:

Սուլեյման Դեմիրելը տարվել էր թյուրքական աշխարհի ստեղծման տեսլականով և փորձում էր կյանքի կոչել համաթյուրքական նախագծեր, ինչպես օրինակ՝ միասնական այբուբենի հարցը, ընդհանուր հոգևոր-մշակութային միջավայրի ձևավորումը և այլն: Այս շրջանում Թուրքիան սկսեց ակտիվ գործունեություն իրականացնել թյուրքական երկրներում, որը ներառում էր քաղաքական, տնտեսական ու մշակութային ոլորտները: Հիմնադրվեցին մի շարք պետական (Թյուրքական համագործակցության և զարգացման գործակալություն -TIKA, Թյուրքական մշակույթի և արվեստի համընդհանուր կառավարում TÜRKSOY և այլն) ու ոչ պետական կազմակերպություններ (Թյուրքական աշխարհի հետազոտությունների ֆոնդը և

[1] Anavatan Partisi Seçim Beyannamesi, 20 Ekim 1991, s. 93-94.

այլն), որոնք ունեին մի կողմից մշակութային բնույթ, այդ թվում ուշադրություն էր դարձվում կրթությանը, մյուս կողմից հետապնդում էին քաղաքական նպատակներ[2]: Նոր համաթյուրքականության գաղափարներն առավել արտահայտվեցին թյուրքալեզու երկրների գագաթնաժողովներում, որոնց միջոցով Թուրքիան փորձում էր հասնել թյուրքական աշխարհի միավորմանը: Որոշ թուրք հետազոտողների կարծիքով 1992 թ. Անկարայի գագաթնաժողովով պաշտոնապես ծնվեց թյուրքական աշխարհը[3], որն առաջին հերթին այսպես էր կոչվում մշակութային առումով: Հարկավոր է նշել, որ Ս. Դեմիրելի ղեկավարության շրջանում «Ճշմարիտ ուղի» կուսակցության հեղինակությունն աճեց, և 1991 թ. հոկտեմբերի 20-ի ընտրություններում ՃՈՒԿ-ը հավաքեց 27 % ձայն և համապատասխանաբար խորհրդարանում ստացավ 178 տեղ: Ս. Դեմիրելը Սոցիալ-ժողովրդավարական ժողովրդական կուսակցության հետ կազմեց կոալիցիոն կառավարություն և դարձավ վարչապետ: 1993 թ.՝ Թուրգութ Օզալի մահից հետո, Սուլեյման Դեմիրելը ստանձնեց նախագահի պաշտոնը մինչև 2000 թ.: «Ճշմարիտ ուղի» կուսակցության ծրագրի արտաքին քաղաքականության հատվածում հետևյալ ձևակերպումն է. «Կենտրոնական Ասիայում գտնվող թյուրքական հանրապետությունների, Բալկանների և Կովկասի հետ հարաբերությունների բացը արագորեն կարգավորվելու է, այս երկրներում, ինչպես անցյալում, ստանձնելու ենք մեծ եղբոր դերը»[4]: Մեր կարծիքով Ս. Դեմիրելի վարչապետության, ապա նախագահության շրջանում նոր համաթյուրքականության գաղափարները դարձան քաղաքական համակարգի մաս և երկրի արտաքին քաղաքականության տեսլականի բաղկացուցիչը:

1990-ական թթ. կեսերից հետո իսլամական գործոնը դարձյալ ակտիվացավ Թուրքիայում: Այս շրջանում ակտիվ էր «Բարօրություն» կուսակցությունը (ԲԿ, Refah Partisi)[5], և նրա 1991 թ. ընտրական

---

[2] Մինասյան Ն., Թուրքիայի քաղաքականությունը Կենտրոնական Ասիայում (1991-2007 թթ.), Երևան, 2013, էջ 141-154:

[3] Bal Idris, Turkey's Relation with the West and Turkic Republics. Rise and Fall of the Turkish Model, England, 2000, p. 81.

[4] Doğru Yol Partisi, Parti Programi, http://www.dyp.com.tr/ (25.06.2017).

[5] Բարօրություն կուսակցությունը հիմնադրվել էր 1983 թ. հուլիսի 19-ին Ալի

ծրագրում նշվում է Ռուսաստանի կազմում գտնվող մուսուլման թյուրքական երկրների նկատմամբ ցուցաբերած հետաքրքրությունների մասին[6]: ԲԿ-ն 1995 թ. ընտրություններում հավաքեց 21,4 % ձայն, ստացավ 158 պատգամավորական տեղ և կոալիցիա կազմեց ՃՈւԿ-ի հետ, որը ստացել էր 19,2 % ձայն և 135 մանդատ[7]: Կուսակցության ծրագրում տեղ էր գտել նաև իսլամական երկրների հետ հարաբերությունները բարելավելու մասին կետը[8]: Այսինքն՝ այս շրջանում կուսակցության ծրագրում հիմնական շեշտը դրվում էր մուսուլմանական երկրների վրա, և թյուրքական երկրներն առանձնացված չէին: Մեր կարծիքով նրանք մուսուլմանական երկրների մեջ ներառում էին նաև թյուրքական երկրներին, ուստի և չէին առանձնացրել: Իսկ կոալիցիայի մաս կազմող ՃՈւԿ-ն ուներ հստակ վերաբերմունք թյուրքական երկրների նկատմամբ: Հետևաբար, կարող ենք ասել, որ ինչ-որ տեղ զուգորդվում են այս երկու կուսակցությունների ծրագրային դրույթները: 1998 թ. հունվարի 16-ին Սահմանադրական դատարանն արգելեց ԲԿ-ի գործունեությունը, իսկ նրա ղեկավարներին, այդ թվում՝ Նեջմեթին Էրբաքանին, արգելվեց հինգ տարով զբաղվել քաղաքականությամբ[9]:

«Բարօրություն» կուսակցության ժառանգորդը դարձավ «Առաքինություն» կուսակցությունը (ԱԿ, Fazilet Partisi): ԱԿ-ի զարգացման ծրագրում հետևյալ ձևակերպումն է. «Հեռավոր Արևելքում (հավանա-

---

Թյուրքմենի կողմից: 1987 թ. հանրաքվեից հետո Նեջմեթին Էրբաքանը և նրա կողմնակիցներն անդամագրվում են կուսակցությանը և շուտով այն վերցնում իրենց վերահսկողության տակ: M. Hakan Yavuz, Political Islam and the Welfare (Refah) Party in Turkey, Comparative Politics, Vol. 30, No 1, October 1997, p. 72.

[6] Refah Partisi Seçim Beyannamesi, 20 Ekim 1991 Genel Seçimi, Ankara, 1991, s. 66.

[7] 1983-2007 Yillari Arasinda Yapilan Milletvekili Genel Seçimleri, Seçim Tarihi: 24.12.1995, http://www.ysk.gov.tr

[8] Refah Partisi böyle kapatildi, Yeni Akit, 17 Ocak 2016, http://www.yeniakit.com.tr/haber/refah partisi boyle-kapatildi 122558.html (29.06.2017).

[9] Milli Görüş'ten 4 parti kapatildi, Sabah, 15 Mart 2008, http://arsiv.sabah.com.tr/2008/03/15/haber,0E0014F9515341A98B5A573C4568CE0D.html (28.06.2017).

բար խոսքը Կենտրոնական Ասիայի և Չինաստանի տարածքների մասին է - Ն.Մ.) տեղի ունեցող զարգացումներն անհրաժեշտ է ուշադրությամբ հսկել, և հարկավոր է հարաբերությունները զարգացնել այս տարածաշրջանի հետ: Իսլամական երկրների, հատկապես թյուրքական հանրապետությունների հետ եղբայրական հարաբերությունները պետք է ամրապնդել. մեր միջև մշակութային, տնտեսական և քաղաքական հարաբերությունների զարգացմանը պետք է հատուկ նշանակություն տալ»[10]: Նշենք, որ 2001 թ. հունիսի 22-ին Սահմանադրական դատարանի որոշմամբ ԱԿ-ի գործունեությունը դադարեցվեց[11]:

«Ազգային տեսակետ»-ի հիմնադրած կուսակցություններից հաջորդը «Երջանկություն» կուսակցությունն (ԵԿ, Saadet Partisi) է: Այն հիմնադրվել է 2001 թ. հուլիսի 20-ին Ռեջայի Քութանի կողմից: Հարկավոր է նշել, որ այս կուսակցությանը մինչ օրս չի հաջողվել հաղթահարել սահմանված 10 % ընտրական շեմը: ԵԿ-ի ծրագրում նշված է. «Թուրքիան արևելքում գտնվող թյուրքական հանրապետությունների հետ կապված է պատմական, հոգևոր ու էթնիկական կապերով, և հարաբերություններն ամենաբարձր մակարդակի վրա են, այս եղբայր երկրներին աջակցելու ենք, որպեսզի նրանք ինտեգրվեն միջազգային իրավական համակարգին»[12]: Փաստորեն իսլամական կուսակցությունները ևս իրենց ծրագրերում շեշտում են թյուրքական երկրների հետ համագործակցության կարևորությունը՝ ընդգծելով գոյություն ունեցող ընդհանրությունները:

Ներկայումս Թուրքիայում առաջատար քաղաքական ուժը «Արդարություն և զարգացում» կուսակցությունն է (ԱԶԿ, Adalet ve Kalkinma

---

[10] Fazilet Partisi, "Öncü Türkiye için elele", Kalkinma Programi, Ankara, 1998, s. 35.

[11] Anayasa Mahkemesi'nin Kapatma Karari, 22 Haziran 2001 - 5 Ocak 2002, BELGEnet, http://web.archive.org/web/20120301235814/http://www.belgenet.com:80/arsiv/fazilet.html (30.06.2017). Սահմանադրական դատարանի որոշումն ավելի մանրամասն տե'ս Anayasa Mahkemesi Karari, Resmi Gazete, 05 Ocak 2002, Sayi 24631 (Mükerrer), s. 173-197.

[12] Saadet Partisi Programi, 04.05. 2014, s. 28.

Partisi), որը հիմնադրվել է 2001 թ. օգոստոսի 14-ին Ռեջեփ Թայիփ Էրդողանի կողմից: ԱԶԿ-ն իսլամամետ կուսակցություն է, միաժամանակ ներկայանում է պահպանողական-ժողովրդավարական գաղափարներով[13]: 2002 թ. նոյեմբերի 3-ին տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններում ԱԶԿ-ն հավաքեց քվեների 34,17 %-ը՝ խորհրդարանում 550 պատգամավորական աթոռներից զբաղեցնելով 363-ը[14]: ԱԶԿ-ի ծրագրի արտաքին քաղաքականության հատվածում թյուրքական երկրների հետ կապված հետևյալ ձևակերպումն էր. «Չնայած Կենտրոնական Ասիայի թյուրքական հանրապետությունների հետ պատմական, մշակութային ու սոցիալական ընդհանրություններին՝ մեր սպասելիքները չեն իրականացել: ԱԶԿ-ն թյուրքական հանրապետությունների հետ իր հարաբերություններում նախևառաջ շեշտում է տարածաշրջանն ընդարձակ համագործակցության դաշտի վերածելու իր ջանքերի մասին»[15]: Պետք է նշել, որ թյուրքական երկրներին վերաբերող այս ձևակերպումը ներկայացված էր նաև ԱԶԿ-ի՝ 2007 թ. ծրագրում[16]: Իսկ ԱԶԿ-ի՝ 2023 թ. քաղաքական տեսլականում նշվում է Թուրքիայի արտաքին քաղաքական ակտիվության մասին Բալկաններից և Կովկասից մինչև Աֆրիկա ու Կենտրոնական Ասիա. «...մենք բոլոր երկրներին դիտում ենք որպես հնարավոր գործընկերներ, որոնց հետ կարող ենք կառուցել լավագույն ապագա: Արդյունքում մենք կարող ենք օգտագործել մեր պատմական ժառանգությունը, այն թարգմանել այսօրվա գլոբալ քաղաքականության համատեքստում և խորացնել փոխադարձ փոխըմբռնումը և համագործակցել որոշակի նախագծերի միջոցով: Նմանապես մենք պետք է խորացնենք մեր քաղաքական, տնտեսական ու մշակութային հարա-

---

[13] Alev Çinar, The Justice and Development Party: Turkey's Experience with Islam, Democracy, Liberalism and Secularism, International Journal of Middle East Studies, Vol. 43, No 3, August 2011, pp. 531-532.

[14] 03 Kasim 2002 XXII. Dönem Milletvekili Genel Seçimi, http://www.ysk.gov.tr/ysk/docs/2002MilletvekiliSecimi/turkiye/cevremilletvekilisayisi.pdf (20.10.2017)

[15] AK Parti Kalkinma ve Demokratikleşme Programi, Ankara, 2002, s. 108.

[16] AK Parti Programi, http://www.akparti.org.tr/site/akparti/parti-programi#bolum (04.06.2017)

բերությունները Կովկասի ու Կենտրոնական Ասիայի այն երկրների հետ, որոնց հետ ունենք կրոնական, լեզվական ու մշակութային հատուկ կապեր: Ապագա տեսլականը զարգացնելու համար մենք հիմ նադրել ենք Թյուրքական համագործակցության խորհուրդը: Մենք պետք է շարունակենք այս տարածաշրջանում լինել ակտիվ խաղացող՝ որոշակի հեռանկարներով ու որոշումներով: Սկսելով Կենտրոնական Ասիայից՝ մենք հաստատել ենք բարձր մակարդակի հարաբերություններ թյուրքական հանրապետությունների հետ»[17]: Ակնհայտ է նոր համաթյուրքականության գաղափարների առկայությունը ԱԶԿ-ի ծրագրում: Այսինքն՝ կրոնական, լեզվական ու մշակութային ընդհանրություններով ապահովել հոգևոր-մշակութային միասնությունը, այնուհետև նախաձեռնել միասնական քաղաքական ծրագրերի իրականացումը, որն էլ սկզբնական ձևով փորձում են կազմակերպել Թյուրքական համագործակցության խորհրդի շրջանակներում:

Թուրքիայի Հանրապետության պատմության մեջ առաջին քաղաքական ուժը Հանրապետական ժողովրդական կուսակցությունն է (Cumhuriyet Halk Partisi), որը հիմնադրվել է Մուսթաֆա Քեմալ Աթաթյուրքի նախաձեռնությամբ: Այս կուսակցությունը միանձնյա իշխել է մինչև 1950 թ.: ՀԺԿ-ի գաղափարախոսության և ծրագրերի հիմքում դրված են Աթաթյուրքի սկզբունքները, այն է՝ «վեց նետերի» քաղաքականությունը: Արտաքին քաղաքականության բնագավառում ՀԺԿ-ն ունի արևմտյան կողմնորոշում և մեծ տեղ է հատկացնում ԱՄՆ-ի ու ԵՄ-ի հետ հարաբերություններին: Մյուս կողմից, ՀԺԿ-ի ղեկավարությունը չէր կարող անտեսել նորանկախ թյուրքական հանրապետությունների գոյությունը: ՀԺԿ-ի ծրագրում նշվում է, որ այդ երկրներն իրենց անկախությունները պաշտպանելու համար պետք է քաղաքական ու տնտեսական նոր համակարգեր հիմնադրեն և մշակութային ու ազգային ինքնության հարցերում կարող են ապավինել Թուրքիայի աջակցությանը, ուստի Թուրքիան այդ երկրների հետ պետք է հաստատի ու զարգացնի սերտ համագործակցություն[18]: ՀԺԿ-ի ծրագրում

---

[17] Ak Partisi 2023 Siyasi Vizyonu, Siyaset, Toplum, Dunya, 2012, s. 63.

[18] Çağdaş Türkiye İçin Değişim, Cumhuriyet Halk Partisi Programi, Ankara, 2008, s. 130.

հատուկ ընդգծվում է նաև Կենտրոնական Ասիայի երկրների հետ բոլոր ոլորտներում հարաբերությունների ամրապնդման մասին[19]:

Թուրքիայի կուսակցությունների պատմության մեջ ՀԺԿ-ից հետո իր երկարատև գոյությամբ հայտնի է «Ազգայնական շարժում» կուսակցությունը (ԱՇԿ, Milliyetçi Hareket Partisi): ԱՇԿ-ն հիմնադրվել է 1969 թ. Ալփարսլան Թյուրքեշի կողմից[20]: ԱՇԿ-ն աչքի է ընկնում պանթյուրքիստական և ծայրահեղ ազգայնական գաղափարներով: Կուսակցությունը բավականին ակտիվ էր 1970-ական թթ., անգամ կարողացավ կոալիցիոն կառավարություններում նախարարական աթոռներ զբաղեցնել: Կուսակցությունն ունի երիտասարդական թև՝ «գորշ գայլեր», որը երիտասարդական ծայրահեղական, ազգայնամոլական կազմակերպություն է: Հենց այս կազմակերպությունն էլ 1970-ական թթ. իրականացրեց մի շարք ահաբեկչություններ ու բռնություններ[21]: 1980 թ. սեպտեմբերի 12-ին տեղի ունեցած ռազմական հեղաշրջման արդյունքում արգելվեց բոլոր կուսակցությունների գործունեությունը, այդ թվում՝ ԱՇԿ-ի: 1983 թ. ԱՇԿ-ն վերսկսեց իր գործունեությունը «Պահպանողական կուսակցություն» (Muhafazakar Parti) անվամբ: 1985 թ. այն վերանվանվեց որպես «Ազգայնական աշխատավորական կուսակցություն» (Milliyetçi Çalişma Partisi), իսկ 1992 թ. կուսակցությանը վերադարձվեց իր նախկին անվանումը՝ ԱՇԿ[22]: 1997 թ. կուսակցության առաջնորդ Ա. Թյուրքեշի մահից հետո ԱՇԿ-ն մինչև օրս

---

[19] Նույն տեղում, էջ 128:

[20] 1965 թ. Ա. Թյուրքեշն արմատականների խմբի որոշ անդամների հետ անդամագրվում է Հանրապետական գյուղացիական ազգային կուսակցությանը (Cumhuriyetçi Köylü Millet Partisi): Շուտով նա դառնում է այդ կուսակցության ղեկավարը և արմատապես փոխում է կուսակցության ծրագիրն ու գաղափարները, իսկ 1969 թ. փետրվարին տեղի ունեցած կուսակցության գլխավոր համագումարում այն վերանվանվում է որպես Ազգայնական շարժում կուսակցություն:

[21] Տե՛ս Դումանյան Ա., 1980 թ. ռազմական հեղաշրջումը Թուրքիայում. Պատճառները, ընթացքը, հետևանքները, Երևան, 2016, էջ 68 80:

[22] Gökhan Karakurt, Siyasi Partilerin Doğuş Teorileri, Parti Tipolojileri ve Kurumsallaşmalari Bağlaminda Milliyetçi Hareket Partisi Üzerine Bir Değerlendirme, Uluslararasi Politik Araştirmalar Dergisi, Yil: 2, Cilt: 2, Sayi: 1, 2016, s. 43.

գլխավորում է Դևլեթ Բահչելին:

ԱԾԿ-ի գաղափարախոսության հիմքում դրված են Ա. Թյուրքեշի 9 սկզբունքները՝ «9 լույս» (Dokuz Işik)՝ ազգայնամոլություն (milliyetçilik), գաղափարապաշտություն (ülkücülük), բարոյականություն (ahlakçilik), սոցիալականություն (toplumculuk), գիտականություն (ilimcilik), ազատություն (hürriyetçilik), գյուղացիություն (köycülük), զարգացում և ժողովրդավարություն (gelişmecilik ve halkçilik), արդյունաբերություն և տեխնիկա (endüstricilik ve teknikçilik)[23]: Ա. Թյուրքեշի համար գլխավոր նպատակ էր նախ՝ հզորացնել Թուրքիան, ապա՝ արդեն հզոր Թուրքիայի դրոշի ներքո միավորել ողջ թյուրքական աշխարհը: Ա. Թյուրքեշը մեծ տեղ էր տալիս նաև իսլամին, որն ընկալվում է որպես թուրքական ինքնության ու մշակույթի կարևոր տարրերից մեկը[24]: Իսլամը համադրվում է թյուրքականության հետ, և լայնորեն սկսվում է քարոզվել թյուրք-իսլամական իդեալը (Türk-İslam Ülküsü)[25]:

Կուսակցության արտաքին քաղաքական ծրագրի հիմքը հարաբերություններն են թյուրքական աշխարհի հետ, որն ընդգրկում է նախկին Խորհրդային Միության տարածքում գտնվող թյուրքական հանրապետությունները, ինչպես նաև թյուրքախոս ժողովուրդներին, որոնք ապրում են այլ պետություններում: ԱԾԿ-ն ակտիվ արտաքին քաղաքականություն վարելու կողմնակիցներից է: ԱԾԿ-ի «Թուրքիան լիդեր երկիր» իդեալի ամենակարևոր տարրերից առաջինն անկախությունն է և ազդեցիկ ու արդյունավետ արտաքին քաղաքականության իրականացումը: ԱԾԿ-ի ծրագրում հատուկ առանձնացված է «Թյուրքական աշխարհ» հատվածը, որտեղ նշվում է. «Թյուրքական աշխարհը մեր արտաքին քաղաքականության առաջնահերթությունն է և առանձին

---

[23] Türkeş A., Milli Doktrin Dokuz Işik, İstanbul, 2010, s. 20-24.

[24] E. Burak Arikan, The Programme of National Action Party: An Iron Hand in a Velvet Clove?, Middle Eastern Studies, Vol. 34, No, 4, October 1998, p. 123.

[25] 1980 ական թթ. կեսերից տարածվեց «Թյուրք իսլամական համադրություն» կոչվող մշակութային հայեցակարգը: Այս գործընթացը նախաձեռնվել էր դեռևս 1970-ական թթ. կեսերին «Մտավորականների օջախի» (Aydinlar Ocaği) կողմից: Այս համադրության քննարկմամբ ու ներկայացմամբ հայտնի էր Ահմեթ Արվասին իր՝ «Թյուրք-իսլամական իդեալ» (Türk-İslam Ülküsü) եռահատոր աշխատությամբ:

կապերի բնագավառը: Կիպրոսի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի թյուրքական հանրապետությունների, Բալկանյան երկրների հետ հարաբերությունները հիմնականում տնտեսական, սոցիալական, քաղաքական և մշակութային բնույթի են, ուստի բոլոր բնագավառներում հարաբերությունների զարգացումն ու խորացումը մեր արտաքին քաղաքականության առաջնային նպատակներից են»[26]: Հարկավոր է նշել, որ ԱԾԿ-ն հանդես է գալիս համաթյուրքական կազմակերպությունների ստեղծման առաջարկներով, օրինակ՝ Թյուրքական աշխարհի գլխավոր խորհուրդ (Türk Dünyasi Genel Konseyi), Թյուրքական աշխարհի էներգետիկ խորհուրդ (Türk Dünyasi Enerji Konseyi), Թյուրքական աշխարհի գիտական և տեխնոլոգիական համագործակցության կենտրոն (Türk Dünyasi Bilimsel ve Teknolojik İşbirliği Merkezi): Իսկ Գորշ գայլերի կազմակերպությունը լայն կապեր է հաստատել թյուրքական հանրապետություններում, բացի դրանից, որոշ տվյալներով նաև Չինաստանում ույղուրական անջատողական շարժումների հետ[27]:

ԱԾԿ-ն Դ. Բահչելիի գլխավորությամբ ակտիվորեն մասնակցում է երկրի քաղաքական կյանքին: 1999 թ. խորհրդարանական ընտրությունների ժամանակ ԱԾԿ-ն ստացավ քվեների 18 %-ը, համապատասխանաբար՝ 129-ը մանդատ: 2002 թ. ընտրություններում կուսակցությունը չկարողացավ հաղթահարել սահմանված 10 % շեմը: 2007 թ. ընտրությունների ժամանակ ԱԾԿ-ն ստացավ 14,3 % ձայն և 71 պատգամավորական մանդատ[28]: 2011 թ. տեղի ունեցած ընտրություններում կուսակցությունը ստացավ քվեների 13,2 %-ը և 53 պատգամավորական աթոռ[29]: 2015 թ. հունիսի 7-ին տեղի ունեցած ընտրություն-

---

[26] Milliyetçi Hareket Partisi, Parti Programi, "Geleceğe Doğru", Ankara, 8 Kasim 2009, s. 126-127.

[27] Bhavna Singh, Separatism in Xinjiang: Between Local Problems and International Jihad www.ipcs.org/pdf_file/issue/SR122_CRP_SeparatisminXinjiang.pdf (18.10.2017).

[28] 1983-2007 Yillari Arasinda Yapilan Milletvekili Genel Seçimleri, http://www.ysk.gov.tr

[29] 12 Haziran 2011. XXIV. Dönem Milletvekili Genel Seçimi, http://www.ysk.gov.tr/ysk/docs/2011MilletvekiliSecimi/gumrukharic/gumrukharic.pdf (19.10.2017).

ներում ԱՇԿ-ն ստացավ ընտրողների ձայների 16,29 %-ը և 80 մանդատ[30]: Նույն թվականի նոյեմբերի 1 ին տեղի ունեցած ընտրություններում ստացավ քվեների 11,90 %-ը և 40 մանդատ[31]: Վերոշարադրյալից երևում է, որ ԱՇԿ-ն ունի իր ընտրազանգվածը և որոշակի դերակատարում երկրի քաղաքական կյանքում: Հետևաբար՝ սա վկայում է այն մասին, որ կուսակցության ազգայնական ու պանթյուրքական գաղափարներն ընկալելի են հասարակության որոշ շրջանների համար:

Այսպիսով, նոր համաթյուրքականության գաղափարները կազմակերպվում էին առաջին հերթին հոգևոր-մշակութային կերպով, որի հիմքում դրված են Թուրքիայի և թյուրքական հանրապետությունների միջև առկա ընդհանրությունները: Մյուս կողմից, նոր համաթյուրքականության գաղափարներն ընդգրկվեցին քաղաքական ծրագրեր, որոնք իրենց դրսևորումները գտան նաև վերոնշյալ կուսակցությունների ծրագրերում: Դրանք հիմնականում ենթադրում են թյուրքական երկրների հետ սերտ համագործակցության հաստատում: Պետք է փաստել, որ թյուրքական երկրների հետ սերտ հարաբերությունների ու համագործակցության հաստատումը համարվում է Թուրքիայի արտաքին քաղաքականության գերակա ուղղություններից մեկը: Այդու, նոր համաթյուրքականությունը ոչ միայն մշակութային, այլ նաև քաղաքական ծրագիր է: Կարող ենք ասել, որ նոր համաթյուրքականությունը քաղաքական համակարգի մաս է, այդ գաղափարների նկատմամբ ձևավորվել է որոշակի վերաբերմունք, և այն կշարունակի մնալ Թուրքիայի արտաքին քաղաքականության համատեքստում:

---

[30] 7 Haziran 2015. 25. Dönem Milletvekili Genel Seçimi, http://www.ysk.gov.tr/ysk/content/conn/YSKUCM/path/Contribution%20Folders/HaberDosya/2015 MV_dagilimlari.pdf (18.10.2017).

[31] 1 Kasim 2015. 26. Dönem Milletvekili Genel Seçimi, http://www.ysk.gov.tr/ysk/content/conn/YSKUCM/path/Contribution%20Folders/HaberDosya/2015MVES-PartiYasDagilimi-Grafik.pdf (20.10.2017).

MINASYAN NELLI

THE NEO PAN-TURKISM IDEAS IN THE POLITICAL SYSTEM OF TURKEY (THE PROGRAM THESES OF PARTIES)

At the beginning of 1990s Turkey's foreign policy activity was connected with the collapse of the Soviet Union and the independence of the Turkic republics. The Pan-Turkism ideas were transformed during this period and they were introduced in a new way. The neo Pan-Turkism ideas were presented by three interconnected systems: the first as a spiritual cultural program, the second as a part of the political system, the third as Turkic component of the Turkic-Islamic synthesis. All Turkish parties attach great importance to the cooperation with Turkic republics in their programs. This especially emphasizes the ruling Justice and Development Party. The Nationalist Action Party is well known for Pan-Turkism and nationalist ideas. The NAP suggests to establish Pan-Turkic organizations. Neo Pan-Turkism is not only a cultural project, it is also a political program. We can say that the Neo Pan-Turkism is a part of the political system and it will stay in the context of Turkey's foreign policy.

HARUTYUNYAN AGHAVNI

CHINESE POLICY OF SOFT POWER AND PUBLIC DIPLOMACY

"If the state does not have enough material "hard power,"
then it may be defeated with a single stroke.
But if the state lacked cultural "soft power,"
it will be defeated without any stroke."
Zhang Guoji

Theoretical basis for "soft power" based on a combination of modern Marxist and ancient Confucian thoughts

Even though more than 30 years have passed since the "socialism with Chinese characteristics" reforms of 1978 began, Western criticism of China regarding its political system, human rights issues, its treatment of Tibet, and so forth continues unabated today[1]. Until the middle of the 1990s, as it emerged from the shadow of the Tiananmen events, China's communist leaders designed new state-craft to revitalize economic reform and improve its national image. They have continued to view soft power as indispensable for the country's efforts to increase comprehensive national strength and regain its status as a great power[2].

China's interest in soft power more concretely dates back to as early as 1993, when Wang Huning,* a current member of the CCP

---

[1] Zhe Ren, The Confucius Institutes and China's Soft Power, IDE Discussion Paper, No. 330, Institute of Developing Economies, JETRO, Japan, March 2012, p. 17. http://www.ide.go.jp/English/Publish/Download/Dp/pdf/330.pdf

[2] Sheng Ding, Chinese Soft Power and Public Diplomacy: An Analysis of China's New Diaspora Engagement Policies in the Xi Era, EAI Fellows Program Working Paper Series, No. 43, Bloomsburg University of Pennsylvania, April 2014, p. 4. https://www.eai.or.kr/data/bbs/eng_report/201404011627122.pdf

* Wang Huning - former professor of Fudan University was handpicked by former president Jiang Zemin to serve as deputy director of the Policy Research Office of the Chinese Communist Party (CPC) and under Hu Jintao was promoted

Political Bureau and the concurrent head of the Central Policy Research Office, introduced an American political scientist Joseph Nye's "soft power" theory to China.[3] According to Nye's theory, "soft power" is a directing, attracting and imitating force derived mainly from intangible resources such as national unity or solidarity, culture, ideology and influence on international institutions; it is the "ability to get what you want through attraction rather than coercion, enforcement or payments"[4]. For Joseph Nye, soft power is when "one country gets other countries to want what it wants." It is about attracting other states to your side by getting them to want the outcomes you want, because they admire your values, culture or foreign policy[5].

Wang Huning evaluated Nye's theory and focused on culture as the main source of a state's soft power: "if a country has an admirable culture and ideological system, other countries will tend to follow it.... It does not have to use its hard power which is expensive and less efficient"[6]. The

---

to head the office and also appointed to the powerful Secretariat of the CPC Central Committee. He is former professor of Fudan University.

XII դարից սկսած՝ Նիզամիի «Խոսրով և Շիրին» պոեմն ուղեկցում է համայն գրասեր մարդկությանը, սակայն այս ողջ ընթացքում ամենանվիրյալ մահմեդականն անգամ, որի մշտական ուղեկիցն է եղել Ղուրանով ամրագրված ատելությունը հեթանոսական կուռքերի և անհաշտվողականությունը այլահավատների նկատմամբ, չի կշտամբել Նիզամիին՝ հեթանոս Խոսրովին հերոսացնելու և քրիստոնյա Շիրինին ներբողելու համար: Առավել ևս, երբ պարսից գրականության մեջ նոր չէին անցյալի փառաբանումը և պատմական Իրանի հերոսների ջատագովումը: Դրա հանճարեղ օրինակը երկու դար առաջ ստեղծել էր Ֆիրդուսին իր «Շահնամեում»՝ ներբողելով Իրանի դիցաբանական անցյալը:

Պատմությանը հայտնի Նիզամիի առաջին քննադատը եղել է նրա մտերիմն ու բարեկամը.

Ո՞վ դու, որ (վաղուց) թակել ես միաստվածության դուռը և փառաբանված ես,

Ինչիդ է հարկավոր մոգերի բարքերի նորոգումը:

Սակայն պոեմի որոշ հատվածներին ծանոթանալուց հետո ընկերն արտասանել է.

Միայն դու ես ընդունակ այնպիսի հրաշագործության,

(Որ) կուռքերին դարձնի Քաաբայի սրբատեղիին վայել[1]:

Այդպես է տեղի ունենում պատմական փաստի գիտակցված ադապտացիան, երբ անցյալից եկող պատմական դրվագը և իրական անձը բանաստեղծական հեռահար մտահղացմամբ դառնում են ժամանակակից, հինավուրց հերոսների կերպարները նոր հողի վրա՝ դառնում իդեալ և ուսուցանող օրինակ:

Պոեմի հիմնական գաղափարը պարսից զրադաշտական շրջանի հզոր թագավոր Խոսրով Փարվիզի և քրիստոնյա Շիրինի վերանձնային սերն է, որի հենքի վրա բարձրանում է Նիզամիի հումանիստական հայացքների ողջ համալիրը՝ ամուր պետականության գաղափար, իսլամական բարոյական նորմերի փառաբանություն, կրոնական հանդուրժողականություն, կամքի ազատություն, ժողովուրդների բարեկամություն:

Պոեմի արմատները գնում են դեպի բյուզանդական, արաբական, հայկական, ասորական աղբյուրներն ու դրանց հենքի վրա ստեղծված լեգենդները:

Ըստ X դարի արաբ ժամանակագիր Թաբարիի «Պատմության»՝ Խոսրով թագավորի սիրած կինը տիկնանց տիկին «Շիրինն էր, ով առավել էր բոլորից՝ գեղեցկությամբ և խելքով»[2]:

Սակայն ավելի վաղ շրջանից՝ VII դարից են գալիս հայ մատենագիրների, հատկապես պատմիչ Սեբեոսի տեղեկությունները: Ավելին, Լևոն Մելիքսեթ Բեկը հենց Սեբեոսի աղբյուրն է համարում Նիզամիի «Խոսրով և Շիրին» պոեմի արքետիպը: Սեբեոսը ժամանակակիցն էր Մուհամմադ մարգարեի և առաջիններից մեկը համաշխարհային պատմագրության մեջ, ով տեղեկացրեց նրա ուխտի մասին, ի դեպ՝ առանց հակաճառության, անկիրք և ճշմարիտ: Ամենայն հավանականությամբ մուհամմադյան կրոնի մոնոթեիստական ոգին չէր հակասում Սեբեոսի կրոնական պատկերացումներին: Ավելին,

---

[1] Hakim Nezami Gyanjavi, Khosrov va Shirin, Vahid Dastgerdi, Tehren, 1376 (պարսկ.), հետագայում՝ Նիզամի, նշվ. աշխ.:

[2] Al-Tabari, Tarik al-Rusul wa al-muluk, Kahire, 1990, N 2, (1053), էջ 224 (արաբ.):

Սեբեոսը շեշտում էր Մարգարեի «հմուտ ու տեղյակ» լինելը մովսիսական պատմությանը[3]:

Նիզամին գրում է.

Խոսրովի և Շիրինի պատմությունը գաղտնիք չէ,
Առավել սիրելի ավանդազրույց չկա,
Եվ սրտահաճո այդ զրույցը,
Պահում ու պահպանում են, ինչպես հարսնացուին.
Նրա մաքրագիր (իրական) ցուցակները անհայտ են առօրյա աչքից,
Իսկ սևագիրները գտնվում են Պարտավում:
(Հենց) այդ կողմերում պահպանված հնագույն պատմություններից,
Այս ավանդության գանձը ինձ հայտնի դարձավ[4]:

Սակայն Նիզամիի ոչ մի ակնարկից հայտնի չի դառնում, թե որ լեզուներով են եղել այդ ձեռագրերը:

Նիզամին, որ դարի կրթյալներից մեկն էր, հանրագիտակ, անշուշտ ծանոթ է եղել և՛ բանահյուսական, և՛ ձեռագիր աղբյուրներին, իսկ բազմաթիվ հատվածներից կարելի է ենթադրել, որ ճանաչել է նաև Հայոց աշխարհը. պոեմում բազմիցս հիշատակել է Հայաստանի տեղանքը, նույնիսկ ժայռափոր վանքերում ծվարած միստիկներին.

Ժայռափոր հինավուրց մի վանք կար,
Ծերունի վանականների մենաստանն էր,
Շապուհը մտնում է այդ հնամենի վանքը,
Սուրբ ճգնավորների սովորույթի համաձայն[5]:

---

[3] Համմտ. Պատմութիւն Սեբէոսի, աշխատասիրությամբ՝ Գ.Վ. Աբգարյանի, Երևան, 1979, էջ 135:

[4] Նիզամի, նշվ. աշխ., գլուխ XI (ներթափանցում գրքի էություն), բեյթ 35-40 (պարսկ.):

[5] Նիզամի, Խոսրով և Շիրին, գլուխ XIX, բեյթ 20-25: Ի դեպ, այս գլխի վերնագիրը, որը պարսից բնագրում հնչում է «Շապուհի ճանապարհորդությունը

Խոսրով Փարվիզը՝ զրադաշտական Իրանի հզոր թագավորը՝ արքունական խրախճանքների և գինարբուքների հերոսը, իր արքայական վարք ու բարքով Նիզամիի կերտմամբ մուտք է գործում XII դարի իսլամական միջավայր և ճանաչելի դառնում ժողովրդին:

Ճիշտ է, Նիզամիի պոեմի թանձրույթը ճշմարիտ սիրո հաղթանակն է, սակայն պոեմը պոլիթեմատիկ է, և թեմաների ողջ համալիրում ներկա է նաև Խոսրովի կրոնական հանդուրժողականության թեման: Մի կողմից՝ Նիզամին կարծես քննադատում է Խոսրովի՝ ասկետիզմից հեռու, անհոգ ու աշխարհիկ կենցաղը, մյուս կողմից՝ նրա կրոնական հանդուրժողականության փաստը Նիզամիի մատուցմամբ լայն ընդհանրացում է ստանում և կարծես տիրողների և իշխողների համար դառնում ուսուցանող օրինակ Իրանում ապրող բազմաէթնիկ ժողովուրդների նկատմամբ:

Սեբեոսն այսպես է հաղորդում Խոսրովի հրամաններից մեկը. «...ամեն ոք ամուր կենա իր հայրենի օրենքին և ով որ չցանկանա մնալ իր հավատին և ապստամբելով կհրաժարվի իր օրենքից, նա կմեռնի»[6]:

Ամենայն հավանականությամբ այդ կամքի ազատության արդյունքում էր, որ ըստ Սեբեոսի. «...Ողոգոմեան տոնի օրը Շիրինի վանքից գնում էին քրիստոնյաները արքունաց դուռը պաշտելով, կարդում էին Ավետարան, նրանք թագավորից ստանում էին պարգև և հեռանում էին»[7]:

Եվ այսպես, «Խոսրով և Շիրին» պոեմում Նիզամին վերականգնում է «փարվիզականության» չափանիշները՝ հանդուրժողականություն, կամքի ազատություն, ընտրության իրավունք, կնոջ մեծարման և նրա դերի գնահատում, աշխատանքի փառաբանում, առատաձեռնություն, արդարադատություն, նաև սիրային արկածներ և իսլամում արգելված՝ անզուսպ գինարբուք: Նիզամին հերոսացնում է Խոսրովին, սակայն ինքնակենսագրական մի դրվագով հակադրվում է իսլամի կողմից անընդունելի բարքերին՝ գինեմոլությանը:

Հայաստան՝ Շիրինին որոնելու», «պատահաբար» դուրս է մնացել Բաքվի՝ 1985 թ. հրատարակության ռուսերեն թարգմանության ցանկից:

[6] Սեբէոս, նշվ. աշխ., էջ 85:

[7] Նույն տեղում:

Երբ (շահին) լուր տվեցին, թե Նիզամին գալիս է,
Նրա ուրախությունը կրկնապատկվեց:
.....
Հրամայեց մեջտեղից հավաքել գինու շշերը,
Նրբամտություն ցուցաբերեց իմ (հավատքի) նկատմամբ[8]:

«Խոսրով և Շիրին» պոեմն արտացոլում է արևելյան պետության կարևոր ինստիտուտներում (արքունիք-հրապարակ) ձևավորվող էսթետիկական, բարոյահոգեբանական, իրավական, կրոնական արժեքների համակարգը: Նիզամիի ողջ պոեմի «էլիտա-պլեբս» հարաբերություններում և մթնոլորտում, նրա կողմից գիտակցված անախրոնիզմի արդյունքում խաղաղ գոյակցում են երեք համաշխարհային կրոնները՝ զրադաշտականությունը, քրիստոնեությունը և իսլամը: Ադապտացիայի մեթոդը ծառայում է Նիզամիի հումանիստական արժեքների և իդեալների հաստատմանը, այն է՝ կրոնների և ժողովուրդների խաղաղ համակեցությունը: Մեկ այլ պոեմում՝ «Շարաֆնամեում», Նիզամին գրում է.

Ամեն մի ձեռագրից վերցրի մտքի թանձրույթը,
Եվ այն հանդերձավորեցի բանաստեղծական չափով,
(Վերցրի) բազմաթիվ պատմություններ հնից ու նորից,
Հրեական, քրիստոնեական և պահլավական....[9]

Նիզամին մի կողմից վերակերտում է մինչիսլամյան պարսից արքունիքի հարուստ ու փառավոր անցյալը, մյուս կողմից՝ ջնջելով ժամանակի կրոնական անջրպետը, Խոսրով թագավորին դիտում է իսլամական բարոյական նորմերի և արժեքների միջավայրում: Նա համակրանքով է հիշատակում անցյալը և, ներբողելով այն, կուռ միասնականության և ամբողջականության մեջ է տեսնում Իրանի պատմամշակութային անցյալն ու ներկան:

---

[8] Նիզամի, նշվ. աշխ., էջ 450:

[9] Hakim Nezami Gyanjavi, Sharafname, Vahid Dastgerdi, Tehran, 1376, էջ 69 (պարսկ.):

Մենք Նիզամիի պոեզիայում չենք որոնում իրական փաստերի ֆոտոգրաֆիկ կրկնությունը կամ պատճենը, այլ պատմական տեղեկությունների շղթայով փորձում ենք վերականգնել նրա գեղարվեստական միտքը սնող աղբյուրները:

Պատմական ավանդույթն ազդարարում է, որ 628 թ. Մուհամմադ մարգարեն, որին արդեն հետևում էր նորընծա մահմեդականների մեծ զանգված, պարսից Խոսրով թագավորին գրում է մի նամակ, որի մեզ հասած տարբերակներից մեկը հնչում է այսպես. «Հանուն ողորմած և բարեգութ Ալլահի. Մուհամմադից՝ Ալլահի ծառայից և Նրա առաքյալից, Խոսրովին՝ պարսից մեջ մեծագույնին: Խաղաղություն նրան, ով հետևում է ճշմարիտ ուղուն և հավատում է Ալլահին ու նրա առաքյալին և վկայում է, որ չկա Աստված բացի Ալլահից: Չունի ընկերակից և Մուհամմադը նրա ճշմարիտ ծառան և առաքյալն է: Կոչում եմ քեզ իմ աղոթքով առ Ալլահը, զի ես եմ ճշմարիտ առաքյալն Ալլահի (ուղարկված)՝ մարդկությանը, որպեսզի նախազգուշացնեմ նրանց, ովքեր ապրում են և ընդդեմ անհավատների հաստատեմ Խոսքը (Ղուրանը - Ա.Կ.): Ընդունի՛ր Իսլամը, և դու փրկված ես, իսկ եթե ուրանաս այն, ապա քեզ վրա է մոգերի մեղքը»[10]:

Շատերն են հիշատակել այս նամակը՝ պատմիչներ Թաբարին, Բալամին և ուրիշները: Սահիհ ալ Բուխարին (IX դ.), որ հավաստի հադիսների աղբյուրագետն էր, գրում է. «...Աստծո առաքյալը (թող Աստված օրհնի և ողջունի նրան) իր ուղերձը մեկի միջոցով ուղարկեց՝ հրամայելով, որ նա հանձնի Բահրեյնի տիրակալին: Նա դա հանձնեց Բահրեյնի տիրակալին, ով էլ այն ուղարկեց Խոսրովին: (Խոսրովը) կարդալուց հետո պատռեց ուղերձը՝ մանր կտորների վերածելով այն»[11]:

Ամենայն հավանականությամբ այս հավաստի աղբյուրներից է օգտվել իսլամի ջատագով Նիզամի Գյանջևին և իր բանաստեղծական աբստրահումով «Խոսրով և Շիրին» պոեմում մի հատված է նվիրել այդ նամակին՝ կրկին և կրկին հորդորելով Խոսրովին թողնել մոգերի

---

[10] Հմմտ. Колесников А. И. Две редакции письма Мухаммеда сасанидскому шаху Хосрову II Парвизу. Палестинский сборник: Ленинград, 1967, вып. 17(80).
[11] Հմմտ. Сахих Аль-Бухари, Мухтасар, “Умма”, 2003, 57 (63), տե՛ս նաև՝ Ալ Թաբարի, նշվ. աշխ. (1571), էջ 684:

կրակը և ընդունել իսլամ: Այդ գլուխը կոչվում է «Մարգարեի նամակը Խոսրովին»[12]:

Այս հայտնի պատմական փաստը գիտակցված և հետևողականորեն ադապտացվել է Նիզամու կողմից մի մտահղացմամբ: Նիզամին փորձել է արդեն հաղթանակած իսլամի և նրա ստեղծողի հետ ուղղակիորեն հանդիպեցնել զրադաշտական շրջանի թագավոր Խոսրով Փարվիզին: Նրանք հանդիպում են երազում, և կրկին Խոսրովը լսում է Մարգարեի հորդորը՝ ընդունել իսլամ:

Մուհամմադի առաջարկին՝ թողնել մոգերի կրակը և ընդունել իսլամ, Խոսրովը պատասխանում է.

Ես ինչպես մերժեմ նախնյացս կրոնը,
Ինչպես ամոթահար լինեմ անցյալ արքաներիս մոտ.
Սիրտս համաձայն է, սակայն, ճակատագիրը չի կամենում:

Հակառակ Նիզամիի ջանքերին՝ փառապանծ Խոսրովին բերելու իսլամական աշխարհ, Խոսրովը, ինչպես 500 տարի առաջ, մերժում է ընդունել իսլամ:

Մուհամմադի և Խոսրովի զրույցի գաղափարական թանձրույթը հենց այս միտքն է. նախկին քաղաքակրթության հիշատակն անմար է, իսկ նորը՝ աննասան:

Այսպիսով, «Խոսրով և Շիրին» պոեմում, հանդիպեցնելով հին և նոր վարդապետության ջատագովներին, Նիզամին մի կողմից Իրանը տեսնում է իր հզոր էթնոմշակութային միասնականության մեջ՝ մարելով անցյալի նկատմամբ կարոտախտը, մյուս կողմից իր՝ իսլամի ադեպտին հատուկ նվիրվածությունն ու խոնարհումն է արտահայտում:

Ներկայացնելով Իրանի երկու հակադիր՝ հեթանոսության և մոնոթեիզմի դարաշրջանները՝ Նիզամին հաստատում է իրանական քաղաքակրթության պատմամշակութային հաջորդականության և անընդհատության փաստը:

---

[12] Նիզամի, նշվ. աշխ., Թեհրան, 1376, էջ 430:

KOZMOYAN ARMANUSH

THE IDEA OF THE ETHNOCULTURAL UNITY OF IRAN IN THE POEM "KHOSROV AND SHIRIN" BY NIZAMI

Nizami rebuilds the rich and glorious past of the pre-Islamic Persian court by erasing the time and religious barriers.

In his records, he mentions the past with affection and sees the historical and cultural past and present of Iran in solid integrity.

Confronting the old and new religions in the poem "Khosrov and Shirin", Nizami sees Iran in ethno-cultural unity. Presenting the two opposite eras of Iran, paganism and monotheism, Nizami confirms the fact of ethno-cultural sequence and continuity of Iran.

МАТЕВОСЯН АРТУР

ВИДЫ БОГОПОЗНАНИЯ В «ЗЛАТОЧРЕВЕ» СВ. ГРИГОРА ТАТЕВАЦИ

Св. Григор Татеваци родился в 1346г. в крепости Тмок (в Джавахке). Отец его был ремесленником из города Арчеш на берегу оз. Ван, а мать была крестьянкой из села Парби, находящегося в области Айрарат. Спустя примерно 10 лет после его рождения его семья перебирается в область Вайоц-дзор. С детства он отличался блестящими способностями, и уже к 14 годам столь глубоко изучил Св. Писание, что к нему за разъяснениями обращались даже ученые вардапеты. В 1360г. он с семьей посещает столицу Грузии Тбилиси, где в то время находился св. Ованес Воротнеци. Тот, обратив внимание на исключительную одаренность юноши, берет его к себе в ученики и забирает с собой в Татев, где на протяжении 28 лет обучает его всему тому, что знал сам. Возглавив после смерти св. Ованеса Воротнеци Татевский университет, св. Григор Татеваци превращает его в крупнейший всеармянский центр высшего образования, что тем более поразительно, если принять во внимание то обстоятельство, что речь идёт о времени опустошительных походов Тамерлана, подвергшего Армению неслыханному разгрому и разорению.

К св. Григору в Татев стекаются ученики со всей Армении, которым он лично преподает целый ряд предметов, в том числе теологию, эксегетику, философию и естественные науки. Кроме того, он, будучи выдающимся каллиграфом, преподавал также и каллиграфию. Св. Григор не довольствовался обучением своих учеников, но и вместе с ними занимался широкой просветительской деятельностью, обходя города и сёла, и проповедуя там народу. В своих проповедях он учил слушателей основам христианской веры и нравственности, и за своё красноречие был прозван вторым Иоанном Златоустом. Ему приписы ваются чудотворные исцеления, причем как христиан, так и мусуль ман, многие из которых после этого крестились и становились хрис тианами. Скончался св. Григор Татеваци в Татевском монастыре 27

декабря 1409г.

Он оставил после себя богатейшее литературное наследие. Большая часть его сочинений посвящена теологическим проблемам. Это вполне естественно для средневекового мыслителя, однако дело тут не только в духе времени. На время его жизни пришлась резкая активизация прозелитической деятельности Римско-католической церкви на Востоке. Католические миссионеры, принадлежавшие к различным орденам, предпринимали огромные усилия по обращению армян в католицизм, что представляло огромную опасность, поскольку принадлежность к ААЦ была и, по сей день остается, одной из важнейших составляющих армянской идентичности. Борьбе против католического униатства св. Григор Татеваци посвятил целый ряд фундаментальных трудов, одним из которых является «Златочрев», написанный в 1401г. По своей структуре он похож на его энциклопедический труд «Книга вопрошений», только значительно меньше по объему. В них систематизированы многовековые достижения армянской богословской мысли.

История армянской богословской мысли ко времени, когда жил св. Григор Татеваци, насчитывала уже около 1000 лет. Она всего на столетие моложе истории христианства в Армении как государственной религии. Уже в первой половине V века после создания Месропом Маштоцем армянского алфавита и перевода на армянский язык Библии были переведены труды Отцов Церкви, ставшие впоследствии неотъемлемой частью армянской духовной Традиции и стимулировавшие создание оригинальных богословских трудов. Это мощное культурное движение, начало которому положили Месроп Маштоц и Саак Партев с их учениками, несомненно было во многом обусловлено глубокими историческими и политическими причинами. Раздел Великой Армении между Византией и Ираном в 387г., а затем и упразднение армянской государственности в 428г. сделали весьма актуальной задачу сохранения и укрепления национальной идентичности, что в Средние века было невозможно без усиления конфес сионального самосознания народа, а это, в свою очередь, было неосуществимо без проповеди христианства на понятном народу родном

языке. Однако было бы недопустимым упрощением объяснять возникновение в V веке мощного духовного движения в Армении, одним из проявлений которого стало появление национальной богословской традиции, исключительно влиянием тех или иных политических факторов. Не следует забывать о том, что для средневекового сознания сфера политики никоим образом не была оторвана от духовно-религиозной сферы, а последняя, в свою очередь, считалась наивысшей жизненной ценностью, поскольку рассматривалась в качестве единственного средства для обретения спасения и вечного блаженства, тогда как политика, и всё, что с ней связано, могла даровать лишь временные блага. Так что неверно объяснять появление армянской богословской традиции исключительно наличием тех или иных политических причин и побудительных мотивов, поскольку сама политика той эпохи была в значительной степени обусловлена воздействием со стороны духовно-религиозных факторов. Очень важную роль в процессе формирования этой традиции сыграло апостольское Предание, истоки которого восходят к I в.н.э. Как известно, Христос не оставил после себя каких-либо текстов с изложением Своего учения. Всё, что мы знаем о нём, известно с чужих слов. Об Иисусе Христе и Его учении повествуется в Евангелиях, написанных спустя несколько десятилетий после завершения земной жизни Спасителя, однако в них вошло далеко не всё из того, чему Он учил Своих Апостолов. Очень многое сохранилось благодаря устному Преданию, и в первую очередь аутентичное понимание Откровения, которое в дальнейшем легло в основу ортодоксальной христианской доктрины, в которой важное место занимает проблема Богопознания. Св. Григор Татеваци, будучи средневековым христианским мыслителем, уделял этой проблеме большое внимание. Существуют два основных подхода к её решению. Первый из них получил своё наиболее совершенное выражение в древнегреческой философии. Эллины, будучи по складу своего характера народом, склонным к созерцательности и метафизическим размышлениям, пришли к идее наличия Первопричины мироздания, благодаря созерцанию космоса, упорядоченности и строгой закономерности всего в нём происходящего. Поскольку без признания единого разумного

Первоначала эта упорядоченность была бы необъяснимой, античные мыслители постулировали его существование, назвав Его Богом (клас сический пример-теология Аристотеля). У античных мыслителей мы не найдём конкретных описаний того, каков Бог по природе своей. Они ограничивались Его самыми общими и абстрактными качествами. Основным из них является то, что Бог есть причина Самого Себя. Он независим от чего-либо иного, тогда как всё в мире зависит от Него. Бог также является Перводвигателем, приводящим в движение весь космос, и остающийся при этом неподвижным и неизменным. Это веч-но живой самодовлеющий Первопринцип, мыслящий самого себя. При всей гениальности этих прозрений они дают нам лишь самое общее представление о Боге, лишенное какой-либо конкретности. Если мы признаем Бога сущностью, мыслящей самое себя, т.е. по существу наделённой самосознанием, то мы тем самым признаём его лич-ностью, некоторым абсолютным «Я». Но личность помимо разума, должна обладать ещё и чувствами, и волей. Она должна что-то любить, что-то ненавидеть, чего-то желать, к чему-то стремиться. Однако об этих качествах Бога античными мыслителями ничего ска-зано не было, и поэтому более конкретное познание Бога следует искать в другом месте.

Существует и другой способ Богопознания-через осмысление различных теофаний в ходе исторического процесса. Это может пока-заться парадоксальным, ибо история разворачивается во времени, а метафизическое познание имеет своим предметом сверхчувственные, вневременные сущности. Однако при более глубоком рассмотрении парадоксальность этого способа оказывается иллюзорной. Как спра-ведливо отмечает великий русский мыслитель Н.А. Бердяев: «Проти-воположение исторического и метафизического, которое является преобладающим пониманием в течение долгого периода в науке и философии, а также и в некоторых формах сознания религиозного, как, например, в сознании индусском, не предполагает возможности явления метафизического в историческом, возможности того, что исторический факт не есть только внешний, эмпирический факт, кото-рый методологически должен быть всегда противоположен всему

метафизическому. Другая точка зрения предполагает, что метафизическое может непосредственно перейти в историческое и в нем быть явлено»[1]. Наиболее характерным примером метафизического познания, почерпнутого из осмысления исторического опыта может служить религиозная традиция еврейского народа. Этот опыт почерпнут из ряда исторических событий, в которых непосредственно проявила себя провиденциальная воля Бога. Еврейская история, которая с самого начала и до нашего времени является религиозной историей, начинается с конкретного события. Примерно за 2000 лет до р.Х. в Месопотамии некий человек по имени Авраам имел личную встречу с Богом, открывшим ему Свою волю. Бог повелел Аврааму оставить свою страну и переселиться в Ханаан, который Он обещал дать во владение потомкам Авраама и его жены Сарры, которая до того была бесплодной. Авраам исполнил волю Бога и переселился в Ханаан, где у него родился сын Исаак, от сына которого Иакова произошел еврейский народ. И сын, и внук Авраама также имели опыт непосредственного Богообщения, так что для них бытие Божие было не выводом из созерцания космоса и отвлеченных философских рассуждений, а конкретным жизненным фактом. Причем этот Бог был не абстрактной космологической сущностью вроде аристотелевского Перводвигателя, а живой Личностью, с которой возможно вступить в непосредственное общение.

Если обратиться к богословскому учению св. Григора Татеваци, как оно изложено в Златочреве, то обращает на себя внимание его стремление к синтезу античных и библейских форм Богопознания. «И человеческое познание бывает пяти видов. Первое-естественным исследованием, согласно философскому созерцанию. Второе-посредством веры, как ныне-посредством верующих, согласно реченному «...надобно, чтобы приходящий к Богу уверовал, что Он есть» (Евр.11,6). Третье благодатным способом, как данное пророкам посредством телесных чувств в воображении и видениях. Четвертое особое, заслуженное, благодаря святости, только с помощью особого

---

[1] http://predanie.ru/berdyaev-nikolay-aleksandrovich/book/74421-smysl-istorii/

умозрения, как у Моисея, согласно реченному: «если бывает у вас пророк Господень, то Я открываюсь ему в видении, во сне говорю с ним, но не так с рабом Моим Моисеем...устами к устам говорю Я с ним» (Чис.12,6-8) Пятое-в загробной жизни лицом к лицу, в ясном видении, согласно апостолу «Теперь мы видим как бы сквозь тусклое стекло, тогда же лицем к лицу» (1Кор.13,12)[2].

Под первым, естественным видом человеческого познания Татеваци подразумевает т.н. естественную теологию, унаследованную от античных мыслителей. В ней предполагается, что всякий человек от природы наделён неким знанием о Боге, или, по меньшей мере, способен его обрести. Основное отличие естественной теологии от догматического богословия заключается в том, что оно в своих выводах опирается исключительно на чувственный опыт и его рациональное осмысление без обращения к данным Откровения. Иначе говоря, Богопознание в естественной теологии достигается посредством изучения природы, в которой усматриваются свидетельства деятельности создавшего её Творца. Первую по времени, и ставшую классической форму естественной теологии создали древнегреческие философы. Её зачатки имеются уже у досократиков, а Платон, Аристотель и стоики придали ей законченный вид. Особенно значительна здесь роль Аристотеля. В своей «Метафизике» он излагает учение о «первой философии», которая у него является синонимом естественной теологии. Под ней он подразумевает учение о вечной, неподвижной и существующей отдельно от материи сущности. Эта сущность, будучи сверхчувственной и недоступной для обычного познания, воспринимается как нечто сверхъестественное, божественное, и потому учение о ней Аристотель называет теологией. Будучи наукой, теология является доказательным знанием, и в ней, как и в любой другой теоретической науке, истина постигается с помощью силлогизмов на основании самоочевидных положений. Сам Аристотель доказывал существование Бога с помощью аргумента о необходимости

---

[2] Գիրք որ կոչի Ոսկեփորիկ: Արարեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթևացւոյն եօթնալոյս վարդապետի: Կ.Պոլիս, 1746, էջ 22, 23:

существования конечной причины мирового движения. Для Аристотеля Бог есть созерцающий Ум, чья деятельность заключена в самопознании, причем эта деятельность и есть его жизнь. Согласно классическому определению Аристотеля: "А ум через сопричастность предмету мысли мыслит сам себя: он становится предметом мысли, соприкасаясь с ним и мысля его; так что ум и предмет его - одно и то же. Ибо то, что способно принимать в себя предмет мысли и сущность, есть ум; а деятелен он, когда обладает предметом мысли; так что божественное в нем - это, надо полагать, скорее само обладание, нежели способность к нему... И жизнь поистине присуща ему, ибо деятельность ума - это жизнь, а бог есть деятельность; и деятельность ума его, какова она сама по себе, есть самая лучшая и вечная жизнь. Мы говорим поэтому, что бог есть вечное, наилучшее живое существо, так что ему присущи жизнь и непрерывное и вечное существование, и именно это есть бог"[3].

Разумеется, ставить знак равенства между естественной теологией, как её понимал Татеваци, и теологией Аристотеля невозможно. Последняя предполагала вечность существования космоса, тогда как естественная теология в её христианском понимании была основана на библейском креационизме. В основе христианской космологии лежит идея сотворенности мира из ничего. Эта идея, содержавшаяся ещё в Ветхом Завете, стала водоразделом между античным и библейским миросозерцанием, поскольку для античной мысли, при всем многообразии её форм, общей была аксиома вечности космоса. Даже Платон с его гениальной догадкой о существовании Демиурга, являющегося Первопричиной космоса, не сумел возвыситься до идеи творения из ничего, поскольку его Демиург-это не Творец в библейском смысле этого слова, а лишь оформитель вечной и бесформенной материи. Для Отцов Церкви данная платоническая концепция была неприемлема прежде всего потому, что она ограничивала Бога, постулируя существование наряду с ним некоего иного, внебожественного начала, которое, будучи оформленным духовным Принципом, порож

---

[3] Аристотель, Сочинения в четырех томах, т. 1, Москва, 1976, стр. 310.

дает материальный космос.

Идея сотворенности мира из ничего является краеугольным камнем всей святоотеческой метафизики. В отличие от античных мыслителей, для Отцов Церкви космос не самодовлеющ и не самодостаточен. Он не есть causa sui, и причина его бытия заключена в чем-то ином, нежели он сам. Отцам Церкви удалось соблюсти золотую середину между двумя крайними позициями, противоречащими Откровению. С одной стороны, можно подобно Плотину и Проклу слишком тесно сближать Бога и мир (как известно у неоплатоников 3 начальные ипостаси-Единое, Ум и Душа существовали лишь для метафизического обоснования бытия 4-ой ипостаси-Космоса). При таком подходе Бог утрачивал свою абсолютность, попадая в зависимость от мира и даже отождествляясь с ним, а это пантеизм, несовместимый с библейским креационизмом. С другой стороны, можно, как это делал ещё Демокрит, рассматривать мир вне всякой связи с верховным Первопринципом. Как следствие этого, космос абсолютизировался и сам становился божественным, что приводило к материализму и атеизму. Отцы Церкви сумели избежать этих крайностей, подчеркивая, с одной стороны, независимость Бога от мира, а с другой-зависимость мира от Бога.

Отрицание Отцами Церкви античных представлений о вечности космоса было продиктовано не только их несоответствием данным Откровения, но и опасностью, которую они представляли для ортодоксальной догматики. Эта опасность стала вполне очевидной после появления учения Оригена о сотворении мира Богом как вечном процессе, в котором проявляется сама природа Бога. По сути Ориген стер разницу между сотворением Богом мира и порождением Им Логоса, поскольку оба этих процесса мыслились им как вечные и коренящиеся в природе Божьей. Сам Ориген из этого не сделал каких-либо еретических выводов, однако их сделал Арий, отвергнувший оригеновскую идею вечного творения, и в то же время отбросивший идею вечного порождения Отца Сыном. Согласно Арию, Отец сотворил Сына во времени из ничего точно так же, как он сотворил космос.

Эту проблему удалось решить св. Афанасию Александрийскому,

который сумел четко разграничить понятия порождения и сотворения. С точки зрения св. Афанасия, Оригена и Ария, при всех их существенных отличиях, объединяет одно-неразличение природы и воли в Боге. Для Оригена все действия Бога обусловлены Его природой, и потому процесс сотворения мира столь же безначален и вневременен, как и процесс порождения Сына Отцом. Для Ария все действия Бога обусловлены Его волей, и потому Сын так же сотворен Отцом из ничего, как и космос. Для св. Афанасия Бог имеет как природу, так и волю, причем они принципиально различны. Порождение Отцом Сына есть необходимый и неизбежный акт божественной природы. Бог является Отцом по самой природе Своей, и потому невозможно представить его себе без Сына, которого Он порождает в вечности. В отличие от этого миросотворение является есть акт божественной воли, и потому оно не является для Бога внутренне необходимым действием. Бог вполне мог бы и не сотворить мира, и потому имя «Творец» отнюдь не является выражением Его сущности. В силу этого между рожденным в вечности Сыном и сотворенным во времени космосом существует онтологическая бездна. Логос вечен, неизменен и нетленен, тогда как природа всех сотворенных из ничего тварей, существующих во времени, подвержена непрерывным изменениям, смерти и тлению. При этом тварная природа всецело зависит от природы нетварной, тогда как вторая полностью независима от первой.

На первый взгляд, христианский взгляд на мироздание может показаться менее возвышенным, нежели античный, ввиду отрицания безначальности космоса, являвшейся самоочевидной истиной для древнегреческих философов. Однако это впечатление обманчиво. В неоплатонической онтологии космос занимает нижнюю ступень в иерархии сущего, являясь последней стадией эманации Единого. Степень его реальности несравненно меньше, чем у Единого, Мирового Ума и Мировой Души, из которых он эманировал. Материальный космос лишь тень умопостигаемого космоса, состоящего из вечных архетипических идей и пребывающего в божественном Уме. Без причастности к этим идеям космос сам по себе является лишь бесформенной и не сущей материей. Быть может, лучше всего выразил

подлинное отношение античности к материальному космосу Плотин, назвавший его "украшенным трупом" (Эннеады, II 4, 5, 18). Для Отцов Церкви подобное выражение было немыслимым. В самом начале Книги Бытия со всей недвусмысленностью сказано: «И увидел Бог, что Он создал, и вот, хорошо весьма» (Быт.1,31). В рамках библейского миросозерцания невозможно отрицательное отношение к миру как таковому, и поэтому не удивительно, что Отцы Церкви, начиная со св. Иринея Лионского, столь резко критиковали гностиков, считавших космос ущербным созданием злого Демиурга. В полной мере это уважительное отношение к миру как к творению Божию можно найти у св. Афанасия Александрийского. Для него, в отличие от неоплатоников и следующего им Оригена, материальный космос-это отнюдь не тень космоса умопостигаемого, а вполне самобытная сотворенная сущность, благая по своей природе. И что особенно существенно-акт творения мира Богом произошел во времени, что принципиально отличает христианскую космологию от античной, в которой любые разговоры о времени возникновения космоса лишены какого-либо смысла.

Второй вид познания, согласно Татеваци, посредством веры. Под верой в Библии понимается совсем не то, что зачастую считается в наше время религиозной верой. Это не слепая приверженность каким-то абстрактным догматическим формулам, которые недоказуемы и непостижимы для разума. Вера в изначально библейском смысле этого слова есть доверие по отношению к божественной Личности. Апостолы верили всему, что говорил им Христос, ибо доверяли Ему как Личности, множество раз доказавшую им свою божественность, в силу чего сказанное им не вызывало у них ни малейшего сомнения. Последующие поколения христиан доверяли свидетельствам апостолов, ибо они видели и слышали Христа, и засвидетельствовали свою святость мученичеством во имя Его. Поэтому, когда говорится о том, что Церковь основана на апостольском предании, которому обязан следовать каждый христианин, то под этим отнюдь не подразумевается механическое заучивание и бездумное повторение тех или иных вероучительных истин, которые не поддаются рациональному осмыс

лению. Истины веры, дошедшие до нас от апостолов, не заучиваются, а переживаются в живом религиозном опыте, неотделимом от исполнения евангельских заповедей и благодатной помощи свыше. Иначе говоря, обретение веры в изначально христианском смысле этого слова является следствием не изучения догматического богословия, понимаемого как совокупность теоретических знаний о Боге и сотворенном им мире, а результатом ведения определённого образа жизни, благодаря которому возвещенные в Откровении истины становятся непосредственно переживаемыми реальностями духовного опыта.

Третий вид познания, согласно Татеваци-благодатный посредством телесных чувств в воображении и видениях. Говоря о познании посредством телесных чувств, он не имеет в виду объективное существование предмета такого познания. Речь идёт только о его чувственном восприятии. Например, если кто-то увидел ангела, то это не означает, что он увидел его таким, каким он существует в действительности. Это просто некий образ, посредством которого ангел являет себя человеческому сознанию.

От такого познания следует отличать имагинативное познание посредством образов, порожденных воображением под воздействием сверхъестественных причин. Оно возникает или посредством воспоминания прежнего чувственного опыта, или нового оформления хранящихся в памяти старых имагинативных образов, или же с помощью совершенно новых образов, порожденных воображением под воздействием свыше. Такое познание присуще пророкам. Наличие у некоторых людей пророческого дара является отличительной чертой всех авраамических религий. Более того, сами эти религии основаны на Откровении, переданном Богом через пророков. Наличие пророческого дара было обусловлено определёнными предпосылками, в первую очередь душевной чистотой и способностью человека держать под контролем свои страсти и эмоции. От потенциального пророка требовалась отрешенность от мирских интересов, любовь к Богу и стремление к Богопознанию. Само пророчество имеет место тогда, когда на человека нисходит Дух Божий. Основной формой, посред

ством которой осуществляется пророчество, является видение. «И сказал: слушайте слова Мои: если бывает у вас пророк Господень, то Я открываюсь ему в видении, во сне говорю с ним;» (Числ 12, 6). Типичный пример такого образного видения-это лестница, увиденная Иаковом, по которой поднимались и спускались ангелы.

В Св. Писании содержится множество подобных видений, в которых Бог раскрывал Свою волю пророкам, и не только им как, например, Аврааму. Быт. 15:1;Иакову. Быт. 46:2; Самуилу. 1 Цар. 3:2-15; Нафану. 2 Цар. 7:4, 17; Елифазу. Иов. 4:13-16; Исаии. Ис. 6:1-8; Иезекиилю. Иезек. 1:4-14, 8:2-14; Иезек.10; Иезек. 11:24, 25, 37:1-10 и с 40 гл. до 48-й; гл.Навуходоносору. Дан. 2:28, 4:6; Даниилу. Дан. 2:19 и с 7–10 главы; Амосу. Амос. 7:1-9, 8:1-6, 9:1; Захарии. Зах. 1:8, 3:1, 4:2, 5:2, 6:1; Павлу. Деян. 9:3, 6, 12, 16:9, 18:9, 22:18, 27:33; 2 Кор. 12:1-4.Анании. Деян. 9:10, 11.Корнилию. Деян. 10:3.Петру. Деян. 10:9-17; Иоанну. Откр. 1:12; от 4-й до 22 гл.

Четвертый вид познания, согласно Татеваци-особое умозрение, как у Моисея. Под умом здесь подразумевается не способность к дискурсивному мышлению, а орган интеллектуальной интуиции, посредством которой обретается непосредственное, объективное знание. Этот орган в Св. Писании именуется сердцем-разумеется, речь идёт о духовном сердце, а не о телесном органе, ответственном за кровообращение. В христианской традиции именно посредством сердца обретается Боговидение и Богопознание, которыми потенциально обладает любой христианин. От предыдущих типов познания интеллектуальная интуиция отличается своим всецело сверхчувственным характером без участия ощущений и воображения. Такого рода умозрение отличается особой убедительностью, не оставляющей места для сомнений в истинности того, что созерцается.

Пятое познание в загробной жизни в ясном видении лицом к лицу. Здесь имеется в виду созерцание праведниками Иисуса Христа слова, ставшего плотью. По своей природе сын Божий, будучи единосущен Отцу, всецело трансцендентен и недоступен для умозрения не только людей, но и ангелов. Познаваемым Он стал только после своего Воплощения. По словам ап. Павла: «Бог явился во плоти, оправдал

себя в Духе, показал себя Ангелам, проповедан в народах, принят верою в мире, вознесся во славе» (1 Тим. 3,16). Это созерцание не является чисто интеллектуальным, поскольку его объектом является *воплощенный* логос. Оно включает в себя участие преображенных благодатью телесных чувств, и потому Татеваци здесь имеет в виду не просто жизнь отделившейся от тела души в потустороннем мире, а жизнь будущего века после всеобщего воскресения из мертвых и Страшного суда.

Эти 5 видов Богопознания органически связаны с гносеологическими воззрениями св. Григора Татеваци. Они характеризуются гармоничным единством разума и веры. Естественный разум способен познавать созданный Богом мир, в котором раскрываются бытие и мудрость Творца. Сверхъестественное Откровение, принимаемое на веру не отрицает, а дополняет то, что может быть познано посредством естественного света разума. Если основанная на нем естественная теология опирается на чувственный опыт и рациональное мышление, то Откровение является продуктом пророческого вдохновения, которое, в свою очередь может иметь различные формы-образной имагинации, интеллектуальной интуиции, и, наконец, мистического созерцания, доступного в этой жизни только святым, а всем остальным в жизни будущего века после всеобщего воскресения из мертвых. В этом учении Григора Татеваци о видах человеческого познания содержится квинтэссенция гносеологических воззрений, характерных для теологической мысли армянского средневековья.

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ԱՍՏՑՈ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐՆ ԸՍՏ Ս. ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ «ՈՍԿԵՓՈՐԻԿԻ»

Սուրբ Գրիգոր Տաթևացին հայ նշանավոր միջնադարյան փիլիսոփա և աստվածաբան է: Նա թողել է շատ հարուստ գրական ժառանգություն: Նրա երկերի մեծ մասը նվիրված է աստվածաբանական հիմ

նահարցերին, ինչը միանգամայն բնական է միջնադարյան մտածողի համար: Սակայն դա ուներ նաև իր քաղաքական պատճառները: Նրա կյանքի օրոք մեծ ծավալ է ստացել կաթոլիկ Եկեղեցու հավատորսությունն Արևելքում: Տարբեր միաբանություններին պատկանող կաթոլիկ միսիոներները մեծ ջանքեր էին գործադրում՝ հայերին հավատափոխ անելու համար, ինչը չափազանց վտանգավոր էր, քանի որ միջնադարում Հայոց Եկեղեցուն պատկանելը հայկական ազգային ինքնության կարևորագույն բաղադրիչներից մեկն էր: Կաթոլիկ միարարության դեմ պայքարին Սուրբ Գրիգոր Տաթևացին նվիրել է մի շարք երկեր, որոնցից մեկը 1401 թ. գրված «Ոսկեփորիկն» է: Իր կառուցվածքով այն նման է Տաթևացու «Հարցմանց գրքին», սակայն ավելի փոքր է ծավալով: «Ոսկեփորիկի» մեջ համակարգված են հայ միջնադարյան աստվածաբանական մտքի նվաճումները: Տաթևացու երկերում մեծ ուշադրություն է դարձվում աստվածաճանաչողության հիմնախնդրին: Կան այդ հիմնախնդրի լուծման երկու տարբերակներ: Նրանցից առաջինն իր դասական դրսևորումն է ստացել հին հունական փիլիսոփայության մեջ: Հին հույները, իրենց բնավորությամբ հակված լինելով հայեցողությանը և իմաստասիրական մտորումներին, հանգել են տիեզերքի Նախապատճառի գաղափարին՝ տեսնելով տիեզերական բոլոր գործընթացների և շարժումների օրինաչափ ու կանոնավոր լինելը: Քանի որ առանց Նախապատճառի գոյության այս կանոնավորությունն անբացատրելի կլիներ, մեծագույն հույն փիլիսոփա Արիստոտելն ընդունել է դրա գոյությունը՝ այս Նախապատճառն անվանելով Աստված: Սակայն նրա մոտ հնարավոր չէ գտնել Աստծո բնության որևէ նկարագրություն: Նա սահմանափակվում է Աստծո ամենաընդհանուր ու վերացական հատկությունների թվարկմամբ: Դրանցից կարևորագույնն այն է, որ Աստված իր սեփական գոյության պատճառն է: Նա անկախ է ամեն ինչից, մինչդեռ համայն տիեզերքը կախված է Նրանից: Նա նաև Առաջին Շարժիչն է, որը շարժում է ամբողջ տիեզերքը, մնալով անշարժ և անփոփոխ: Դա հավիտյան ապրող ինքնագո Նախապատճառն է, որն իր իսկ մտածողության առարկան է: Թեև այս գաղափարը շատ խորն է, սակայն այն մեզ տալիս է Աստծո մասին ամենաընդհանուր պատկերացումը, որը զուրկ է որոշակիությունից: Եթե Աստծո մտածողության սուբյեկտն ու օբյեկտը համ

ընկնում են, ուրեմն մենք պիտի ընդունենք, որ նա ունի ինքնագիտակցություն ու հետևաբար մի բացարձակ Անձ է: Անձը, բացի մտածողությունից, պիտի ունենա նաև զգացմունք ու կամք, սակայն անտիկ իմաստասերները դրա մասին որևէ բան չեն ասել, և այդ տեղեկությունները պետք է փնտրել ուրիշ տեղ: Գոյություն ունի աստվածաճանաչողության ևս մի ձև, որը հիմնված է պատմության մեջ տեղի ունեցած աստվածահայտնությունների ճանաչման վրա: Այս տեսակի աստվածաճանաչողության տիպիկ օրինակը հրեա ժողովրդի կրոնական ավանդույթն է: Հրեական պատմությունն ի սկզբանե կրոնական պատմություն էր: Այն սկսվում է մոտավորապես մ.թ.ա. 2000 թ., երբ Միջագետքում ապրող Աբրահամ անունով մարդը հանդիպել է Աստծուն, Ով հայտնեց նրան Իր կամքը: Աստված հրամայեց Աբրահամին թողնել իր երկիրը և գնալ Քանաան, որը նա խոստացել է տալ Աբրահամի և նրա ամուլ կին Սառայի հետնորդներին: Աբրահամը կատարեց Աստծո կամքը և գնաց Քանաան, որտեղ ծնվեց նրա Իսահակ որդին, որից իր հերթին ծնվեց Հակոբը, ով դարձավ հրեա ժողովրդի նախահայրը: Աբրահամի որդին ու թոռը նույնպես ունեին Աստծո հետ անմիջական շփման փորձ, այնպես որ նրանց համար Աստծո գոյությունը ոչ թե տիեզերքի հայեցողության ու վերացական փիլիսոփայական դատողությունների արգասիք էր, այլ նրանց կյանքի որոշակի փաստ: Ավելին, այս Աստված ոչ թե վերացական գոյացություն էր Արիստոտելի Առաջին Շարժիչի նման, այլ կենդանի Անձ, Ում հետ հնարավոր է անմիջական շփման մեջ մտնել:

Վերադառնալով Սուրբ Գրիգոր Տաթևացու աստվածաբանական վարդապետությանը, ինչպես որ այն ներկայացված է «Ոսկեփորիկի» մեջ, պիտի նշել նրա կողմից կատարված Աստվածաճանաչողության անտիկ ու բիբլիական ձևերի համադրությունը: Նրա կարծիքով գոյություն ունեն մարդկային ճանաչողության հինգ տեսակ՝ բնական քննությամբ, հավատքի ձեռքով, շնորհական եղանակով, մտքի իմացության առանձնակի տեսությամբ ու հանդերձյալ կյանքում պայծառ տեսությամբ: Մարդկային ճանաչողության այս ձևերը, որոնք Տաթևացու մոտ չեն տարբերվում Աստվածաճանաչողության ձևերից, օրգանապես կապված են նրա իմացաբանական հայացքների հետ: Դրանց համար բնորոշ է բանականության ու հավատի ներդաշնակ միասնությունը:

Բնական միտքը կարող է ճանաչել Աստծո կողմից արարված աշխարհը, որի վրա դրոշմված է Արարչի իմաստությունը: Գերբնական Հայտնությունը չի ժխտում, այլ լրացնում է այն, ինչ կարելի է ճանաչել բնական բանականության լույսի ներքո: Ս. Գրիգոր Տաթևացու ուսմունքն իմացության ձևերի մասին պարունակում է հայ միջնադարյան մտքին բնորոշ կարևորագույն իմացաբանական սկզբունքները:

ԲՈՋՈՅԱՆ ԱԶԱՏ

Ս. ԳԻՐՔԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ

ԺԵ դարի 40-ական թթ. Յոհաննես Գյուտենբերգի ջանքերով սկիզբ դրվեց տպագրության դարաշրջանի, որը հեղաշրջում առաջացրեց համաշխարհային մշակույթի գրեթե բոլոր բնագավառներում: Մանավանդ մեծ է եղել այդ գյուտի դերը Աստվածաշնչի բազմալեզու բնագրերի հրատարակության գործում, քանի որ տպագրական գործունեության առաջին իսկ տարիներին լույս աշխարհ եկան Աստվածաշնչի բազմալեզու, զուգադիր տարբերակները[1]: Աստվածաշնչագիտությունը խթանած մարդկային գործունեության այս բնագավառն արդեն ԺՉ դարում փորձում էր իր հսկողության տակ առնել Հռոմի կաթոլիկ եկեղեցին: Գյուտենբերգի գյուտը կարճ ժամանակում ներդրվեց Արևմտյան Եվրոպայի գրեթե բոլոր երկրներում, իսկ 1512 թ. Հակոբ Մեղապարտը Վենետիկում հրատարակեց առաջին հայերեն գրքերը: Ինչպես գիտենք, այդ տարիներին Հայոց կաթողիկոսական աթոռը նոր էր հաստատվել Վաղարշապատում (1441 թ.), և երկար ժամանակ քաղաքական իրավիճակը՝ տարածաշրջանում չընդհատվող պատերազմները, եկեղեցական իշխանությունների անկայուն դրությունը խանգարում էին Մայր Աթոռի լիաշունչ մշակութային գործունեությանը:

Հաջորդ գործիչը, որը կարևոր դեր ունի հայոց տպագրության զարգացման գործում, եվդոկեցի Աբգար դպիր Թոխատեցին է, որը Միքայել Ա Սեբաստացի օգնական-կաթողիկոսի հատուկ նամակով

---

[1] Բազմալեզու (հունարեն, լատիներեն, եբրայերեն, ասորերեն, արաբերեն) Աստվածաշնչի առաջին հատորավոր հրատարակությունը լույս է տեսել 1569 1572 թթ. Ամստերդամում, փարիզյանը՝ 1629 1645 թթ. , իսկ լոնդոնյանը՝ 1655 1657 թթ տե՛ս Kaufhold H., Die Wissenschaft vom Christlichen Orient (Gedanken zur Geschichte und Zukunft des Faches). Vom Euphrat an die Altmühl: Die Forschungsstelle Christlicher Orient an der Katholischen Universität Eichstätt-Ingolstadt / Hetausgegeben von Peter Bruns und Heinz Otto Luthe, Wiesbaden, 2012, S. 47-48 [Eichstäter Beiträge zum Christlichen Orient, Bd. 1].

իբրև դեսպան 1562-1565 թթ. միջև ներկայանում է Հռոմի Պիոս Դ պապին (1559 1565 թթ.): Աբգար դպիրը 1566 թ. Վենետիկում բազմաթիվ գրքերի կողքին հրատարակում է նաև Սաղմոսարան՝ սկիզբ դնելով Սուրբգրային բնագրերի հրապարակմանը մեզանում: Սաղմոսարանի նշանակությունը Հայոց եկեղեցու կողմից կարևորվում էր հատկապես իբրև հոգևոր ընթերցանության և ծիսական գիրք: Այնուամենայնիվ այս շրջանում Մայր Աթոռում հետզհետե մտահոգության առարկա էր դառնում Աստվածաշնչի բազմաթիվ ձեռագրերում լավագույն բնագրի առանձնացումն ու հրապարակումը, Եկեղեցու կարիքների համար միասնական Աստվածաշնչային բնագրի հրատարակությունը: Նման գործունեությունը հետզհետե դժվարանում է նաև Եվրոպայում: Հռոմի պապության դեմ ապստամբած անգլիական, գերմանական, ֆրանսիական, հոլանդական նահանգները տպագրական գործը զենք էին դարձրել կաթոլիկ եկեղեցու դեմ պայքարում, այդ իսկ պատճառով ուժեղանում է պապական եկեղեցու վերահսկողությունը տպագրական գործի վրա՝ խոչընդոտելով յուրաքանչյուր կասկածելի, մանավանդ օտարալեզու, հատկապես Սուրբ Գրքի այլալեզու հրատարակությունների հրապարակվելը: Հայ տպագրիչները ստիպված էին ենթարկվել խաղի կանոններին, իսկ Հայոց եկեղեցին իր անհուն լավատեսությամբ սպասում էր նոր ժամանակների:

Մինչ այդ՝ ԺԷ դարի ընթացքում, հայերեն գրքերի հրատարակությունը Եվրոպայում գրեթե ամբողջովին կենտրոնանում է Հռոմի պապության Հավատի համասփյուռ քարոզչության (Propaganda de fidei) Ուրբանյան տպարանի ձեռքում: Հիշարժան է, որ Հռոմի պապության Հավատասփյուռ քարոզչության կենտրոնը փորձում էր իր ձեռքում կենտրոնացնել Քրիստոնյա Արևելքի գրեթե բոլոր ժողովուրդների հրատարակչական գործը, հատկապես Ս. Գրքի հրատարակությունը հունարեն, արաբերեն, ասորերեն և այլ լեզուներով[2], որին ձեռնամուխ էին լինում Քրիստոնյա Արևելքի՝ կաթոլիկություն ընդունած եկեղեցական կառույցները (Քաղդեական, մարոնի, մելկիտ ևն):

Հայկական գաղութների մեջ Լամբերգը (Լվով) և Նոր Ջուղան

---

[2] Այդ մասին տե՛ս հ. Սահակ Ճեմճեմեան, Հայ տպագրությունը եւ Հռոմը (ԺԷ դար), Վենետիկ, 1989, էջ 9-12:

հետևողականորեն փորձում էին սատար կանգնել Հայոց եկեղեցու գրահրատարակչական գործին՝ հաղթահարելով կաթոլիկ եկեղեցու հարուցած դժվարությունները: Հիշատակության արժանի են բաղիշեցի Հովհաննես քահանա Քարմատանենցի ջանքերը, որը 1615-1618 թթ. Լվովում հրատարակում է հայերեն Սաղմոսարան և հայատառ-ղփչաղերեն «Աղօթք հասարակաց»-ը[3]: Պետք է նկատի ունենալ, որ այս ժամանակ սլավոնական գրքի տպագրությունը դեռևս իր առաջին քայլերն էր անում Ռուսաստանում և մյուս պրովոսլավ երկրներում:

ԺԷ դարում Մայր Աթոռ Ս. Էջմիածինը հրատարակչական գործի զարգացումը վստահում է Նոր Ջուղայի հարուստ գաղութին: Տպագրության ասպարեզում Լվովի գաղութի բռնած ճանապարհն էր ընտրել նաև Խաչատուր Կեսարացին, որը, տեսնելով Եվրոպայում տպագրական գործիքներ հայթայթելու և տառերի ձուլման հետ կապված դժվարությունները, Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի մի խումբ նվիրյալ հոգևորականների աջակցությամբ ինքնուրույնաբար տառեր ստեղծեց (ձուլեց) Սպահանում և ձեռնամուխ եղավ Հայոց եկեղեցու սպասավորների համար այնքան ըղձալի եկեղեցածիսական գրքերի հրատարակությանը (Սաղմոսարան, 1638 թ., Խորհրդատետր՝ 1641 թ., Հարանց վարք, 1641 թ., Ժամագիրք, 1642 թ. ևն): Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կարիքների համար այստեղ հիմնված տպարանը Մերձավոր Արևելքում առաջիններից մեկն էր: Միաժամանակ Խաչատուր Կեսարացու աշակերտ Հովհաննես Ջուղայեցի վարդապետը, Եվրոպայում հետազոտելով տպագրական գործը, իր առաջին գրքերն է հրատարակում Վենետիկում (Ներսես Շնորհալի, Յիսուս Որդի, 1643 թ.), Լիվոռնոյում (Սաղմոսարան, 1644 թ.) և վերադառնալով Նոր Ջուղա՝ տպագրում է Պարզատումար (1647 թ.): Նրան է վերագրվում նաև ամբողջական Աստվածաշնչի հրատարակման առաջին փորձը (1650 թ.), որը, ցավոք, չհասավ իր ավարտին[4]: Օրվա խնդիր էր

---

[3] Նույն տեղում, էջ 339 348: Վկայություններ կան նաև հայերեն բժշկարանի տպագրության մասին, որը ցավոք չի պահպանվել, տե՛ս Ոսկանյան Ն., Կորկոտյան Ք., Խավալյան Ա., Հայ գիրքը 1512-1800 թվականներին, Երևան, 1988, էջ 16-17:

[4] Այդ մասին տե՛ս Ոսկանյան Ն., Կորկոտյան Ք., Սավալյան Ա., Հայ գիրքը

դառնում հայերեն Աստվածաշնչի հրատարակությունը, որն առանց հիմնավոր նախապատրաստության հնարավոր չէր իրականացնել: Նման աշխատանքներ ժէ դ. տարվում էին Հռոմում, Նոր Ջուղայում և Վաղարշապատում[5]: Աստուածաշնչի լիակատար հրատարակության պատիվը վերապահված էր Էջմիածնի Մայր Աթոռին:

Հռոմում այդ աշխատանքները փորձում էր համակարգել Հավատքի համաստիւռ քարոզչության կենտրոնն իր ներկայացուցիչ Պողոս Պիրոմալլիի միջոցով[6]: Հայոց տպագրության պատմության հաջորդ փուլում Ալ. Երիցյանը բարձր է գնահատում Ամենայն Հայոց կաթողիկոսների դերը հայկական տպագրության պատմության մեջ[7]: Առաջին մեծ հաջողությանն այս բնագավառում կարողացավ հասնել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կաթողիկոսարանի նախկին դիվանապետ, հետագայում Մուղնու Ս. Սարգիս վանքի վանահայր, նորջուղայեցի Ոսկան եպսկ. Երևանցին, որը 1666/68 թթ. Ամստերդամում լույս ընծայեց առաջին հայերեն Աստվածաշունչը[8]: Պատահական չէր հրատարակության համար ընտրված վայրը, քանի որ Հոլանդիայում գործող հայկական տպարանը համեմատաբար ազատ էր Հռոմի պապության հարուցած դավանաբանական-գրաքննական հետապնդումներից, թեպետ այս տպագրությունը պատրաստելու համար հրատարակիչը, ուղղորդվելով Պողոս Պիրոմալլու խորհուրդներով, խմբագրել էր Աստվածաշունչը լատին Վուլգատայի հետևողությամբ, մանավանդ վերախմբագրելով Նոր Կտակարանի հայկական բնագիրը: Տպավորիչ էր հատորի խորագիրը. «Աստուածաշունչ Հնոց եւ Նորոց Կտակարանաց ներ պարունակող, շարակարգութեամբ նախնեացն մերոց եւ ճշմարտասիրաց թարգմանչաց»: Հայագետ Ս. Քոլանջյանը,

---

1512-1800 թվականներին, Երևան, 1988, էջ 32, Անասեան Յ. , Մանր երկեր, էջ 41:

[5] Անասյան Հ., Աստուածաշունչ մատեանի հայկական բնագիրը. նույնի՝ Մանր երկեր / ներած. Ա.Գ. Սանճեանի, Լոս Անջելես, 1987, էջ 23 25: Իշխանյան Ռ., նշվ. աշխ, էջ 375-377:

[6] Անասեան Յ., նշվ. աշխ., էջ 24, 25:

[7] Ա. եպս. Սմբատյանց, Սուրբ Էջմիածնի միաբանության գրական-կրթական գործունեությունը և Մայր Աթոռի տպարանը, Էջմիածին, 1973, էջ 19:

[8] Տե՛ս Էջմիածին, 1966, ԺԱ-ԺԲ, էջ 71-175:

փորձելով գտնել Ոսկան Երևանցու հրատարակած Աստվածաշնչի բնագրի համար հիմք հանդիսացած հայերեն ձեռագրերը, եկել է այն համոզման, որ թե՛ Հեթում Բ արքայի (ՄՄ-180) և թե՛ Ղազար Բաբերդացու (ՄՄ-201) ընդօրինակած Ս. Գրքի ձեռագրերը հայտնի են եղել հրատարակչին: Դրանցից առաջինի վրա պահպանվել են Ոսկան Երևանցու բազմաթիվ նշումները: Այնուամենայնիվ, լատին Վուլգատային հետևող Ամստերդամյան Աստվածաշնչի խմբագրական հավելումների մեծ մասը վերագրվում են Ոսկան Երևանցուն[9]: Ուղղակիորեն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կողմից խրախուսվող ձեռնարկ կարելի է համարել Հակոբ Դ Ջուղայեցի (1655-1680 թթ.) կաթողիկոսի հովանու ներքո Ամստերդամի «Սրբոյն Աթոռոյն Էջմիածնի և Ս. Սարգսի» տպարանում կատարված աննախադեպ հրատարակչական աշխատանքը: Մատթեոս Ծարեցին, Ավետիս Ղլիճեցին, Կարապետ Անդրիանացին, Ոսկան Երևանցին, Պետրոս Ջուղայեցին միասնական ջանքերով Հայոց եկեղեցու կարիքների համար, բացի Աստվածաշնչից, տպագրում են նաև մի շարք այլ հատորներ[10]: Այնուամենայնիվ, Ամստերդամում հիմնված այս տպարանի գլուխգործոցը մնում է հայերեն Աստվածաշնչի առաջին տպագրությունը:

Հռոմի Ուրբանյան տպարանում լույս տեսնող հայերեն գրքերի հրատարակությունը կարծես ժամանակավորապես դադարում է, երբ Ամստերդամում աշխատում էր «Ս. Աթոռ Էջմիածնա և Ս. Սարգսի» տպարանը, թեպետ այդ տպարանի աշխատանքները դադարեցնելու դիմումներով հեղեղվում է Համասփյուռի գրասենյակը[11]: Հետաքրքիր է, որ Ամստերդամի տպարանի գրեթե իննամյա (1661-1669 թթ.) բուռն գործունեության ընթացքում ուրիշ որևէ վայրում հայերեն գիրք կարծես չի հրատարակվում: Հետագայում այս տպարանի գործունեությունը շարունակվում է Լիվոռնոյում և Մարսելում Սողոմոն Լևոնյանի հետ համատեղ: Հայոց տպագրական գործի պատմության համար հետաքրքիր է նաև այն փաստը, որ Ոսկանի տպած Աստվածաշնչի

---

[9] Տե՛ս Քոլանջյան Ս., Հեթում Բ ի ձեռագիր Աստվածաշունչը և Ոսկանյան հրատարակությունը, Էջմիածին, 1966, ԺԱ-ԺԲ, էջ 116-126:

[10] Իշխանյան Ռ., Հայ գրքի պատմություն, հտ. 1, Երևան, 1977, էջ 405-471:

[11] Նույն տեղում, էջ 475-480:

բնագիրը դեռևս շուրջ երկու դար շարունակ վերահրատարակվում էր աշխարհի տարբեր ծագերում Մայր Աթոռի հովանու ներքո հաստատված տպարանների կողմից[12], լրացնելով հայոց եկեղեցիներում Աստվածաշնչի բնագրի պակասը (Կ. Պոլիս, 1705 թ., Վենետիկ, 1733 թ., Ս.Պետերբուրգ, 1817 թ., Սիրամփուր, 1817 թ.):

ԺՋ - ԺԸ դարի քաղաքական անկայուն վիճակը և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տնտեսական հնարավորությունները հնարավորություն չէին տալիս Ամենայն Հայոց կաթողիկոսներին հրատարակչական գործը և գրքերի տպագրությունը համատեղելու Վաղարշապատում: Դրան խանգարում էին նաև գրքերի հրատարակության բնագավառում պարսկական իշխանությունների դրած արգելքները: Ուստի կաթողիկոսները, Հայոց եկեղեցու հոգսերը հոգալու համար, ստիպված էին տպարաններ պահել և հովանավորել Ամստերդամում, Մարսելում, Վենետիկում, Լիվոռնոյում, Կ.Պոլսում, Զմյուռնիայում, Աստրախանում և այլ քաղաքներում: Հատկանշական է, որ հիշատակված քաղաքների տպարաններից շատերը կրում էին «Սուրբ Էջմիածնի» անունը, և գրքերը հրատարակվում էին Ամենայն Հայոց կաթողիկոսների անունից: Ամենայն Հայոց կաթողիկոսարանի հովանու ներքո Վաղարշապատում տպարան հիմնելու միտքն իրականություն դարձրեց միայն Սիմեոն Ա Երևանցի (1763-1780 թթ.) կաթողիկոսը: Սկսած 1765 թ., նա Զմյուռնիա ուղարկված նվիրակ Ղուկաս Կարնեցու միջոցով Վաղարշապատ է հրավիրում Զմյուռնիայի տպագրիչ Մարկոսին և հրահանգում Ամստերդամում հաստատված Հովհաննես վարդապետին և խոջա Առաքելին տառեր, տպագրական գործիքներ և պարագաներ ուղարկել Վաղարշապատ[13]: Եռանդուն նախապատրաստությունից հետո՝ 1771 թ., Սիմեոն կաթողիկոսին հաջողվում է Հնդկաստանում բնակվող ջուղայեցի Գրիգոր Խոջաջանյանի նվիրատվությամբ տպարան հիմնել իր բոլոր պարագաներով: Այդ նույն ժամանակ է վրաց

---

[12] Անասեան Հ., Էջմիածնի տպարանի Սուրբգրային հրատարակությունները և Ս. Գրքի քննական հրատարակության հարցեր: Նույնի՝ Մանր երկեր, էջ 42:

[13] Ա. եպս. Սմբատյանց, Սուրբ Էջմիածնի միաբանության գրական կրթական գործունեությունը և Մայր Աթոռի տպարանը/ հրատ. պատրաստումը, ներածությունը, ծանոթագրությունները և հավելվածը՝ Ս. Քոլանջյանի և Արթուն Հատիտյանի, Էջմիածին, 1973, էջ 43, 44:

Հերակլ Բ արքան տպարան է հիմնում Թիֆլիսում՝ օգտագործելով կաթողիկոսի կապերը Կոստանդնուպոլսի հայ տպագրիչների հետ[14]: Միաժամանակ Սիմեոն Վեհափառ Հայրապետը քայլեր է ձեռնարկում՝ Վաղարշապատում թղթի գործարան հիմնելու համար: Որքան էլ Սիմեոն կաթողիկոսի կողմից արժևորվում էր Աստվածաշնչի հրատարակությունը, նա լավ գիտակցում էր, որ այդ բնագրի նոր հրատարակությունը պահանջում էր լավ կրթություն ստացած կարող ուժերի համախմբում:

Այս շրջանում հայագիտությամբ զբաղվող ուժերի կենտրոնացում էր տեղի ունեցել Վենետիկի Մխիթարյան միաբանությունում, որն էլ Մխիթար Սեբաստացուց սկսած՝ քայլեր ձեռնարկեց Աստվածաշնչի դասական թարգմանության բնագրի վերականգնման բնագավառում: Արդեն իսկ 1733 թ. հրատարակած Ոսկան Երևանցու կազմած բնագրի վենետիկյան հրատարակության մեջ Մխիթար աբբահայրը քննական որոշ վերաբերմունք ցուցաբերեց, հիմնվելով իրեն հասու ձեռագրերի վրա՝ սրբագրեց Ոսկանի որոշ շեղումներ՝ էլ ավելի շատ բնագրական դիտողություններ կատարելով իր հրատարակության լուսանցքներում: Այդ դիտողությունները հիմնականում ներկայացնում էին 1645 թ. Փարիզում հրատարակված յոթնլեզվյան Աստվածաշնչի հետ կատարված համեմատության արդյունքները: Մխիթար Սեբաստացու քննական վերաբերմունքը Աստվածաշնչի բնագրին և նրա տարբեր ձեռագրերի օգտագործման խնդրում հետագայում արտացոլվեց Մխիթարյանների սուրբգրային բնագրերի հետագա հրատարակություններում[15]: 1805 թ. Մխիթարյանները հ. Հովհաննես Զոհրաբյանի ղեկավարությամբ հրապարակեցին հայկական Աստվածաշնչի դասական բնագիրը, որը հիմնված էր շուրջ 7 հինկտակարանային և 20 նորկտակարանային ձեռագրերի վրա: Զոհրաբյանի Աստվածաշունչը պետք է համարել հայկական դասական բնագրի առաջին գիտական հրատարակությունը, իսկ Արսեն Բագրատունու կողմից 1860 թ. լույս ընծայված բնագիրը՝ նախորդ (1805 թ.) հրա-

---

[14] Տե՛ս Չոբանյան Պ., Հայ ռուս վրացական փոխհարաբերությունները ԺԸ դարի երկրորդ կեսին, Ս. Էջմիածին, 2006, էջ 125:

[15] Անասյան Հ., Աստվածաշունչ մատյանի հայկական բնագիրը, Էջմիածին, 1966, ԺԱ-ԺԲ, էջ 92:

տարակության բարելավված տարբերակը, որտեղ հեղինակը, հիմնվելով ձեռագրական ընթերցումների և հունարեն քննական բնագրի վրա, բազմաթիվ նոր սրբագրություններ է կատարել[16]: Արսեն Բագրատունու հրատարակության հիմնական նպատակը Աստվածաշնչի թարգմանական բնագրի գիտական հղկումն էր Ե դարի դասական հայերենի օրենքների հետևողությամբ:

Զոհրաբյանի և Բագրատունու հրատարակություններից հետո նոր էջ է բացվում հայկական Աստվածաշնչի ուսումնասիրության ասպարեզում, որի գիտակցությամբ էլ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը ԺԹ դարի վերջին և Ի դարի սկզբին հանդես եկավ նոր նախաձեռնությամբ: Պետք է միայն հիշատակել, որ 1787 թ. ի վեր մինչև Ի դարի սկիզբը Էջմիածնի տպարանում չորս անգամ հրատարակվել է Դավթի Սաղմոսաց Գիրքը և հինգ անգամ Ավետարանների բնագիրը, չհաշված Ավետարանների մասնակի հրատարակությունները, ինչպես օրինակ՝ Իւղաբերից Ավետարանը: Ամբողջական, Հայոց եկեղեցու իշխանությունների կողմից վերահսկված Աստվածաշնչի բնագիր հրատարակելու հարցը Էջմիածնում օրակարգի խնդիր է դառնում Մակար Ա կաթողիկոսի (1885-1891 թթ.) օրոք, երբ ծրագրի իրագործումը հանձնարարվում է 1887-1888 թթ. Գևորգյան ճեմարանի դասախոս Մաղաքիա եպս. Օրմանյանին[17]: Թեպետ 1889 թ. հոկտեմբերին ավարտվում է տպարանի նոր շենքի կառուցումը, սակայն, ավա՛ղ Մ. Օրմանյանն այլևս չէր պաշտոնավարում Մայր Աթոռում, ինչպես որ կիսատ են մնում բազմաթիվ մտահղացումներ, որոնք կապված էին Գևորգյան ճեմարանի գործունեության հետ:

Խրիմյան Հայրիկի կաթողիկոսության (1892-1907 թթ.) շրջանում Աստվածաշնչի նոր բնագրի հրատարակության հարցը դառնում է Մայր Աթոռի գործունեության կարևորագույն խնդիրներից մեկը, քանի որ Աստվածաշնչյան ամերիկյան ընկերության կողմից 1895 թ. Կ. Պոլսում լույս ընծայված բնագրում հաշվի չէր առնվել Հայոց եկեղեցու կանոնը, և բնագիր չէին մտել երկրորդականոն՝ Եզրի Ա, Յուդիթ,

---

[16] Տեր-Մկրտչյան Կ., Աստվածաշունչի նոր հրատարակությունը, «Արարատ», 1902, էջ 1076, 1077:

[17] Օրմանեան Մ., Ազգապատում, մասն Գ, 2945:

Տովբիթ, Մակաբայեցւոց Ա-Գ գրքերը, Իմաստութիւն Սողոմոնի, Իմաստութիւն Յեսուայ որդւոյ Սիրաքայ և Թուղթ Բարուքայ կտորները: Այս տպագրությունից հետո Աստվածաշնչի ամբողջական բնագրի գիտական հրատարակությունը և հայերեն ընկալյալ բնագրի վերականգնումը կարևոր նպատակ դարձան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գործունեության մեջ: Խրիմյան Հայրիկը նոր շունչ է տալիս հրատարակչական գործունեությանը և Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանի ղեկավարությամբ Աստվածաշնչի գիտական բնագիրը հրատարակելու համար հանձնաժողով է ստեղծում[18]: Այս է պատճառը, որ 1896 թ. հունվարի 19-ի թ. 85 և հունվարի 26-ի թ. 131 կոնդակներով պատվեր է տալիս տպարանին՝ լծվելու Աստվածաշնչի բնագրի հրատարակմանը: 1902 թվականին Կ. Տեր-Մկրտչյանը հանդես է գալիս հոդվածով՝ հստակեցնելով Աստվածաշնչի բնագիր կազմելու և հրատարակության հիմնական սկզբունքները: Մայր Աթոռի ձեռագրական հավաքածոյից առանձնացվում է ութ ձեռագիր, որոնք վերլուծական նկարագրության են ենթարկվում: Ծրագրված հրատարակության փորձնական պրակը տարընթերցումներով հանդերձ 1903 թ. սկզբնեին փորձաքննության համար ուղարկվում է մի շարք մասնագետների ու մտավորականների: Ցայժմ հայտնի է երեք արձագանք, որոնցից երկուսը հրապարակվել են ժամանակակից մամուլում[19]:

Ի դարասկզբի իրադարձությունները, ճակատագրական Առաջին համաշխարհային պատերազմը, Հայոց ցեղասպանությունը ու նրա հետևանքները, դրանց հաջորդած Հոկտեմբերյան հեղափոխությունը շուրջ 50 տարով մոռացության մատնեցին Աստվածաշնչի հրատարակության հետ կապված ծրագրերը: Նույնիսկ հայտնի չէ, թե Կարապետ Տեր-Մկրտչյանի կատարած աշխատանքի անտիպ նյութերը որտեղ են գտնվում այսօր:

Աստվածաշնչի բնագրի ընկալմանը մեզանում նոր լիցք հաղորդեցին Ոսկանյան Աստվածաշնչի հրատարակության 300 ամյակին նվիրված մտածումները, որոնք լայն արձագանք ստացան Մեծի Տանն

---

[18] Տե՛ս Անասյան Հ., Էջմիածնի տպարանի Սուրբգրային հրատարակությունները և Ս.Գրքի քննական հրատարակության հարցեր հոդվածը: Նույնի՝ Մանր երկեր, էջ 41-59:

[19] Անասյան Յ., Մանր երկեր, էջ 50:

Կիլիկիո և Կոստանդնուպոլսի աթոռներում: 1966 թ. Մայր Աթոռի պաշտոնական պարբերական «Էջմիածին»-ը լույս ընծայեց բացառիկ մի համար, որի հրապարակմանը մասնակցեցին Ոսկանյան Աստվածաշնչի հրատարակության պատմությանն առնչված ժամանակի հիմնական մասնագետները, նրանց ոգևորողը Տ.Տ. Վազգեն Ա Վեհափառն էր: Ոսկանյան Աստվածաշնչի տարելիցը նոր լիցք հաղորդեց էջմիածնի շուրջ համախմբված հայագիտական շրջաններին: 1969 թ. Էջմիածնում հրապարակվեց Ավետարանի արևելյան աշխարհաբար թարգմանությունը: Մի շարք հայագետներ Աստվածաշնչի գրաբար բնագիրն արևելահայերեն թարգմանելու համար պայմանավորվածություններ ձեռք բերեցին Մայր Աթոռի հետ: Այս շրջանակների համար Մայր Աթոռը արտասահմանում ձեռք բերեց հունարեն, լատիներեն, եբրայերեն և ասորերեն Աստվածաշնչերի նորագույն հրատարակությունները: Երկարատև խմբագրական աշխատանքներից հետո՝ 1996 թ., հրապարակվեց Աստվածաշնչի արևելյան-աշխարհաբար թարգմանությունը: 80-ական թթ. Մայր Աթոռը մի շարք հայագետների հետ պայմանագրեր ստորագրեց Ս. Գրքի տարբեր գրքերի գիտական բնագրերի ստեղծման համար: Ցայսօր հրատարակվել են Անդրանիկ Զեյթունյանցի կազմած «Ծննդոց Գիրք»-ը (1985 թ.), «Ելից Գիրքը» (1992 թ.), «Ղևտացւոց Գիրքը» (1993 թ.), «Թվոց Գիրքը» (1993 թ.), Հայկ Ամալյանի կազմած «Գիրք Մակաբայեցւոց»-ը (1996 թ.), Կլոդ Կոքսի հրատարակած «Երկրորդ Օրինաց»-ը (1981 թ.) և Պիտեր Կաուի կողմից պատրաստված «Դանիելի գիրքը» (1992 թ.): Տ. Շահե արքեպիսկոպոս Աճեմյանը մանրամասնորեն անդրադառնում է Վազգեն Վեհափառի կաթողիկոսության շրջանում Աստվածաշնչի հրատարակման գործում Մայր Աթոռի նախաձեռնություններին[20]: Նրա հովանավորությամբ լույս տեսավ Աստվածաշնչի հայկական ձեռագրերի նկարագրությունը: Երջանկահիշատակ Սրբազանն էլ իր լուման է ներդնում՝ հովանավորելով Աստվածաշնչի նոր բնագրի հրատարակությունը, որի հիմքում, ըստ նրա, դրված պետք է լիներ 1269 թ. գրված, Երուսաղեմում պահվող Երզնկայի Աստվածաշունչը: 2012 թ. Աստվա

---

[20] Ցուցակ Աստուածաշունչ մատեանի հայերէն ձեռագիրներուն, Լիզպոն, 1992, էջ Լ և հտև:

ծաշնչային ընկերությունը հրապարակեց իր իսկ հրատարակած Ս. Գրքի համաբարբառը՝ հիմնվելով 1996 թ. հրատարակած բնագրի վրա, միաժամանակ օգտագործելով հաշվողական տեխնիկայի հնարավորությունները:

Վերջին տարիներին Մայր Աթոռում հրապարակվում են նաև Ս. Գրքի մեկնողական երկերը: Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակության և «Մատենագիրք Հայոց մատենաշարերում» վերջին 10 տարում հրապարակվել են երկու տասնյակի հասնող մեկնողական երկեր: Դրանք հնարավորություն են տալիս ուղղակիորեն առնչվելու աստվածաշնչային այդ բնագրերի ոչ միայն միջնադարյան մեկնությունների հետ, այլ նաև վերահսկելու մեզ հասած սուրբգրային բնագրերի վիճակը: Մի խոսքով, Աստվածաշնչի տարբեր գրքերի գիտական բնագրերի պատրաստումը մեզանում դեռևս ընթացող գործընթաց է, այս բնագավառում նոր հետազոտությունների կարիք է զգացվում:

Ամփոփելով վերևում ասվածը՝ կարելի է կատարել հետևյալ ընդհանրացումները.

ա/ Հայոց եկեղեցին ի սկզբանե մեծ հետաքրքրություն է ցուցաբերել Աստվածաշնչի հրատարակության գործի նկատմամբ: Սակայն քաղաքական պայմանները մինչև ԺԸ դարի 70-ական թթ. թույլ չեն տվել տպագրական գործի զարգացումը ո՛չ Արևելյան, ո՛չ էլ Արևմտյան Հայաստանի տարածքում: Այդ իսկ պատճառով Հայոց կաթողիկոսներն ամեն գնով փորձել են սատարել տպագրական գործին արտասահմանում: Այս շրջանում հայկական տպագրության զարգացման գործում նոր երևույթ դարձավ Ամստերդամում ստեղծված «Ս. Էջմիածին և Ս. Սարգիս» տպարանի գործունեությունը: Այս տպարանի աշխատանքի և Մայր Աթոռի նախկին դիվանապետ Ոսկան Երևանցի վարդապետի ջանքերի շնորհիվ լույս աշխարհ եկավ առաջին հայերեն Աստվածաշունչը:

բ/ ԺԸ-ԺԹ դդ. քաղաքական հանգամանքները թույլ չտվեցին Մայր Աթոռին ուժեր կենտրոնացնել Աստվածաշնչի բնագրի քննության և բնագրի պատրաստման խնդրի վրա: Կարծես թե Էջմիածնի կաթողիկոսարանը Մխիթարյաններին էր զիջել այդ բնագավառում հետազոտություններ կատարելու առաջնությունը:

գ/ ԺԹ դ. վերջի և Ի դարի սկզբի կաթողիկոսներ Մակար Թե

ղուտեցին և Խրիմյան Հայրիկը կրկին Վաղարշապատի միաբանության ուշադրությունը սևեռում են Աստվածաշնչային բնագրերի վերահրատարակության վրա: Գործի գլուխ է կանգնում Կարապետ Տեր-Մկրտչյանը: Ցավոք, կատարված աշխատանքն ընդհատվում է, քանի որ կողմերին պարզ չէր, թե Աստվածաշնչի բնագիրն ինչպես պիտի հրամցվեր ընթերցողին: Եթե Կարապետ Տեր-Մկրտչյանն իր առջև նպատակ էր դրել վերականգնելու ընկալյալ բնագրի դասական վիճակը, ապա հոգևոր դասի գերակշռող մասը պահանջում էր կարճ ժամանակում հրապարակել եկեղեցու ծեսի կարիքները բավարարող Աստվածաշունչ: Եկեղեցու հավատացյալների և սպասավորների մի մասն էլ ակնկալում էր ունենալ ժողովրդին հասկանալի լեզվով թարգմանված Ս. Գիրք: Կարծում եմ՝ այս հակամետ նպատակներն են եղել գործի ընդհատման պատճառը: Պիտի ափսոսել, որ ցայսօր հայտնի չէ Կ. Տեր-Մկրտչյանի ղեկավարությամբ կատարված աշխատանքի թողոնների պահպանման տեղը:

դ/ Աստվածաշնչի բնագրի հրատարակությունը խթանելու տեսանկյունից կարևոր նշանակություն ունեցավ Ոսկանյան Աստվածաշնչի հրատարակման 300-ամյա տարելիցի ոգեկոչումը Վազգեն Ա Վեհափառի կողմից: Գործին լծվեց հայագետների մի բավական համախումբ փաղանգ, որոնց ջանքերի շնորհիվ 1996 թ. արևելահայերեն թարգմանվեց Աստվածաշունչը: Վերջին տասնամյակների ամենակարևոր ձեռքբերումը դարձավ Աստվածաշնչի շուրջ մեկ տասնյակ գրքերի գիտական բնագրերի հրատարակությունը: Այսօր էլ Ս. Գրքի գիտական բնագրի պատրաստումը մնում է մերօրյա հայագիտության և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի առջև կանգնած կարևորագույն խնդիրներից մեկը:

BOZOYAN AZAT

THE SCRIPTURE IN THE PUBLISHING PLANS OF THE MOTHER SEE HOLY ETCHMIADZIN

The Armenian Church from the beginning had a great interest in publishing the Holy Bible. However the political conditions until 70 ties of

XVIII century didnt allow to develop the publishing business neither in Western, nor in Eastern Armenia. Exactly because of this reason the Armenian catholicoses tried at any cost to support the publishing business abroad. In this period the activity of printer's "Holy Etchmiadzin and st.Sargis", which was established in Amsterdam, became a new phenomenon in the Armenian book-printing. By virtue of work of this printing-house and the efforts of former chancellor of the Mother See Voskan Yerevantsi the first Armenian Bible came into being.

In the XVIII-XIX centuries the political conditions didnt allow the Mother See to focus on the research and preparation of the text of the Bible.It seems that Mother See Holy Etchmiadzin yielded to Mekhitarists the primacy of research in this field.

The catholicoses Macar Teghutetsi and Khrimean Hairik, lived in the late 19th - early 20th century, focused attention of the congregation of Vagharshapat on the republication of the biblical texts. Unfortunately the work was interrupted. As it was unclear how to present the text of the Bible to the reader. If Karapet Ter-Mkrtchean set a goal to restore the classical condition of the text, the greater part of the spiritual estate required in a short time to publish a Bible that satisfies the religious needs of the Church. Another part of the believers and Church ministers hoped to have a Bible translated into a language understandable to the people. I suppose that these opposite goals also contributed to the termination of the work. One should regret that to this day it is not known where are kept the results of the work done under the leadership of K. Ter-Mkrtchean.

From the standpoint of stimulating the publication of the Bible important was the celebration of the 300th anniversary of publication of the Bible of Voskan, which was initiated by catholicos Vazgen I. The rather serried phalanx of armenologists got down to work, and thanks to their efforts in 1996 the Bible was translated into the Eastern Armenian language. The most important achievment of the last decades was the publication of dozens of scientific biblical texts. Today the preparation of the scientific text of the Bible remains one of the most important tasks facing modern Armenology and the Mother See Holy Etchmiadzin.

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՀԱՅԵՐԸ ԲԻԹԼԻՍՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՏԱՌ ՔՐԴԵՐԵՆ ՁԵՌԱԳԻՐ ՈՒ ՏՊԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Բիթլիսի (Բաղեշի) մասին մեզ հասած հայ, արաբ, բյուզանդացի հեղինակների բազում վկայությունները հնարավոր են դարձնում նրա պատմության կարևոր շրջանների ուրվագծումը:

Հայկական մատենագրության մեջ Բաղեշ (Բաղիշոյ բերդ) անվանումն առաջին անգամ հիշատակում է Սեբեոսը (VII դ.)[1]: IX-X դդ. պատմիչ Թովմա Արծրունին «շահաստան Բաղեշ» է կոչել այս հարուստ շրջանը[2]:

Բաղեշը հայերի համար մշակութային կարևոր կենտրոն է եղել՝ շնորհիվ գրչության կենտրոններ հանդիսացած վանքերի, եկեղեցիների, դպրոցների: XVI-XVIII դդ. Բաղեշում կրթություն ստացած հայտնի դեմքերից են եղել Վարդան, Առաքել, Ներսես Բաղեշցիները, Պոլսի և Երուսաղեմի պատրիարքներ Հովհաննես Կոլոտը, Հակոբ Նալյանը, տաղասաց Կարապետ Բաղիշեցին և ուրիշներ: Բաղեշի դպրոցը մեծագույն ավանդ է ունեցել հայ մատենագրության, մշակույթի զարգացման մեջ: Այստեղ գրի են առնվել և հեղինակվել բազմաթիվ ձեռագրեր: Այս առումով ամենից հայտնին Ամրդոլու վանքն էր, որը հռչակված էր որպես գրչության կենտրոն:

XIII դ. արաբ աշխարհագիր Յակուտ Ալ-Համավին Բիթլիսի մասին արաբական արշավանքների շրջանում «Արմինիայի Բադլիս»[3] է գրում: Շատերն այն հիշատակել են որպես մրգառատ, ընտիր մրգերի քաղաք, որտեղ ամեն տուն այգի, բանջարանոց է ունեցել, որտեղ ամեն տեսակ միրգ է աճել:

1514 թ. Չալդրանի ճակատամարտից հետո այս շրջանը գրավվել ու միացվել է Օսմանյան կայսրությանը: Բիթլիսի քրդական իշխանու-

---

[1] Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլն, Թիֆլիս, 1912, էջ 227, 228:

[2] Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, Երևան, 1978, էջ 127:

[3] Տեր-Ղևոնդյան Ա., Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965, էջ 230:

թյունը, որ խանություն կամ հյուքումեթություն է կոչվել, առանձնապես հզոր է եղել XVI XVIII դդ.: Այստեղ բնակություն էին հաստատել քրդեր ու եզդիներ:

Բիթլիս քաղաքը, ըստ Լինչի[4] տեղեկության, ունեցել է մոտ 30 հազ. բնակչություն, որից 10 հազարը հայեր էին: Բիթլիսն առևտրական կարևոր կենտրոն է եղել:

Առևտուրը, արհեստները, գյուղատնտեսությունը Բիթլիսում հիմնականում հայերի ձեռքում են գտնվել. 3 շուկա, 1200 խանութ, զարգացած կաշեգործություն, դարբնություն, զինագործություն, ջուլհակագործություն, դերձակություն, ներկարարություն, մեծ համբավ ունեցող «շիլա»» տեղական կարմիր կտոր, որն արտահանում էին: XIX դարում ստեղծվում են մանուֆակտուրաներ, փոքրիկ գործարաններ, այստեղ սկսել էին մուտք գործել կապիտալիստական հարաբերությունները: Ազգագրական հարուստ և գունագեղ սովորույթներ ուներ այս գավառը:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, Մեծ եղեռնի ժամանակ քաղաքը հայաթափ է լինում:

Հայերի մշակութային կյանքի զարգացման կարևոր միջոցներից է եղել հայատառ թուրքերեն (*ermeni harfli türkçe*) գրականությունը, քանզի Բիթլիսը Արևմտյան Հայաստանի առավելապես թրքախոս գավառների թվում է եղել: Պատճառներից մեկն այն է եղել, որ Օսմանյան կայսրության որոշ գավառներում մահվան սպառնալիքով արգելված է եղել հայոց լեզվի օգտագործումը: Ապահովության համար շատերը հայկական անվանը զուգահեռ թուրքական անուններ էլ են ունեցել:

Հայկական տառերի միջոցով, սակայն թուրքերենով ստեղծված գրականությունն օգնել է, որպեսզի հայերն այս գրականության միջոցով շարունակեն իրենց հոգևոր կապը սեփական ժողովրդի, ավանդական լուսավորչական դավանանքի հետ: Հայատառ թուրքերեն գրականությունը և մամուլը ինչպես Արևմտյան Հայաստանի տարբեր

---

[4] Հենրի Ֆինիս Բլոս Լինչ (Lynch), (1862 1913 թթ.), իռլանդացի հայագետ, աշխարհագետ, ճանապարհորդ, հասարակական-քաղաքական գործիչ, որի տատը սեբաստացի հայուհի է եղել: Տե՛ս Линч Х. Ф Б , Армения , т. 2, Тифлись, 1910, стр. 186–200.

վայրերում, այնպես էլ այս գավառում մեծ տարածում է գտել: Այն ինքնուրույն, հարուստ և բազմակողմանի զարգացում ապահովող գրականություն է եղել, որը ժամանակի ընթացքում թրքախոս հայերին պիտի վերադարձներ դեպի հայախոսություն:

Հայատառ թուրքերեն գրքերի ու պարբերականների մեր կազմած մատենագիտությունն[5] ավելի քան 2000 անուն գիրք և 150-ի մոտ պարբերականներ է պարունակում: Գրքերը և մամուլը, որ հիմնականում Պոլսից էր գալիս, ձեռքից ձեռք էր անցնում, կարդացվում սրճարաններում և թեյարաններում: Այս թերթերն իրենց թղթակիցներն են ունեցել երկրով մեկ: Այսպիսով, շնորհիվ այս պարբերականների, ընթերցողները հնարավորություն են ունեցել տեղեկություններ ու նորություններ ունենալու ոչ միայն Պոլսի, այլև կայսրության տարբեր վայրերի ու ազգության հպատակների կյանքի մասին:

Շատ կարևոր մի հանգամանք ևս: Ինչպես Պոլսում և ուրիշ մեծ քաղաքներում, այնպես էլ գավառներում և գավառակներում բազմաթիվ թուրքեր հատուկ սովորում էին հայերեն տառերը՝ այս գրականությունը կարդալու համար: Այդ գրականությունից օգտվել են նաև Օսմանյան կայսրության թրքախոս մյուս ազգերը ևս: Հայատառ թուրքերեն գրականությունն այնպիսի բուռն զարգացում ապրեց ողջ Օսմանյան կայսրության տարածքի ժողովուրդների շրջանում՝ նպաստելով զարթոնքի շրջանի կայացմանը, որ նույնիսկ հարց առաջացավ օսմաներեն տառերը հայերեն այբուբենով փոխարինելու մասին: Սակայն Առաջին համաշխարհային պատերազմը անհնարին դարձրեց այն ընդունելու թուրք առաջադեմ որոշ փաշաների ու մտավորականության ջանքերը:

Կարևոր էր հայերի հրատարակած հայատառ թուրքերենի միջոցով օսմաներենի դասագրքերի գոյությունը: Շատերը նույնիսկ թուրքական բարձրագույն կրթական հաստատություններում օսմաներենը և որոշ այլ առարկաներ սովորել են շնորհիվ հայ լեզվաբանների հեղինակած հայատառ դասագրքերի:

Հայերի մշակութային կյանքը չի սահմանափակվել զուտ հայկա-

---

[5] Ստեփանեան Յ., Հայատառ թուրքերեն գրքերի եւ պարբերական մամուլի մատենագիտութիւն, Ստամբուլ, 2005:

կան շրջանակներում: Հայկական վանքերում վարդապետները հավաքել ու ձեռագիր մատյանների մեջ պահ են տվել նաև քրդական մշակույթի նմուշներ՝ հայատառ քրդերենով: Մեզ են հասել քուրդ ժողովրդի ստեղծագործ մտքի արդյունքները՝ տաղարաններ, աղոթքներ, ժողովրդական բանահյուսության նմուշներ՝ առակներ, հանելուկներ, ասացվածքներ, երգեր, նաև բառարաններ:

Մատենադարանի ձեռ.10036-ը տաղարան է, որ գրի է առնված 1869-1881 թթ. Ախալքալաքի շրջանի Էշտիա գյուղում գրիչ և տաղերգու Սարգիս Քյուրդօղլյանի կողմից: Մասնագետների կարծիքով այն միջնադարյան հայտնի քուրդ փիլիսոփա բանաստեղծ Ֆաղիէ Տայրայի (Faqi Tayran (կամ Feqiyê Teyran (1590-1660 թթ.) ստեղծագործությունների եզակի օրինակն է: Ամենայն հավանականությամբ այն քրդական հեքիաթների ազդեցությամբ ստեղծված «Սև ձիու մասին» պոեմն է, որն օտար թշնամիների դեմ քուրդ ժողովրդի պայքարի մասին է: Քրդական բանահյուսության մեջ պոեմն ունեցել է քուրմանջի, սորանի և հայերեն տարբերակներ:

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում 1680-1719 թթ. Բաղեշում գրի առնված, ժողովածուի մեջ տեղ գտած քրդական «Տաղ Դնէ խանմանայ» երգերը, XI դ. հայ-քրդերեն զրուցաբառարանը: Այս ձեռագիր ժողովածուն գտնվում է Փարիզի Ազգային գրադարանի հայկական բաժնում՝ ձեռ. 145, և բաղկացած է 126 թերթերից:

Հայատառ քրդերեն են պարունակում նաև Երևանի Մատենադարանի ի. 737, 771, 4618, 5066, 7117, 8049, 10036 ձեռագրերը: Մենք համոզված ենք, որ այս ձեռագրերը կարևոր նշանակություն ունեն քրդական մշակույթի ուսումնասիրության համար և արդյունքում նոր վերագնահատությունների առիթ կհանդիսանան:

XIX դ. երկրորդ կեսին Պոլսի հայկական հրատարակչատներում տպագրվել են մի շարք հայատառ քրդերեն գրքեր: Դրանց և՛ հրատարակիչները, և՛ հեղինակները միմյանցից տարբեր նպատակներ են հետապնդել:

Քրդաբնակ, քրդախոս գավառների կյանքը, հայ քրդական հարաբերությունները լայնորեն արտահայտված են ժամանակի հայերեն ու հայատառ թուրքերեն պարբերականների էջերում:

Եվրոպական տերությունները և պապական Հռոմը մեծ ջանքեր

ու միջոցներ են ներդրել Օսմանյան կայսրության հպատակ ժողովուրդների շրջանում միսիոներական բազմաբնույթ առաքելության իրականացման հետ կապված: Այս առումով ամենալայնարձակ գործողությունների արջի բաժինը պատկանել է ամերիկյան բողոքական BORD միսիոներական կենտրոնին: Մարդասիրական, առողջապահական, կրթական գործունեության քողի ներքո երկիրը քայքայելու, թալանելու քաղաքականություն էր իրականացվում: Այս շրջանում թարգմանվել ու տպագրվել են նաև հայատառ թուրքերեն, հայերեն ու հայատառ քրդերեն Աստուածաշունչ, Ավետարաններ, կրոնաբարոյախոսական, դավանաբանական գրքեր:

Հայատառ քրդերեն տպագիր գրականության մի մասն իրականում կապված է Օսմանյան կայսրության ժողովուրդների մեջ ամերիկյան ու եվրոպական կրոնական տարբեր ուխտերի, միսիոներների գործունեության հետ: Այսօր էլ Բիթլիսում և քրդաբնակ այլ վայրերում կգտնվեն ընտանիքներ, որոնք որպես ընտանեկան սրբություն պահել են հայատառ քրդերեն ու հայատառ թուրքերեն, հայերեն ձեռագիր ու տպագիր ավետարաններ, Աստուածաշունչ: Իհարկե, դրանց մի մասը եզդիական, բռնի թրքացած, քրդացած, հայկական ծագումով ընտանիքներ պետք է լինեն:

Հայատառ քրդերեն տպագիր գրականության մյուս մասը Օսմանյան կայսրությունում XIX դ. արևմտահայության լուսավորական առաքելության արտահայտություններից է:

Այն ստեղծվել է հայ մտավորականության կողմից: Նպատակը քրդախոսներին գրաճանաչ դարձնելն ու նրանց մշակութային, բանավոր ստեղծագործության պահպանելն է:

Բալուի հայ համայնքի առաջնորդ Մկրտիչ վրդ. Տիգրանյանի, Պետրոս Ամիրխանյանի հեղինակած հրատարակությունները քրդերենի և հայերենի դասագրքեր են, այբբենարաններ, բառարաններ, քրդերեն գրականության օրինակներ: Դրանց նմուշները գտնվում են ոչ միայն Երևանի Մատենադարանում և գրադարաններում, այլև աշխարհի տարբեր երկրների հայկական հավաքածուներում և կարոտ են ուսումնասիրության, գոնե մատենագիտական մի աշխատության մեջ ի մի հավաքվելու :

Հայերենի դասագրքերը հայատառ քրդերենով պիտի օգնեին

քրդախոսներին, հայերեն այբուբենը սովորելով, անցնել հայատառ քրդերենի ուսուցման:

Հայատառ քրդերեն գրքերի մասին հանդիպել ենք 1988 թ. թուրքական գիտահանրամատչելի *Tarih ve Toplum* ամսագրի 54 55 համարներում Մեհմեդ Մալմիսանլըի մեկ հոդվածի մեջ[6]:

Հայ հեղինակների հեղինակած հայտնի հայատառ քրդերեն տպագիր գրքերի թիվը տասից ավելի է: Ահա քանի օրինակներ հայերի կողմից հրատարակված հայատառ քրդերեն մեզ հայտնի գրքերի, որոնք տպագրվել են Պոլսի Հովհաննես Մյուհենդիսյան, Հ. Պոյաճյան, Ա.Աշճյան հայտնի հրատարակչատների կողմից, ինչպես նաև Բիթլիսի վիլայեթում:

1. Incil bi Qewlê Matteos. Կ.Պոլիս, 1857:

2. Մկրտիչ Տիգրանեան, Այբբենարան քիւրտերէն եւ հայերէն. Ի պէտս մանկանց քիւրտւստանցիոց. Ալիֆպէճիւզ գուրմանճի ու արմէնի Կ.Պոլիս, տպ. Հ. Մյուհենդիսյան, 1860,55 էջ:

3. Մկրտիչ Տիգրանեան, Այբբենարան քիւրտերէն եւ հայերէն. Ալիֆպէճիւզ գուրմանճի ու արմէնի. Բ.տպ. Կ.Պոլիս, տպ. Հ.Մյուհենդիսյան, 1861, 55 էջ:

4. Peynamê Noêxoiyê İsa-el-Mesihe. Կ.Պոլիս, տպ. Պոյաճյան, 1872:

5. İncila Rabbê Me Hisus Kristos ku Matteos Nivrisi. Կ.Պոլիս, տպ. Պոյաճյան, 1891,627 էջ:

6. İncila Rabbê Me Hisus Kristos ku Margos Nivrisi. Կ.Պոլիս, տպ. Պոյաճյան, 1911, 87 էջ:

7. İncila Rabbê Me Hisus Kristos ku Xugas Nivrisi. Կ.Պոլիս, տպ. Պոյաճյան, 1911, 148 էջ:

8. İncila Rabbê Me Hisus Kristos ku Hovhannes Nivrisi. Կ.Պոլիս, տպ. Պոյաճյան, 1911, 109 էջ:

9. Emilê Resula. Կ.Պոլիս, տպ. Պոյաճյան, 1911,138 էջ:

Անկասկած քուրդ մտավորականության այն հատվածը, որը

---

[6] Malmisanli Mehmet, Osmanli Döneminde Yazilan Ermeni Kürtçe Eserler Üzerine. Tarih ve Toplum, İst., 1988, N 54-55, s. 58-63.

տեղյակ է հայատառ քրդերեն գրականությունից, երախտապարտ է այն ստեղծողներին՝ քրդերեն գրական-մշակութային ժառանգության որոշ մասի պահպանման համար:

STEPANYAN HASMIK

ARMENIANS IN BITLIS AND ARMENIAN KURDISH HANDWRITTEN AND PRINTED LITERATURE

Bitlis is an ancient city where the Armenians were one of the oldest inhabitants. In 1878-79 the population of province was nearly 400.000, of which Armenians were 250.000. The population of Bitlis was 30.000, of which Armenians were 10.000. The Armenians had a great investment on the economic, trade and cultural life of the province as well as on the development of crafts and the penetration of the capitalistic relations.

Armenians lived mainly with Kurds and Yezidis. During the Genocide the Armenians were forced to leave Bitlis. One of the main cultural ways of Armenians was Armenian Turkish literature. There was also handwritten and printed literature in Armenian as well as in Kurdish. It was made by the Armenians for the Kurds keeping Kurdish folklore, philosophical and literary heritage. We could find published textbooks in Kurdish, the authors of which were Armenians.

Armenian Kurdish Bible, Gospels and other religious books were published by American missionaries.

ԱՒԵՏԵԱՆ ԿԱՐԻՆԷ

ՂԵՒՈՆԴ ՎԱՐԴԱՊԵՏ ՓԻՐՂԱԼԷՄԵԱՆԸ ԵՒ ԻՐ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՒԱՔԱԾՈՆ

Ղեւոնդ վարդապետ Փիրղալէմեանը XIX դարի կէսերի նոր ձեւավորուող մտաւորական սերնդի առաջին ներկայացուցիչներից էր, որոնք սկսել էին գիտակցել ազգային հոգեւոր արժեքների կարեւորութիւնը, ձեռնամուխ լինելով դրանց յայտնաբերման, գրառման եւ հրատարակման աշխատանքներին:

Նա ինքնակենսագրութիւն չի թողել, կենսագրութեան մասին տեղեկութիւնները կարելի է քաղել իր աշխատանքներից: Ղեւոնդ վարդապետ Փիրղալէմեանը ծնուել է 1829 թ. Վան քաղաքում յայտնի վաճառական Աւետիս Փիրղալէմեանի ընտանիքում: Մորը՝ Իւղաբերին, կորցրել է մանուկ հասակում, ինքը վեց տարեկանից յաճախել է Արարուց ուսումնարան, աշակերտել է Պետրոս աւագ քահանային, որ ժամանակի յայտնի երաժիշտներից էր: Ընտանիքի նիւթական անապահով վիճակից ելնելով՝ որոշ ժամանակ անց ընդունուել է աշակերտ մի դերձակի մոտ, ընթացքում մի քանի վարպետների փոխելուց հետո թողել է արհեստը: 1850 թուականին ուխտի գնալով մոտակա վանքերը՝ այցելում է Լիմ կղզի եւ էլ ետ չի վերադառնում, դառնում է անապատի վանահայր Թոփուզեան Յակոբ եպիսկոպոսի, այնուհետեւ Վանի առաջնորդ Շիրոյեան Գաբրիէլ եպիսկոպոսի աշակերտը: Վերջինից էլ 1855 թուականին ստանում է աւագ սարկաւագութեան աստիճան: Այդ շրջանում Վարագա վանքում հաստատւում էր Մկրտիչ Խրիմեանը եւ Հայաստանի տարբեր կողմերից իր շուրջը համախմբում աշակերտների, որոնց մէջ էին նաեւ Ղեւոնդ Փիրղալէմեանը եւ Գարեգին Սրուանձտեանցը: Վերջինս, որպէս բանահաւաք, ազգագրագէտ, հասարակական գործիչ, բաւականին ուսումնասիրուած հեղինակներից է, ինչը չի կարելի ասել Փիրղալէմեանի մասին: Երկուսով որոշում են ճամփորդել (1859 թ.) գիտական նպատակով, չնայած որ առանձնապէս կանոնաւոր կրթութիւն չէին ստացել, սակայն արդէն համոզուել էին, որ վանքերում պահուող ձեռագրական ժողովածոները

շատ հարուստ նիւթեր են պարունակում պատմութեան տարբեր հարցերի, մատենագրութեան ուսումնասիրութեան համար:

Եղել է քարոզիչ Ղալաթիայի (1870 թ.) եւ Սամաթիայի Ս. Յակոբ եկեղեցիներում, 1873-1878 թթ. վարել է Լոնդոնի եւ Մանչեստրի թեմի առաջնորդութիւնը, աշխատել է զանազան յանձնաժողովների կազմում: Փիրղալէմեանը շատ է ճամփորդել, քսան տարի ճամփորդելով Հայաստանում՝ նկարագրել է իր ուղեւորութիւնները, հաւաքել է արձանագրութիւններ եւ ձեռագրական յիշատակարաններ: Դրանց մի փոքր մասը միայն, իր ասելով մէկ տասներորդը 1888 թ. հրատարակել է իր «Նօտարք Հայոց» կոչուած աշխատութեան մէջ, իսկ մեծագոյն մասը Գիւտ քահ. Աղանեանցը. «...1898 թուին երեք մեծ կապոցների մէջ կնքուած, հանգ. Յովհաննէս աւագ քհ. Մկրեանի յանձնարարականով Կ. Պոլսից բերելով յանձնեցինք հանգ. Տ. Մկրտիչ կաթողիկոսին եւ այժմ գտնւում է Էջմիածնի մատենադարանում»[1]: Կասկածներ են եղել, որ Մ. Աղաւնունու յիշատակած երեք մեծ կապոցներից ոչ բոլորն են տեղ հասել: Թիֆլիսում հրատարակուող «Մուրճ» ամսագրի յօդուածագիրը 1903 թ. գրում է, որ Փիրղալէմեանի բոլոր աշխատութիւնները կաթողիկոսի կարգադրութեամբ պէտք է տեղափոխուէին Կ. Պոլսից Էջմիածին, սակայն տեղ է հասել միայն չնչին մասը, իսկ մնացած աւելի կարեւորը՝ զանազան տարեգրութիւններ, ժամանակագրութիւններ, հաւանաբար, կորել են[2]:

Իր ուղեւորութիւնների ընթացքում Փիրղալէմեանը երկու անգամ այցելել է Ս. Էջմիածին, առաջին անգամ Վանից 1860 թ.՝ Խրիմեան Հայրիկի, Երեմիա եւ Իգնատիոս եպիսկոպոսների եւ ուրիշների հետ, երկրորդ անգամ՝ 1864 թ. Կ. Պոլսից: Ճամփորդութիւնների ոտանաւոր նկարագրութիւնները հրատարակել է «Ճանապարհորդութիւն ի Մայր Աթոռ Արարատեան եւ անտի ի Կ. Պոլիս» (1871 թ., Կ.Պոլիս), «Չորս ընկերք, որ է ճանապարհորդութիւն Վանայ մինչեւ Կոստանդնուպոլիս» (1882 թ., Թիֆլիս) խորագրերով: 1880 թ. ճամբորդութեան առիթով Կ. Պոլսի պատրիարք Ներսէս արքեպիսկոպոսը կոնդակ է ուղարկում

---

[1] «Դիւան Հայոց պատմութեան», Գիրք Ժ, Թիֆլիս, 1912, էջ ԾԴ: Հմմ. Մ. Եպս. Աղաւնունի, Միաբանք եւ այցելուք Հայ Երուսաղէմի, Եղմ., 1929, էջ 234:

[2] «Մուրճ», 1903, 11, էջ 73:

թեմերի առաջնորդներին եւ վանահայրերին՝ խնդրելով աջակցել Ղեւոնդ վարդապետ Փիրղալէմեանին, որ որպէս իր ներկայացուցիչ պէտք է այցելի Վան, Աղթամար, Կարին, Բաղէշ, Երիզա-Բալու, Քղի, Խարբերդ եւ միւս հայաբնակ գաւառները՝ ուսումնասիրելու վանքերում պահուող ձեռագրերը եւ ընդօրինակելու:

«Նօտարք Հայոց»-ի առաջաբանում, խօսելով գրքի հրատարակութեան հանգամանքների եւ դժուարութիւնների մասին, գրում է, որ մասամբ իրագործել է իր առջեւ դրուած խնդիրը. «...բերել ի ձեռն եւ հաւաքել ի մի թէ ի Ձեռագիր մատենից, թէ ի Տարեգրութեանց, թէ յԱրձանագրութեանց վանորէից եւ եկեղեցեաց, եւ թէ յայլ իրաց՝ զայնս ամենայն բանս՝ որք պատկանին մերս Ազգային պատմութեան եւ գաւառագրութեան...»[3]: Թէեւ հաւաքածոյի մէջ ունեցել է ժամանակով աւելի հին յիշատակարաններ, բայց ինչ-ինչ պատճառներով ընտրել է 1393-1467 թթ. ժամանակագրական սահմանները՝ Աղթամարի Զաքարիա Բ Կաթողիկոսի նահատակութիւնից մինչեւ Ջհանշահի մահը: Հաւաքած նիւթը բաժանել է երեք մասի՝ արձանագրութիւն, տարեգրութիւն, յիշատակարան: Մտադրութիւն է ունեցել գրքին կցել անձնանունների եւ տեղանունների ցանկեր, որ սակայն չի կարողացել իրականացնել եւ թողել է աւելի «յաջող ժամու եւ ժամանակի»: Արժեքաւոր ու կարեւոր են «Նօտարք Հայոց»-ի տողատակի ծանօթագրութիւնները:

Նա ուխտաւորութեամբ այցելել է Երուսաղէմի Ս. Յակոբի վանքը եւ 1891 թ. այնտեղ վախճանուել եւ թաղուել Սիոնի գերեզմանատանը: Չափածոյ տապանագիրը յօրինել է Խրիմեան Հայրիկը, որի սիրելի աշակերտներից էր Ղեւոնդ վարդապետը, եւ որի յիշատակարանների հաւաքածոյի հրատարակման համար դիմել էր Գէորգ Դ կաթողիկոսին[4]:

Փիրղալէմեանին է վերագրւում «Աղթամարայ կաթուղիկոսների պատմութիւն» աշխատութիւնը, որ 1903 թ. արժանացել էր «Սահակ Մեսրոպեան» մրցանակաբաշխութեան պարգեւին: «Մուրճ»-ի նոյն յօդուածագիրը գրում է. «...ոմն բանագող Խաչատուր Լեւոնեան մի

---

[3] «Նօտարք Հայոց», Կ. Պոլիս, 1888, էջ Ե:

[4] ՄՄ, Կաթողիկոսական դիւան, ցուցակ 20, թղթ. 235, վաւ. 41:

քանի ղուրուշներով գնել էր նրա ժառանգներից ու նախ Պոլսոյ «Բիւզանդիոն» թերթում հրատարակեց եւ ապա այս տարի իբրեւ իր սեփական գործ առանց ամաչելու ներկայացրեց եւ խաբեբայութեամբ կարողացաւ տանել մրցանակը: Ժամանակին այդ մասին բողոքներ եղան Պոլսոյ թերթերում, բայց մրցանակաբաշխութեան մասնաժողովի պատուարժան անդամները չկարողացան ստուգիւ վերահասու լինել խնդրի էութեանը»[5]:

Տեւական ժամանակ չէր, որ ստանձնել էր Մանչեստրի բրիտանահայ թեմի առաջնորդութեան պաշտօնը, երբ Կ. Պոլսի «Օրագիր»-ը, խիստ քննադատական յօդուածներով՝ «Մանչէսթըրի հայ գաղթականութեան վրայ. քանի մը խօսք - Խառն ամուսնութիւն, Նորածեւութիւն, Ընթերցասիրութիւն, Լեզու, Բարեպաշտութիւն, Վաճառականութիւն...» անդրադարձել է բրիտանահայ փոքրաթիւ համայնքին: Քննադատութեանը արձագանքել էր Էջմիածնի «Արարատ»-ը, որ առանց կասկածելու յօդուածի ճշմարտացիութեանը արտատպել էր այն՝ կցելով խմբագրութեան ծանօթագրութիւնները[6]: Հենց յօդուածի արտատպութիւնն էլ մեծ ցաւ էր պատճառել Փիրղալէմեանին, եւ նա, չնայած որ արհամարհական լռութեամբ անտեսել էր «Օրագրի» հրապարակումը՝ համարելով այն «նուաստ զրախօսութիւն», որոշում է պատասխանել «Արարատ»-ին՝ ներկայացնելով այն դժուարութիւնները, որոնց ենթակա էր հայ համայնքը եւ պաշտպանելով անտեղի հարձակումներից որպէս հոգեւոր առաջնորդ, որ մտահոգ էր Մանչեստրի հայ համայնքի եւ Էջմիածնի միջեւ արժանավայել հարաբերութիւններով եւ աւարտում է խօսքը յորդորով. «...ուստի Խմբագիր Հարք, սոքա քաջալերութեան եւ խրախուսանաց պէտք ունին՝ քան թէ բամբասանաց, եւ յԱրարատայ Խմբագրութենէն յորդոր եւ քաջալերութիւն սպասեն»[7]:

Փիրղալէմեանը, օգտուելով Մեծ Բրիտանիայում գտնուելու հանգամանքից, Բրիտանական թանգարանի հայերէն ձեռագրերի յիշա

---

[5] «Մուրճ», 1903, 11, էջ 84:

[6] «Արարատ», 1875, էջ 357, 358, 397-399, 438-440, 467-470:

[7] Ղեւոնդ Ծ. Վարդապետ Տոսպեցի, Ի Մանչեսթէրէ. Խմբագրութեան Արարատ ամսագրոյ, «Արարատ», 1875, էջ 466:

տակարանները եւս ընդգրկել է իր ժողովածոյի մէջ՝ ամբողջացնելով այն:

Նրա վաստակի գնահատողներից ակադ. Լ. Խաչիկեանը գրում է. «Առաջին լուրջ փորձը համեմատաբար մեծ թիւ կազմող ձեռագրերի յիշատակարանների ժողովածու կազմելու ուղղութեամբ կատարել է Ղեւոնդ Փիրղալէմեանը»[8]: Եւ քանի որ Փիրղալէմեանը, առաջինը լինելով, աչքի առաջ չուներ նմանատիպ որեւէ աշխատանք, ընդօրինակելիս իրեն որոշ անկարեւոր թուացող հատուածները կրճատել է կամ խմբագրել ու վերաշարադրել, սակայն այդուհանդերձ բնագրի բովանդակութիւնը ճիշտ է ներկայացրել: Այդ հանգամանքն էլ Գիւտ Աղանեանին առիթ է տալիս կարծելու, որ Փիրղալէմեանը. «...այդ քրտնաջան, բայց անհմուտ բանահաւաքը, որ սովոր է արտագրել յիշատակարանները ըստ քմաց, շատ տեղ յապաւելով, առանց որեւէ կէտադրութեան եւ տարբեր ընթերցուածներով: ...Փիրղալէմեանը մի անդուլ եւ եռանդուն հաւաքող էր հնագրական եւ տեղագրական նիւթերի, բայց դժբախտաբար, նրան պակասում էր հաւաքելու հմտութիւն...»[9]: Իր երկարատեւ ճամփորդութիւնների ընթացքում հաւաքել է արձանագրութիւններ, վանքերում եւ մասնաւոր անհատների մոտ պահուող ձեռագրերի յիշատակարաններ, տարեգրութիւններ: Կաթողիկոսական դիւանի՝ Փիրղալէմեանի թողոնի նկարագրութիւնը, որ ընդամենը 3-4 էջ է, կազմում է վաւերագրերի, ստորագրութիւնների, անհատների ու հիմնարկութիւնների կնիքների նկարագրութիւններ: Յիշատակարանների մնացած, մեծ մասը, որ, ինչպէս արդեն գիտենք, Գիւտ աւագ քահանայ Աղանեանը բերել էր Պոլսից Էջմիածին, պահւում են Մաշտոցեան Մատենադարանում, դրանք 4515, 6273, 6332 ձեռագրերն են: Յիշատակարանների այս հատուածը Փիրղալէմեանը վերնագրել է «Նշխարք պատմութեան հայոց» եւ ամենայն հաւանականութեամբ այդ հատորները եւս պատրաստում էր հրատարակութեան, սակայն չհասցրեց: Ընդունուած է 6273 ձեռագիրը[10] համարել

---

[8] ԺԴ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, Երեվան, 1950, էջ XXII:

[9] «Դիւան Հայոց պատմութեան», Գիրք Ժ, Թիֆլիս, 1912, էջ ԻԶ, ԾԴ:

[10] Ձեռագիրը սկսել է գրել Մանչեստրում եղած ժամանակ: Տե՛ս ՄՄ, ձեռ. 6273, էջ 2ա:

«Նշխարք»-ի առաջին հատոր, իսկ 4515-ը՝ երկրորդ, գոյութիւն ունի նաեւ սեւագիր օրինակը (6332): Ամբողջ նիւթի ժամանակագրական սահմաններն ընդգրկում են 887-1799 թուականները:

Փիրղալէմեանի հրատարակած հատորից եւ դեռեւս անտիպ յիշատակարաններից վերահրատարակել եւ հրատարակել են Գ. Յովսէփեանը, Լ. Խաչիկեանը, Վ. Յակոբեանը, Ա. Մաթեւոսեանը յիշատակարանների իրենց հրատարակութիւններում՝ չնայած դրանց թերութիւններին եւ յաճախ ոչ լիակատար լինելու հանգամանքին: Ինչպէս Ղ. Փիրղալէմեանն է գրում իր «Նշխարք Հայոց» աշխատութեան մէջ (ՄՄ, ձեռ. 4515) դեռեւս 1874 թ. Վենետիկի Մխիթարեան միաբանութիւնը մեծ ջանքեր էր գործադրում՝ այդ ձեռագրի մի օրինակ ունենալու համար. «...զմի օրինակ ձեռագիր յիշատակարանաց մերոյ խնդրէ շնորհել ընծայ Վենետկոյ թանգարանին»:

AVETYAN KARINE

GHEVOND ARCHIMANDRITE PIRGHALEMYAN AND THE MISCELLANIES OF HIS DIARIES

The information about his biography can be received from his works, because there is no autobiography. Ghevond Pirghalemian was born in 1829 in Van, he got his preliminary education at Araruts lyceum of Van. Later due to poor financial conditions of his family he became an apprentice of a tailor. During that period he changed several masters and eventually gave up the craft. In 1850, he visited Lim Island and didn't return any more. At first, he became the discipleof Hakob Bishop Topuzian, then of Gabriel Bishop Shiroian. In the course of that period Mkrtich Khrimian settled in the cloister of Varaga and united around him disciples from different regions of Armenia, Ghevond Pirghalemian and Garegin Srvantstiants were among them. They decided to travel together for scientific purpose (in 1859). From 1873 to 1878 he became the leader of British Armenian community in Manchester.

He travelled a lot and described all the details of his trips. He managed to collect different materials like historical Protocols, Chronicles and Chronologies. Unfortunately a very little fraction of them were published under the title "Notarq Hayots" in 1888. Priest Gyut Aghaniants brought most of them to Etchmiadzin from Constantinople, and now they are kept in Matenadaran.

«ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐ ԵՎ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ» ՄԱՏԵՆԱՇԱՐ

1. Արևելագիտական ժողովածու - Հատ. I: Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1960, 402 էջ:
2. Արևելագիտական ժողովածու - Հատ. II: Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1964, 380 էջ:
3. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ – Հատ. III, Արաբական երկրներ: Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1967, 227 էջ:
4. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. IV, Իրան: Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1969, 405 էջ:
5. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ – Հատ. V, Թուրքիա: Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1970, 449 էջ:
6. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ – Հատ. VI, Արաբական երկրներ, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1974, 434 էջ:
7. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ – Հատ. VII, Քրդագիտություն: Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1975, 383 էջ:
8. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ – Հատ. VIII, Իրան: Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1975, 404 էջ:
9. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ – Հատ. IX, Արաբական երկրներ: Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1978, 397 էջ:
10. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ – Հատ. X, Թուրքիա: Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1979, 329 էջ:
11. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ – Հատ. XI, Իրան: Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1982, 345 էջ:
12. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ – Հատ. XII, Թուրքիա: Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1985, 276 էջ:
13. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ – Հատ. XIII, Քրդագիտություն: Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1985, 285 էջ:
14. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. XIV, Արաբական երկրների ներքին և արտաքին քաղաքականության ժամանակակից պրոբլեմներ: Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987, 315 էջ:
15. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. XV: Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1989, 341 էջ:
16. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. XVI: Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն», 1996, 270 էջ:
17. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. XVII: Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն, 1998, 240 էջ:
18. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. XVIII: Եր., «Զանգակ-97», 1999, 236 էջ:

19. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. XIX: Եր., «Զանգակ-97», 2000, 218 էջ:
20. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. XX: Եր., «Զանգակ-97», 2001, 349 էջ:
21. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. XXI: Եր., «Զանգակ-97», 2002, 405 էջ:
22. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. XXII: Եր., «Զանգակ-97», 2003, 332 էջ:
23. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. XXIII: Եր., «Զանգակ-97», 2004, 568 էջ:
24. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. XXIV: Եր., «Զանգակ-97», 2005, 536 էջ:
25. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. XXV: Եր., «Զանգակ-97», 2006, 476 էջ:
26. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. XXVI: Եր., «Ասողիկ», 2007, 316 էջ:
27. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. XXVII: Եր., «Էդիթ Պրինտ», 2009, 272 էջ:
28. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. XXVIII: Եր., «Զանգակ-97», 2011, 352 էջ:
29. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. XXIX: Եր., «Զանգակ-97», 2014, 352 էջ:
30. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. XXX: Եր., «Գիտություն», 2016, 276 էջ:

ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐ ԵՎ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ

THE COUNTRIES AND PEOPLES OF THE NEAR AND MIDDLE EAST

СТРАНЫ И НАРОДЫ БЛИЖНЕГО И СРЕДНЕГО ВОСТОКА

XXXI

Հրատ. խմբագիր՝ Ա.Սահակյան
Համակարգչային էջադրումը Վ. Պապյանի

Հրատ. պատվեր № 849
Ստորագրված է տպագրության՝ 30.03.2018թ.:
Չափսը՝ 60 x 84 1/16, 15,5 տպագր. մամուլ:
Տպաքանակը՝ 300 օրինակ:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան,
Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24: